

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ
ՁԵՌՆԱՐԿ



Empowered lives
Resilient nations

ՀԱՅԱՍՏԱՆ, ԵՐԵՎԱՆ, 2011



ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՅՈՒՄ

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ
ՏԵՂԱԿԱՆ
ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ



MINISTRY OF EMERGENCY SITUATIONS OF ARMENIA *Empowered lives.
Resilient nations.*

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

*ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ
ՁԵՌՆԱՐԿ*

Մույն ձեռնարկը մշակվել է ՄԱԶԾ << Աղետների պատրաստվածության և ռիսկերի նվազեցման ազգային կարողությունների հզորացում>> ծրագրի շրջանակներում նպատակ ունենալով բարձրացնել ազգաբնակչության գիտելիքների մակարդակը Հայաստանում առկա բնական վտանգների, դրանց հնարավոր հետևանքների և վտանգներին դիմակայելու մշակույթի ձևավորման ուղղությամբ:

Ձեռնարկի մշակման համար հիմք է հանդիսացել 2009թ. ՄԱԶԾ-ի և ԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի կողմից մշակված <<Աղետներից համայնքների պաշտպանվածության բարձրացման հարցեր>> ուսումնամեթոդական ձեռնարկը, որը լրամշակվել է հաշվի առնելով ներկայիս ծրագրի սահմաններում իրականացված <<Խոցելիության և կարողությունների գնահատման>> արդյունքում ձևավորված առաջարկությունները, որոնք վերաբերում են տեղական մակարդակում <<Աղետների ռիսկերի նվազեցման>> կրթության արդյունավետության բարձրացմանը:

Ձեռնարկի մշակման հեղինակներ՝ Հ. Մաթևոսյան և Ա. Զիլինգարյան, համահեղինակներ՝ Հ. Մարոյան, Դ.Հարությունյան, Ս. Շահմուրադյան, Ա.Առաքելյան:



*Empowered lives.
Resilient nations.*

Ձեռնարկը մշակվել և տպագրվել է ՄԱԶԾ << Աղետների պատրաստվածության և ռիսկերի նվազեցման ազգային կարողությունների հզորացում>> ծրագրի միջոցներով:

Մույն ձեռնարկում արտահայտված տեսակետներն անպայման չէ, որ ներկայացնեն ՄԱԿ-ի կամ ՄԱԶԾ պաշտոնական տեսակետներն ու քաղաքականությունը:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
I. ԲՆԱԾԻՆ ՎՏԱՆԳՆԵՐ ԵՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ	7
I.1. ՀԱՅԱՍՏԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՀԱՏՈՒԿ ԲՆԱԾԻՆ ՎՏԱՆԳՆԵՐ	7
I.2. ՎՏԱՆԳՆԵՐԻ ԵՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐ	24
I.3. ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ (ՎԲԵ) ՄԻՋԵՎ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՅԵՐ	26
I.4. ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	28
II. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ	44
II.1. <<ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԿԱՊԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ>> ԹԵՄԱՅՈՎ <<ՄՏՔԵՐԻ ՏԱՐԱՓ>> ՄԵԹՈԴՈՎ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄ	45
II.2. <<ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻՆ>> ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՀԱՆԳԻՉՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ	59
II.3. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ	69
II.4. ԴՊՐՈՑԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ	71
II.5. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ	91
II.6. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐՈՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ	148
II.7. ԱՂԵՏՆԵՐԻՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐՈՎ ԽԱՂԱՐԿԱՅԻՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ	160

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության տարածքը 29743 քառ.կմ է: Բնակչությունը 3մլն. 213 հազար մարդ, որի 48% տղամարդիկ են:

Հայաստանի տարածքի 71.6%-ը գյուղատնտեսական նշանակության հողեր են: Հայաստանը սակավանտառ երկիր է. նրա տարածքի միայն 10.4%-ն է անտառածածկ: Անտառները բաշխված են անհավասարաչափ, որտեղ աճում են շուրջ 270 տեսակ ծառեր և թփեր, որոնցից անտառ կազմող հիմնական տեսակներն են՝ կաղնին, հաճարենին, բոխին և սոճին:

Հայաստանը գտնվում է բնական աղետների բարձր ռիսկային գոտում և ենթակա է տարբեր վտանգների ազդեցությանը: Աշխարհում հայտնի բնական վտանգներից Հայաստանին հատուկ են շուրջ 110 տեսակի վտանգներ: Դա բացատրվում է նրանով, որ Հայաստանը բարդ ռելիեֆ ունեցող երկիր է՝ կտրուկ լեռնաշղթաներով, դաշտավայրերով և խիստ մասնատված բարձրության մեծ տատանումներով տարածքով: ՀՀ տարածքի 76.5% գտնվում է ծովի մակերևույթից 1000-2500 մ բարձրության վրա: Ամենացածր վայրը ծովի մակերևույթից մոտ 350մ է, իսկ ամենաբարձր վայրը՝ 4.096մ: Փաստորեն, երկրի փոքրիկ տարածքում բարձրությունների տարբերությունը շուրջ 3500մ է, որով էլ պայմանավորված է բնական վտանգների այդպիսի քանակի առկայությունը: Հայաստանը գտնվում է աշխարհի առավել բարձր սեյսմիկ ակտիվության գոտիներից մեկում, ուստի այստեղ առկա են գեոֆիզիկական վտանգներին առնչվող նշանակալի ռիսկեր: Վերջին քսան տարվա ընթացքում տեղի ունեցած երկրաշարժերը վնաս են հասցրել մեծ թվով մարդկանց, ինչպես նաև հանգեցրել զգալի տնտեսական վնասների: Երկրի տարածքի

մեկ երրորդը գտնվում է սողանքավտանգ գոտում: Սողանքավտանգ տարածքները հիմնականում լեռների ստորոտներում և լեռնային տարածքներում են: Մոտ 470000 մարդ կամ երկրի ազգաբնակչության 15%-ը ենթակա է այս վտանգին: Սողանքների պատճառած միջին տարեկան վնասը կազմում է մոտ 10 միլիոն դոլար :

Կլիմայի փոփոխության ազդեցություններն այսօր զգացվում են ողջ աշխարհում և Հայաստանը բացառություն չէ: Հայաստանը բնորոշվում է խոցելի լեռնային էկոհամակարգերով, կլիմայի չորայնությամբ, ակտիվ արտածին ու անապատացման գործընթացներով և հաճախակի նկատվող տարերային աղետներով, որոնք երկիրն առավել զգայուն են դարձնում կլիմայի փոփոխության ազդեցությունների նկատմամբ: Վերլուծությունը ցույց է տվել, որ վերջին մի քանի տասնամյակների ընթացքում եղանակային և կլիմայական վտանգավոր երևույթների ուժգնությունը և հաճախականությունը աճել է: Բնական աղետների շարքում Հայաստանը բոլորից շատ ազդեցություն է կրում երաշտներից, վաղ գարնանային ցրտահարություններից, կարկտահարությունից, սելավներից, սողանքներից, ուժեղ քամիներից և անտառային հրդեհներից:

2004-2007թթ. ընթացքում սելավները վնաս են հասցրել մոտ 200 բնակավայրերի և հիմնական տրանսպորտային ուղիների 600 տեղամասի: Սելավների հասցրած միջին տարեկան վնասը վերջին չորս տարվա ընթացքում կազմել է 2,9 միլիոն դոլար: 2001-2006թթ. կարկուտների թիվը հասել է 46-ի (կարկտի միջին տրամագիծը կազմել է 22-35մմ): Անցյալ տասնամյակում ուժեղ հեղեղումները պատճառ են հանդիսացել նույնիսկ մարդկային զոհերի: 2000թ. երաշտից գյուղատնտեսական սեկտորի կորուստները գնահատվել են 66.7 մլն ԱՄՆ դոլար, կազմելով գյուղատնտեսական համախառն արտադրանքի 10.1%-ը:

Օդերևութաբանական դիտարկումների տվյալների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում վերջին 80 տարիների կտրվածքով դիտվել է տարեկան ջերմաստիճանի աճ 0.85°C-ով և տեղումների նվազում 6-8%-ով: Ջերմաստիճանի և տեղումների փոփոխությունները ՀՀ տարածքի տարբեր շրջաններում և տարբեր սեզոններում ունեն տարբեր միտումներ:

Հայաստանում կլիմայի փոփոխության տարբեր սցենարներով կատարված հաշվարկների համաձայն 2030, 2070, 2100 թվականների կտրվածքով կանխատեսվում է ջերմաստիճանի նշանակալի և անընդմեջ աճ, հատկապես գարնան ու ամռան ամիսներին: Գումարային գետային հոսքը մինչև 2030թ. կնվազի 6,7%-ով, մինչև 2070թ.՝ 14,4%-ով, մինչև 2100թ. 24,4%-ով (1961-2100թթ. համեմատ): Ջրային ռեսուրսների նվազեցումը անմիջականորեն կանդրադառնա գյուղատնտեսության վրա դրանով առաջացնելով պարենային ապահովվածության մակարդակի նվազում:

Ամփոփ ձևով կարելի է նշել, որ բնածին վտանգների տեսանկյունից հանրապետության տարածքի 100%-ը ենթակա է ուժեղ երկրաշարժերի, 3%-ը՝ սողանքների (ավելի քան 3000 սողանքային հատված, որոնցից 300-ը՝

բնակավայրերում), 30%-ը՝ սելավների և ջրհեղեղների, 0,5%-ը՝ փլուզումների ու քարաթափումների, 12%-ը՝ ցրտահարությունների, 15%-ը՝ երաշտի, 17%-ը՝ կարկտահարման ազդեցությունների և այլն: Հանրապետության հողատարածքների 80% ավելին ենթակա են էռոզիայի, աղակալման/ալկալիացման, գերխոնավության, ջրակալման վտանգների ազդեցության:

Տեխնաձին վտանգները նույնպես զգալի ռիսկի աղբյուր են: Հայաստանում կան 27 քիմիական գործարաններ, որոնք օգտագործում են ամոնիակ, քլոր, քլորաթթու, ազոտաթթու և այլ քիմիական նյութեր: Թվով 1500-ից ավելի ձեռնարկություններ հասկանալի են բարձր պայթուցավտանգությամբ և հրդեհավտանգությամբ: Հայաստանի տարածքում կան մոտ 100 ջրամբարներ, շուրջ 19 պոչամբարներ, գործում է ատոմային էլեկտրակայանը և այլն:

I. ԲՆԱԾԻՆ ՎՏԱՆՔՆԵՐ ԵՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

I.1. ՀԱՅԱՍՏԱՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՀԱՏՈՒԿ ԲՆԱԾԻՆ ՎՏԱՆՔՆԵՐ

Հայաստանի Հանրապետության տարածքին բնորոշ 100-ից ավելի բնածին վտանգներից և վտանգավոր երևույթներից կարելի է առանձնացնել առավել հաճախակի կրկնվող շուրջ 10 տեսակներ: Դրանց թվին կարելի է դասել երկրաշարժերը, սողանքները, սելավները, ջրհեղեղները, փլուզումները, քարաթափումները, ամպրոպները, կարկուտները, ստորերկրյա ջրերի բարձր մակարդակները, անտառային հրդեհները և այլն: Համառոտ դիտարկենք վերոհիշյալ վտանգները:

Երկրաշարժեր

Երկրաշարժերը առավել կործանարար տարերային աղետներ առաջացնող վտանգների թվին են պատկանում: Երկրաշարժերի ծագման պատճառները տարբեր են: Երկրաշարժերն ըստ իրենց ծագման պատճառների լինում են երեք տեսակի՝ տեկտոնական, հրաբխային և փլուզումային:

Տեկտոնական երկրաշարժը տեղի է ունենում ըստ բեկման գծով ապարների ուղղահայաց և հորիզոնական դիրքով արագորեն խառնվելու հետևանքով՝ այդ ապարներում կուտակված առաձգական լարումների կամ պրկումների ազդեցության ներքո և առաջ է բերում երկրի կեղևի խախտումներ ու դրա մակերևույթին՝ ավերումներ:

Հրաբխային երկրաշարժը առաջանում է հրաբխի ժայթքման կամ ժայթքման նախապատրաստման հետևանքով:



Փլուզումային երկրաշարժը պայմանավորված է ստորգետնյա դատարկությունների առկայությամբ և առաջանում է ստորգետնյա փլուզումների հետևանքով: Երկրաշարժից առաջ տեղի են ունենում ռելիեֆի, ստորգետնյա ջրերի, մագնիսական դաշտի, որոշ կենդանիների վարքի և այլնի տասնյակ բնութագրերի ֆոնային փոփոխություններ:

Յուրաքանչյուր ոք պետք է որոշակիորեն <<Ճանաչի>> երկրաշարժը, իմանա իր գործելաոճը մինչև երկրաշարժի ծագումը, երկրաշարժի ընթացքում և երկրաշարժից հետո:

Երկրաշարժերից բնակչության պաշտպանության հիմնական, հուսալի ուղին սեյսմակայուն շինարարությունն է: Կարևոր միջոցառումների թվում են նաև



բնակչության շրջանում համապատասխան վարքի կանոնների ուսուցումը, շինությունների շահագործումը և սեյսմամեկուսացումը, փրկարարական ուժերի և միջոցների ստեղծումը, պատրաստումը, երկրաշարժի դեպքում փոխհամագործակցված գործողությունների պլանների մշակումը և այլն: Ներկայումս բոլոր շինություններն

անհրաժեշտ է կատարել համաձայն սեյսմիկ շինարարության նորմերի (ՀՀՇՆ 11 թիվ 16.02.2006): Իսկ հնարավորության դեպքում պետք է անդրադառնալ բոլոր հին կառույցների սեյսմակայունության ավելացմանը:

Հայաստանի տարածքում ուժեղ երկրաշարժերի մասին պահպանվել են հարուստ պատմական տվյալներ:

Տեղեկություններ Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժերի վերաբերյալ

<i>N</i>	<i>Տարեթիվ</i>	<i>Վայր</i>	<i>Ուժգնություն</i>	<i>Զոհեր</i>
1.	139	Արարատյան դաշտավայր	5,7	Տեղեկություն չկա
2.	21.07.735	Վայոց Ձոր	7,0	15.000
3.	27.03.893	Դվին	7,0	70.000
4.	1046	Անի	5,5	Տեղեկություն չկա
5.	04.07.1679	Գառնի	7,0	8000
6.	06.10.1827	Ծաղկաձոր	7,0	10.000
7.	02.07.1840	Արարատ	6,7 կամ 7,4	2000
8.	22.11.1926	Գյումրի	5,7 կամ 6,0	300
9.	09.06.1968	Զանգեզուր	5,0	Տեղեկություն չկա
10.	07.12.1988	Սպիտակ	6,8-7,0	25.000

Սպիտակի երկրաշարժը աշխարհի լավ ուսումնասիրված երկրաշարժերից մեկն է: Այն տեղի ունեցավ 1988թ. դեկտեմբերի 7՝ ժամը 11 անց 41 րոպ.: Երկրաշարժի մագնիտուդը կազմել էր 7,0, իսկ ուժգնությունը էպիկենտրոնում՝ 10 բալ: Տուժել են 21 քաղաք, 342 գյուղ: Զոհվել է 25 հազար մարդ, վնասվածքներ են ստացել շուրջ 20 հազար մարդ, որոնցից հոսպիտալացվել են 12500 մարդ, անօթևան են մնացել 514 հազար մարդ: Ավերվել է աղետի գոտու բնակարանային ֆոնդի կեսը, որը կազմել է մոտ 8 մլն. քառ. մետր մակերես: Դա կազմում է Հայաստանի Հանրապետության բնակֆոնդի 17 տոկոսը: Երկրաշարժի հետևանքով դադարել է գործել 180 արդյունաբերական ձեռնարկություն՝ 82 հազար աշխատատեղով: Լրիվ ավերվել էին 58 գյուղ՝ 21 հազար տներով, խիստ տուժել էին 342 գյուղի 54 հազար տներ, 83 դպրոց, 90 մանկապարտեզ, 84 առողջապահական և 2260 օբյեկտներ: Ոչնչացել էին 24 հազար խոշոր եղջերավոր անասուն, 45 հազար գլուխ ոչխար, 8 հազար խոզ: Վնասվել էր

600կմ գյուղատնտեսական նշանակության ջրային մայրուղի, 90 հազար հեկտար ջրովի հողերի ճնշման խողովակաշարեր: Սպիտակ քաղաքի բնակֆոնդը ավերվել էր ամբողջությամբ, Գյումրի քաղաքինը՝ 70 տոկոսով, խիստ տուժել էին Վանաձոր, Ստեփանավան, Դիլիջան քաղաքները, Սպիտակի, Ախուրյանի, Գուգարքի, Թումանյանի, Աշոցքի, Ամասիայի, Ալավերդու, Տաշիրի, Արագածի, Արթիկի, Թալինի, Ապարանի, Անիի, Ստեփանավանի նախկին շրջանները: Ավերվել էին Թբիլիսի-Երևան երկաթգծի 40կմ հատված, ինչպես նաև 80կմ երկարությամբ էլեկտրահաղորդման գծեր: 117 բնակավայր գրկվել էր հեռախոսային կապից, իսկ միայն Գյումրիում շարքից դուրս էր եկել 316 էլեկտրական ենթակայան: Նյութական կորուստները կազմում էին շուջ 15 միլիարդ ԱՄՆ դոլարին համարժեք գումար:

Սողանքներ

Սողանքներն իրենցից ներկայացնում են թեք լանջերի վրա լեռնային ապարների սահք՝ ծանրության ուժի ազդեցության տակ, որին նպաստում են մի շարք գործոններ:

Սողանքները տեղի են ունենում լեռնային, նախալեռնային շրջաններում: Կարող են ընդգրկել նշանակալից տարածքներ, այդ թվում բնակավայրեր, ճանապարհներ, հաղորդակցության ենթակառուցվածքներ, գյուղատնտեսական հանդակներ:

Սողանքները սովորաբար լինում են երկրաբանական և այլ անբարենպաստ պայմաններով լանջերի վրա տարբեր գործոնների ազդեցության տակ: Թվարկենք դրանցից մի քանիսը.

- լանջի մեծ թեքությունը, որը գերազանցում է բնական թեքման անկյունը,
- լանջի խորքում փափկած կավերի, լողիկային ավազների առկայությունը,
- լանջի խորքում ջրանթափանց (կավային) և ջրաթափանց (ավազներ և այլն) ապարների շերտերի պարբերականությունը,
- տարբեր գրունտների շերտերի ուղղվածությունը թեքությամբ դեպի լանջը,
- երկրաշարժերը,
- գերխոնավացումը:

Սողանքները մեծամասամբ հրահրվում են մարդու անհեռատես, չհիմնավորված գործողություններով, այն է՝

- լանջերի կտրատում, դարավանդավորում,
- լանջի կառուցապատում,
- լանջի գյուղատնտեսական յուրացում, մակերևույթի փխրեցում, շոայլ ոռոգում,
- անտառազրկում,
- լանջի վրայի բնակավայրերում տեխնիկական, կենցաղային և այլ ջրերի հեռացման համար կոյուղու բացակայություն,

- լանջերի վրա կամ մոտակայքում պայթեցման աշխատանքների կատարում, փոստրակների և խրամատների ստեղծում:

Մեր երկրի տարածքում սողանքների մեծ մասի առաջացումը, զարգացումը կապված են մարդու գործունեության հետ: Բերենք սողանքի զարգացման բնորոշ մի սխեմա:

Լանջի վրա մարդու գործունեության հետևանքով խախտված է ձնհալոցքային, անձրևաջրերի բնական հոսքը: Վերջինս, հանդիպելով նորահայտ արգելքների,



ներծծվում է լանջի խորքը, որի հետևանքով որոշակի հողեր գերխոնավանում են և կորցնում իրենց կայունությունը, որը հանգեցնում է վերը գտնվող շերտերի սահքին:

Սողանքների դեմ պայքարի միջոցառումները բազմաբնույթ են՝

- լանջի սողանքավտանգ տեղամասից վեր լանջային առվի կառուցում վերից հոսող մակերեսային ջրերի հեռացման համար,
- կոյուղու համակարգի ստեղծում և ջրմուղ-կոյուղու ցանցի պատշաճ շահագործում,
- լանջի խորքը թափանցած ջրերի հեռացման համար դրենաժային համակարգի ստեղծում,
- սահեցնող ուժերի նվազեցման նպատակով լանջի արտաքին, առանձապես թեք շերտերի կտրում, հեռացում,
- ոռոգման նորմավորում և առաջավոր մեթոդների (կաթիլային ոռոգում, անձրևացում և այլն) ներդրում,
- հենապատերի, ցցային հիմքերի, կոնտրբանկետների իրականացում,
- խորը արմատներով ծառերի տնկում:

Անհրաժեշտ է նշել, որ նշված միջոցառումների մեծ մասը թանկ է և պահանջում է իրականացման բարձր որակ, հուսալիություն: Պատահական չէ, որ մեր երկրում սողանքների դեմ պայքարի հաջողված օրինակների թիվը խիստ սահմանափակ է:

Իսկ ընդհանրապես սողանքից խուսափելու հուսալի ուղին անբարենպաստ երկրաբանական և այլ պայմաններով լանջերից <<հեռու>> մնալն է, խուսափելը նրանց վրա կառուցապատումներ, ձևափոխումներ, անտառահատումներ

կատարելուց:


Իհարկե, լրիվ <<հեռու>> մնալ այդպիսի լանջերից հնարավոր չէ, և այդ դեպքում, անհրաժեշտ է պահպանել անվտանգության ռեժիմ, այսինքն՝

- շինարարությունը կատարել միայն հիմնավոր նախագծերի համաձայն,
- իրականացնել գնացքների և ավտոմեքենաների շարժման սահմանափակում,
- արգելել պայթեցումները և լեռնային աշխատանքները,
- ջրավազանների, բաղնիքների և այլ ջրօգտագործող օբյեկտների շահագործումն իրականացնել ջրի արտահոսքի բացառման պայմանով,
- ռոտգումը կատարել խիստ խնայող ռեժիմով:

Սողանքների առաջին իսկ նախանշանների ծագման դեպքում անհրաժեշտ է տեղեկացնել համապատասխան մասնագետներին, տարածքային և գործադիր մարմիններին:

Հայաստանի Հանրապետությունում առկա սողանքների քարտեզը:

ՀՀ սողանքավտանգ տարածքները



Prepared by: UNDP Project “Strengthening of National Disaster Risk Reduction Capacities in Armenia – 2nd and 3rd phases”

0 10 20 40 60 80 Km
Projection: UTM, WGS 1984, Zone 38N
August 2011

ԱՅԼ
MINISTRY OF EMERGENCY SITUATIONS OF ARMENIA

UN
DP
ARMENIA

Սելավներ

Կարճատև և մեծ խորտակիչ ուժ ունեցող բուռն, սրընթաց հոսանքներ են, որոնք պարունակում են մեծ քանակությամբ հողմահարված ապարների կոշտ մասնիկներ:

Սելավները սովորաբար ծագում են հանկարծակի և տևում ժամեր: Սելավը մի քանի ժամում այնքան նյութ կարող է գետավազանից դուրս բերել, որքան նորմալ էռոզիան տասնյակ տարիների ընթացքում: Հզոր սելավներն իրենց ճանապարհին ավերում են ցանկացած կառուցվածք, արգելք: Վտանգ են ներկայացնում բնակավայրերի, գյուղատնտեսության, տնտեսության օբյեկտների, հաղորդակցուղիների և այլ կառուցվածքների համար:

Երկրի մակերևույթը վերափոխող արտաձին ուժերի շարքում զգալի տեղ ունեն բեկորային նյութերով խիստ հագեցված քայքայիչ ուժի սելավները, որոնք մակերևույթի ողողման և հողմահարված նյութի տեղատարման գործում վիթխարի դեր են կատարում:

Ջրաբերուկներով ծանրացած ջուրը, շարժվելով մեծ արագությամբ (մինչև 40 կմ/ժ), ունի հարվածի մեծ ուժ:

Սելավները լինում են լեռնային տարածքներում, որտեղ ապարները հարուստ են այրումսիլիկատներով և կավերով:

Ընդհանրապես, սելավի առաջացումը պայմանավորված է հիմնականում 2 խումբ գործոններով, մի կողմից՝ ջրային հոսանքը առաջացնող և բնորոշող (հալչող ձյան քանակ, օդի ջերմաստիճան, տեղատարափ անձրևներ, հոսանքի ելք, արագություն), մյուս կողմից լանջի լվացվող մակրեևույթը բնորոշող (միներալոգիական կազմ, մակերևույթի գրունտների ամրություն և ծակոտկենություն, բուսածածկի առկայություն) գործոններ:

Սելավային գործընթացը կարելի է բաժանել 3 փուլի. սելավային ավազանի վերններում ջրացեխաքարային զանգվածների կուտակում, նշված զանգվածների արագ տեղափոխում վար լեռնային գետերի հուններով և ցածրադիր վայրերի պատում սելավային ջրաբերուկներով:

Հայաստանի Հանրապետության տարածքի շուրջ 30%-ը ենթակա է սելավների և հեղեղումների: Սելավները առանձնապես տարածված են Մեղրի, Ողջի, Արփա, Վեդի, Մաստարա, Փամբակ, Ձորագետ, Դեբետ, Աղստև գետերի ավազաններում, Արեգունի և Սևանի լեռնաշղթաների հարավահայաց լանջերին, ինչպես նաև Հրազդան, Քասախ, Ագատ, Որոտան, Ախուրյան գետերի մի քանի վտակների մոտ:

Ավագ սերունդը հիշում է 1946թ. Գետառի աղետալի սելավը (200մ³/վ սելավային հոսք), որը Երևան քաղաքի տարածք տեղափոխեց 60 հազ.մ³ քարաբեկորներ և 200մ³ տիղմ, և եղան նաև 200 մարդկային զոհեր:

Հակասելավային միջոցառումները հիմնականում լինում են ագրոտեխնիկական և հիդրոտեխնիկական: Առաջին դեպքում կատարվում է լանջերի անտառապատում, բազմամյա խոտաբույսերի ցանում դարավանդավորումներով:


Այս միջոցառումները նվազեցնում են հողի լվացելիությունը: Հիդրոտեխնիկական միջոցառումները ընդգրկում են սելավակարգավորիչ ջրամբարների, պատնեշների, սելավաթող ջրանցքների, ասֆալտաշտպան կառուցվածքների և լեռնային առուների կառուցումը, գետերի հունների պարբերական մաքրումն ու ավերի բարձրացումը:


Բնակչությունը պետք է գիտենա, որ չի կարելի կառուցապատումներ և այլ միջոցառումներ կատարել սելավային լանջի վրա՝ հերկել, սելավատար հունը փակել, ոչխար արածացնել, քանի որ ոչխարներն իրենց նեղ կճղակներով փխրեցնում են լանջի մակերևույթը:

Սելավի ժամանակ պետք է հետևել ազդարարման ազդանշաններին, խուսափել ճանապարհի սելավատար հարվածներով երթևեկելուց, արագ տեղափոխվել անվտանգ տեղեր՝ գետերի հովիտներից և կիրճերից հեռու:

Հայաստանի Հանրապետությունում սելավների քարտեզ

ՀՀ սելավավտանգ գոտիները






ՄԻՆ
MINISTRY OF EMERGENCY
SITUATIONS OF ARMENIA

Prepared by: UNDP Project “Strengthening of National Disaster Risk Reduction Capacities in Armenia – 2nd and 3rd phases”

0 10 20 40 60 80 Km
Projection: UTM, WGS 1984, Zone 38N
August 2011



UN
DP
ARMENIA

Ջրհեղեղներ

Ջրհեղեղը դա ցամաքի զգալի տարածքների ժամանակավոր ջրածածկումն է գետերում, լճերում, ջրամբարներում, ծովերում ջրի մակարդակի բարձրացման հետևանքով:

Ջրհեղեղը ծագում է գետի ավազանում ինտենսիվ ձնհալքի, երկարատև անձրևների, հունի թողունակության նվազման (տղմակալման, սողանքների, փլուզումների հետևանքով), սառցակուտակումներով և ձնաջրերով հունի ծանրաբեռնման, գետաբերանից քամու ազդեցությամբ ջրի դեպի գետ քշման, ցունամիների, պատվարների փլուզման հետևանքով:

Ջրհեղեղների վտանգը պայմանավորող գործոններն են՝ ջրի խորությունը, ջրի մակարդակի բարձրացումը, հեղեղման տևողությունը, արագությունը, հաճախականությունը, սեզոնայնությունը:

Հայաստանի Հանրապետության գետերում վարարումների միջին տևողությունը 80-120 օր է, առավելագույնը՝ 150 օր, նվազագույնը՝ 60 օր: Հանրապետության տարածքում ձևավորվող միջին տարեկան հաշվով շուրջ 6,859 մլն.մ³ ջրի ծավալի 58%-ը հոսում է զարնանային ամիսներին:

Ջրհեղեղներից բնակչության և տարածքների խոցելիության աստիճանը բարձր է, եթե՝

- հնարավոր ջրածածկման վայրում կան բնակավայրեր,
- ջրհեղեղի մասին բնակչությունն իրազեկված չէ,
- հնարավոր ջրածածկման տեղանքում հողը բուսածածկ չէ և ջուրը կլանելու հատկությունը խիստ ցածր է,
- հնարավոր ջրածածկման տեղանքում կան կառուցվածքներ և հատկապես եթե դրանք անկայուն են,
- հնարավոր ջրածածկման տեղանքում կան պարենի, գյուղատնտեսական կենդանիների, չհավաքված բերքի չպաշտպանված պաշարներ:

Ջրածածկման հետևանքով լինում են մարդկային զոհեր, ոչնչացվում կենդանիներ, ավերվում են շինություններ, հաղորդակցուղիներ, ոչնչանում են նյութական և մշակութային արժեքներ, ընդհատվում է տնտեսական գործունեությունը, ոչնչանում է բերքը, լվացվում են բերրի հողերը, փոխվում է լանդշաֆտը:

Պետք է նշել, որ ջրհեղեղի ազդեցության հետևանքները որոշակիորեն կախված են մարդու գործունեությունից:

Յուրաքանչյուր տարի մեր երկիրը ջրհեղեղների հետևանքով զգալի կորուստներ է կրում: Դա հիմնականում ջրհեղեղներին անբավարար պատրաստվածության հետևանք է: Վերջին չորս տարիների ընթացքում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ջրհեղեղներից, սելավներից տարեկան վնասը մեր հանրապետությունում կազմում է շուրջ 2,9 մլն. ԱՄՆ դոլարին համարժեք գումար: Հետևաբար, ջրհեղեղներից բնակչության և տարածքների պաշտպանությունը միայն օպերատիվ իրավիճակներում իրականացվող միջոցառումներով արդյունավետ չէ: Պետք է իրականացվեն նաև ջրհեղեղների կանխմանն ու

կանխարգելմանն ուղղված միջոցառումներ: Այդ միջոցառումները բազմաբնույթ են և կրում են իրավական, կազմակերպչական, ճարտարագիտատեխնիկական բնույթ: Տվյալ դեպքում իրավական բնույթի միջոցառումները կապված են անհրաժեշտ իրավական դաշտի ստեղծման ու հետագա զարգացման ապահովման հետ: Ինչ վերաբերում է ճարտարագիտատեխնիկական միջոցառումներին, ապա դրանցից կարելի է նշել՝

- ջրառատ ավազաններից ջրանցքներով ջրի տեղափոխումը սակավաջուր շրջաններ,
- ջրի հոսքի կարգավորման նպատակով ջրամբարների կառուցում,
- պաշտպանիչ պատնեշների կառուցում,
- գետերի հունների ուղղում և մաքրում,
- գետերի հատակների ամրացում,
- գետերի ափերի բարձրացումը և ամրացում,
- անտառապաշտպան գոտիների ստեղծում գետերի ավազաններում:

Ջրհեղեղի անմիջական սպառնալիքի դեպքում կատարվում է համապատասխան ծառայությունների պատրաստականության բերում: Ազդարարվում են պատասխանատու մարմինները և բնակչությունը: Ուժեղացվում են դիտարկումները: Ստուգվում են պաշպանիչ կառուցվածքները: Կատարվում է տարահանման նախապատրաստում:

Ջրհեղեղի ծագման ժամանակ իրականացվում է նախօրոք մշակված գործողությունների պլանը: Մի կողմից կատարվում է ջրհեղեղի տեղափակում, մյուս կողմից՝ փրկարարական աշխատանքներ: Փրկարարական աշխատանքների համար օգտագործվում են արագընթաց նավակներ, ուղղաթիռներ, լողամիջոցներ, թոկեր, փրկարար օղակներ և այլն: Միաժամանակ իրականացվում է մարդկանց, կենդանիների, արժեքավոր իրերի տարահանում: Հիմնական միջոցառումներն են նաև.

- ջրածածկված շրջանում տուժածների որոնումը,
- հասարակական կարգի պահպանումը և ունեցվածքի պաշտպանությունը,
- տուժածների ապահովումը հագուստով, սննդով, ջրով,
- կոմունալ - էներգետիկական ցանցերի վերականգնումը:

Յուրաքանչյուր բնակիչ պետք է կարողանա՝

Ջրհեղեղից առաջ

- պարզել իրենց բնակավայրին սպառնացող վտանգավոր ջրածածկման տարածքի սահմանները,
- տեղական կառավարման մարմնից նախօրոք իմանալ հնարավոր ջրհեղեղի դեպքում իրենց բնակավայրի տարահանման պլանը,
- իմանալ իրենց բնակավայրի ռելիեֆը և այնտեղից հարկ եղած դեպքում անվտանգ հեռանալու ուղիները,
- միշտ պատրաստ պահել աղետի կապոցը,

- իր համար նախապատրաստել փրկարարական միջոցների պահուստներ՝ փրկարարական օդակ, փրկարարական բաճկոն, ջրապաշտպան զգեստ, փշովի իրեր (մեծ խաղալիքներ, անվադողի ռետինե փշովի խցիկ և այլն),
- միշտ պատրաստ ունենալ լուսային ազդանշանային սարքեր,
- ջրածածկման ենթակա բնակավայրում նախօրոք պատրաստել ավագով լցված պարկեր:

Ջրհեղեղի սպառնալիքի դեպքում անհրաժեշտ է

- հետևել հիդրոոդերևութաբանական տեղեկություններին,
- հետևել կառավարման մարմինների կողմից տրվող ցուցումներին,
- թունավոր և վտանգավոր իրերը տեղափոխել ավելի անվտանգ վայր,
- փչացող իրերը բարձրացրել վերին հարկեր, ձեղնահարկեր,
- ամուր փակել լուսամուտները, դռները, բնակարանի այլ անցքերը,
- անջատել գազը, էլեկտրականությունը և ջուրը,
- բնակարանը բերել <<Առանց տերերի>> վիճակի:

Ջրհեղեղի դեպքում անհրաժեշտ է

- հստակ կատարել կառավարման մարմինների կողմից տրվող ցուցումները,
- եթե չի ստացել կառավարման մարմինների ցուցումները, չենթարկվել խուճապի, չկորցնել ինքնատիրապետումը, արագ շարժվել դեպի մոտակա բարձրադիր վայրը,
- սահմանափակ տարածքում հայտնվելիս բարձրանալ վերին հարկեր, ծառերի վրա և այլ բարձր տեղ, իր տեղի մասին իմաց տալ լուսային, ձայնային ազդանշաններով, գունավոր շոր բարձրացնելով,
- ջրում հայտնվելու դեպքում լողալով կամ լողամիջոցներով շտապ հասնել մոտակա ափ:

Ջրհեղեղից հետո պետք է

- զգուշանալ կտրտված կամ կախված էլեկտրալարերից,
- մինչև շենք մտնելը հավաստիանալ, որ կոնստրուկցիաները տեսանելի վտանգավոր չեն,
- չբնակվել վթարային կամ վստահություն չներշնչող տանը,
- սենյակները զննելիս լուցկի կամ մոմ չօգտագործել, օգտվել ինքնաբավ լապտերից,
- զգուշանալ թունավոր օձերից, որոնք կարող են հայտնված լինել ջրային հոսանքների հետ,
- խմելու ջուրն օգտագործել եռացնելուց հետո,
- չօգտագործել ջրում հայտնված սննդամթերքը,
- ջրատար, գազատար, կոյուղու համակարգերի վնասվածքների մասին

- անմիջապես տեղեկացնել համապատասխան ծառայություններին, առանց անհրաժեշտության չմտնել դեռևս ջրածածկ տարածքները:

Փլուզումներ և քարաթափումներ

Փլուզումը լեռնային ապարների խոշոր բեկորների քարափներից, գառիթափ լանջերից պոկվելու և փլման գործընթաց է, որն ակնթարթորեն կարող է փոխել փլվող տեղամասի ձևը: Փլուզումներն իրենց ծավալով և փլման բնույթով տարբեր են: Դրանք կարող են լինել առանձին բեկորների կամ լեռնագանգվածների մի քանի տասնյակից մինչև միլիոնավոր խորանարդ մետրի սահմաններում: Լանջի զգալի բարձրության դեպքում փլուզման արագությունը կարող է հասնել մինչև 150մ/վրկ, նրանք հովտի հատակ կարող են գահավիժել բուռն քարային հոսքի ձևով, անցնելով 2-4 կմ տարածություն և կարող են նույնիսկ բարձրանալ հանդիպակաց լանջն ի վեր: Փլուզումների տարատեսակներից է քարանետվածքը, որը քարաբեկորների ազատ անկումն է առանց սահելու:

Քարաթափումները նույնպես լանջային լեռկացման ծանրահակ գործընթացներից են:

Ֆիզիկական հողմնահարության հետևանքով մայր ապարները վեր են ածվում բեկորների և սահում են լանջով՝ առաջացնելով քարաթափվածքային կոներ կամ դաշտեր:

Փլուզումների բնորոշ հատկանիշը դրանց առաջացման անսպասելիությունն է, հանկարծակիությունը: Սակայն մինչև փլուզումը ընթանում է այսպես կոչված <<նախապատրաստում>>, այսինքն՝ հողմահարման երկարատև երևույթը: Մթնոլորտային տեղումների, քամու և բնական այլ ազդեցությունների հետևանքով տարատեսակ ապարները վերածում են բեկորների, խճի, ավազի, կավ ու փոշու: Տարբեր ապարների շերտերի թեք դիրքի հետևանքով մակերևույթային ջրերը արագ քայքայում են փուխր շերտերը, իսկ ավելի կարծր շերտերը դուրս են գցվում երկար գագաթների կամ լայնակի ձգված տափարակների ձևով: Երբեմն լանջերն ու գագաթները հողմահարման հետևանքով փշրվում են, վերածվում քարակույտերի, որոնք անկանոն փոփում են լանջերի ստորոտում և գտնվում են սահմանային հավասարակշռության վիճակում: Այնուհետև չնչին ցնցման դեպքում քարաբեկորները թափվում են կամ փլուզվում, այսինքն՝ առաջացնում են քարահոսքեր կամ փլուզումներ:

Խիստ հողմահարված, ճեղքավորված, փլուզման ենթակա վտանգավոր տեղամասեր հաճախ են հանդիպում Հայաստանի Հանրապետության տարածքում: Օրինակ՝ Թումանյանի շրջանի Նեղոց գյուղի շրջակայքում հողմահարված, ճեղքավորված կարծր ապարների բեկորները մոտ 25-40 մետր բարձրությունից ցած են գլորվել:

Հրազդան գետի գառիթափ, բարձր ափերին, Երևան քաղաքի սահմաններում, Դիլիջան-Վանաձոր ավտոճանապարհի աջակողմյան մասերում, Վանաձոր-Ալավերդի երկաթգծի երկարությամբ և այլ տեղերում վտանգավոր գործոն է հանդիսանում ապարների ճեղքերում գտնվող սառած ջուրը, որը գիշերային և ցերեկային ջերմաստիճանների խիստ տատանումների ազդեցության ներքո

Ճեղքերում առաջացնում է փոփոխական լարվածության վիճակ: Նման իրավիճակներում փլուզումները հաճախ կարող են առաջանալ ամենաչնչին պատճառներից, օրինակ՝ ծանր ավտոմեքենայի կամ գնացքի շարժումից, նույնիսկ ուժեղ ձայնից (պայթյուն կամ որոտ) կամ աննշան երկրաշարժային ցնցումներից:

Փլուզման և սողանքի համադրված օրինակ կարող է հանդիսանալ Սանահին կայարանից ոչ հեռու գտնվող տեղամասում 1993թ. դեկտեմբերին տեղի ունեցածը: Երկաթգծից և ավտոճանապարհից վեր գտնվող լանջի վրա տարիներ առաջ նկատվել էին ճեղքեր: Լանջի վրայով անց էր կացված ռոտզման ջրատար: Երկրաբանական հետազոտական աշխատանքները պարզել էին, որ լանջն անկայուն է և անհրաժեշտ էր շտապ միջոցներ ձեռնարկել: Սակայն միջոցառումները չէին իրականացվել, և մեկ ու կես տարի հետո լանջը փլվել էր:

Բնակչության անվտանգության, ինչպես նաև տրանսպորտային ուղիների անխափան աշխատանքի ապահովման համար մեծ նշանակություն ունի վերոհիշյալ երևույթների կանխումը: Անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում պահել ճանապարհների ու բնակավայրերի մոտ գտնվող խիստ զառիթափ տեղամասերը, որտեղ կան ճեղքավորված ապարներ (բազալտներ կամ դրա տարատեսակներ):

Այս երկու գործընթացներից պաշտպանության լավագույն միջոցներն են՝

- շարժվող քարերի արհեստական տեղահանումը և տեղափոխումը.
- պատնեշների ու հենապատերի կառուցումը.
- լանջերի ցանցապատումը:

Ամպրոպներ և կայծակներ՝ մթնոլորտային երևույթ է, որի ժամանակ անձրևային կամ կարկտային ամպերի միջև, կամ ամպի ու երկրի մակերևույթի միջև առաջանում են կայծակներ:

Ամպրոպաբեր ամպը էլեկտրականության վիթխարի կուտակիչ է: Ամպի ստորին մասում կուտակվում են բացասական լիցքեր, իսկ վերին մասում՝ դրական: Ուժեղ ամպրոպներ լինում են հատկապես լեռներում: Ամպրոպների հաճախականությամբ և ուժգնությամբ Կովկասի տարածքում Հայաստանը զբաղեցնում է առաջին տեղը: Ամպրոպային երևույթներն սկսվում են ապրիլից, երբ ամպրոպով օրերի թիվը Հայաստանի տարածքում տատանվում է 3-ից 6 օր: Մայիս-հունիս ամիսներին ամպրոպով օրերի թիվը հասնում է իր առավելագույնին և տատանվում է 7-18 օր: Հաջորդ ամիսներին այդ թիվն սկսում է նվազել և հոկտեմբերին հասնում 1-13 օրվա:

Գյումրիում, Տաշիրում և Ստեփանավանում ամպրոպով օրերի միջին թիվը տարեկան կազմում է 70 օր, իսկ ամենաշատը՝ 100-108 օր: Համարյա երկու անգամ փոքր է ամպրոպով օրերի թիվը Երևանի շրջակայքում (35-40 օր): Հայաստանի մյուս մարզերում և Արցախում ամպրոպով օրերի թիվը կազմում է 40-50 օր:

Իսկ կայծակն իրենից ներկայացնում է էլեկտրական լիցքերի պարպում, որը տեղի է ունենում տարբեր նշանով լիցքավորված ամպերի կամ ամպի և երկրի մակերևույթի միջև:

Տարբերում են կայծակի երեք հիմնական տիպեր՝ գծային, ոչ գծային, գնդաձև:

Կայծակի ամենատարածված ձևը գծայինն է, որը լինում է ամպերի և երկրի

մակերևույթի միջև: Ոչ գծային կայծակը ընդհատումներով գծի տեսք ունի և հազվադեպ է հանդիպում:

Կայծակը բնորոշվում է երկարությամբ, ուղու լայնությամբ, հոսանքի ուժով (ամպեր), լարումով (վոլտ), ամպրոպի տևողությամբ:

Կայծակների երկարությունը երկրի և ամպերի միջև 2-3 կմ, իսկ երկու ամպերի միջև՝ 50կմ: Կայծակի ուղու լայնությունը մինչև 60սմ է, իսկ փողի ջերմաստիճանը կարող է գերազանցել 25000°C:

Հոսանքի ուժը տատանվում է 20000-ից մինչև 200000 ամպերի սահմաններում, իսկ լարվածությունը անցնում է 50մլն վոլտից: Գծային կայծակի 10կմ երկարության դեպքում որոտը տևում է 30վրկ:

Կայծակի պարպման տևողությունը 0,03-0,05 վայրկյան է, իսկ առանձին դեպքերում՝ 0,13:

Գնդաձև կայծակը գնդաձև կամ տանձաձև լուսարձակող զանգված է, որի տրամագիծը տատանվում է 0,2մ-ից մինչև մի քանի մետր և հայտնվում է կայծակից հետո: Գնդաձև կայծակները լինում են լեռնային բարձրադիր վայրերում (D=10-30 սմ) և առաջ են գալիս գծային կայծակներից: Գնդաձև կայծակը տևում է 1 վրկ. մինչև մի քանի րոպե և տարածվում է տարածության մեջ բոլոր ուղղություններով: Ունի պայթյունի հսկայական էներգիա: Գնդաձև կայծակների առեղծվածը դեռ չի բացահայտված:



Պարպումը օդում անցնում է այն տեղերով, ուր ամենաթույլ դիմադրությունն է: Մեկ ամպրոպի ժամանակ կարող է տեղի ունենալ 600-ից ավելի կայծակ:

Արագած լեռան գագաթն ունի մագնիսանալու հատկություն: Այստեղ կողմնացույցի սլաքը <<գծվում է>>, իսկ երբ եղանակն ամպրոպային է, լեռն էլեկտրականանում է և դեպի իրեն է ձգում հակառակ լիցքով լիցքավորված ամպերը: Լեռան վրա երբեմն ծնվում են այնպիսի ահեղ կայծակներ, որ ցնցում են լեռը:

Կայծակից չի կարելի պաշտպանվել մենավոր ծառերի տակ կամ բարձրադիր վայրում: Եթե բաց տարածքում մարդը հանդիպում է ամպրոպի, ապա պետք է գտնի հողակցված ապաստան, դա կարող է լինել, օրինակ՝ քարանձավ (բայց մուտքի մոտ չի կարելի կանգնել): Եթե մոտակայքում չկա ապաստանելու ոչ մի հնարավորություն, ապա վտանգը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է նստել տարածքի ամենացածր

կետում: Կայծակի ժամանակ չի կարելի լողանալ գետում, լճում, չի կարելի լինել նավակում, անհրաժեշտ է հեռու մնալ ջրային տարածքների ափերից: Չի կարելի պատսպարվել խոտի դեզի մեջ: Տանը եղած ժամանակ անհրաժեշտ է փակել դռները, լուսամուտները, անջատել էլեկտրասարքավորումները, չօգտվել ջրի ծորակներից: Կայծակից պաշտպանվելու լավագույն միջոցը շանթարգելների տեղադրումն է:

Ստորերկրյա ջրերի բարձր մակարդակներ: Լինում են ցածրադիր տարածքներում (հովիտներ, դաշտավայրեր), երբ գետնաջրերի սնուցման ծավալները գերազանցում են ջրահեռացման ծավալները: Պատճառներն ունեն ինչպես բնական բնույթ, այնպես էլ արդյունք են բնակչության ոչ հաշվենկատ գործունեության:

Բնական պատճառներն են՝ ջրհեղեղները, մթնոլորտային տեղումները, սելավները: Ջրհեղեղների, սելավների պայքարի մասին արդեն խոսվել է, ուստի միայն նշենք, որ անձրևաջրերն ու ձնհալից առաջացած ջրերը հեռացվում են հեղեղաթողերով, կոյուղագծով:

Մարդկային գործոնով պայմանավորված պատճառների թվում նշենք շոայլ ոռոգման, կենցաղային և տեխնիկական ջրերի արտահոսքը: Սրանք պահանջում են ջրի նորմավորված օգտագործում: Իրական է նաև ոռոգման առաջավոր մեթոդների (անձրևացում, կաթիլային ոռոգում) ներդրումը և, իհարկե, բնակավայրի կոյուղացումը:

Գրունտային ջրերի հեռացման համար կառուցված են դրենաժային ցանցեր: Սակայն վերջիններս նորմալ աշխատում են միայն ջրանցքներում ջրի փոքր արագությունների և ելքերի պայմաններում: Ջրհեղեղների, ջրի ավելի մեծ ելքերի դեպքում դրենաժային ջրանցքները խցանվում են:

Ստորերկրյա ջրերի բարձր մակարդակների իջեցման համար հույժ կարևոր են.

- բնակավայրերի կոյուղացումը,
- դրենաժային ցանցերի սիստեմատիկ մաքրումը,
- արտեզյան հորանցքերի թվաքանակի, տեխնիկական վիճակի, շահագործման վերահսկումը, կարգավորումը,
- ձկնաբուծական ջրամբարների գործունեության ուսումնասիրությունը, այստեղ ջրային ռեժիմի կանոնակարգումը, ջրերի ռացիոնալ օգտագործումը և արտահոսած ջրերը մինչև գետերը հասցնելը:

Բնական է, նշված հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ է պետական հստակ քաղաքականություն այս ոլորտում: Այստեղ նույնպես անհրաժեշտ է մշակել և կատարելագործել օրենսդրական նորմատիվային բազան, ստեղծել տնտեսական լծակներ, մեխանիզմներ՝ ուղղված նշված հիդրոմեխորատիվ, ջրամատակարարման և կոյուղացման կառուցվածքների, համակարգերի ստեղծմանը և եղածների ֆիզիկական վիճակի պահպանմանը, բարելավմանը, ջրի ռացիոնալ օգտագործմանը, շահագրգիռ օբյեկտների և սուբյեկտների հարաբերությունների հստակեցմանը:

Եվ, իհարկե, հույժ անհրաժեշտ է համայնքի մոբիլիզացումը ջրերի մուտքերը գրունտային ջրերի ավազան նվազագույնի հասցնելու, տարածքից առավելագույնս

հեռացնելու, մեխորատիվ համակարգերի պահպանման, նորմատիվային պահանջների պահպանման ուղղությամբ:

Անտառային հրդեհներ

Անտառային հրդեհների ավելի քան 95% առաջացման պատճառը հետևանք է մարդու անշրջահայաց գործունեությանն է՝ բուսականության անվերահսկելի այրումն է, որը տարերայնորեն տարածվում է անտառային տարածք: Անտառային հրդեհները լինում են ստորին, վերին (գագաթային) և ստորգետնյա:

Վերին անտառային հրդեհների ժամանակ այրվում են ծառերի պսակները: Տարածվում են ուստյուններով կամ հոծ պատերով: Ստորինի ժամանակ այրվում են վերգետնյա ծածկը, թփերը: Տարածման արագությունը մինչև 6կմ/ժամ է: Ստորգետնյա անտառային հրդեհների ժամանակ այրվում է 0,3 մ խորությունից վար գտնվող տորֆային շերտը:

Խոշոր անտառային հրդեհների ուրվագիծը անկայուն է և կախված է քամու ուղղությունից, ուժգնությունից, ջրային սահմաններից և այլն: Ծագում են ծխի ընդարձակ գոտիներ, կտրուկ նվազում է տեսանելիությունը, հաճախակի է թունավորումը ածխաթթու գազից: Առաջանում են մարդկանց կողմից հակահրդեհային կանոնները չպահպանելու (մոտ 90%-ը), ինչպես նաև ամպրոպի ժամանակ ժայթող կայծակի, տորֆի ինքնաբռնկումների (օդի բարձր ջերմաստիճանի, անձրևների տևական բացակայության պայմաններում) հետևանքով:

Ժամանակին հրդեհների օջախները չվերացնելու դեպքում վերջիններս վերածվում են զանգվածային հրդեհների՝ աղետալի հետևանքներով:

Ստորին հրդեհները երբեմն տարածվում են արագ՝ շրջանցելով խոնավ մասերը: Սովորաբար զարնանն են լինում, երբ չորանում է դյուրավատ շերտի վերին մասը: Ստորին հրդեհի խորանալուց այրվում են ծառերի արմատները և կեղևը, անտառաթփուտները:



Ստորգետնյա հրդեհի ժամանակ սովորաբար այրվում է անտառային զանգվածի տակ ընկած տորֆը: Սովորաբար այրվում է մինչև խոնավ շերտերին հասնելը:

Վերին անտառային հրդեհի ժամանակ բռնկվում են ծառերի սաղարթները, տերևները: Բոցը տարածվում է ինչպես վերհողյա ծածկույթով, այնպես էլ ծառերի սաղարթամասերով:

Վերին հրդեհները ավելի հաճախ պատահում են լեռնային անտառներում, երբ կրակը թեք լանջերով տարածվում է, որին նպաստում է ուժեղ քամին:

Սաղարթով կրակն առաջ շարժվելու ժամանակ քամին ցրում, տարածում է կայծեր, այրվող ճյուղեր և խշուր, որոնք հիմնական օջախից տասնյակ հարյուրավոր մետրեր առաջ ստորին հրդեհի նոր օջախներ են ստեղծում: Թռիչքի ժամանակ բոցը սաղարթներով տարածվում է 15-20 կմ/ժամ արագությամբ:

2 քառ. կմ մակերեսից մեծ տարածքով անտառային հրդեհը համարվում է խոշոր հրդեհ:

Անտառային հրդեհների դեմ պայքարի կազմակերպումը:

Անտառային հրդեհները պետք է մարվեն այն կազմակերպությունների կողմից, որոնք տնօրինում են այդ անտառները: Անտառապահը պարտավոր է ի հայտ բերել հրդեհը և հանգցնել: Անհրաժեշտության դեպքում օգնության են հասնում կամավորական խմբերը և բնակչությունը:

Անտառտնտեսություններին կից գործում են մասնագիտացված ստորաբաժանումներ՝ հազեցված հրշեջ ավտոցիստեռնով, բեռնատար մեքենայով, սայլակով, մոտոցիկլով և շարժական մոտոպոմպերով:

Գործում են հրշեջ կայաններ, ավիացիոն բաժանմունքներ, անտառահրդեհային կազմավորումներ՝ կախված անտառի մեծությունից, հրդեհի վտանգից:

Հրշեջ պրոֆիլակտիկայում կարևոր է անտառում արգելափակիչ գոտիների և անջրպետների ստեղծումը:

Հրդեհի վերացման փուլերն են՝ հրդեհի դադարեցում (բոցերի դադարեցում), տեղափակում, մարում և հսկողություն:

Բնական է, բոլոր եղանակները կախված են հրդեհի տեսակից, մասշտաբներից, օդերևութաբանական պայմաններից, տեղանքից, առկա ուժերից և միջոցներից:

Հանգցնելու հիմնական եղանակներն են՝ հրդեհի եզրերի ձաղկումը կամ վրան հող լցնելը, արգելափակիչ կամ հանքայինացված շերտերի և ակոսների բացելը, ջուր կամ հրամարիչ քիմիկատային լուծույթներ օգտագործելը, հրաշիջումը (հանդիպակական կրակ բաց թողնելը):

Հրդեհի ձաղկելը անտառային հրդեհը հանգցնելու պարզագույն եղանակն է: Օգտագործում են 1-2 մ երկարությամբ ճյուղերի խուրձեր կամ ոչ մեծ, առավելապես սաղարթավոր ծառեր:

Կրակի դեմ պայքարում անչափ արդյունավետ է ջուրը: Գոլորշիանալով ջուրը կլանում է մեծ քանակությամբ ջերմություն, որի հետևանքով այրման գոտին հովանում է: Սակայն ջուրը վատ ջերմահաղորդիչ է և դուրս է հոսում: Դրա համար նպատակահարմար է գործել ցրիվ շիթով: Գոլորշին արգելափակում է նաև թթվածնի


ներթափանցումը դեպի կրակ: Դյուրավատ նյութերի մեջ ջրի թափանցելիությունը մեծացնելու համար ջրին խառնում են քիմիական նյութեր:

Անտառային հրդեհները բացառելու համար արգելվում է՝

- այրել գյուղատնտեսական մնացորդները, խոզանը,
- անտառում խարույկ վառել,
- անտառում հրդեհավտանգ սեզոնին գետին գցել վառվող լուցկու, ծխախոտի մնացորդներ,
- անտառում թողնել դյուրավատ նյութերով ներծծված թղթեր և շորի կտորներ,
- արևի տակ ապակի թողնել,
- մեքենայի շարժիչի աշխատանքի ժամանակ բաքը լիցքավորել վառելիքով.
- խարույկ վառել:


I.2. ՎՏԱՆԳՆԵՐԻ ԵՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐ

Շատ հաճախ բնածին վտանգների ու վտանգավոր երևույթների ազդեցությունը տեխնոլոգիական գործընթացների վրա հանգեցնում է բնածին և տեխնածին վտանգների համալիր ազդեցության, որն իր հերթին հանգեցնում է մարդու բնակության միջավայրի որակական փոփոխությունների և շատ դեպքերում՝ աղետալի հետևանքների: Պետք է նշել, որ վտանգը ժամանակի ընթացքում վերափոխվում է վտանգավոր երևույթի և հակառակը (տես գծապատկերը):




Վտանգի և վտանգավոր երևույթների վերափոխումներ

Իհարկե, այսպիսի փոխադարձ վերափոխումները մեծ մասամբ կրում են տեսական բնույթ և միշտ չէ, որ վտանգավոր երևույթը վերափոխվում է այն նույն վտանգին, որից ինքն է վերափոխվել: Ավելին, վտանգավոր երևույթը կարող է դառնալ մեկ այլ վտանգի վրա այնպիսի ազդեցություն, որի հետևանքով այդ վտանգը վերափոխվի իրեն համապատասխան վտանգավոր երևույթի: Օրինակ՝ ՀՀ ողջ տարածքում առկա է սեյսմիկ վտանգը: Երկրաշարժի ծագման դեպքում երկրաշարժի ազդեցությանը ենթարկված տարածքում այդ վտանգը վերափոխվում է <<Երկրաշարժ>> երևույթի, որի ավարտից հետո նորից նույն տարածքում առկա է սեյսմիկ վտանգը: Այստեղ վտանգը վերափոխվեց վտանգավոր երևույթի, իսկ վերջինս վերափոխվեց նույն վտանգին (տես գծապատկերը):



Սեյսմիկ վտանգի վերափոխումը

Սակայն նույն երկրաշարժի ազդեցությունը, օրինակ, քիմիական վտանգի վրա կարող է բերել <<Քիմիական նյութերի արտանետում>> վտանգավոր երևույթի առաջացման: Այսինքն <<Երկրաշարժ>> երևույթի ազդեցության արդյունքում քիմիական վտանգը կարող է վերափոխվել քիմիական վտանգավոր երևույթի: <<Քիմիական արտանետում>> երևույթը կարող է վերափոխվել բնապահպանական վտանգի, մարդկանց զանգվածային թունավորումների վտանգի, կենդանիների, բույսերի զանգվածային հիվանդությունների վտանգի և այլն: Պետք է նշել, որ մինևույն <<Երկրաշարժ>> երևույթի ազդեցության արդյունքում միաժամանակ կամ ժամանակի մեջ որոշակի շեղումներով բազմաթիվ վտանգներ կարող են վերափոխվել համապատասխան վտանգավոր երևույթների և, ընդհակառակը, բազմաթիվ վտանգավոր երևույթներ կարող են վերափոխվել համապատասխան վտանգների (տես գծապատկերը):



Սեսմիկ վտանգի վերափոխումն այլ վտանգի և վտանգավոր երևույթների

Նույնիսկ դժվար է պատկերացնել, որ երկրաշարժը, լինելով <<Երկրաշարժ>> երևույթ, միաժամանակ վերափոխված է այլ վտանգավոր երևույթների (բազմաբնույթ հրդեհների, սողանքների, փլուզումների, քարաթափումների, քիմիական, ճառագայթային արտանետումների, անասնահամաճարակների, կենսաբանական վարակվածության, համաճարակների, ջրհեղեղների, բույսերի զանգվածային հիվանդությունների և այլն) առաջացման համար վտանգի, որոնք կարող են դառնալ նոր վտանգների և նոր վտանգավոր երևույթների առաջացման պատճառ:

1.3. ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ (ՎԲԵ) ՄԻՋԵՎ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Յուրաքանչյուր ՎԲԵ՝ կախված տեսակից, բնույթից, մասշտաբներից, հասկանալի է, թողնում է ամենատարբեր հետևանքներ, որոնցից մի մասը կարող է այնքան էական լինել, որ առաջացնի նոր ՎԲԵ:

Իհարկե, յուրաքանչյուր մաքուր ՎԲԵ-ին (ոչ կոմբինացված այլ աղետների հետ) բնորոշում են հիմնականում որոշակի հետևանքներ, որոնց շրջանակները պայմանավորված են աղետի խոցող գործոններով, խոցման դաշտերով, տեղական պայմաններով, խոցելիությամբ և այլն:

Սույն հանձնարարականում բերվում է առաջադրանքի կատարման առաջին երկու փուլերի կատարման ընթացքը, այն է՝ նշել բերված ՎԲԵ-րի միջև կապերը և ներկայացնել, ըստ նշված կապերի, հնարավոր երկրորդային ՎԲԵ-րի ծագման անհրաժեշտ պայմանները:

ՎԲԵ-րի միջև եղած կապերի որոշման համար լսարանին ներկայացվում է ՎԲԵ-րի ցանկ: Ընդ որում, այդ ցանկի ընդարձակությունը պայմանավորված է ուսումնական խմբի կրթական աստիճանով: Հանրակրթական դպրոցի ցածր դասարաններում կներկայացվի հինգ-վեց ՎԲԵ, բարձր դասարաններում՝ տասն-տասներկու, իսկ բուհական համակարգում՝ Հայաստանի Հանրապետության տարածքում հնարավոր գրեթե բոլոր ՎԲԵ-ը:

Յուրաքանչյուր աղետ տեղի է ունենում նյութական օբյեկտի վրա էներգիայի և տեղեկատվության ազդեցության տակ: Քանի որ դիտարկում ենք միայն ՎԲԵ-ը, ապա երկրորդ գործոնը հիմնականում կարելի է անտեսել: Նյութերի և էներգիայի փոխազդեցության հետևանքով տեղի է ունենում դրանց փոխակերպում՝ մեկը մյուսի: Էներգիայի տարբեր տեսակները՝ հիմնականում ֆիզիկական (կինետիկական, ակուստիկական, էլեկտրամագնիսական, ճառագայթային, ջերմային), քիմիական, կենսաբանական, առաջացնում են համապատասխան խոցումներ: Այսինքն՝ խոցող ազդեցությունները հիմնականում ունեն էներգետիկ էություն:

ՎԲԵ-ի միջև հնարավոր կապերը և այդ կապերը գործելու անհրաժեշտ պայմանները որոշելու համար պետք է յուրաքանչյուր ՎԲԵ-ի համար վերհիշել, բացահայտել դրա ազդեցությունները, խոցող գործոնները: Վերջիններիս վերլուծության արդյունքներն էլ, ըստ էության, կբերեն տվյալ ՎԲԵ-ի հետևանքով առաջացնող երկրորդային ՎԲԵ-ի որոշմանը:

Օրինակ՝ երկրաշարժի ժամանակ երկրակեղևում առաջանում են ուղղաձիգ և հորիզոնական հսկայական լարումներ: Վերջիններս երկրակեղևի մակերևույթին առաջացնում են ավերիչ տատանումներ: Այս տատանումները կարող են բերել հիմնականում տեխնածին աղետների, իսկ ահա լանջերի վրա կարող են առաջացնել տարբեր ՎԲԵ. սողանքավտանգ լանջերի վրա՝ սողանքներ, ցածր կայունություն ունեցողների վրա՝ փլուզումներ, ձնածածկվածների վրա՝ ձնհոսքեր: Լանջերի ստորոտում կիրճերի, ձորերի, գետերի առկայության դեպքում հիշյալ ՎԲԵ-րը կարող են ստեղծել ժամանակավոր ջրարգելքներ, որոնց հետագա փլուզումը կբերի ջրհեղեղների, սելավների:

Կամ այլ մոտեցում. վերցնենք մի որևէ ՎԲԵ և քննարկենք՝ ո՞ր ՎԲԵ-րի հետևանքով այն կծագի:

Օրինակ՝ երաշտը: Այս ՎԲԵ-ն արդյունք է հիմնականում ուժեղ շոգերի և սակավաջրության, որի հիմնական պատճառներն են վերգետնյա և ստորերկրյա ջրերի ցածր մակարդակները: ՎԲԵ-րի միջև կապերը նշելուց հետո պետք է անցնել այդ կապերի առաջացման համար անհրաժեշտ պայմանների որոշմանը: Այստեղ պետք է թվարկել այդ պայմանները, առանց անդրադառնալու դրանց քանակական շեմերին: Բերենք օրինակներ:

<<Տեղատարափ անձրևներ-սելավներ>> կապը: Այսինքն՝ տեղատարափ անձրևները կարող են առաջացնել սելավներ հետևյալ պայմանների դեպքում՝ տեղումների անհրաժեշտ քանակ, բավարար ջրահավաք ավազան, մեծ թեքության լանջեր, լանջերի մերկություն և դրանց մակերևույթին փխրուն, անկայուն ապարների առկայություն և այլն:

<<Ուժեղ շոգ-երաշտ>> կապը: Այս կապը տեղի կունենա հետևյալ պայմանների դեպքում՝ տեղումների երկարատև սակավություն կամ բացակայություն, բարձր ջերմաստիճան, վերգետնյա և ստորերկրյա ջրերի ցածր մակարդակներ, ոռոգման ջրերի պակասություն և այլն:

1.4. ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Կլիմայի գլոբալ փոփոխությունը և դրա բացասական հետևանքները մարդու բարեկեցության և տնտեսության զարգացման վրա հայտնվել են համաշխարհային հանրության ուշադրության կենտրոնում: Այսօր արդեն կլիմայի փոփոխությունը ոչ միայն բնապահպանական խնդիր է, այլ նաև մեծ ազդեցություն ունի տնտեսության տարբեր ճյուղերի վրա և ընդհանուր առմամբ երկրի կայուն զարգացման վրա:

Բնական վտանգավոր երևույթները ըստ էության չեն առաջացնում աղետներ, քանի դեռ չեն զուգակցվում հասարակության խոցելիության հետ: Այդ իմաստով կլիմայի փոփոխության ազդեցությունը աղետների վտանգների վրա հնարավոր է՝

- Վտանգավոր հիդրոոդերևութաբանական և կլիմայական երևույթների հնարավոր և սպասվող ավելացման ,:
- Վտանգավոր բնական երևույթների նկատմամբ հասարակության խոցելիության աստիճանի բարձրացման հետևանքով:

Վերջինիս պատճառներից են էկոհամակարգերի դեգրադացիան, բնական պաշարների և ջրային ռեսուրսների նվազեցումը, պարենամթերքների, կյանքի համար անհրաժեշտ միջոցների պակասությունը և այլն:

Այսպիսով, կլիմայի փոփոխությունը լրացուցիչ բեռ է հանդիսանում աղետների վտանգներից հասարակության դիմադրողականության հնարավորությունների առումով:


Այդ պատճառով արդիական խնդիր է դարձել կլիմայի փոփոխության ազդեցության գնահատումը տնտեսության և էկոհամակարգերի վրա, և այդ փոփոխություններին դիմակայելու համար հարմարվողականության ծրագրերի մշակումը:

Կլիմայի փոփոխությունը որոշակի տարածքի, շրջանի կամ ամբողջ մոլորակի եղանակային տևական փոփոխությունն է: Այդ փոփոխությունը չափվում է միջին եղանակային ցուցանիշների՝ ջերմաստիճանի, քամիների, տեղումների և այլնի, փոփոխություններով: Կլիմայի փոփոխությունը տեղի է ունենում այն դեպքում, երբ փոփոխվում է երկրի մթնոլորտի և մակերևույթի կողմից կլանված էներգիայի, ինչպես նաև արեգակի էներգիայի ընդհանուր քանակը: Այն տեղի է ունենում նաև այն դեպքում, երբ փոփոխվում է երկրի մակերևույթից և մթնոլորտից դեպի տիեզերք անդրադարձվող և ճառագայթվող էներգիայի քանակը:

Երկիրն էներգիա է ուղարկում տիեզերք նույն չափով, որքան ստանում է արեգակից: Արեգակից ստացվող էներգիան երկիր է հասնում մեծ մասամբ կարճալիք ճառագայթման ձևով: Ճառագայթման մի մասն անդրադառնում է երկրի մակերևույթից և մթնոլորտից: Սակայն նրա մեծ մասն, այնուամենայնիվ, ուղղակիորեն անցնում է մթնոլորտի միջով և տաքացնում Երկրի մակերևույթը: Երկիրն այս էներգիայից ազատվում է (հետ է ուղարկում տիեզերք) երկարալիք ինֆրակարմիր ճառագայթման ձևով: Ինֆրակարմիր ճառագայթների մի մասն էլ իր հերթին կլանվում է մթնոլորտում պարունակվող ջրային գոլորշիների, ածխածնի

երկօքսիդի և բնական այլ “ջերմոցային գազերի” կողմից: Փաստորեն վերջիններս արգելակում են երկրից էներգիայի անմիջական անցումը տիեզերք: Դրա փոխարեն, բազմաթիվ այլ տարաբնույթ և փոխկապակցված պրոցեսներ (ճառագայթումը, օդային հոսանքները, գոլորշիացումը, ամպագոյացումը, անձրևը) այդ էներգիան տեղափոխում են մթնոլորտի վերին շերտեր, որտեղից էլ այն ճառագայթվում է տիեզերք:

Կլիմայական համակարգի սխեմատիկ պատկերը



Աղբյուրը, IPCC 1995

Ջերմոցային գազերը

Մարդու գործունեության հետևանքով փոխվում է մթնոլորտը կազմող հիմնական ջերմոցային գազերի (ՋԳ)՝ **ածխածնի երկօքսիդ** (CO_2), **մեթան** (CH_4) և **ազոտի ենթօքսիդ** (N_2O), հաշվեկշիռը: Ջրային գոլորշիները ևս հիմնական ջերմոցային գազեր են, սակայն մարդու գործունեության ուղղակի արդյունք չեն:

Վերջին ժամանակներում այս երեք գազերին ավելացել են նաև **հիդրոֆտորածխածինները** (HFCS), **պերֆտորածխածինները** (PFCS) և **հեքսաֆտորիդը** (SF_6): Մթնոլորտում այդ գազերի արտանետումը փոփոխում է մթնոլորտի էներգիա կլանելու ունակությունը և բարձրացնում օդի ստորին շերտի ջերմաստիճանը: Արդյունքում առաջանում է <<**ուժեղացված ջերմոցային էֆեկտ**>>, ինչն էլ հանգեցնում է **գլոբալ տաքացման**:


Մոլորակի կլիման երկրաբանական պատմության ընթացքում փոխվել է բնական ճանապարհով արեգակնային փուլերով: Դիտարկումները ցույց են տալիս, որ մոլորակի մթնոլորտի տասնամյակների փոփոխության պատճառը մարդու

գործունեությունն է: Մարդը վառում է հանքային վառելիք էլեկտրաէներգիայի արտադրության, տները տաքացնելու, ավտոմեքենաներ վարելու համար՝ դրանով ավելի ու ավելի մեծացնելով ՋԳ-րի արտանետումները մթնոլորտ: Կլիմայական փոփոխությունը, հավանաբար, զգալի ազդեցություն կունենա մեր մոլորակի վրա: Որքան արագ է փոփոխվում կլիման, այնքան մեծ է վնասի չափը: ՋԳ-րի ապագա արտանետումների մակարդակը կախված կլինի աշխարհի բնակչության թվի, տնտեսական, տեխնոլոգիական և սոցիալական զարգացման միտումներից:

Կլիմայի բնական փոփոխության գործոններից է նաև օվկիանոսային հոսանքների փոփոխությունը: Կլիմայի վրա կարևոր մարդածին ներգործողները աերոզոլներն են. առաջանում են ծծմբի երկօքսիդից, որը հիմնականում արտանետվում է ջերմակայաններից, անտառային հրդեհների ծխից ու գյուղատնտեսական թափոնների այրումից: Աերոզոլները պահպանվում են մթնոլորտում ընդամենը մի քանի օր, սակայն դրանք արտանետվում են այնպիսի մեծ քանակությամբ, որ կլիմայի վրա թողնում են զգալի ազդեցություն:

Մարդու գործունեության հետևանքով առաջացող ածխածնի երկօքսիդի արտանետումներն առաջանում են անտառահատումներից, վառված կամ քայքայված ծառերից: Նույնիսկ էթե մարդու գործունեության հետևանքով առաջացող ածխածնի երկօքսիդի արտանետումների կեսը կլանվի օվկիանոսի և ցամաքի կողմից, միևնույն է, կանխարգելիչ միջոցառումների բացակայության դեպքում մթնոլորտում դրանց քանակը յուրաքանչյուր 20 տարին մեկ կշարունակի ավելանալ 10%-ով:

CO₂-ի ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՆ ՄԹՆՈԼՈՐՏՈՒՄ




Հայաստանում ՋԳ-երի ընդհանուր արտանետումները 2000թ. բազային տարվա (1990թ.) նկատմամբ կրճատվել են 73%-ով: Արտանետումների կտրուկ կրճատումը

պայմանավորված է 1992-1995թթ. էներգետիկ և տնտեսական ճգնաժամով, իսկ այնուհետև՝ տնտեսությունում նշանակալի տեղաշարժով՝ արդյունաբերության մասնաբաժնի նվազեցմամբ և ոչ արտադրական ոլորտի մասնաբաժնի ավելացմամբ:

Մեկ շնչի հաշվով ՋԳ-երի արտանետումները (CO₂ համ.) նվազել են 6.9 տ-ից (1990թ.) մինչև 1.6 տ (2000թ.) և 2 տ (2006թ.):

Հայաստանում ջերմոցային գազերի արտանետումներն ըստ սեկտորների (առանց ՀՀՓԱՏ), 1990-2006թթ. .




Կլիմայի փոփոխությունը Հայաստանում և դրա կանխատեսումները (համաձայն Հայաստանի Հանրապետության կլիմայի փոփոխության երկրորդ ազգային հաղորդագրության)

Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խմբի (ԿՓՓՄԽ, IPCC) կողմից պատրաստված զեկույցներում տրված է կլիմայի փոփոխության գիտականորեն հիմնավորված գնահատականները, դրա մարդածին բնույթի ապացույցները և հնարավոր զարգացումների վերաբերյալ կանխատեսումները: Այնուամենայնիվ աշխարհում դիտվում է այդ երևույթի է՛լ ավելի արագ աճ, է՛լ ավելի էքստրեմալ դրսևորումներ:


ԿՓ - փաստեր


- Վերջին 12 տարիներից 11 ամենատաքն են սկսած 1850թ.
- Մթնոլորտում ջերմոցային գազերի նշանակալի աճ՝
 - CO₂- նախաարդյունաբերական շրջանի 280ppm -ից աճ 379ppm՝ 2005թ., 455ppm՝ 200
 - CH₄ - նախաարդյունաբերական շրջանի 715ppb-ից աճ 1774ppb՝ 2005թ.
 - N₂O - նախաարդյունաբերական շրջանի 270ppb-ից աճ 319ppb՝ 2005թ.
- Մովի մակարդակի բարձրացում - 17 սմ վերջին հարյուրամյակում, կրկնապատկում՝ վերջին տասնամյակում
- Գրեյվանդիայի սառցադաշտերի հալչում՝ 2002-2006թթ. 150-250 կմ³ տարեկան, Անտարկտիդայի սառցադաշտերի հալչում 2002-2005թթ. 152կմ³ տարեկան



Հայաստանի աշխարհագրական դիրքը և լեռնային բարդ ռելիեֆը պայմանավորում են բնական պայմանների և կլիմայական գոտիների բազմազանությունը՝ 6 կլիմայական գոտի, չոր մերձարևադարձայինից մինչև խիստ բարձրլեռնային, մշտական ձյան և սառցե շերտերից մինչև տաք և խոնավ մերձարևադարձային անտառներ և խոնավ կիսաանապատային տափաստաններ:

Հայաստանի կլիման չոր է, միջին տարեկան մթնոլորտային տեղումները կազմում են 592մմ է: Տեղումների բաշխվածությունը խիստ անհավասարաչափ է: Օդերևութաբանական դիտարկումների տվյալների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում նկատվում է ջերմաստիճանի բարձրացում վերջին տասնամյակների ընթացքում: Վերջին 80 տարիների կտրվածքով դիտվել է տարեկան ջերմաստիճանի աճ 0.85⁰C-ով և տեղումների նվազում 6-8%-ով:





Բ

Միջին տարեկան օդի ջերմաստիճանի (ա) և տեղումների քանակի (բ) շեղումները 1961-1990թթ. միջին արժեքից

Ջերմաստիճանի և տեղումների փոփոխությունները ՀՀ տարածքի տարբեր շրջաններում և տարբեր սեզոններում ունեն տարբեր միտումներ:

Տեղումների տարածքային բաշխման փոփոխությունները բավականին անկանոն են: Այդպես, երկրի հյուսիս-արևելյան և կենտրոնական (Արարատյան դաշտավայր) շրջանները առավել չոր են դարձել, իսկ հարավային և հյուսիս-արևմտյան հատվածներում և Սևանա լճի ավազանում տեղումների քանակը վերջին 70 տարվա ընթացքում ավելացել է:

Բնական աղետների շարքում Հայաստանը բոլորից շատ ազդեցություն է կրում երաշտներից, վաղ գարնանային ցրտահարություններից, սառը/տաք հոսանքներից, կարկտահարությունից, սելավներից, սողանքներից, ուժեղ քամիներից, մառախուղից և անտառային հրդեհներից, որոնց ուժգնությունը և հաճախականությունը վերջին տարիներին աճել է:

Կլիմայի փոփոխության կանխատեսումները. Շրջանառության ընդհանուր մոդելների /ՇՀՄ/ արդյունքները

Հայաստանում կլիմայի փոփոխության տարբեր սցենարներով կատարված հաշվարկների համաձայն 2030, 2070, 2100 թվականների կտրվածքով նախատեսվում է ջերմաստիճանի նշանակալի և անընդմեջ աճ, հատկապես գարնան ու ամռան ամիսներին: Ջերմաստիճանի աճը ավելի զգալի կլինի Հայաստանի արևմտյան և կենտրոնական շրջաններում (Արարատյան դաշտավայր)՝ 1,1°C մինչև 2030թ., 2,7 °C մինչև 2070թ., 4,4°C մինչև 2100թ.

Հայաստանում գլոբալ տաքացման հետևանքով սպասվելու է տեղումների էական շեղումներ կլիմայական նորմերի նկատմամբ: Ամռանը տեղումները խիստ նվազում են: Տարվա այլ եղանակներին տեղումների տատանումների բաշխվածության պատկերներն իրար նման են, սակայն ունեն բացարձակ արժեքների

որոշակի տարբերություններ: Տեղումների առավելագույն փոփոխությունը սպասվում է զարնանը: Հայաստանում տեղումների փոփոխությունը տարբեր շրջաններում տարբեր է: Այն նվազելու է Արարատյան հարթավայրում, աճելու է նախալեռներում, լեռներում և Սևանա լճի ավազանի արևմտյան մասում: Լեռնային շրջաններում (Արագած, Գեղամա, Վարդենիսի լեռնաշղթա, Սյունիքի նախալեռներ) սպասվում է տեղումների աճ ներկայիս համեմատ, իսկ հարթավայրերում սպասվում է տեղումների քանակության կտրուկ նվազում: Ըստ տեղումների կանխատեսման այս արդյունքները հուշում են, որ Հայաստանը տեղական մակարդակով ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և կառավարման բնագավառում պետք է ձեռնարկի մի շարք մեղմացման և հարմարվողականության միջոցառումներ: Կլիմայի կանխատեսվող փոփոխության հետևանքով Հայաստանի տարածքի գումարային գետային հոսքը մինչև 2030թ. կնվազի 6,7%-ով, մինչև 2070թ.՝ 14,4%-ով, մինչև 2100թ.՝ 24,4%-ով (1961-1990թթ. համեմատ): Չյան տեսքով տեղումները կնվազեն 7-11% մինչև 2030թ., 16-20% մինչև 2070թ. և 20-40% մինչև 2100թ.:

Կլիմայի փոփոխության սցենարների համաձայն 2030թ. կանխատեսվում է գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի բերքատվության անկում 8-14%-ով, արոտավայրերի ընդհանուր մակերեսի և նրանց բերքատվության կրճատում 4-10%-ով, ենթալպյան և ալպյան գոտու առավել արժեքավոր արոտավայրերի կրճատում 19-22%-ով:

Տեղումների կրճատման և ջերմաստիճանի բարձրացման հետևանքով սպասվում է կլիմայական գոտիների շեղում 200-250մ լեռնային պրոֆիլով դեպի վեր մոտակա 100 տարիների ընթացքում:

Կլիմայական ռիսկերի կառավարումը և աղետների ռիսկերի նվազեցումը

Հաշվի առնելով կլիմայի փոփոխության հետ կապված աղետների քանակի և ինտենսիվության աճը վերջին տարիների ընթացքում, ինչպես նաև դրանց կողմից տնտեսության տարբեր ճյուղերին հասցրած զգալի կորուստները և՛ գլոբալ և՛ տեղական մակարդակներում, անհրաժեշտություն է առաջացել նոր լուծումներ և մոտեցումներ գտնել կլիմայի փոփոխության հիմնախնդրի լուծման համար: Կլիմայական ռիսկերի կառավարումը (ԿՌԿ) նոր մոտեցում է կլիմայի փոփոխության բացասական ազդեցության դեմ պայքարի հարցում:

ԿՌԿ ենթադրում է գոյություն ունեցող և սպասվող ապագա ռիսկերի գնահատում, այդ թվում կլիմայի փոփոխության հետ կապված ռիսկերի գնահատում, և վերջիններիս ինտեգրում երկրի զարգացման ծրագրերի, քաղաքականության, ռազմավարական փաստաթղթերի մեջ՝ և՛ ազգային, և՛ տեղական մակարդակներում:

Կլիմայի փոփոխության երևույթը, իր բացասական հետևանքներով, մեր հազարամյակի առավել վտանգավոր գործոններից է, որը նպաստում է աղետների քանակի և մասշտաբների աճին՝ հաշվի առնելով այդ երևույթների միևնույն երկրաֆիզիկական բնույթը:

Դրան դիմակայելու միջոցներից է աղետների վտանգների նվազեցման

գործընթացում կլիմայական ռիսկերի կառավարման գաղափարի ինտեգրումը: Այս մոտեցման կիրառումը թույլ կտա զգալիորեն նվազեցնել ռիսկերը և բարձրացնել հարմարվողականությունը կլիմայի փոփոխության բացասական ազդեցության նկատմամբ:

Կլիմայական ռիսկերի կառավարման հիմնական նպատակն է ամրապնդել և զարգացնել բնակչության կարողությունները ԿՓ հարմարվողականության ասպարեզում, նվազեցնել ԿՓ հետևանքով տնտեսության տարբեր ճյուղերի խոցելիությունը այնպիսի բնական աղետներից ինչպիսիք են՝ երաշտը, հեղեղումները, սելավները և այլ եղանակակլիմայական բնույթի վտանգավոր երևույթները, ինչպես նաև ապահովել երկրի կայուն զարգացումը՝ ռազմավարական ծրագրերում ԿՓ բաղադրիչի ինտեգրման միջոցով:

Կլիմայական ռիսկերի կառավարման խնդիրն է գնահատել հնարավոր ռիսկերը և մշակել միջոցառումներ ուղղված դրանց կանխարգելմանն ու հետևանքների նվազեցմանը գլոբալ, ազգային և տեղական մակարդակներով:

Կլիմայական ռիսկերի կառավարման և աղետների ռիսկերի նվազեցման ռազմավարություններն ունեն ընդհանուր պահանջներ և մոտեցումներ: Դրանք են խոցելիության գնահատումը, արձագանքումը, կարողությունների ամրապնդումը և հատկապես, հարմարվողականության, մեղմացմանն ու կանխարգելմանն ուղղված գործողությունների ինտեգրումը ազգային և ճյուղային զարգացման ծրագրերում:

Կլիմայի փոփոխության ազդեցությունը Հայաստանում. Խոցելիություն

Կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունն այսօր զգացվում են ողջ աշխարհում և Հայաստանը բացառություն չէ: Այն բնորոշվում է խոցելի էկոհամակարգերով, կլիմայի չորայնությամբ, ակտիվ արտածին ու անապատացման գործընթացներով և հաճախակի նկատվող տարերային աղետներով, որոնք երկիրն առավել զգայուն են դարձնում կլիմայի փոփոխության ազդեցությունների նկատմամբ:

Դժվար է գտնել տնտեսության որևէ ճյուղ, որի պլանավորման կամ ընթացիկ խնդիրների լուծման համար անհրաժեշտ չլինի եղանակակլիմայական պայմանների մասին տեղեկատվությունը: Տնտեսության ճյուղերը առանձնապես մեծ կորուստներ են կրում վտանգավոր և անբարենպաստ հիդրոոլերևութաբանական պայմաններից: Այդ ոլորտներից կարելի է նշել գյուղատնտեսությունը, էներգետիկան, առողջապահությունը, տրանսպորտը և այլն:


Ձերմաստիճանի բարձրացումը և տեղումների քանակի կրճատումը կարագացնեն անապատացման գործընթացները և բացասաբար կանդրադառնան մարդու առողջության, կլիմայակախվածություն ունեցող տնտեսության ճյուղերի, շրջակա միջավայրի և բնական էկոհամակարգերի վրա:

Ջրային ռեսուրսների նվազեցումը անմիջականորեն կանդրադառնա գյուղատնտեսության վրա՝ ռոտզման հնարավորությունների նվազումը, մշակաբույսերի բերքատվության անկումը և այլ գործոնները կհանգեցնեն գյուղատնտեսական ոլորտի խոցելիության մեծացմանը: Ջրային ռեսուրսների

նվազեցումը անմիջականորեն կանդրադառնա նաև էլեկտրաէներգիայի արտադրության հզորությունների կրճատման վրա ՀԷԿ-երում: Կլիմայի փոփոխության հետևանքով աղետների կանխատեսվող հաճախականության և ինտենսիվության ավելացումը բացասաբար կանդրադառնա բնակչության առողջության, ունեցվածքի, ենթակառուցվածքների և ընդհանուր կենսամակարդակի վրա:

Գյուղատնտեսությանը մեծ վնաս են հասցնում հիդրոոդերևութաբանական վտանգավոր երևույթները՝ երաշտները, խորշակերը, կարկտահարությունը, վաղ գարնանային ցրտահարությունները, որոնց հաճախականությունը և ինտենսիվությունը վերջին տասնամյակներում աճման միտում ունեն: Բացասական ազդեցություն կունենան նաև հաճախ կրկնվող և ավելի մեծ տարածքներ ընդգրկող երաշտները:

Այսպիսով, ակնհայտ է կապը կլիմայի փոփոխության, աղետների վտանգների նվազեցման, երկրի և տնտեսության կայուն զարգացման և կառավարման միջև: Խնդրի առընչությամբ գոյություն ունեցող ռազմավարությունները և գործողությունները, ինչպես նաև գիտելիքը և փորձը անհրաժեշտ է համատեղել և համակարգել, գլոբալ և տեղական մակարդակներում, կլիմայի փոփոխության հետ կապված ռիսկերի նվազեցմանն ուղղված գործընթացների արդյունավետ իրականացման համար:



Հայաստանի մարզերի խոցելիությունը հիդրոոդերևութաբանական վտանգավոր երևույթների նկատմամբ

Տնտեսական ազդեցությունը

Կլիմայի համամոլորակային փոփոխությունը և Հայաստանի տարածքում ներքին միկրոկլիմայական փոփոխությունները կարող են հանգեցնել հետևյալ հետևանքների.

Գյուղատնտեսություն

Ջերմաստիճանի բարձրացումը Հայաստանում կբերի մինչև 30% հողի խոնավության նվազեցմանը, հացազգիների, բանջարանոցային և մրգատու մշակաբույսերի արդյունավետության կտրուկ նվազեցմանը, մինչև 10% արոտավայրերի ընդհանուր մակերեսի և դրանց բերքատվության կրճատմանը, ինչպես նաև մոտ 30% անասունների գլխաքանակի և անասնապահության մթերատվության կրճատմանը: Կլիմայի կանխատեսվող փոփոխության դեպքում, վեգետացիայի փուլից և տեղի բարձրությունից կախված, սպասվում է հողի խոնավության նվազում 10-30%-ով, զանազան գյուղատնտեսական մշակաբույսերի բնական խոնավ ապահովվածության նվազում՝ 7-13%-ով և հողում խոնավության պակասորդի աճ՝ 25-50 մմ-ով:

Կլիմայական բնութագրերի սպասվող փոփոխության դեպքում՝

- բուսաբուծության բերքատվությունը կարող է նվազել 8-14%-ով,
- հացազգիների բերքատվությունը միջին հաշվով կկրճատվի 9-13%-ով,
- բանջարանոցային մշակաբույսերինը՝ 7-14%-ով,
- կարտոֆիլինը՝ 8-10%-ով,
- պտղատու մշակաբույսերինը՝ 5-8%-ով,
- ավելի չորադիմացկուն խաղողի բերքատվությունը կարող է աճել՝ 8-10 %-ով:

Կանխատեսվող ջերմաստիճանի բարձրացման և տեղումների նվազման դեպքում պետք է սպասել կլիմայի չորացման աճ և անապատացման պրոցեսների արագացում:

Արոտային անասնապահության համար կանխատեսվում են՝ արոտավայրերի ընդհանուր մակերեսի և դրանց բերքատվության կրճատում՝ 4-10%-ով, այդ թվում մերձալպյան և ալպյան գոտու առավել արժեքավոր և բերքատու արոտավայրերի մակերեսների կրճատում՝ 19-22%-ով, ինչպես նաև լեռնային խոտհարքների բերքատվության նվազում՝ 7-10%-ով: Դրա հետ կապված սպասվում է անասունների գլխաքանակի կրճատում՝ 30%-ով և անասնապահության մթերատվության կրճատում՝ 28-33%-ով:

Ջրային ռեսուրսներ

Ջերմաստիճանի բարձրացման հետևանքով կնվազեն նաև ջրային ռեսուրսները: Կլիմայի կանխատեսվող փոփոխության սցենարի իրականացման դեպքում Հայաստանի տարածքի գումարային գետային հոսքը մինչև 2030թ. կնվազի մոտ 6.7%-ով, մինչև 2070թ.՝ 14.5%-ով, մինչև 2100թ.՝ մոտ 24.4%-ով:

Չյան տեսքով տեղումների կանխատեսվող քանակը Հայաստանի տարածքի մեծ մասում 1961-1990թթ. նորմայի նկատմամբ կնվազի: Ամենաշատ խոցելիությունը կդիտվի Հայաստանի տարածքի 1700-1800մ և ավելի բարձրություններում, որոնք հանդիսանում են գետային հոսքի ձևավորման հիմնական տարածքները:

Կլիմայի փոփոխության կանխատեսվող սցենարի իրականացման դեպքում Ս-
ևանա լճի ջրահավաք ավազանի ընդհանուր գետային փաստացի հոսքը, ջրառի և
ներհոսքի ներկա ծավալների պահպանման դեպքում, 2030թ. նվազելու է 12%-ով,
2070թ.՝ 26%-ով և 2100թ. 41%-ով:

Գոլորշիացումը վերջին տարիներին աճի միտում ունի, ինչը կշարունակվի նաև
ապագայում, որը հիմնականում կապված է ջերմաստիճանային ռեժիմի
փոփոխության հետ: Լճի ջրի մակարդակի իջեցումը խիստ կերպով ազդել է նրա
ջերմային ռեժիմի վրա: Ներկայումս նկատվում է լճի ջրի ավելի արագ տաքացում
գարնան-ամռան և արագ սառեցում՝ աշնան-ձմռան շրջանում: Սևանա լճի ներկայիս
ակտիվ ջրատվությունը, որը մոտ 252 մլն. մ³/տարի է, կնվազի և 2030թ.-ին կկազմի
220-225 մլն. մ³/տարի:

Այդ ամենի հետ մեկտեղ կբարձրանա ջրային ռեսուրսների պահանջը, ինչը
կարող է հանգեցնել սոցիալական լուրջ խնդիրների:

Քնական էկոհամակարգեր

Կանխատեսվում է լանդշաֆտային գոտիների սահմանների տեղափոխություն
լեռնային պրոֆիլով դեպի վեր ըստ բարձրության 200-300 մ: Սպասվում է, որ
անապատա-կիսաանապատային գոտու մակերեսը կընդլայնվի 33%-ով, տեղի
կունենա տափաստանային գոտու ընդլայնում 4%-ով: Մերձալպյան գոտու մակերեսը
կկրճատվի 21%-ով, իսկ ալպյան գոտունը միջին հաշվով 22%-ով:

Անտառոտեսական մարզում կլիմայի փոփոխության կանխատեսվող սցե-
նարների դեպքում առավել խոցելի կլինեն ստորին լեռնային գոտու անտառները (550-
1200մ), հատկապես նրանք, որ աճում են հարավային լեռնալանջերին: Ներկայումս
այս լանջերին տեղումների միջին տարեկան քանակը 600 մմ-ը չի անցնում, իսկ
սպասվող կրճատումը կտրուկ ձևով կվատթարացնի անտառի աճման պայմանները:
Արդյունքում կվատթարանան ինչպես անտառի բնական վերականգնումը և տարե-
կան աճը, այնպես էլ անտառային էկոհամակարգեր կթափանցեն տափաստանային և
կիսաանապատային բույսերի տեսակներ, որի արդյունքում այդ տարածքները լրիվ
կանտառազրկվեն: Ըստ փորձագիտական գնահատումների (առանց հարմարվողա-
կանության միջոցառումների իրականացման) մոտ 10 հազ. հա-ի վրա (անտառոտես-
ական մարզի անտառների մոտ 5%-ը) անտառները կանհետանան: Անտառային էկո-
համակարգերում լուրջ փոփոխություններ չեն սպասվում 1200-1800 մ բարձրության
վրա, քանի որ հենց այդ պայմաններում անտառներն ունեն հարմարվողականության
ամենամեծ ներուժը:

Կլիմայի փոփոխության սցենարների իրականացման դեպքում անտառի աճ-
ման պայմանների վատթարացման հետևանքով կարող է անհետանալ ավելի քան 17
հազ. հա անտառ (5-5.5%):

Ելնելով տերևակեր միջատների կենսաբանական առանձնահատկություննե-
րից, կարելի է ենթադրել, որ կլիմայի փոփոխության սցենարների իրականացման
դեպքում նրանց զանգվածային զարգացման տարածքը ավելի քան 2 անգամ կընդ-
լայնվի և կհասնի 70-75 հազ. հա-ի: Ընդ որում առավել խոցելի կլինեն հարավ-արևել-
յան անտառապատ շրջանի անտառները: Կլիմայի սպասվող չորայնության ավելաց-
ման հետ կապված սպասվում է նաև անտառային հրդեհների ինտենսիվության աճ:

Այդ վտանգը ավելի շատ սպառնում է կենտրոնական, հարավային և հարավ-արևելյան անտառապատ շրջանների անտառներին:

Առողջապահություն

Ավելի բարձր ջերմաստիճանը և տաք հոսանքների թափանցումը կարող է նպաստել մարդկային առողջության վատթարացմանը, հատկապես մեծահասակների երեխաների շրջանում: Մարդկանց առողջությունը շատ զգայուն է ջերմաստիճանի կտրուկ փոփոխությունների նկատմամբ: Եվրոպայում և ԱՄՆ-ում տաքացումները հարյուրավոր, երբեմն նույնիսկ հազարավոր մահացության դեպքերի պատճառ են դարձել:

Կլիմայի փոփոխությունը ուղղակի կամ անուղղակի կերպով ազդում է բնակչության առողջության վրա: Ուղղակի հետևանքներն են “ջերմային ալիքների”, “ջերմային կղզիների էֆեկտի” սրման պատճառով սիրտ-անոթային հիվանդությունների ավելացումը և վտանգավոր կլիմայական երևույթների՝ ջրհեղեղների, սելավների, սողանքների, ժամանակ մարդկանց գոհվելը և վնասվածքները: Անուղղակի հետևանքներն արտահայտվում են ինֆեկցիոն և սեզոնային, ինչպես նաև վարակակիրների արեալների փոփոխության և մաքուր ջրով ոչ բավարար ապահովվածության և պարենի անվտանգության հետ կապված հիվանդությունների հաճախականության և տարածման աճով:

Խոցելիների թվին առաջին հերթին դասվում են սրտանոթային և կենտրոնական նյարդային համակարգի հիվանդություններով տառապող անձինք, ինչպես նաև ջերմակարգավորման թույլ ունակություններով օժտված մարդիկ (ծերերը և երեխաները): Ասթմայով և ալերգիայով տառապողները խոցելի են չորայնության աճի, օդում փոշու քանակի ավելացման և քաղաքային օդի աղտոտվածության պայմաններում:

ՀՀ-ում Էլտոր խուլերայի 1998թ. շոգ տարվա բռնկումից հետո հիվանդացություն չի դիտարկվել: Սակայն խուլերայի վիբրիոնները շարունակում են անջատվել Հայաստանի բազմաթիվ ջրահոսքերից ու ջրամբարներից: Կլիմայի փոփոխության սցենարների իրականացման դեպքում, առաջին հերթին ամառային և աշնանային ջերմաստիճանների բարձրացման հետևանքով, հնարավոր է հիվանդության նոր բռնկում: Առավել բարձր ռիսկ նախատեսվում է հանրապետության նախալեռնային շրջաններում, հատկապես Արարատյան դաշտում, սակայն հնարավոր է, որ ամռան արտակարգ շոգ եղանակներին այդ հիվանդությունը ի հայտ գա նաև միջին լեռնային գոտում:

Ջերմաստիճանի բարձրացումը և տաք ու շոգ ժամանակահատվածների երկարաձգումը նպաստում է աղիքային ինֆեկցիաներով հիվանդացության տարածմանը և աճին, հատկապես բնակչությանը որակյալ խմելու ջրով ապահովելու լարվածության աճի և սննդամթերքի պահպանության սանիտարական նորմերը չպահպանելու դեպքում:

1963թ.-ից Հայաստանում չի գրանցվել տեղական ծագման մալարիայի դեպք, սակայն 1994թ. սկսած նկատվում է ներմուծված մալարիայի դեպքերի հաճախակիության միտում: Հայաստանում դիտված ամառային բարձր ջերմաստիճանը 1998-2001թթ. գրանցվեց մալարիայով հիվանդացության ամենամեծ թիվը՝ 1998թ. (1156

դեպք): Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ 2006թ. մալարիայի դեպքեր չեն գրանցվել: Ներկայումս միջին լեռնային գոտում մալարիան կանխվում է ցածր ջերմաստիճաններով, իսկ կլիմայի փոփոխության սցենարների իրականացման դեպքում տեղի կունենա նրա ուղղաձիգ տարածում:

Կլիմայի փոփոխության սցենարների իրականացումը կնպաստի վիսցերալ լեյշմանիոզի տարածմանը, որը մինչև 20-րդ դարի 60-ական թվականները լայնորեն տարածված էր Հայաստանում: Երկարատև ընդմիջումից հետո այդ հիվանդությունը գրանցվեց Լոռու, իսկ 2001թ.՝ Տավուշի մարզում: 2007թ, գրանցվել է այդ հիվանդության 4 դեպք, իսկ 2008թ. հունվար-մայիս ամիսներին՝ 5 դեպք: Մոնիտորինգը ցույց տվեց տարածող մեղմների թվաքանակի վերականգնման միտում Երևանի շրջակայքում և ամբողջ Արարատյան դաշտում, Լոռու և Սյունիքի մարզերում, որն ուղղակիորեն կապվում է վերջին տարիներին տաք ժամանակահատվածի երկարացման հետ և սպառնում է լեյշմանիոզով հիվանդացության դեպքերի հաճախակիությամբ:

Տաք հոսանքների ներթափանցումը ավելի հավանական է Վայոց Ձորի մարզում, Արարատյան դաշտավայրում՝ ներառյալ Երևանը, Սյունիքի, Լոռու և Տավուշի մարզերում:

Ճանապարհներ և տրանսպորտ

Ձերմաստիճանի բարձրացումն իր բացասական ազդեցությունը կունենա սաֆալտապատ ճանապարհների վրա: Բարձր ջերմաստիճանը կարող է նաև դեֆորմացնել հին ճանապարհները, վնասել կամուրջների մետաղյա մասերը և նույնիսկ առաջացնել ջերմային դեֆորմացում:

Բոլոր դեպքերում երթևեկության արագության, ինչպես նաև գիշերային ժամերին ծանրաբեռնված փոխադրումների սահմանափակման կարիք կլինի: Այսպիսի սահմանափակումների կարիք կունենան և՛ ճանապարհային և՛ երկաթուղային փոխադրումները, ինչպես նաև վերջիններս տնտեսական կորստի պատճառ կհանդիսանան: Հավանական է, որ բարձր ջերմաստիճանը կազդի օդանավակայանների թռիչքային մակերևույթի ենթակառուցվածքի վրա:

Տաք օդը նոսր է և պահանջում է ինքնաթիռների հզորացում, փոխադրամիջոցների քաշի նվազեցում և թռիչքային ժամերի երկարացում:

Հարմարվողականության (ադապտացիայի) միջոցառումներ


Կլիմայի փոփոխության դեմ պայքարն արժե 20 անգամ քիչ, քան ոչինչ չանելը (ԿՓՓՄՆ գեկույց, 2007):

Կլիմայի փոփոխության հարմարվողականությունը և աղետների ռիսկերի նվազեցումը մոտ, բայց և այնպես տարբեր գաղափարներ են: Աղետների ռիսկերի նվազեցումն ուղղված է ներկա և մոտ ապագայի վիճակին (աղետների կանխում, կանխարգելում և հետևանքների նվազեցում):

Իսկ կլիմայի փոփոխության հարմարվողականությունը դա երկարաժամկետ

ջանքեր են, ուղղված կլիմայի փոփոխության, այդ թվում աղետների, բացասական հետևանքների նվազեցմանը: Կլիմայի փոփոխության հարմարվողականությունը վերաբերվում է ոչ միայն էքստրեմալ երևույթներին, այլ նաև աստիճանաբար փոփոխվող կլիմայական պայմաններին:

Հարմարվողականության միջոցառումների և ռազմավարության մշակում



Գյուղատնտեսություն և սննդի անվտանգություն

Հարմարվողականության հայտնի և տարածված օրինակներից է մշակաբույսերի տեսակների փոփոխությունը ավելի դիմակայուն տեսակներով (երաշտներին, միջատներին, հիվանդություններին, ցանքատարածությունների և տեղանքի ռելեֆի փոփոխությանը և այլն): Որպես այլընտրանքային տարբերակ կիրառելի է հողագործության, անասնապահության կամ անտառտնտեսության համադրությունը: Ռոտացման նոր տեխնոլոգիաների կիրառում, հողի խոնավության պահպանման միջոցառումների կիրառում: Շատ կարևոր է ապահովագրական համակարգի ներդրումը գյուղացիների կողմից կրած վնասների հատուցման նպատակով:

Այս միջոցառումների արդյունավետությունը բարձրանում է հուսալի կլիմայական տեղեկատվության ապահովման պամաններում:

Զրային ռեսուրսներ

Հարմարվողականության միջոցառումները ներառում են ջրամատակարարման և ռոտացման համակարգերի բարելավումը, անդրսահմանային ջրային ռեսուրսների կառավարումը: Այս միջոցառումների ապահովման համար անհրաժեշտ է ջրային ռեսուրսների համալիր կառավարման համակարգի ստեղծում, որում պետք է հաշվի առնվի կլիմայի փոփոխության հետևանքով ջրային ռեսուրսների խոցելիությունը:

Առողջապահություն

Այս բնագավառում հարմարվողականության միջոցներից են՝ վաղ նախազգուշացման համակարգերը, պրոֆիլակտիկ միջոցառումները, ջրամատակարարման/ջրահեռացման համակարգերի բարելավումը, սանիտարահիգիենիկ մոնիտորինգը, ջրի և սննդի մշակման կանոնների պահպանումը, այս բնագավառում կրթության և գիտական հետազոտությունների ապահովումն ու խթանումը:

Բնակավայրեր և ենթակառուցվածքներ

Այս բնագավառում հարմարվողականության միջոցներից են՝ աղետներից պետական և մասնավոր սեփականության ապահովագրության համակարգի զարգացման և վնասների գնահատման ու փոխհատուցման մեխանիզմների ներդրումը, խթանող օրենսդրական դաշտի ստեղծումը, սողանքների, վարարումների, սելավների, հեղեղումների և քարաթափման երևույթների մանրակրկիտ ուսումնասիրությունը, բնակավայրերը և ենթակառուցվածքները պաշտպանող պատնեշների, պատվարների նախագծումն ու կառուցումը, անտառատնկումներն ու լանջերի բուսածածկումը, աստիճանավորումը, ցանկապատումն ու ցանցապատումը, ջրահավաք և ջրահեռացնող կառույցների ցանցերի ստեղծումը կամ եղածների բարելավումը, գետերի հունների պարբերաբար մաքրումը, ափերի լայնացումը կամ բարձրացումն ու ամրացումը, գետերի ափերի ողողման տեղամասերում ափապաշտպան կառույցների հիմնումն ու ավտոմատացված ազդարարման դիտակետերի տեղադրումը, զարնանային վարարումների կանխատեսման համար գետավազանային երթուղային ձնաչափական աշխատանքների վերսկսումը՝ նորագույն մեթոդներով, հեղեղումների, սելավների և զարնանային վարարումների կարճաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումների կիրառական մեթոդների մշակումը և այլն:

Կրթության և գիտելիքի զարգացում

Այս բնագավառում անհրաժեշտ է՝ ուսումնական ծրագրերի մշակում, բնակչությանը տեղեկատվության տրամադրում, լրատվական միջոցներով (հեռուստատեսություն, ռադիո) հաղորդումների կազմակերպում, իրազեկման բարձրացում ուսուցիչների, լրագրողների, քաղաքական գործիչների միջոցով:

Բնապահպանական միջոցառումներ

Առողջ էկոհամակարգերը աջակցում են աղետների վտանգների նվազեցմանը և զգալիորեն բարձրացնում են դիմադրողականության աստիճանը՝ ընդլայնելով հարմարվողականության հնարավորությունները: Այս ասպարեզում կիրառվում են այնպիսի բնապահպանական միջոցառումներ, որոնք ուղղված են էկոհամակարգերի, ինչպես նաև կլիմայի փոփոխության տեսանկյունից առավել խոցելի շրջակա բնական միջավայրի օբյեկտների պաշտպանությանը:

Վաղ ազդարարման համակարգ

Հատուկ ուշադրություն է պետք դարձնել վտանգավոր երևույթների ազդարարման համակարգերի արդիականացմանը՝ վտանգի վերաբերյալ նախազգուշացնող տեղեկատվության ժամանակին տարածման նպատակով: Նախազգուշացումները ստանալուց հետո պետք է տալ համապատասխան տեղեկատվություն և բացատրություններ՝ անհրաժեշտ գործողություններ ձեռնակկելու վերաբերյալ:

Հայաստանը ՄԱԿ-ի

Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի (ԿՓՇԿ) ներքո

1992թ. հունիսին Ռիոյում կլիմայի փոփոխության վերաբերյալ վեհաժողովում ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիան ստորագրողների թվում էր Հայաստանի Հանրապետությունը: ՀՀ Ազգային ժողովի կողմից կոնվենցիան վավերացվեց 1993թ. մայիսին, իսկ 1997թ. վավերացվեց նաև Կիոտոյի արձանագրությունը:

Հայաստանի կլիմայի փոփոխության քաղաքականությունը ձևավորվում է ՄԱԿ ԿՓՇԿ-ի և Կիոտոյի Արձանագրության շրջանակներում երկրի ստանձնած պարտավորություններին համապատասխան: Որպես ՄԱԿ ԿՓՇԿ-ի Հավելված I-ի մեջ չընդգրկված երկիր Հայաստանը չունի ՋԳ-երի արտանետումների նվազեցման քանակական պարտավորություններ: Սակայն, հարելով և աջակցելով Կոնվենցիայի նպատակին, ինչպես նաև հաշվի առնելով, որ արտանետումների նվազեցումը համահունչ է երկրի տնտեսական, էներգետիկ և բնապահպանական նպատակներին, Հայաստանում ընդունվել են մի շարք օրենքներ և իրականացվում են ազգային և ճյուղային զարգացման ծրագրեր, որոնք նպաստում են ՋԳ-երի արտանետումների նվազմանը: Մինևույն ժամանակ, Կիոտոյի արձանագրության «Մաքուր զարգացման» մեխանիզմով իրականացվող մեղմացման նախագծերի շնորհիվ, Հայաստանն ունի արտանետումների կրճատման փոխանցման շոշափելի ներուժ:

II. ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

II.1. <<ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԿԱՊԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ>> ԹԵՄԱՅՈՎ <<ՄՏՔԵՐԻ ՏԱՐԱՓ>> ՄԵԹՈԴՈՎ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՆՑԿԱՅՈՒՄ

<<Մտքերի տարափ>> մեթոդի էությունը

Առաջարկված խնդիրների լուծման ամենապարզ մեթոդներից մեկը բաց քննարկումն է, որը կոչվում է <<Մտքերի տարափ>>: Վերջինիս առանձնահատկությունն այն է, որ յուրաքանչյուր խնդրադրման լուծման աշխատանքներն ընթանում են երկու փուլով՝

- ստեղծագործական՝ ընդունվում են ունկնդիրների արած բոլոր առաջարկությունները առանց քննարկման, որպեսզի մասնակիցները խրախուսվեն՝ արտահայտելու հնարավորինս շատ գաղափարներ.
- վերլուծական՝ արված առաջարկությունների գնահատում և վերլուծություն:

Ստեղծագործական փուլի կանոնները.

- տալ հնարավորինս շատ առաջարկություններ՝ անկախ դրանց կիրառելիության աստիճանից.
- բացառել արված առաջարկությունների քննարկումը.
- անտեսել արված առաջարկությունների հիմնավորման անհրաժեշտությունը.
- արված առաջարկությունների ցանկը կազմելուց հետո խմբավորել իմաստով մոտ առաջարկները:

Վերլուծական փուլի կանոնները.

- ռացիոնալ հատիկ գտնել յուրաքանչյուր առաջարկի մեջ, եթե նույնիսկ առաջին հայացքից այն անընդունելի է թվում.
- ընդունել անհատական կարծիք ունենալու յուրաքանչյուր ունկնդրի իրավունքը.
- համատեղ որոշել կարևոր առաջարկությունները.
- հիմնվելով խնդրադրման լուծմանն ուղղված առավել ռացիոնալ առաջարկների վրա՝ ընտրել մեկականները:

<<Վտանգավոր բնական երեւույթների միջև կապերի բացահայտումը>> թեմայով <<Մտքերի տարափ>> մեթոդով պարապմունքի անցկացման հիմնական մոտեցումներ

<<Մտքերի տարափ>> մեթոդով պարապմունքի անցկացմանը պետք է նախորդեն տեսական պարապմունքներ բնական աղետների վերաբերյալ: Կարելի է

նան այս մեթոդով պարապմունքն անցկացնել մինչև տեսական պարապմունքները: Այս դեպքում, թեև պարապմունքի անցկացումն ավելի շատ կկրի իմացաբանական, ստեղծագործական բնույթ, բայց որոշ չափով կնվազի մասնագիտական խորացումը բնական աղետների կապերի խնդրում:


Վերն արդեն նշվել է, որ խնդրադրումը տարբեր կրթական մակարդակի խմբերի համար նույնն է, ուղղակի կրթական աստիճանի բարձրացմանը համարժեք մեծացվում է առաջարկվող աղետների թվաքանակը և խորացվում պահանջները աղետների միջև կապերի և դրանց էության ներկայացմանը:

Պարապմունքին պետք է նախապատրաստվել նախօրոք: Ապահովել անհրաժեշտ բնական աղետների վերաբերյալ տեսա-ցուցադրական նյութեր, ուսումնական սեղանների համապատասխան դասավորություն: Խումբը համարժեք ենթախմբերի բաժանելու համար անհրաժեշտ է նախօրոք ծանոթանալ ունկնդիրների տվյալներին:

Դասաժամանակի արդյունավետ օգտագործման համար անհրաժեշտ է այն նախօրոք բաժանել առանձին փուլերի՝ ծանոթություն լսարանի հետ, ունկնդիրների բաժանում առանձին ենթախմբերի, առաջադրանքի ներկայացում, թիմային ինքնուրույն աշխատանք ենթախմբերում, լուծումների ներկայացում, քննարկում, ընդհանրացում և եզրափակում:

<<Վտանգավոր բնական երևույթների միջև կապերի բացահայտումը>> թեմայով <<Ստքերի տարափ>> մեթոդով պարապմունքի խնդրադրում

Ստորև ներկայացվում է Հայաստանի Հանրապետության տարածքում հնարավոր վտանգավոր երևույթների մեծ մասը: Կախված լսարանի կրթական աստիճանից՝ ՎԲԵ-ի թվաքանակը կարելի է նվազեցնել:



1. Նշել ներկայացված ՎԲԵ-ի միջև կապերը:
2. Ներկայացնել ըստ նշված կապերի հնարավոր երկրորդային ՎԲԵ-ի ծագման անհրաժեշտ պայմանները:

Վտանգավոր բնական երեւոյթների միջև կապերի բացահայտումը>> թեմայով <<Մտքերի տարափ>> մեթոդով պարապմունքի անցկացում

Ուսումնական խմբին պարապմունքի էությունը, հարցադրումները ներկայացնում է համապատասխան դասախոսը (այնուհետև՝ վարող):

Պարապմունքին, որպես խորհրդատուներ, մասնակցում են նաև այլ դասախոսներ:

Ուսումնական խումբը բաժանվում է առանձին ենթախմբերի՝ կազմված 3-5 ունկնդիրներից:

Ենթախմբերը տեղավորվում են իրարից քիչ հեռու՝ համապատասխան սե-դանների շուրջ:

Յուրաքանչյուր ենթախումբ ընտրում է պատասխանատու: Վերջինս կազմակերպում է իր ենթախմբում առաջադրանքի քննարկումը և բոլոր առաջարկությունների գրառումը:

Վարողը, խորհրդատուները նպաստում են, խրախուսում առանձին ենթախմբերում քննարկումների ծավալմանը, բոլոր ունկնդիրների ակտիվ ներգրավմանը առաջարկությունների մշակման համար: Հատուկ հետևում են բոլոր առաջարկությունների գրանցմանը:

Հատկացված ժամանակահատվածից հետո վարողը հայտարարում է առաջին փուլի առաջարկությունների գրառման ավարտը: Այնուհետև առավել շատ թվով առաջարկություններ գրառած ենթախմբի պատասխանատուն ներկայացնում է ենթախմբի առաջարկությունները: Մյուս ենթախմբերի պատասխանատուները լրացնում են արված առաջարկությունները:

Առաջին փուլի ավարտին ողջ ուսումնական խումբը, վարողի և խորհրդատուների մասնակցությամբ, գրատախտակին ներկայացված բոլոր առաջարկությունները հերթով քննարկում է և թողնում հիմնավորված առաջարկությունները, որոնք վերաբերում են ՎԲԵ-ի միջև կապերին:

Երկրորդ փուլում ունկնդիրներն իրենց ենթախմբերում անում են առաջարկություններ ՎԲԵ-րի միջև կապերի (որոնք որոշվել են առաջին փուլում) ծագման անհրաժեշտ պայմանների վերաբերյալ: Աշխատանքների ընթացակարգն ու մեթոդիկան նույնն են, ինչ առաջին փուլում:

Երկրորդ փուլը նույնպես ավարտվում է միասնական քննարկումով՝ վերջնական պատասխանների ընտրման համար:

Քննարկումից հետո վարողը, խորհրդատուները ներկայացնում են իրենց մոտեցումները հարցադրումների պատասխանների վերաբերյալ:

Վերջում ունկնդիրները ներկայացնում են իրենց կարծիքները, ցանկությունները, առաջարկությունները <<Մտքերի տարափ>> պարապմունքի

անցկացման վերաբերյալ:

Հանրակրթական դպրոցներում <<Պատրա՞ստ ես աղետներին>> մրցույթի կազմակերպման եւ անցկացման մեթոդներ

Արտակարգ իրավիճակներում և պատերազմի ժամանակ բնակչության պաշտպանության բնագավառում բնակչության ուսուցումը հանրակրթական դպրոցական համակարգում ունի իր որոշակի խնդիրները և առանձնահատկությունները:

Հանրակրթական դպրոցի տարբեր դասարանների ուսումնական ծրագրերով դասավանդվում են <<Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմունքներ>> և <<Առաջին բուժօգնություն>> առարկաները:

Նշված առարկաների գործնական ավելի հիմնավոր յուրացման, կենսագործունեության անվտանգության գաղափարի, ապրելակերպի արմատավորման համար էական դեր ունեն ուսուցման արտադասարանական և արտադպրոցական ձևերը:

<<Պատրա՞ստ ես աղետին>> մրցույթը իր մեջ ընդգրկում է տարբեր աղետների, վթարների, պատահարների և իրադրությունների ժամանակ պահելաձևի, ինքնօգնության և փոխօգնության տեսական և գործնական հարցեր:

<<Պատրա՞ստ ես աղետին>> մրցույթը պատշաճ մակարդակով անցկացնելու համար կարևոր նշանակություն ունեն նախապատրաստական, ուսումնամեթոդական, կազմակերպչական բոլոր հարցերի բացահայտումը, քննարկումը:

Հանրակրթական դպրոցական համակարգում ԱՄ-ից բնակչության պաշտպանության հարցերով ուսուցման կազմակերպման հարցեր

Մենք ապրում ենք այնպիսի ժամանակաշրջանում, երբ ամենատարբեր բնույթի վտանգների թիվն անհամեմատ աճել է: Տեխնածին վթարները ավելի հաճախակի են դարձել, բնական աղետների հետևանքները մի շարք պատճառներով ավելի մասշտաբային են, իսկ ուրբանիզացիան և քաղաքակրթությունը բերել են տեխնածին հասարակական, կենցաղային և այլ վտանգների, պատահարների բազմազանության և հաճախականության աճի: Օր չի անցնում, որ թերթերը, ռադիոն և հեռուստատեսությունը չհաղորդեն այս կամ այն երկրում, շրջանում հերթական տարերային աղետների, տեխնածին վթարների, հակամարտությունների, հանցագործությունների, ահաբեկչության մասին: Ահաբեկիչները պատանդներ են վերցնում, դիվերսիաներ կատարում, հանցագործները հարձակվում են, կողոպտում անմեղ քաղաքացիների, հետիոտները ընկնում են ավտոմեքենաների տակ, հրդեհներ են ծագում բնակելի շենքերում և հասարակական վայրերում, ջրհեղեղները ավերում են բնակավայրեր, ճանապարհներ և այլն:

Մեզանից յուրաքանչյուրը կարող է հայտվել անկանխատեսելի իրավիճակում: Ուշվ կարող է օգնել վտանգի մեջ հայտնված մարդուն: Առաջին հերթին՝ հենց ինքը:

Կախված մարդու հուզական բնույթից՝ նրա մոտ շրջակա միջավայրում ծագած վտանգի արձագանքները տարբեր են. ակտիվության և եռանդի աճ կամ, ընդհակառակը, եռանդի նվազում, կենսագործունեության արգելակում, հսկողությունից դուրս մնացած գերլարվածություն, հսկողության չենթարկվող ակնապիշություն, լիակատար անգործունեություն, անկառավարելի գործողություններ և այլն:

Մրանց հիմնական պատճառները մի կողմից, ինչպես ասվեց, մարդու հուզական բնույթն է, այնուհետև՝ աղետների մասշտաբները, հետևանքները, բազմազանությունը, մյուս կողմից, դրանց անսպասելիությունը, աղետին անտեղյակությունը, անպատրաստությունը:

Այստեղ կարևոր է մարդու վերաբերմունքը սեփական և շրջապատողների անվտանգության հարցերին: Ծայրահեղ իրավիճակներում մարդու գոյատևելու ունակությունը մեծապես պայմանավորված է նրա ընդունակությամբ՝ ճիշտ գնահատելու ծագած իրադրությունը, ժամանակին ընդունելու միակ ճիշտ վճիռը և արագ իրականացնելու այն: Պետության և հասարակության ճիգերն անհրաժեշտ է ուղղել անվտանգության զանգվածային գաղափարախոսության, ապրելակերպի ձևավորմանը՝ ընդգրկելով բնակչության բոլոր շերտերը: Մեր խնդիրն է՝ պատրաստել հասարակությանը օգտակար մարդիկ՝ հոգեբանորեն միշտ պատրաստ և պատրաստակամ օգնելու մարդկանց, զարգացնել գթասրտություն, տղամարդկություն, կարեկցանք, պատասխանատվություն:

Մարդը ծնված օրից զգում է սպառնացող այս կամ այն վտանգը և ինչ-որ ձևով պաշտպանվելու քայլեր է կատարում: Որքան երեխան հասունանում է, այնքան նրա մոտ զարգանում է վտանգներից պաշտպանվելու համակարգը: Երբեմն իրավիճակները լինում են այնպիսին, որ ժամանակ չկա մտածելու, կշռադատելու, պետք է գործել ակնթարթորեն, ավտոմատ: Եթե մարդը ուսումնասիրել է որոշակի իրավիճակներ, պատահարներ, ապա նրա համար հեշտ է դառնում դրանց հաղթահարումը:

Տարբեր վտանգավոր երևույթներից բնակչության պաշտպանության գործընթացի պարտադիր տարրը բնակչության բոլոր շերտերի ուսուցումն է:

Ուսուցման գործընթացի կարգավորումը և կազմակերպումը պահանջում է մի ամբողջ շարք հայեցակետային, ուսումնական, մեթոդական և այլ հարցերի լուծում:

Արտասահմանյան առաջավոր երկրների և մեր փորձը ցույց է տալիս, որ բնակչության ԱԻ-ում գործելու ուսուցումը անհրաժեշտ է իրականացնել տարբեր փուլերով, ընդ որում՝ այն սկսելով վաղ հասակից: Այսպես, երեխաները վաղ հասակից՝ արդեն 3-5 տարեկանից սկսած, ի վիճակի են դիմակայելու առօրեական, կենցաղային որոշակի պատահարներին, սուր իրավիճակներին, ճիշտ է, սկզբում ավելի պասիվ, իսկ հետագա հասունացմանը զուգընթաց ավելի ու ավելի ակտիվ: Կյանքի առաջին 7 տարիների ընթացքում երեխան անցնում է ֆիզիկական և հոգևոր զարգացման հսկայական ուղի, դառնում գիտելիքների և կարողությունների մեծ պաշարի տեր: Դպրոցական տարիքում նա արդեն ազատ խոսում է, շրջապատող

մարդկանց հետ մտնում բազմազան փոխհարաբերությունների մեջ, զգում է և այս կամ այն չափով ընկալում, հասկանում բնության երևույթները, տիրապետում բարդ ներքնաշխարհի: Մանկական և պատանեկան տարիների ճիշտ ուսուցմամբ հուսալի հիմք է դրվում ներկա և ապագա քաղաքակրթության համար լիարժեք քաղաքացիներ պատրաստելու համար:

Միջին և բարձր դասարանների աշակերտները իրենց ակտիվ կենսագործունեության ընթացքում անմիջականորեն բախվում են ամենատարբեր պատահարների, աղետների, վթարների հետ: Աշակերտները նշված երևույթների մասին տեղեկություններ են ստանում տարբեր ուսումնական առարկաներից: Ընդհանրապես մարդու դպրոցական տարիները ամենատարբեր գիտելիքների, տեղեկությունների կուտակման, հնարքների յուրացման ամենաակտիվ տարիներն են: Հիմնականում դպրոցում է ավարտվում պատանու ձևավորումը որպես ապագա քաղաքացի:

Այսպիսով, անհատի, նրա հոգեբանական կայունության դաստիարակությամբ, վարքի ստերեոտիպերի, ավտոմատ գործողությունների մշակմամբ, անկասկած, անհրաժեշտ է զբաղվել հենց նախադպրոցական և դպրոցական տարիներին: Դեռահասը, պատանին պետք է պատրաստ լինեն նրան, որ կարող են անսպասելի հայտնվել ծայրահեղ իրավիճակում, իմանան, թե ստույգ ի՞նչ պետք է անեն, որ այդ իրավիճակից դուրս գան: Եվ այստեղ կարևոր է աշակերտին պատրաստելը, մարզելը, <<միացնել>> նրա մոտորային հիշողությունը և պայմանական ռեֆլեքսները:

Դպրոցական ուսումնական ծրագրերում աշակերտների ԱԻ-ի դիմակայման հարցերով ուսուցման նպատակով մտցված են հետևյալ առարկաները <<ԱԻ և ՔՊ հիմնահարցեր>> 2-րդ, 5-րդ և 6-րդ դասարաններում (դաստեղական ժամեր, համապատասխանաբար՝ 6 ժամ, 8 ժամ), 8-րդ և 9-րդ դասարաններում (5 ժամ և 13 ժամ), <<Առաջին բուժօգնություն>> (32 ժամ):

Նշված ուսումնական բեռնվածքների հնարավորությունները, իհարկե, սահմանափակ են: Մեր առջև դրված ազնվաբարո, խորը մարդասիրական նպատակները, սովորողների հարմարվողականությունը շրջակա միջավայրին, նրանց նախապատրաստումը շրջակա միջավայրի հնարավոր վտանգների հանդիպմանը, կենսակայունության ձևավորումը և բարոյական, քաղաքացիական դիրքորոշումը, իհարկե, հնարավոր չէ լիարժեք իրագործել միայն վերը նշված ուսումնական դասարանային ժամաքանակներով, որոնց ուսումնամեթոդական հնարավորությունները ժամանակային առումով սահմանափակ են:

Հանրակրթական դպրոցական համակարգում ԱԻ-ին պատրաստության բարձրացման ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման համար լայն հնարավորություններ է ընձեռում արտադասարանական և արտադպրոցական ուսուցման ներդրումը: Վերջինիս շնորհիվ հնարավորություն է ստեղծվում անհամեմատ մեծացնել միաժամանակ ուսուցանվողների թիվը, ընդլայնել ուսուցման եղանակների և ձևերի տեսականին (մրցույթներ, վարժանքներ, խաղեր, մարզանքներ և այլ միջոցառումներ), օգտվել բազային լայն պայմաններից (դպրոցի բակ, մարզադաշտ, դահլիճ, բնության անկյուն, մանկական մշակութային և սպորտային

համալիրներ), ընդգրկել արտահամակարգային կազմակերպություններ (պետական, հասարակական, մշակութային, մարզական տարբեր կազմակերպություններ):

Արտադասարանական և արտադպրոցական ուսուցման կազմակերպման համար կարևոր նշանակություն ունեն սովորողների բաժանումը տարիքային և այլ խմբերի, ուսուցման խնդիրների, եղանակների և ձևերի ճշտումը, գիտելիքների, հմտությունների և կարողությունների (պատահարի, ԱԻ-ի մասին իմացություն, կանխարգելման ուղիներ, պահելաձևի կանոններ, գործնական կարողություններ, առաջին օգնության հմտություններ, վախի հաղթահարում, տարրական անհրաժեշտ տեղեկություններ նորմատիվ-իրավական դաշտի մասին և այլն) առկա պաշարի և անհրաժեշտ նվազագույն պաշարի որոշումը: Ի վերջո, վերը նշված նվազագույն պաշարի ստեղծումը սովորողների մոտ:

<<Պատրաստ ես աղետին>> մրցույթի անցկացման նպատակը և խնդիրները

Մրցույթի նպատակն է աշակերտների ԱԻ-ին պատրաստության բարձրացումը: Խնդիրները՝ գիտելիքների, կարողությունների, հմտությունների ստուգումը, գնահատումը, վերլուծությունը:

Մանկավարժական համակարգի պարտադիր բաղադրիչ մաս է գիտելիքների որակի ստուգումը: Ասվածը, բնականաբար, վերաբերվում է նաև ԱԻ-ից բնակչության պաշտպանության հարցերով ուսուցմանը:

Գիտելիքների, կարողությունների ստուգման մի եղանակն էլ մրցույթներն են:

<<Պատրաստ ես աղետին>> մրցույթը ընդգրկում է ինչպես <<ԱԻ և ՔՊ հիմնահարցերի>>, այնպես էլ այլ առարկաների շրջանակները:

Մրցույթը պետք է կրի ոչ միայն ստուգողական բնույթ, այլ նաև ուսուցողական: Այն պետք է հաշվի առնի սովորողների շահերը, որպեսզի մրցույթը չդառնա ձանձրալի պարտականություն, այլ անցնի աշխույժ, դինամիկ, անակնկալներով լի և խորացնի սովորողների հետաքրքրությունը դեպի անվտանգության բարձրացման բնագավառը:

Մրցույթի անցկացման հաջողությունը էապես պայմանավորված է նախապատրաստման, մեթոդական գրագետ կազմակերպման, հարցերի ճիշտ խնդրադրման բարձր մակարդակով: Վերջինս կարևորվում է նաև այն հանգամանքով, որ մեր երկրում գործնականում չկա այդպիսի միջոցառումների անցկացման փորձ:

Մրցույթի անցկացման համար անհրաժեշտ է ունենալ առաջին հերթին մեթոդական մշակումներ:

Մրցույթի ծրագրում անհրաժեշտ է ընդգրկել ԱԻ-ում տարբեր պատահարների, իրադարձությունների դեպքում անվտանգության ապահովման բոլոր կենսական կարևոր ուղղությունները և, որ կարևոր է՝ ապահովվի այդ ուղղությունների համալիրի միասնականությունը:

Մրցույթի ժամանակ ստուգվում են սովորողների գիտելիքները, կարողությունները, ինչպես նաև գործնական հմտությունները:

Տեսական գիտելիքների համար հիմնականում կիրառվում է թեսթային ստուգում, իսկ կարողությունների, հմտությունների ստուգումը կատարվում է

գործնական վարժությունների միջոցով:

Ողջ մրցույթը ընդգրկում է մի ամբողջ շարք տեսական, գործնական, գեղարվեստական և այլ բնույթի առաջադրանքներ:

Տեսական և այլ գիտելիքների ստուգման համար կիրառվում են թեսթային առաջադրանքներ: Առանձին առաջադրանքները իրենցից ներկայացնում են թեսթ-բլոկներ: Թեսթ-բլոկը դա թեսթերի (կամ թեսթային տիպի առաջադրանքների) ամբողջություն է, որը թույլ է տալիս բացահայտել դպրոցականների գիտելիքների մակարդակը տվյալ թեմայի, բաժնի սահմաններում:

<<Պատրա՞ստ ես աղետին>> մրցույթը նախատեսված է անցկացնել 8-րդից 11-րդ դասարանների աշակերտների շրջանակներում: Նույնիսկ նպատակահարմար է դասակարգումը կատարել ըստ առանձին դասարանների՝ 8-րդ, 9-րդ և այլն: Եվ յուրաքանչյուր դասարանի համար հնարավոր են առաջադրանքների որոշակի փոփոխություններ:

<<Պատրա՞ստ ես աղետին>> մրցույթի հիմնական առաջադրանքներ

1. Թեսթ-բլոկ: ԱԻ:
2. Թեսթ-բլոկ: ՀՀ-ում հնարավոր ԱԻ:
3. Թեսթ-բլոկ: Պահելաձև ԱԻ-ում և տարբեր պատահարների ժամանակ:
4. Թեսթ-բլոկ: Կյանքի հմտություններ:
5. Թեսթ-բլոկ: Պահելաձև անձանոթ մարդկանց հետ կապված իրավիճակներում:
6. Թեսթ-բլոկ: Առաջին օգնություն:
7. Վարժանք-մրցություն: Անհատական պաշտպանության միջոցների օգտագործում:
8. Գրական ներկայացում: ԱԻ:
9. Գեղարվեստական ելույթներ: ԱԻ:
10. Առաջին օգնության ցուցաբերման հմտությունների մրցույթ:
11. ԱԻ-ի վերաբերյալ թեմաներով նկարչություն:

Առաջադրանք 1-ի թեսթ-բլոկի հարցերը վերաբերվում են տարբեր ԱԻ-ին, դրանց էությանը, բնույթին, դրսևորումներին, առանձնահատկություններին, հետևանքներին:

Առաջադրանք 2-ի թեսթ-բլոկի հարցերը վերաբերվում են ՀՀ-ում առավել հաճախակի կրկնվող, երբեմն նաև ՀՀ-ին առաձնահատուկ ԱԻ-ին: Հարցերի բնույթը նույնն է, ինչ առաջադրանք 1-ինը:

Առաջադրանք 1 և 2-ի հարցերը կազմելիս օգտվել համապատասխան առարկաների ծրագրերից և դասագրքերից, ինչպես նաև հիմք ընդունել նաև տվյալ դասարանների դպրոցականների մտահորիզոնը:

Առաջադրանք 3-ի թեսթ-բլոկում բերված հարցերը վերաբերվում են տարբեր ԱԻ-ում և պատահարների ժամանակ պահելաձևին, վարքի կանոններին:

Առաջադրանք 4-ի թեսթ-բլոկի հարցերը վերաբերվում են կենցաղում, բնության մեջ և այլուր ծագած ոչ սովորական պայմաններում հայտնվելու դեպքում անհրաժեշտ³ կյանքի հմտություններին:

Առաջադրանք 3 և 4-ի հարցերը կազմելիս օգտվել համապատասխան առարկաների դասագրքերից: Ընդգրկել նաև հարցեր, որոնք պահանջում են հնարամտություն, կողմնորոշում, լայն մտահորիզոն:

Առաջադրանք 5-ի թեսթ-բլոկի հարցերը վերաբերվում են այնպիսի անսպասելի, անձանոթ իրավիճակներում պահելաձևին, որոնք կապված են անձանոթ մարդկանց առկայության կամ գործողությունների հետ:

Առաջադրանք 6-ի թեսթ-բլոկը ընդգրկում է տարբեր ԱԻ-ի և պատահարների հետևանքով տուժածներին առաջին օգնության ցուցաբերման վերաբերյալ հարցեր:

Առաջադրանք 7-ի վարժանք մրցությունը իրենից ներկայացնում է անհատական պաշտպանության տարբեր միջոցների հագնելու և օգտագործելու մրցություններ:

Առաջադրանք 8-ը նախատեսում է սովորողների կողմից հայտնի գրական գեղարվեստական գործերից այնպիսի հատվածների արտասանություն, որոնք վերաբերում են տարբեր աղետների և վթարների:

Առաջադրանք 9-ի կատարումը բացի իր հիմնական նպատակից նաև կրում է երաժշտական-գեղարվեստական ընդմիջման բնույթ: Սովորողները ներկայացնում են նախօրոք պատրաստված որևէ երգ, պար կամ երաժշտական այլ համար նվիրված ԱԻ-ի թեմատիկային: Կարելի է ներկայացնել, օրինակ որևէ հայտնի երգ ձևափոխված բառերով և այլն:

Առաջադրանք 10-ի կատարման ժամանակ սովորողները ընձեռոված միջոցներով ցուցաբերում են առաջին օգնության հմտություններ որոշակի վնասվածքի դեպքում:

Թե ինչպե՞ս են սովորողները պատկերացնում տարբեր վտանգները, աղետները, ԱԻ-ը, դրանց դրսևորումները, վարքի կանոնները, կարելի է փորձել գնահատել նաև սովորողների կողմից կատարվող նկարների օգնությամբ: Վերջիններս կօգնեն դատել, թե ինչպե՞ս են սովորողները պատկերացնում տարբեր վտանգներն ու անվտանգության վարքականոնները: Ուսումնամեթոդական գրականության, ցուցադրական նյութերի պակասի պայմաններում դպրոցականների նկարչական լեզուն կարող է բազմազանեցնել և ավելի հետաքրքիր դարձնել ԱԻ-ից պաշտպանության ուսումնական գործընթացը: Առաջադրանք 11-ի կատարման համար սովորողներին բաժանվում են վատմանի թղթեր, գունավոր մատիտներ և տրվում նկարի թեման, որը կարող է լինել ամենատարբեր բնույթի:

Մրցույթի կազմակերպում

Մրցույթի կազմակերպմանը և անցկացմանը պետք է նախորդի նախապատրաստական հիմնավոր աշխատանք:

Կազմվում է մրցույթի կազմակերպման և անցկացման աշխատանքային խումբ, որի կազմն ընտրվում է՝ կախված մրցույթի շրջանակներից (ներդասարանային,

միջոցառման, միջոցառման և այլն): Օրինակ՝ ներդասարանային մրցույթի անցկացման աշխատանքային խմբում ընդգրկվում են դասուցի, զինուցի, համապատասխան առարկաների ուսուցիչները: Խմբի ղեկավար է դառնում դասուցի կամ զինուցի:

Մրցմանը միաժամանակ մասնակցում է 3-4 թիմ, յուրաքանչյուր թիմում՝ 4-5 սովորող: Ներդասարանային մրցույթի համար դասուցի իր դասարանում կամավորական սկզբունքով համալրում է 3-4 թիմ: Յուրաքանչյուր թիմ ընտրում է թիմապետ:

Աշխատանքային խմբի ղեկավարը թիմերին բացատրում է մրցույթի անցկացման ողջ կարգը: Դա կատարվում է մրցույթից 3-4 շաբաթ առաջ: Ապա թիմերը սկսում են նախապատրաստվել մրցույթին: Յուրաքանչյուր թիմի կցվում է մի խորհրդատու համապատասխան ուսուցիչների թվից: Կամ համապատասխան մասնագետները ցույց են տալիս խորհրդատվական օգնություն բոլոր թիմերին առանձին-առանձին՝ ըստ բովանդակի: Այդ ընթացքում ներկայացվում են մրցութային առաջադրանքների շրջանակները, բնույթը, պատասխանների մատուցման ձևը, հիմնավորումը: Թերևս լրացուցիչ մարզումներ անցկացվեն առաջադրանքներ 6, 7, 8, 9, 10-ի գծով:

Մրցույթը անցկացվում է դպրոցի նախօրոք հարմարեցված դահլիճում, սպորտային դահլիճում կամ այլ խոշոր սենյակում, որը կարողանա ընդունել բոլոր մասնակիցներին և հյուրերին:

Մրցութին բացի մրցավարական կազմից (դա հիմնականում աշխատանքային խումբն է) և մասնակիցներից հրավիրվում են դպրոցի ղեկավարները, ուսուցիչներ, աշակերտներ և ծնողներ: Ցանկալի է հրավիրել մասնագետներ այլ դպրոցներից, համապատասխան ղեկավար օղակներից:

Մրցութի անցկացման հաջողությանը մեծապես կնպաստեն տարբեր մասնագետների համագործակցությունը, ինչպես նաև այլ օղակների, գերատեսչությունների մասնակցությունը: Խիստ արդյունավետ կլինի ՀՀ կրթության և գիտության, առողջապահության նախարարությունների տարբեր ստորաբաժանումների, քաղաքապետարանի կրթության բաժնի, ինչպես նաև քաղաքի կամ մարզի ՔՊ և ԱԻ վարչության համապատասխան օղակների և, իհա՛րկե, հասարակական կազմակերպությունների աջակցությունը:

Անհրաժեշտ է նախօրոք պատրաստել հաղթողներին հանձնվելիք պատվոգրերը, նվերները:

Մրցութի անցկացում

Դահլիճի խորքում առանձին սեղանների շուրջ տեղավորվում են մրցող թիմերը, քիչ հեռու՝ մրցավարական կազմը: Գլխավոր մրցավարը ներկայացնում է մրցութի անցկացման կարգը, առանձին առաջադրանքների անվանումները: Այնուհետև մրցավարը հայտարարում է մրցութի սկիզբը և հերթով ներկայացնում առաջադրանք 1-ի թեստերը: Յուրաքանչյուր հարցը գնահատվում է առանձին, իսկ ապա տրվում են առաջադրանք 1-ի ընդհանուր գնահատականները: Այդպես, հաջորդաբար անցկացվում են մյուս առաջադրանքները:

Հաղթող թիմերը որոշվում են բոլոր առաջադրանքներից ստացած բալերի ընդհանուր գումարով: Առանձին առաջադրանքների գնահատման ժամանակ ցանկալի է հաշվի առնել նաև մասնակիցների իրական պատկերացումները, մտահորիզոնը, երևակայությունը, ստեղծագործական մտածողությունը, վարժությունների կատարման հմտությունները:

Թեսթային հարցերի և հանձնարարությունների թիվը յուրաքանչյուր առաջադրանքում, դրանց տրամադրվող ժամանակահատվածները, գնահատման բալերը հետևյալն են.

- Առաջադրանք 1. Թեսթային հարցերի թիվը՝ 3-5, յուրաքանչյուր թեսթային հարցին պատասխանելու համար տրվում է 1-ական բոլ: 1 հարցին՝ 1 բալ գնահատական:
- Առաջադրանք 2, 3, 4, 5, 6-ի համար այնպես, ինչպես առաջադրանք 1-ում:
- Առաջադրանք 7. Երկու վարժանք-մրցություն, յուրաքանչյուրին՝ 4-6 բոլ: 1 վարժանք մրցությանը՝ մինչև 2 բալ:
- Առաջադրանք 8. Յուրաքանչյուր թիմին ելույթի համար՝ 3-5 բոլ: Մինչև 2 բալ:
- Առաջադրանք 9. Յուրաքանչյուր թիմին ելույթի համար՝ 3-7 բոլ: Մինչև 3 բալ:
- Առաջադրանք 10. Առաջին օգնության ցուցաբերման 2 տարբերակ, յուրաքանչյուրին՝ 3-7 բոլ: 1 տարբերակին մինչև 2 բալ:
- Առաջադրանք 11. Մեկ թեմայով նկար: Նկարի կատարմանը՝ 5-10 բոլ: Մինչև 2 բալ:

Մրցույթի ողջ ընթացքում անհրաժեշտ է ձգտել պահպանել մասնակիցների մրցակցային ոգին՝ միաժամանակ ապահովելով թեթև, հաճելի, աշխույժ, ստեղծագործական մթնոլորտ: Այն պետք է ունենա հակադարձ կապ մասնակիցների և մրցավարների միջև: Պատասխանները երբեմն պետք է հիմնավորվեն: Իրավիճակային հարցերի պատասխանների դեպքում հիմք ընդունել ինչպես երևույթի, պատահարի էությունը, այնպես էլ մարդու հոգեբանությունը և երևույթների, գործողությունների տրամաբանական կապը: Գնահատման ժամանակ հաշվի առնել նաև պատասխանների խորությունը: Լրացուցիչ, խոր, գրագետ հիմնավորման համար գնահատականը բարձրացնել 0,5-1 բալով:

Մրցույթի առաջադրանքների օրինակելի փաթեթ

<<Պատրաստ ես աղետին>> մրցույթի անցկացման համար, հասկանալի է, ամեն անգամ անհրաժեշտ է կազմել առաջադրանքների նոր փաթեթ: Ստորև բերվում է մրցույթի անցկացման համար առաջադրանքների օրինակելի փաթեթ:

Առաջադրանք 1. Թեսթ-բոլ. ԱԲ

1. Ո՞ր աղետի ծագմանն է նպաստում ոչխարների արածեցումը լանջերի վրա: ա) փլուզում բ) սելավ գ) ջրհեղեղ
2. Գարնանը կամ աշնանը առավոտյան ճանապարհաձածկը դարձել է

- խիստ սահուն: Ի՞նչ երևույթ է ծագել:
- ա) ձնատեղում բ) ձնաբուք գ) **մերկասառույց**
3. Ո՞ր քամիներն են կարող ծանր իրերը բարձրացնել 5մ և ավելի:
- ա) մրրիկ բ) փոթորիկ գ) **մրրկասյուն**
4. Միաժամանակ որոտ, կայծակ, անձրև և քամի:
- ա) փոթորիկ բ) բուք գ) **ամպրոպ:**
5. Լանջի վրա ապարների զանգվածը սահում է:
- ա) փլուզում բ) **սողանք** գ) երկրաշարժ:

Առաջադրանք 2. Թեսթ-բլոկ, ՀՀ-ում հնարավոր ԱՐ

1. Արարատյան դաշտավայրին առանձնահատուկ աղետ:
- ա) ավազային փոթորիկ բ) կարկուտ գ) **հողերի ճահճացում**
2. Հայաստանի Հանրապետության տարածքում հաճախակի կրկնվող աղետներ:
- ա) սառնամանիք բ) փոթորիկ գ) **ցրտահարություն** դ) **կարկուտ**
3. Աղետ, որը հնարավոր չէ ՀՀ տարածքում:
- ա) ավազային փոթորիկ բ) տորֆային հրդեհ գ) **ցունամի:**

Առաջադրանք 3. Թեսթ-բլոկ, պահելիաձև ԱՐ-ում, տարբեր պատահարների, իրադրությունների ժամանակ

1. Գտնվում ես արտադրական ոչ մեծ ձեռնարկությունից փոքր հեռավորության վրա: Հանկարծ այնտեղից լսվում է պայթյունի ձայն և բարձրանում է կանաչ-դեղնավուն ամպ: Քամին փչում է ձեռնարկությունից դեպի քեզ: Ճիշտ գործողությունները.
- ա) գնալ քամուն ընդառաջ,
բ) արագ հեռանալ քամու ուղղությամբ,
գ) **հեռանալ քամուն ուղղահայաց ուղղությամբ:**
2. Ջրամբարի սառցածածկի ո՞ր ամենափոքր հաստության դեպքում կարելի է ոտքով անցնել.
- ա) 2-3 սմ,
բ) **5-7սմ,**
գ) 10-15սմ:
3. Լճի բարակ սառցածածկի վրա շարժվելիս սառույցը կտրվել է, ընկել ես սառը ջրի մեջ և ապա մի կերպ հասել ափ: Հետագա գործողությունները.
- ա) **թաց հագուստով որոշ ժամանակ գլորվել ձյան վրա,**
բ) ազատվել թաց հագուստից, թռչկոտել մինչև տաքանալը,
գ) թռչկոտել թաց հագուստով:

4. Հայտնվել ես մի վայրում, որտեղ կան շատ թունավոր օձեր: Ճիշտ գործողությունները.
 - ա) **Որքան հնարավոր է ոտքերով մեծ աղմուկ ստեղծել,**
 - բ) հանգիստ և անձայն անցնել օձերի ուշադրությունը չգրավելու համար,
 - գ) շարժվել կամաց, կանգառներով՝ ամեն 5-10 քայլը մեկ ուշադիր նայելով շրջակայքը:

Առաջադրանք 4. Թեսթ-բլոկ: Կյանքի հմտություններ

1. Պատասպարվել ես ձնե տանը և միացրել այրոցը: Բոցի ո՞ր գույնի դեպքում պետք չէ անհանգստանալ.
 - ա) դեղին,
 - բ) **երկնագույն,**
 - գ) կարմիր:
2. Մտոցածածկ ջրամբարի վրայով անցնելու համար սառույցի ո՞ր գույնն է վերջինիս ավելի մեծ ամրության նշան.
 - ա) սպիտակ,
 - բ) **կապտավուն երանգ,**
 - գ) կանաչ:
3. Արշավի ժամանակ վերջացել են խմելու ջրի պաշարները: Մոտակայքում ջրաղբյուրներ չկան: Ինչպե՞ս ջուր ճարել.
 - ա) արշավային բահով փոս փորել և փոսում հավաքված ջուրը ֆիլտրել և օգտագործել,
 - բ) մոտակա ծառի բնի վրա կտրվածք անել, մոտը աման ամրացնել և հավաքել հյութը,
 - գ) **պոլիէթիլենային տոպրակը հազցնել տերևներով ամենախիտ ճյուղի վրա, պինդ փակել տոպրակը և պտտելով տոպրակի հատակը դեպի վար՝ սպասել մինչև խոնավություն հավաքվի գոլորշիացող տերևներից:**

Առաջադրանք 5. Թեսթ-բլոկ, Պահելաձեւ անձանոթ մարդկանց հետ կապված հրավիճակներում

1. Ձեր դուռը թակում են (դու տանը մենակ ես) և ասում. - Դուք հեռագիր ունեք, պետք է ստորագրել: Ճիշտ գործողությունները.
 - ա) շղթան ամրացնել և դուռը կիսաբաց անել,
 - բ) **խնդրել հեռագիրը կարդալ դռան հետևից, ապա խնդրել, որ հեռագիրը տանեն փոստ,**
 - գ) խնդրել հեռագիրը թողնել դռան մոտ, և հետո վերցնել:
2. Վերելակում քեզ վրա հարձակվել է մի անձանոթ, որը փորձում է

վերելակը կանգնեցնել հարկերի միջև: Ճիշտ գործողությունները.
ա) գոռալ և դիմադրել,
բ) չթողնել հակառակորդին, որ մոտենա վերելակի կառավարման տախտակին (պուլտին) և անընդհատ սեղմել մոտակա հարկի կոճակը,
գ) համոզել հակառակորդին, որ դադարեցնի հարձակումը:

3. Գնացքով գնում եք երկար ճանապարհ: Պահելաձևը (խցիկում, կուպեում)
ա) ծանոթանալ ուղևորների հետ և պատմել ո՞ւր, ո՞ւմ մոտ և ինչո՞ւ եք մեկնում,
բ) չխոսել ոչ մեկի հետ,
գ) անբռնազբոս կապի մեջ մտնել ուղևորների հետ, պարզել՝ ո՞ւր և ինչո՞ւ են մեկնում և ապա ստացած տեղեկությունները ճշտել անձնական դիտարկումների միջոցով:

Առաջադրանք 6. Թեսթ-բոկ, Առաջին օգնություն:

1. Ցուրտ եղանակին երկարատև զբոսանքից հետո ընկերոջ այտերը սպիտակել են: Ճիշտ գործողությունները:
ա) այտերը շփել ձյունով,
բ) ձեռքերով կամ փափուկ կտորով շփել այտերը մինչև մաշկը կարմրի,
գ) այտերին քսել կրեմ կամ ճարպ:
2. Արյունահոսության ժամանակավոր դադարեցումը լարանի (ժգուտի) օգնությամբ.
ա) լարանը դնել վերքից անմիջապես վեր,
բ) լարանը դնել վերքից անմիջապես ցածր,
գ) լարանը դնել վերքից վեր՝ կենտ ոսկրի վրա:
3. Վերջույթի անշարժացումը կոտրվածքի դեպքում.
ա) անշարժացում կոտրվածքից ցածր գտնվող մեկ հողի ընդգրկմամբ,
բ) անշարժացում կոտրվածքից վեր և վար գտնվող հողերի ընդգրկմամբ,
գ) անշարժացում կոտրվածքի տեղում:

Առաջադրանք 7. Վարժանք-մրցություն: Անհատական պաշտպանության միջոցների օգտագործում:

Թիմերի բոլոր անդամները հերթով հագնում և հանում են ԳՊ-7 քաղաքացիական հակազագ:

Առաջադրանք 8. Գրական ներկայացում. ԱԻ

Յուրաքանչյուր թիմ 3-5 րոպեի ընթացքում ներկայացնում է գրական գեղարվեստական ստեղծագործություններից հասվածներ, որոնք առնչվում են աղետի, վթարի կամ ԱԻ:

Առաջադրանք 9. Գեղարվեստական ելույթներ արտակարգ իրավիճակների դիմակայման հարցերի շուրջը

Յուրաքանչյուր թիմ 3-ից 5 րոպեի ընթացքում ներկայացնում է երաժշտական գեղարվեստական նախօրոք պատրաստված համար՝ նվիրված ԱԻ-ին դիմակայման հարցերին:

Առաջադրանք 10. Առաջին օգնության ցուցաբերման հստությունների մրցություն

Ստորին վերջույթի վնասվածքով տուժածի տեղափոխում ձեռքի տակ եղած միջոցներով:

Առաջադրանք 11. Նկարչություն արտակարգ իրավիճակների վերաբերյալ թեմաներով

Այսպիսով բերվեցին <<Պատրաստ ես աղետին>> մրցույթի անցկացման կազմակերպման և իրականացման բոլոր հիմնական հարցերը: Իհարկե, բերված ցուցումները, հանձնարարականները վերջնական շաբլոն չեն պատճենահանման համար: Մրցույթի անցկացման ժամանակ որոշ հարցեր կվերանայվեն, կճշգրտվեն: Անհրաժեշտ է ստեղծագործական ազատ մոտեցում՝ կապված տեղական պայմանների, հնարավորությունների, մասնակիցների որակական ցուցանիշների և այլ գործոնների հետ:

Մրցույթի հաջողությունը մեծ թափ կտա նման միջոցառումների անցկացմանը, ընդլայնմանը՝ մասշտաբները հասցնելով հանրապետական և նույնիսկ միջպետականի:

Այսպիսով, բերվեց մրցույթի մեկ փուլի անցկացման թեսթ-բլոկների և գործնական վարժությունների համալիր: Հետագա փուլերի անցկացման համար անհրաժեշտ է ստեղծել նոր համալիրներ՝ հաշվի առնելով հանձնարարականներում բերված մոտեցումները, հարցերի համալիրը: Իսկ հարցերի շրջանակները պետք է գտնվեն հիմնականում <<Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցերի>>, <<Առաջին բուժօգնություն>> և այլ առարկաների ծրագրերի սահմաններում: Հավանաբար նպատակահարմար կլինի հետագայում ստեղծել թեսթային հարցերի, վարժությունների ընդգրկուն բազա, որի հիման վրա հնարավոր կլինի մրցույթի ցանկացած փուլի համար կազմել առաջադրանքի նոր փաթեթ:

II.2. <<ԲՆԱԿԿՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ԱՐՉՍԳԱՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻՆ>> ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՀԱՆԳԻՉՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ամեն տարի Հայաստանի Հանրապետությունում տեղի են ունենում տարբերային, տեխնաձին, էկոլոգիական, օդերևութաբանական, հիդրոլոգիական և այլ տեսակների բազմաթիվ արտակարգ իրավիճակներ, որոնք կարող են վերաճել աղետների:

Աղետներին բնակչության նախապատրաստումը և արձագանքումը հանդիսանում են արտակարգ իրավիճակների և աղետների կառավարման հիմնական ոլորտները:

Աղետներին նախապատրաստվել՝ նշանակում է ունենալ արտակարգ իրավիճակների, աղետների կանխատեսման, կանխարգելման, դրանց հետևանքները մեղմելու հնարավորություն: Առաջին հերթին բնակչության նախապատրաստումն անհրաժեշտ է իրականացնել այն մարդկանց համար, որոնց սպառնում են աղետները: Այն կարող են իրականացնել վտանգավոր տարածքներում ապրող տարբեր մասնագետների (հրահանգիչների), ինչպես նաև լիազորված պետական մարմինների մասնագետների ուժերով:

Հրահանգիչները պետք է ծանոթ լինեն տվյալ տարածքին բնորոշ արտակարգ իրավիճակներին (աղետներին): Նրանք պետք է ունակ լինեն՝

- որոշել այն գործոնները, որոնք աղետների ժամանակ բարձրացնում են խոցելիությունը,
- նշել աղետներին նախապատրաստման և պատրաստվածության գործընթացի փուլերը,
- արդյունավետ օգտագործել աղետներին վերաբերող այն հիմնական տեղեկությունները, որոնք վերաբերում են մարդկանց նախապատրաստմանը աղետներին, դրանց պլանավորմանն ու իրականացմանը:

Աղետների ազդեցության նվազեցման և հետևանքների մեղմացումն իրենց մեջ ընդգրկում են տարբեր միջոցառումների իրականացում: Այդպիսի միջոցառումները, որպես կանոն, նախաձեռնում են պետական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն ու կազմակերպությունները:

Աղետների խոցելիության նվազեցման ռազմավարությունն օգնում է որոշել խոցելիության պատճառները և մշակել միջոցառումներ, որոնք նվազեցնում են խոցելիությունը և բարձրացնում՝ աղետներին դիմակայելու հնարավորությունը: Կարող են ձեռնարկվել սպասվող աղետի մասին վաղ նախազգուշացման միջոցառումներ:

Աղետներին պատրաստությունն իր մեջ ընդգրկում է նաև ազդարարման համակարգի, տարահանման պլանների և այնպիսի միջոցառումների մշակումը, որոնք անհրաժեշտ են ձեռնարկել ինչպես աղետների առաջացման սպառնալիքի, այնպես էլ աղետի դեպքում՝ մարդկանց և նյութական հնարավոր կորուստները նվազեցնելու համար: Այն ընդգրկում է նաև բնակչության, պատասխանատու

անձանց, փրկարար ջոկատների ուսուցումը և գործնական նախապատրաստումը, ինչպես նաև աղետներին պատրաստվածության ռազմավարության, նորմատիվների, կազմակերպչական միջոցառումների և գործողությունների պլանների մշակումը, որոնք պետք է կիրառվեն աղետի առաջացումից անմիջապես հետո և հետևանքների վերացման ժամանակ:

Յուրաքանչյուր բնակավայրի բնակիչները և կամավոր հրահանգիչներն ունեն իրենց ակտիվ, կարևոր դերն արտակարգ իրավիճակների դիմակայման ողջ գործընթացում՝ աղետից առաջ, ընթացքում և հետո: Պատրաստվածությունը աղետներին և կառավարումը միայն արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության գծով լիազորված կառույցների խնդիրը չէ: Այն այս կամ այն չափով վերաբերում է նաև մնացած պետական, տարածքային կառույցներին, մարմիններին, հիմնարկ-ձեռնարկություններին: Քանի որ աղետի արհավիրքներն առաջին հերթին, իրենց վրա են կրում տեղի բնակիչները, ուստի այդ պայմաններում որոշիչ նշանակություն ունեն նրանց ճիշտ վարքագիծը, ինքնօգնությունն ու փոխօգնությունը, ինչպես նաև փրկարարական ուժերի ժամանումից հետո նրանց աջակցելը: Ահա թե ինչու է անհրաժեշտ հրահանգիչների պատրաստումը և բնակչության նախապատրաստումը աղետներին:

Հրահանգիչների պատրաստում

Աղետներին նախապատրաստման և արձագանքման ոլորտում ուսուցումն առավել արդյունավետ է դառնում, երբ ունկնդիրները հանդես են գալիս ոչ թե պասիվ դերում, այլ ակտիվորեն ընդգրկվում են այդ գործընթացի մեջ: Այդ իսկ պատճառով ուսուցման մեջ անհրաժեշտ են այնպիսի մոտեցումներ, որոնք ենթադրում են ունկնդիրների մասնակցությունը հարցերի քննարկմանը և վերլուծությանը:

Ուսուցման ընթացքում անհրաժեշտ է մոդելավորել որևէ իրավիճակ, մշակել հմտություններ, որոնք կարող են գործնական կիրառում ունենալ: Այդ ընթացքում մասնակիցները պետք է մտածեն, կիրառեն և զարգացնեն պլանավորման հմտություններ և ստեղծագործաբար մոտենան խնդիրների լուծմանը: Նման մոտեցման դեպքում փորձառու ունկնդիրները կարող են ներմուծել իրենց փորձն ու գիտելիքները, ինչը կբարձրացնի ուսուցման որակը: Ընդհանուր առմամբ, ունկնդիրներն ավելի մեծ հետաքրքրություն կցուցաբերեն և ավելի շատ գիտելիքներ կստանան, եթե նրանց ակտիվ մասնակցության հնարավորություններն ընդգրկվեն գործնական վերլուծությունների կատարման աշխատանքներում և քննարկումներում:

Մեթոդները, որոնք կիրառվում են աղետներին նախապատրաստման ուսուցման ընթացքում, տարբերվում են ավելի ավանդական ուսուցման եղանակներից: Աղետներին կատարելապես պատրաստվելու սեմինարների ժամանակ մեծ չափով պետք է կիրառվի «մասնակցություն» մոտեցումը, քան դասախոսական մոտեցումը, որը կիրառվում է ավանդական ուսուցման մեջ:

Առաջարկվող նյութը հրահանգչին հնարավորություն է տալիս ծանոթանալ

ուսուցման ժամանակակից մոտեցումների հետ, որոնց էությունը հիմնված է սկզբունքային երկու դրույթների վրա՝

- ուսուցումն ավելի արդյունավետ է ուսուցանվողների առավել ակտիվ մասնակցության դեպքում.
- ուսուցման որակը զգալի չափով բարձրանում է ուսուցման զանազան մոտեցումների և մեթոդների գույակցման դեպքում:

Լավ ուսուցման կատարյալ բաղադրատոմս գոյություն չունի: Փորձառու հրահանգիչը միշտ կգտնի ուսուցման իր մեթոդը՝ հիմնված սեփական փորձի վրա, որը համապատասխանում է իր ոճին և առկա իրավիճակին: Այս դեպքում, պարապմունքների բովանդակությունը գրեթե չի փոխվում, ինչը հրահանգչին թույլ է տալիս ժամանակի ընթացքում բարելավել իր մեթոդները, դասավանդման տեխնիկան և ձեռք բերել վստահություն:

Ուսուցման բազմազան մեթոդներից ստորև բերվում են դրանցից մի քանիսը: Յուրաքանչյուր հրահանգիչ, ելնելով որոշակի իրադրությունից, պետք է ընտրի իր համար դրանցից ավելի համապատասխանը: Դրա համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այնպիսի գործոնների վրա, ինչպիսիք են՝ ուսուցանվողների պահանջներն ու առանձնահատկությունները, իրադրության յուրահատկությունը, հրահանգչի որակավորումը, տեղեկատվության ծավալը և որակը, պարապմունքների անցկացման ժամանակը և տեղը, ինչպես նաև համապատասխան սարքավորումների առկայությունը:

Հրահանգիչների կողմից կիրառվելիք ուսուցման մեթոդներ

Ստեղծագործական մտածողության մեթոդ: Ուսուցանվողի համար ստեղծագործական մտածողությունն ավելի կարևոր է, քան գործնականը: Քննարկվող հարցի վերաբերյալ մասնակիցներն առաջարկում են ինքնաբերաբար առաջացած գաղափարներ, որոնցից ոչ մեկը նախապես չի մերժվում և չի քննադատվում: Բոլոր գաղափարները գրանցվում են: Այս մեթոդի նպատակն է խթանել խմբային քննարկումները և հնարավորին չափ նոր գաղափարներ ընդգրկել: Բոլոր գաղափարները գրանցելուց հետո խումբը վերլուծում, քննարկում է դրանցից յուրաքանչյուրը և գտնում ճիշտ գաղափարները: Խրախուսելով մտքի ազատության հնարավորությունը, ստեղծագործական մտածողությունը՝ կարող է խթանել այնպիսի խնդիրների լուծմանը, որոնք առաջին հայացքից կարող են անլուծելի թվալ:

Որպեսզի ստեղծագործական մտածողության մեթոդն արդյունավետ կիրառվի, կարևոր է պահպանել հետևյալ պայմանները՝

- լինել հակիրճ և խրախուսել մասնակիցներին՝ արտահայտելու հնարավորինս շատ գաղափարներ,
- մասնակիցները պետք է իրենց ազատ զգան և առաջարկեն ցանկացած, անգամ քիչ հավանական թվացող տարբերակներ,
- աշխատանքը սկսելուց առաջ պարզ ներկայացնել խաղի կանոնները.

- չձեռնվել տրված թեմայից,
- հղկել առաջարկվող գաղափարները,
- արգելել քննադատությունը,
- պարզաբանել, որ աշխատանքի նպատակը, հնարավորին չափ, նոր գաղափարներ ընդգրկելն է, այլ ոչ թե՝ դրանց որակը:

Բոլոր գաղափարները թվարկելուց հետո խումբը դրանք դասակարգում, պարզաբանում, քննարկում է, որից հետո դրանց մի մասը չի ընդունվում, իսկ ընդունվածները զարգացնում են:

Օրինակների վերլուծման մեթոդ: Որոշակի օրինակի վերլուծումն իրական կամ մտացածին իրադրությունների մանրամասն քննարկումն է, ինչին հրահանգիչները կարող են հանդիպել գործնականում: Նման քննարկումները խմբի անդամներին թույլ են տալիս սովորել խնդիրների լուծման այլընտրանքային միջոցներ փնտրել և նպաստել վերլուծական հմտությունների ու խնդիրների լուծման մեթոդների զարգացմանը:

Ցուցադրման մեթոդ: Ցուցադրումն ունկնդիրներին որևէ մեթոդի կամ հանձնարարության կատարման ճիշտ ուսուցման եղանակներից է:

Որպես կանոն՝ հրահանգիչն ինքն առաջինը պետք է ցուցադրի այն, ինչը ցանկանում է սովորեցնել ունկնդիրներին, որից հետո ձեռք բերված գիտելիքների ամրապնդման նպատակով անցնում են գործնական վարժություններ կատարելուն: Հարկ է նշել, որ ժամանակի կամ միջոցների սղության դեպքում այս մեթոդի կիրառումը կարող է սահմանափակվել: Բացի դրանից, ցուցադրվող նյութի փոքր ծավալը կարող է նվազեցնել դրա ընկալումը:

Խմբային բանավեճի մեթոդ: Բանավեճը կազմակերպվում է խմբում, որը կարող է բաղկացած լինել երկու կամ ավելի անդամներից, որոնք պատրաստվում են քննարկել որևէ խնդիր կամ թեմա: Սովորաբար քննարկումն ակտիվացնելու համար առաջարկվում է հարցերի կամ վարժությունների շարք: Բանավեճային խումբ կարող է լինել ամբողջ լսարանը (մեծ խումբ), կամ դրա մի մասը (փոքր խումբ):

Խմբային բանավեճը հետապնդում է հետևյալ նպատակները՝

- խմբի բոլոր անդամներին ներգրավել ակտիվ աշխատանքի մեջ,
- բազմազան դարձնել ուսուցման ընթացքը և խուսափել միօրինակությունից,
- խրախուսել մասնակիցների գիտելիքների և փորձի փոխանակումը.
- հասնել նպատակների և մոտեցումների գաղափարական միասնությանը,
- քննարկումներ ապահովել տարբեր մակարդակներում, մեծ և փոքր խմբերում:

Խմբային բանավեճի հաջողությունը կախված է խմբի ղեկավարի որակավորումից, որը կարող է աշխուժացնել բանավեճը՝ ընդգրկելով պասիվ մասնակիցներին:

Բանավեճի ընթացքում պետք է կիրառվեն հետևյալ կանոնները՝

- տրվում են միայն այնպիսի հարցեր, որոնց հնարավոր է պատասխանել,
- հարցերը ձևակերպվում են պարզ և հասկանալի,
- տրվում են լուծում պահանջող, բանավեճը խթանող հարցեր,
- տրվում են հարցերը մեկական, ոչ թե մի քանի հարց միաժամանակ,
- պահպանել բանավեճի անհրաժեշտ ուղղվածությունը,
- տալ բաց հարցեր, որոնց չի կարելի պատասխանել՝ <<այո>> կամ <<ոչ>>:

Ելույթի նախապատրաստումը: Ելույթը, տվյալ թեմայով մանրագնահի պատրաստված խոսք է: Ելույթ ունեցողի նպատակն է՝

- ունկնդրին ներկայացնել տրամաբանորեն կապված փաստացի տեղեկություններ,
- կարծիք արտահայտել վիճելի հարցերի վերաբերյալ,
- ակտիվացնել ունկնդիրների տրամաբանությունը,
- խթանել ունկնդրի ստեղծագործական ակտիվությունը,
- նախաձեռնել ընդհանուր քննարկումներ,
- բարձրացնել ունկնդիրների տրամադրությունը:

Որոշ ունկնդիրներ գերադասում են սովորել լսելով, իսկ մյուսները՝ կարդալով: Ելույթներում պետք է արտարծվեն նոր թեմաներ, գաղափարներ, տեսություններ: Ելույթները չպետք է լինեն միապաղաղ և երկարաշունչ:

Կլոր սեղանի շուրջ քննարկումների մեթոդ: Կլոր սեղանի կազմակերպելու համար հրահանգիչը պարապմունքներին հրավիրում է մասնագետների: Կլոր սեղանի անցկացման համար անհրաժեշտ է ղեկավարի ներկայությունը, որը պահպանում է կարգուկանոն, յուրաքանչյուրին տալիս է արտահայտվելու հնարավորություն և բանավեճը վարում է մինչև թեմայի սպառումը: Կլոր սեղանը կարող է կազմակերպվել որոշակի թեմայի կամ հարցի, դրանց հետ կապված տարբեր տեսակետների քննարկման, նոր տեղեկությունների ձեռքբերման, թերությունների վերլուծման և մոտեցումների արժևորման համար: Այս մեթոդում կարող են ի հայտ գալ նաև թույլ կողմեր այն դեպքում, երբ քննարկվում են տվյալ հարցին վերաբերող ոչ բոլոր տեսակետները, կամ բոլոր մասնակիցները կողմնակից են լինում եզակի կարծիքի: Բանավեճի հաջողության մեջ անգնահատելի է ղեկավարի դերը, որը բոլոր մասնակիցներին հնարավորություն է տալիս արտահայտվելու և ամփոփում է արդյունքները:

Բնական և հեղուկ գազերի անվտանգ օգտագործումը կենցաղում գործնական խաղ

Կենցաղում բնական և հեղուկ գազերի օգտագործումն ընդունել է մեծ մասշտաբներ: Հայաստանի Հանրապետության բնակավայրերի գազաֆիկացումը 2009թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 92%: Մոտ ապագայում հնարավոր է բնակավայրերի 100% գազաֆիկացում: Դրա հետ մեկտեղ ավելանում է բնական գազից օգտվելու ռիսկայնությունը:

Բնական գազը փոխադրվում է մայրուղային գազատարներով՝ կոմպրեսորային կայանների միջոցով: Գազատարների տրամագիծը տատանվում է 300-1200մմ: Կոմպրեսորները գազը ճնշում են մինչև 45-50 մթն:

Պահեստարաններում գազը պահվում է 8-12 մթն. ճնշման տակ, հազվադեպ՝ մինչև 16մթն:

Բնակավայրերում գազատարները լինում են՝

- ցածր ճնշման, որի մեջ ճնշումը կարող է լինել 0.02-0.05մթն,
- միջին ճնշման, որի մեջ ճնշումը կարող է լինել 0.05-3.0մթն,
- բարձր ճնշման, որի մեջ ճնշումը կարող է լինել 3.0-6.0մթն,
- ձեռնարկությունների համար ճնշումը կարող է լինել 6.0-12.0մթն:

Գազատարների անվտանգ շահագործումն ապահովելու նպատակով սահմանված են դրանց հեռավորությունները շենքերից և շինություններից՝

- մինչև 0.05մթն ճնշման դեպքում՝ 2 մետր,
- 0.05-ից մինչև 3.0մթն. ճնշման դեպքում՝ 5 մետր,
- 3.0-ից մինչև 6.0մթն. ճնշման դեպքում՝ 9 մետր,
- 6.0-ից մինչև 12.0 մթն ճնշման դեպքում՝ 15 մետր:

Բնակավայրերի գազի ցանցի անվտանգ շահագործման համար ստեղծվում են գրասենյակներ, որոնք պետք է ապահովեն ցանցի սպասարկման և վերանորոգման աշխատանքները: Նշված աշխատանքների կատարման համար ստեղծվում են վթարային բրիգադներ:

Գազից առաջացած հրդեհների դեմ պայքարելու համար անհրաժեշտ է՝

- անմիջապես դադարեցնել գազի մատակարարումը.
- շենքերում, դիտահորերում, խրամուղիներում, գազատարների վերանորոգման ընթացքում ապահովել գազավտանգ աշխատանքների կատարման անվտանգությունը.
- գազավտանգ տեղերում անհրաժեշտ է աշխատել գունավոր մետաղներից պատրաստված գործիքներով, իսկ պողպատե գործիքներ օգտագործելիս դրանք պետք է պատված լինեն սոլիդոլի կամ տավուտի թանձր շերտով:

Մայրուղային գազատարի վթարի դեպքում վառվող ջահը կարող է ունենալ 50-

60 մ երկարություն, որը կարող է վտանգ ներկայացնել 100 մետր հեռավորության վրա տեղակայված շենքերին և շինություններին: Այդ ընթացքում մեծ քանակությամբ չայր-ված գազը կարող է ստեղծել շատ վտանգավոր պայթուցավտանգ միջավայր: Պետք է անմիջապես որոշել վտանգավոր սահմանները և անհրաժեշտության դեպքում որոշում կայացնել մարդկանց տարահանման վերաբերյալ: Այդ ընթացքում բնակելի և հասարակական շենքերում նույնպես կարող են առաջանալ պայթուցավտանգ խառնուրդներ:

Պայթուցավտանգ խառնուրդներ կարող են առաջանալ նաև այն շենքերում և շինություններում, որոնք գազաֆիկացված չեն, եթե դրանց մոտով անցնում է գազատար:

Ելնելով նպատակահարմարությունից՝ պրոպան և բութան գազերը կենցաղում օգտագործվում են հեղուկ վիճակում, որոնք ունեն ցածր եռման ջերմաստիճան (համապատասխանաբար՝ -42°C և -0.5°C): Դրանք ունեն նաև օդի հետ խառնուրդների պայթման փոքր սահմաններ (համապատասխանաբար՝ 2.1-9.5 և 1.5-8.0 ծավալային տոկոս), իսկ բնական գազի պայթման սահմաններն են՝ 5-15 ծավալային տոկոս:

Հաշվի առնելով ունկնդիրների ստացած տեսական գիտելիքները՝ խաղը վարողն ուսումնական խումբը բաժանում է չորս ենթախմբերի և դրանց տալիս է համապատասխան առաջադրանքներ:

Առաջին ենթախմբին

Քննարկել և վերլուծել, թե ո՞ր դեպքերում բնակարանում, շենքերում, շինություններում կարող է գազ լցվել:

Մոտավոր պատասխաններն են՝

1. եռացող ջրի, սուրճի թափվելու հետևանքով գազօջախի բոցը մարվելիս,
2. բնակարանի տարածքում գազատար խողովակի զոդման կարերի և այլ միացման տեղերի մաշվածության և անսարքության հետևանքով,
3. տան հարևանությամբ, գետնի տակով, օդով անցնող մայրուղային գազատարի մաշվածության և վնասման հետևանքով,
4. շենքերի, շինությունների հարևանությամբ, գետնի տակով և օդով անցնող մայրուղային գազատարի մաշվածության և վնասման հետևանքով,
5. ներքին հարկի բնակարանում գազի արտահոսքի և վերին հարկ բարձրանալու դեպքում,
6. գազօջախի բաց փականի դեպքում մայրուղային խողովակազծում գազի հոսքի դադարեցման, այնուհետև գազամատակարարման վերականգնման դեպքում:

Երկրորդ ենթախմբին

Քննարկել և վերլուծել, թե ի՞նչ պետք է անել, եթե բնակարանում, շենքում, շինությունում գազ է լցվել:

Մոտավոր պատասխաններն են՝

1. բացել բնակարանի, շենքի, շինության դռներն ու պատուհանները և հիմնավոր օդափոխել դրանք.
2. շտապ կարգով փնտրել և գտնել գազի արտահոսքի տեղը և փակել մտնող գազի փականը.
3. ստուգել բնակարանում, շենքում, շինությունում գազից տուժած մահացած, թունավորված մարդ կամ մարդիկ կան, թ՞ե ոչ: Եթե կան, ապա նրանց պետք է դուրս բերել մաքուր օդի և ցույց տալ առաջին օգնություն, իսկ անհրաժեշտության դեպքում կատարել նաև արհեստական շնչառություն,
4. կանչել <<Շտապ օգնություն>> և տուժածներին տեղափոխել հիվանդանոց՝ մասնագիտական բուժման.
5. 1-04 հեռախոսահամարով կանչել գազի վթարային ծառայության աշխատակիցներին՝ գազի խողովակազծերի անսարքությունը վերացնելու համար:

Երրորդ ենթախմբին

Քննարկել և վերլուծել, թե ի՞նչ չպետք է անել, եթե բնակարանում, շենքում, շինությունում գազ է լցվել:

Մոտավոր պատասխաններն են՝

1. չպե՛տք է վառել բնակարանի, շենքի, շինության լույսերը,
2. չպե՛տք է լուցկի վառել,
3. չպե՛տք է այրվող ծխախոտով բնակարան, շենք, շինություն մտնել,
4. չպե՛տք է երկաթյա գործիքներով երկաթե խողովակազծերի վրա կատարել վերանորոգման աշխատանքներ: Աշխատանքները պետք է կատարել գունավոր մետաղներից պատրաստված գործիքներով, իսկ դրանց բացակայության դեպքում աշխատել սովորական կամ տաուտի թանձր շերտով պատված երկաթյա գործիքներով:

Չորրորդ ենթախմբին

Քննարկել և վերլուծել, թե գազից ի՞նչ կարող է տեղի ունենալ:

Մոտավոր պատասխաններն են՝

1. թունավորվել բնակարանում, շենքում, շինությունում լցված բնական գազից,
2. թունավորվել բնական գազի թերայրումից առաջացած շմոլ գազից,
3. թունավորվել գազի նորմալ այրումից առաջացած ածխաթթու գազի մեծ քանակից,

4. ստանալ մեխանիկական վնասվածքներ և ջերմային այրվածքներ գազի պայթման հարվածային ալիքի և բարձր ջերմաստիճանի ազդեցությունից:

Խաղը վարողը սահմանում է քննարկումների, վերլուծությունների և ամփոփման ժամկետներ:

Ենթախմբերի պատասխանատու ղեկավարները կազմակերպում են առաջադրանքների քննարկում, վերլուծություն և արդյունքների գրառում:

Վարողը, խորհրդատուները հետևում են քննարկումների ընթացքին, պարզաբանում՝ առանձին հարցեր, խրախուսում են ունկնդիրներին և նպաստում՝ առաջադրանքներին համակարգային մոտեցմանը:

Առաջադրանքների կատարման ներկայացված լուծումները կարող են լինել բազմազան և ընդգրկել բնակչության կենսագործունեության և պաշտպանության բոլոր տարրերը:

Քննարկումները կատարվում են ըստ առաջադրանքների հաջորդականության՝ հերթականորեն:

Սահմանված ժամկետները լրանալուց հետո վարողը հայտարարում է համապատասխան փուլի ավարտը և անցումը հաջորդ փուլին:

Ամփոփման փուլում յուրաքանչյուր ենթախմբի պատասխանատու ղեկավարը ներկայացնում է իր խմբի հանձնարարականի պատասխանները: Մյուս ենթախմբերի ունկնդիրները մասնակցում են ներկայացված պատասխանների քննարկմանը և կատարում՝ լրացումներ:

Տեղի ունեցած քննարկումների, բանավեճերի, վերլուծությունների արդյունքում, վարողը ներկայացնում է իր դիտարկումները ենթախմբերի աշխատանքների վերաբերյալ և կատարում՝ ընդհանուր եզրակացություն:

Գործնական խաղն ավարտելուց առաջ ունկնդիրներին հնարավորություն է տրվում գնահատել խաղի արդյունքները և ներկայացնել իրենց ցանկություններն ու առաջարկությունները խաղի վերաբերյալ:

II.3. ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Արտակարգ իրավիճակների և ռազմական դրության պայմաններում խիստ կարևոր, կենսական նշանակություն ունի բնակչության և կառավարման մարմինների ազդարարման համակարգը: Այսօր բոլորն են ընդունում, որ վաղ ազդարարումը տարբեր վտանգների դեպքում մարդկանց փրկելու ամենաարդյունավետ միջոցն է:

Իսկ ի՞նչ վիճակ է այս բնագավառում Հայաստանի Հանրապետությունում: Հանրապետության ազդարարման համակարգը ստեղծվել է 1974 թվականին՝ ազդարարման Պ-160 և Պ-164 սարքավորումների հիման վրա:

Համակարգն աշխատել է կապի պետական ցանցի հիման վրա, կառավարման հրամանները փոխանցվել են հեռախոսային գծերով և կապի խողովակներով:

Համակարգի կառավարումն իրականացվում է ՔՊ կառավարման կետից: Համակարգը հնարավորություն էր տալիս իրականացնել շրջանների ընտրովի ազդարարում կամ ամբողջ հանրապետության և առանձին՝ Երևան քաղաքի ցիրկուլյար ազդարարում:

Բացի այդ, կապի շրջանային հանգույցներից, որտեղ տեղադրված էին ազդարարման սարքավորումները, հնարավոր էր իրականացնել տվյալ շրջանի առանձին բնակավայրերի ազդարարում:

Հանրապետության ղեկավար կազմն ազդարարվում էր քաղաքային և ծառայողական հեռախոսով, իսկ բնակչությանը՝ էլեկտրաշչակների, փողոցային բարձրախոսների և ռադիոհեռահաղորդիչ ցանցերի օգնությամբ: Սակայն Խորհրդային Միության փլուզումից հետո, երբ հանրապետությունը հայտնվեց էներգետիկ ճգնաժամի մեջ, լարման տատանումների հետևանքով շարքից դուրս են եկել սարքավորումների առանձին մասերն ու էլեկտրաշչակները, իսկ սարքավորումների պահեստային մասեր արդեն չէին մատակարարվում:

1988 թվականի ուժեղ երկրաշարժը շարքից հանեց որոշ շրջանների ազդարարման ենթահամակարգերը: Բացի այդ, «Արմենտել» ընկերության կողմից հանրապետության կապի համակարգի մի մասի մասնավորեցումից հետո ռադիոհեռահաղորդիչ ցանցը հետզհետե ընդհանրապես դադարեց գոյություն ունենալ, դժվարություններ առաջացան համակարգի սպասարկման հարցերում: Այդ ամենը հանգեցրեց համակարգի գրեթե անաշխատունակությանը: Այսօր բացակայում են ֆիզիկական հեռախոսագծերը գյուղական համայնքներից դեպի մարզկենտրոններ (մոտ 300 համայնք), իսկ մոտ 100 համայնքում բացակայում են շչակների աշխատանքն ապահովող եռաֆազ հոսանքի մալուխները, շչակներ տեղադրված չեն մոտ 600 համայնքում, 70 ջրամաբարների վրա շչակներ չկան:


1999 թվականին ՀՀ ԱԻՎ-ի ջանքերով վերականգնվեց Երևանի ազդարարման սարքավորումների աշխատունակությունը: Հանրապետության տարածքում տարբեր ուսումնավարժությունների նախապատրաստման և անցկացման ժամանակ նույնպես իրականացվում էին շրջանային ենթահամակարգերի վերականգնման աշխատանքներ, սակայն ամբողջ հանրապետությունում էլեկտրաշչակների անբավարար քանակի պատճառով համակարգը հնարավորություն չէր տալիս ազդարարելու բոլոր բնակավայրերը, իսկ սպասարկող անձնակազմից բացակայության հետևանքով ժամանակի ընթացքում համակարգը կրկին շարքից դուրս էր գալիս:

<<Արմենտել>> ընկերության կողմից թվային հեռախոսակայանների կիրառումը հանգեցրեց նրան, որ ինչպես Երևանում, այնպես էլ որոշ շրջաններում ազդարարման սարքավորումներն ապամոնտաժվեցին և մնացին չմիացված: Այդ կապակցությամբ ԱԻՆ-ը մշակել է հանրապետության ազդարարման համակարգի վերականգնման մի շարք ծրագրեր: Ծրագրերը նախատեսում են ենթահամակարգերի կառավարման փոփոխություններ՝ կապված հանրապետության տարածային բաժանման հետ, պետական հեռուստատեսությամբ և տեղական (մարզային) հեռուստաալիքներով բնակչությանն ազդարարելու հնարավորություն, ինչպես նաև պաշտպանության նախարարության ստորաբաժանումների և ՀՀ ԱԻՆ փոխադարձ ազդարարում:

Տվյալ պահին մշակել և ՀՀ կառավարությանն են ներկայացվել 10 մարզերի և Երևանի ազդարարման համակարգերի վերականգնման ծրագրեր, որոնցից 7-ն արդեն հաստատվել են կառավարության կողմից:

Այսօր ամբողջ աշխարհում մտահոգության առակա է ոչ միայն ռազմական դրության, այլև հնարավոր բնական ու տեխնաճին աղետների դեպքում ունենալ ազդարարման արագ ու արդյունավետ համակարգեր:

Ազդարարման կառուցվածքային սխեմա



II.4. ԴՊՐՈՑԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Յուրաքանչյուր մարդ կենցաղում, աշխատավայրում, ուսումնական հաստատությունում կամ շրջակա միջավայրի պայմաններում կարող է հայտնվել այնպիսի իրավիճակներում, որոնք դուրս են գալիս մարդու կենսագործունեության բնականոն պայմանների շրջանակներից և ուղեկցվում են մարդու կյանքի և կենսագործունեության վրա բացասաբար ազդող գործոններով:

Հայտնվելով նման բարդ և անսովոր իրավիճակներում, երբ անհրաժեշտ են արագ ու հստակ գործողություններ, հաճախ մարդը դառնում է միանգամայն անօգնական, անընդունակ՝ լուծելու պարզ, բայց կենսականորեն կարևոր խնդիրներ:

Ինչպե՞ս խուսափել նման իրավիճակներից կամ հայտնվելու դեպքում ինչպե՞ս նվազեցնել նրանց ծայրահեղությունը և մեղմել հետևանքները:

Ծայրահեղ կամ արտակարգ իրավիճակները առաջանում են տարերային, տեխնաժին և այլ աղետների հետևանքով: Այն կարող է տեղի ունենալ յուրաքանչյուր օր՝ անկախ տարվա եղանակից, օրվա ժամից, մարդկանց պատրաստ կամ անպատրաստ լինելուց: Երբեմն աղետն անսպասելի է, դաժան ու անողոք: Հաճախ ժամանակ չի լինում իրավիճակը գնահատելու, որոշում ընդունելու, իսկ իրավիճակը պահանջում է գործել ակնթարթորեն, արագ, ավտոմատ կերպով:

Մարդկությանը պատուհասած աղետներից քաղած դասերը և կենսական փորձը մեզ հուշում են, որ յուրաքանչյուր մարդ պետք է կարողանա գործել իրավիճակին համարժեք և արտակարգ իրավիճակներում պահելաձևի, վարքի կանոններին համապատասխան:

Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության հարցերով ուսուցման բնագավառում աճող սերնդի ուսուցումը ունի կարևոր նշանակություն, քանի որ նման իրավիճակներում՝ աղետի հանկարծակիության, իրավիճակի ծայրահեղության, ունակությունների, հմտությունների, կենսական փորձի, բարոյահոգեբանական պատրաստության պակասի և այլ օբյեկտիվ պատճառներով երեխաները առավել խոցելի են: Եվ, վերջապես, այսօրվա երեխան վաղվա ճարտարագետն է, բժիշկը, օրենսդիրը, քաղաքագետը, շինարարը, ովքեր պետք է կառուցեն վաղվա անվտանգ աշխարհը: Իսկ որքանով նրանց կհաջողվի ապահովել մեր վաղվա անվտանգությունը, կախված է նրանից, թե ինչպես մենք այսօր մեր երեխաներին կմատուցենք կյանքի կարևոր ճշմարտությունները այն մասին, որ աղետների կանխարգելումը և անվտանգության կանոնների պահպանումը կյանքի հրամայականն է և օբյեկտիվ անհրաժեշտություն: Եվ որքան արագ մենք այդ ճշմարտությունը յուրացնենք և հասկանանք, այնքան ավելի հազվադեպ մեր փողոցներում կհնչեն փրկարարական և հրշեջ ավտոմեքենաների շչակների ազդանշանները:

Ուստի, ուսուցումը պետք է սկսել մանուկ հասակից, փուլ առ փուլ՝ հաշվի առնելով երեխայի զարգացման շրջանները, դրսևորումները, հետաքրքրասիրությունները և այլ գործոններ: Չէ՞ որ նրանք տարբեր տարիքում յուրովի են ընկալում շրջակա միջավայրը, հասկանում այն և կառուցում իրենց վերաբերմունքը շրջապատի նկատմամբ: Ուսուցումը նաև պետք է նպաստի

երեխաների մոտ սեփական անձի, հասարակության և պետության հանդեպ հոգատար և սրտացավ վերաբերմունքի ձևավորմանը: Միաժամանակ, մանուկ հասակում է ձևավորվում ապագա քաղաքացու սոցիալական դիրքորոշումը, հասարակական գիտակցությունը և ոչ միայն համընդհանուր արժեքների կուլտուրան, այլև անվտանգության կուլտուրան, ինչը ենթադրում է՝ անվտանգության ապահովման բնագավառում անձի և հասարակության կրթական մակարդակի, բանական կենսագործունեության և անվտանգ գործելակերպի կանոնների իմացություն և կիրառում:

Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հարցերով ուսուցման համար ամենահարմար վայրը դպրոցն է, որտեղ տարբեր տարիքի, խառնվածքի, դաստիարակության, մարդկային տեսակի երեխաների մեծ զանգված անց է կացնում իր կյանքի (10-12 տարի) և ժամանակի (օրվա 6-8 ժամը) զգալի մասը:

Դպրոցը նաև մարդկային մեծ կուտակումներով օբյեկտ է: Հետևաբար, դպրոցի կարևոր խնդիրներից մեկը պետք է համարել աշակերտների և աշխատող անձնակազմի անվտանգության ապահովումը դպրոցի սահմաններում, քանի որ արտակարգ իրավիճակներում կամ հակառակորդի հանկարծակի հարձակման (պատերազմի) ժամանակ դպրոցը կարող է հայտնվել քիմիական և ճառագայթային վարակման, ավերածությունների, սելավավտանգ, հրդեհավտանգ և պայթյունավտանգ, սողանքային, ջրածածկման կամ ռազմական գործողությունների գոտում:

Մեծ է մանկական մահացությունը տարերային, տեխնածին աղետների և ռազմական գործողությունների վարման ժամանակ:

- Սպիտակի երկրաշարժի ժամանակ մանկական մահացությունը կազմեց 9,3% , իսկ մանկական տրավմատիզմը՝ 27,24%:
- Փոքրիկ Բեալանում ահաբեկչության հետևանքով զոհվեցին հարյուրավոր անմեղ երեխաներ ծնողների և ուսուցիչների հետ միասին:
- 2005թ. Պակիստանում տեղի ունեցած երկրաշարժի ժամանակ դպրոցների ավերակների տակ մնաց 16 000 դպրոցական: Արևմտյան Իրանում 2005 թ. տեղի ունեցած երկրաշարժի ժամանակ ավերվեց 130 դպրոց, որի հետևանքով տուժեց 36 000 դպրոցական:

Մինչդեռ յուրաքանչյուր երեխայի կորուստը հավասարազոր է 40-70 տարվա արդյունավետ կյանքի կորստի:

<<1988թ. դեկտեմբերի 7-ին Լենինականի թիվ 9 միջնակարգ դպրոցի փլատակներից փորձում էին փրկել երեխաներին: Ավաղ, շատ քչերն էին կենդանի մնացել: Մեծ Պառնիի դպրոցի փլատակների տակ էր մնացել 53 աշակերտ: Սպիտակի, Նալբանդի դպրոցներից և մանկապարտեզներից մնացել էին միայն ավերակները...>>Սակայն հնարավոր էր փրկել և փրկվել:

Պատմում է Ստեփանավանի թիվ 2 դպրոցի ուսուցչուհի Դ. Գրիգորյանը.

<<Առաջին դասարանում դաս էի անցկացնում: Աշակերտները ջանասիրաբար դուրս էին բերում այբուբենի առաջին տառերը, երբ նրանց դեմքերն այլայլվեցին, բոլորի մոտ սկսվեց գլխացավ, սրտխառնոց... Ես բացեցի պատուհանը: Լսվեց խուլ որոտ ու դղրդոց, դրսում փռշի բարձրացավ: Ես իսկույն սկսեցի երեխաներին դուրս բերել

դպրոցից/դասարանը գտնվում էր երկրորդ հարկում/։ Երբ առաջին հարկում էինք՝ շենքը ճռուց։ Այնուհետև թափվեցին գերաններն ու որմնաքարերը։

Բարեբախտաբար, մինչև դպրոցի շենքի ավերվելը երեխաները հասցրեցին դուրս գալ դպրոցի շենքից...>։ Давид Гай. “Унесу боль твою...”. Землетрясение в Армении: записки очевидца. Издательство “Юридическая литература”. Москва. 1989г.

Դպրոցի տարահանման միջոցառումների կազմակերպումը

Տարահանման պլանի մշակումը

Օրվա մեծ մասը երեխան անց է կացնում շենքերում՝ տանը, դպրոցում, մանկապարտեզում... Սակայն արտակարգ իրավիճակների և ռազմական գործողությունների առաջացման (սպառնալիքի) ժամանակ կարող են առաջանալ գործոններ, որոնց ազդեցությունը վտանգավոր է երեխաների կյանքի և առողջության համար։ Նման իրավիճակներում նպատակահարմար է լքել շենքի տարածքը, իրականացնել տարահանում։

Տարահանում՝ վտանգավոր տարածքից անվտանգ տարածք մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխում ու տեղաբաշխում (<<ԱԻ-ում բնակչության պաշտպանության մասին>> ՀՀ Օրենք)։

Վտանգավոր տարածք՝ տեղանք կամ առանձին բնակավայր, օբյեկտ, որտեղ ԱԻ-ի կամ ռազմական գործողությունների հետևանքով առաջացել կամ կարող են առաջանալ մարդկանց կյանքի, առողջության և բնականոն կենսագործունեության վրա բացասաբար ազդող գործոններ։

Անվտանգ գոտի՝ տեղանք, բնակավայր, որը գտնվում է հնարավոր ավերածությունների և վտանգավոր տարածքներից և օբյեկտներից դուրս ու պիտանի է տարահանվող բնակչությանը տեղավորելու համար։

Յուրաքանչյուր դպրոցի տնօրեն պատասխանատվություն է կրում դպրոցի ողջ անձնակազմի անվտանգության համար։ Դպրոցի տնօրենի ղեկավարությամբ է կազմակերպվում և պլանավորվում արտակարգ իրավիճակներում աշակերտների և աշխատողների պաշտպանությունը։

Դպրոցի տնօրենը դպրոցի քաղաքացիական պաշտպանության պետն է։ Համաձայն դպրոցի քաղաքացիական պաշտպանության պետի համապատասխան հրամանի՝ նշանակվում են դպրոցի քաղաքացիական պաշտպանության պաշտոնատար անձիք։

Դպրոցի ռազմագիտության ուսուցիչը՝ դպրոցի քաղաքացիական պաշտպանության պետի տեղակալը, դպրոցի քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ։

Դպրոցի կազմակերպչական հարցերով փոխտնօրենը՝ դպրոցի տարահանման հանձնաժողովի նախագահ:

Դպրոցի բժիշկը կամ բուժքույրը՝ առաջին բուժօգնության հարցերով պատասխանատու:

Դպրոցի տնտեսվարը՝ նյութատեխնիկական ապահովման հարցերով պատասխանատու:

Տարահանման անցկացումը պահանջում է տարահանման միջոցառումների նախնական պլանավորում և դպրոցի անձնակազմի բազմակողմանի պատրաստում: Դպրոցի տնօրենի համապատասխան հրամանով տարահանման միջոցառումների պլանավորումը, կազմակերպումը և անցկացումը դրվում է տարահանման հանձնաժողովի վրա, որի նախագահ է նշանակվում կազմակերպչական հարցերով փոխտնօրենը:

Տարահանման հանձնաժողովի հիմնական խնդիրներն են

- Տարահանման մարմինների ստեղծումը, համալրումը և պատրաստումը:
- Դպրոցի տարահանման պլանի մշակումը և ճշգրտումը: Պլանի ճշգրտումը անց է կացվում ուսումնական փորձարկումների միջոցով տարեկան 2 անգամ. գարնանը՝ մարտի 1-ին, աշնանը՝ նոյեմբերի 1-ին:
- Տարահանման միջոցառումների կազմակերպումը:

Տարահանման հանձնաժողովի գործունեությունը կանոնակարգվում է տարահանման և մշտական կազմի ազդարարման պլաններով:

Տարահանման պլան՝ նախապես մշակված փաստաթուղթ, որով կանոնակարգվում են մեկ տարածքից (բնակավայրից, օբյեկտից) մեկ այլ տարածք (բնակավայր, օբյեկտ) բնակչության տարահանման միջոցառումները:

Յուրաքանչյուր օբյեկտի, այդ թվում նաև դպրոցի տարահանման պլանը բաղկացած է տեքստային և գրաֆիկական մասերից:

Տեքստային մասը բաղկացած է դպրոցի բնութագրից, ելակետային տվյալներից և աղյուսակներից (բոլոր հնարավոր իրավիճակների համար):

1. Դպրոցի համառոտ բնութագիրը.

ա) Դպրոցը գտնվում է _____ հասցեում: Տեղակայված է ___ հարկանի շենքում: Ունի ___ մասնաշենք, ընդհանուր մակերեսը՝ _____ քառ.մետր: Ունի ___ մուտք և ___ ելք, անցողունակությունը՝ ___ մարդ 1 րոպեում: Գազատարերի, էլեկտրահաղորդագծերի և ջրամատակարարման ցանցի հակիրճ բնութագիրը _____

Տարահանման ուղիների անցողունակությունը _____ մարդ/րոպե:

2. Ելակետային տվյալներն ընդգրկում են.

Տարահանվողների թիվն ըստ հնարավոր ԱԻ-ի, տարիքային խմբերի, սեռի, հերթափոխի, օրվա տարբեր ժամերի, հարկերի, մասնաշենքերի և այլ ցուցանիշների՝ հետևյալ կարգով.

- I – III դաս. մարդ
- IV – VIII դաս. մարդ
- IX – XII դաս. մարդ
- մշտական անձնակազմը մարդ
- այդ թվում՝ զինապարտները մարդ

Տարահանման ձևը

- ավտոտրանսպորտով մարդ
- երկաթուղով մարդ
- հետիոտն մարդ

Տարահանման ընդհանուր տևողությունը ժամ, հաշվի առնելով տարահանման ուղիների անցողունակությունը 1 րոպեում.

- տարահանման վայրը,
- տարահանվողների ապահովումը և այլն:

Տարահանման պլանը առավելագույնս նպատակաուղղված դարձնելու համար անհրաժեշտ է <<ելակետային տվյալներ>> բաժնում նշել դպրոցի տարածքին սպառնացող բոլոր աղետները:

Տարահանման պլանում պետք է նշված լինեն դպրոցի աշակերտների և անձնակազմի ազդարարման կարգը, առկա կապի միջոցները, դպրոցի փաստաթղթերի և ունեցվածքի պահպանման կարգը, տարահանումը իրականացնող ուժերը, միջոցները և այլն:

3. Աղյուսակ (հրդեհի դեպքում)

N	Գործողությունները ըստ հերթականության	Կատարողը
1.	Ազդարարում	
2.	Դպրոցի տարահանման կազմակերպումը	Անձնակազմ
3.	Ստուգում՝ արդյո՞ք բոլոր մարդիկ են լքել շենքը	
4.	Հրդեհային ավտոմատիկայի համակարգի ստուգում: Գործողությունները համակարգի գործունեության խափանման դեպքում	
5.	Հրդեհաշիջում	Հրշեջներ
6.	Գույքի տարահանում	
7.	Այլ գործողություններ	

Կատարողներին պետք է նշանակել՝ ելնելով մարդկանց մասնագիտական և անձնական հատկանիշներից և հնարավորություններից: Աղյուսակի տակ պետք է լինեն տարահանման պլանը կազմողների և բովանդակության հետ ծանոթացած աշխատողների ստորագրությունները:

Դպրոցի տարահանման պլանը պետք է կազմել հնարավորինս իրատեսական և իրագործելի՝ հաշվի առնելով տվյալ տարածքի բնակլիմայական պայմանները, աշխարհագրական դիրքը, հնարավոր ռազմական գործողությունները, վտանգավոր օբյեկտների առկայությունը և դրանց հեռավորությունը դպրոցից, ճանապարհային ցանցի վիճակը և անցողունակությունը, տրանսպորտային ապահովումը, անվտանգ գոտու իրացման և տարահանվողների ապահովման հնարավորությունը և այլն:

Տարահանման պլանը պետք է մշակված լինի այնքան մանրակրկիտ և ճկուն, որպեսզի իրադրության ցանկացած զարգացման դեպքում տարահանման հանձնաժողովը կարողանա ճշգրտել և կանոնակարգել միջոցառումների ուղղվածությունը և ինտենսիվությունը:

Տարահանման պլանը հաստատվում է դպրոցի տնօրենի կողմից՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության համապատասխան տարածքային (տեղական) ստորաբաժանման հետ համաձայնեցնելուց հետո:

Գրաֆիկական մասն իրենից ներկայացնում է դպրոցի շենքի գծագիրը առանց ավելորդ մանրամասնությունների: Տարահանման պլանում գծանշվում է տարահանման ընդհանուր ուղին, որը բաժանվում է բնութագրական տեղամասերի (նշվում է դրանց երկարությունը): Տարահանման ուղիները որոշելիս անհրաժեշտ է մարդկային հոսքերը մասնատել, որպեսզի ելքի մոտ նվազի հնարավոր հոսքերի խտությունը: Պետք է բացառել հնարավոր հանդիպակաց և խաչահատվող հոսքերը: Դա թույլ կտա խուսափել մարդկային անցանկալի կուտակումներից:

Տարահանման ընդհանուր պլանի տեսակներից է տարահանման անհատական պլանը, որը մշակվում է մարդկային մեծ կուտակումներ ունեցող օբյեկտներում (ուսումնական հաստատություններում, մշակույթի, սպորտի օբյեկտներում): Տարահանման անհատական պլանը նույնպես կազմված է տեքստային և գրաֆիկական մասերից:

Դպրոցի տարահանման անհատական պլանի տեքստային մասը կազմված է տվյալ դասասենյակում (տվյալ օրը, ժամին) դաս անցկացնող ուսուցչի և աշակերտների գործողությունների ցանկից և յուրաքանչյուր հնարավոր ծայրահեղ իրավիճակի համար մշակված անվտանգության կանոնների հուշաթերթիկից:

Տարահանման անհատական պլանի գրաֆիկական մասը կազմվում է ընդհանուր պլանի ձևով, իսկ տարահանման ուղիները նշագծվում են կոնկրետ դասասենյակի համար:

Տարահանման առանձնահատկությունները կախված են աղետի բնույթից, մասշտաբներից, տարահանվող բնակչության քանակից:

Ելնելով ստեղծված իրավիճակից՝ դպրոցում գործում է տարահանման երկու եղանակ՝ կանխարգելիչ (նախնական) և անհապաղ (անհետաձգելի): Կանխարգելիչ տարահանման համար հիմք են հանդիսանում հավանական աղետի կամ

հակառակորդի հնարավոր հարձակման մասին համապատասխան մարմինների կարճաժամկետ կանխատեսումը և օպերատիվ իրավիճակի գնահատումը, որից հետո կապի և ազդարարման միջոցներով տեղեկացվում է դպրոցի ղեկավարությունը, որն էլ տեղական ինքնակառավարման մարմինների աջակցությամբ կազմակերպում և իրականացնում է դպրոցի տարահանումը:

Միշտ չէ հնարավոր տարահանումն իրականացնել պլանային <<դասական>> տարբերակով: Արտակարգ իրավիճակների հանկարծակի առաջացման դեպքում բացառիկ նշանակություն է ստանում ժամանակի գործոնը: Մի շարք աղետներ (հրդեհ, երկրաշարժ, փլուզում, սողանք, հակառակորդի հանկարծակի հարձակում) տեղի են ունենում հանկարծակի, հիմնականում, առանց նախանշանների և արագընթաց, ուստի՝ հաշվի առնելով ժամանակի գործոնը, իրականացվում է դպրոցի անձնակազմի անհապաղ (անհետաձգելի) տարահանում: Այս իրավիճակում տարահանման երթուղիներն ընտրվում են հապճեպ՝ ըստ ստեղծված օպերատիվ իրավիճակի և օդերևութաբանական պայմանների (քամու ուղղության, օդի ջերմաստիճանի և այլն):

Ուսումնական տարահանման կազմակերպումն ու անցկացումը

Դպրոցի տարահանման պլանը առանց գործնական փորձարկման ոչ պիտանի, ձևականորեն մշակված և բոլորին անձանոթ փաստաթուղթ է:

Համաձայն հրդեհային անվտանգության կանոնների՝ դպրոցներում և մանկապարտեզներում տարահանման պլանների գործնական փորձարկումները (ուսումնական տարահանում) պետք է անցկացնել կիսամյակում մեկ կամ ավելի անգամ: Փորձարկման անցկացումը պետք է գրանցվի տարահանման պլանի փորձարկման մատյանում հետևյալ կերպ.

- փորձարկման անցկացման ժամկետը,
- ներմուծյալ տեղեկատվությունը (սցենար),
- տարահանման ընդհանուր ժամանակը,
- տարահանման ժամանակ առանձին հատվածների չափազրում,
- դպրոցի անձնակազմի գործելակերպում տեղ գտած թերությունները:

Հրդեհների ժամանակ դրսևորվում է գրեթե բոլոր այն գործոնների ազդեցությունը, որոնք առաջանում են այլ աղետների ժամանակ: Ավելին, հրդեհներ կարող են առաջանալ երկրաշարժի, սողանքի, պայթյունի, զենքի կիրառման և այլ աղետների ժամանակ: Ուստի անդրադարձը հրդեհային անվտանգության կանոններին՝ պատահական չէ:

Ուսումնական տարահանման վերլուծության հիման վրա միջոցներ են ձեռնարկվում հաջորդ անգամ տարահանումը ավելի կազմակերպված և կարճ ժամանակում անցկացնելու համար:

Նախապատրաստական աշխատանքներ

Ուսումնական տարահանման նախապատրաստումը սկսվում է դպրոցի տնօրենի <<Դպրոցի անձնակազմի ուսումնական տարահանման նախապատրաստման և անցկացման մասին>> հրամանով: Մշակվում է ուսումնական տարահանման սցենար:

Ուսումնական տարահանման բարձր կազմակերպվածությունը ապահովելու նպատակով կանխորոշվում են տարահանման հիմնական նպատակները՝

- դպրոցի անձնակազմի մոտ անվտանգության բնագավառում տեսական գիտելիքների և գործնական հմտությունների ձևավորումը և կատարելագործումը,
- դպրոցի անձնակազմի արտակարգ իրավիճակներին պատրաստվածության ստուգումը:

Ուսումնական տարահանմանը մասնակցում է դպրոցի ողջ անձնակազմը:

Համաձայն դպրոցի տնօրենի հրամանի՝ նշանակվում է ուսումնական տարահանման և անցկացման հանձնաժողով՝ դպրոցի կազմակերպչական հարցերով փոխտնօրենի ղեկավարությամբ:

Տարահանման միջոցառումների վերահսկողությունն իրականացնում է դպրոցի ՔՊ պետի տեղակալը՝ դպրոցի ՔՊ շտաբի պետը, որը հանձնաժողովի նախագահի հետ համատեղ մշակում է <<Դպրոցի անձնակազմի ուսումնական տարահանման նախապատրաստման և անցկացման պլանը>> և ուսումնական տարահանման սցենարը:

Մշակված պլանը Հայաստանի փրկարար ծառայության տեղական ստորաբաժանման պետի հետ համաձայնեցնելուց հետո հաստատվում է դպրոցի տնօրենի կողմից:

Ուսումնական տարահանման նախապատրաստումը սկսվում է դպրոցի անձնակազմի տարահանման պլանների (ընդհանուր, անհատական), տարահանման նշանների, հրդեհային ավտոմատիկայի և անվտանգության այլ համակարգերի ուսումնասիրությունից:

Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության հարցերով ուսուցմանը հատկացված դասաժամերը պետք է անցկացվեն ոչ թե տխուր, բարոյախրատական գրույցների ձևով, այլ ինտերակտիվ մեթոդով՝ հետաքրքրաշարժ և գրավիչ:

Կրտսեր դասարանների դասվարները պետք է ժամանակ առ ժամանակ անցկացնեն ազդարարման ազդանշանների գործնական գործարկում:

Դպրոցի ուսումնական տարահանման անցկացումը

Համաձայն <<Դպրոցի անձնակազմի ուսումնական տարահանման նախապատրաստման և անցկացման մասին>> հրամանի՝ նախապես որոշվում է ուսումնական տարահանման օրը և սցենարը:

Օրինակ. 2009 թ. ապրիլի 15-ին ժամը 12-00 Երևան քաղաքի թ.... դպրոցի

դասարաններից մեկում (միջանցքում, գրասենյակում, աստիճանահարթակում և այլն) տեղի է ունեցել հրդեհի բռնկում, ինչը բացահայտել է աշակերտներից մեկը: Աշակերտը հրդեհի մասին տեղեկացրել է դասը անցկացնող ուսուցչին, իսկ ուսուցիչը՝ տնօրենին:

Ելնելով իրավիճակից՝ ի՞նչ գործողություններ պետք է կատարեն դպրոցի տնօրենը, ուսուցիչները, աշակերտները:

Տեղեկանալով ստեղծված արտակարգ իրավիճակի մասին՝ դպրոցի տնօրենը ճշտում է ստացված տեղեկատվության հավաստիությունը և, համոզվելով տարահանման անհրաժեշտության մեջ, դպրոցում առկա ազդարարման միջոցներով հայտարարում է տարահանում: Միաժամանակ դպրոցի տնօրենը կամ տնօրենի հրամանով որևէ մեկը ստեղծված իրավիճակի մասին հայտնում է Հայաստանի փրկարար ծառայության համապատասխան ստորաբաժանման օպերատիվ հերթապահին 1-01, 1-12, 529-690 հեռախոսահամարներով:

Ուսուցիչները, աշակերտների հետ լքելով դասարանը, վերցնում են դասամատյանները, հոսանքազրկում են դասարանները և փակում դասարանների դռները: Աշակերտները ուսուցիչների ուղեկցությամբ բազմիցս փորձարկված տարահանման ուղիներով (հիմնական կամ երկրորդական) շատ արագ և կազմակերպված ուղղվում են դեպի տարահանման ելքերը:

Անհրաժեշտության և հնարավորության դեպքում բարձր դասարանցիներն օգնում են կրտսերներին: Պետք չէ փրկել իրերը: Կյանքն անհամեմատ թանկ է:

Դպրոցի շենքը լքելուց հետո բոլոր տարահանվողները հավաքվում են դպրոցի մերձակայքում՝ հեռու հաղորդալարերից և խոշոր շինություններից, ու սպասում են մինչև հետագա գործողությունների մասին հրահանգ ստանալը: Ուսուցիչը, որի ուղեկցությամբ երեխաները լքել են դպրոցի շենքը, ներկա բացակայի միջոցով ճշտում է՝ արդյոք բոլոր աշակերտներն են հասցրել դուրս գալ դպրոցից:

Դպրոցի տնօրենը դիմավորում է օգնության հասած հրշեջներին և զեկուցում ստեղծված իրավիճակի մասին:

Դպրոցի տարահանման խութերը

Տարահանման ընթացքում տարահանման ուղիներում հնարավոր է խմբերի միաձուլում և հոսքերի խտության մեծացում, ինչը հանգեցնում է շարժման արագության նվազման: Շարժման արագությունը կախված է տարահանման ուղիների բնույթից (միջանցք, աստիճաններ, աստիճանահարթակ, նախասրահ և այլն): Նեղ միջանցքներում երեխաների մեծ խմբերի միաժամանակյա արագ ընթացքը կարող է հանգեցնել կուտակումների, խցանումների և, որպես կանոն, շարժման արագության նվազման: Նման իրավիճակներում ոմանք, ֆիզիկական ուժ գործադրելով, հրելով ընկերներին և խցկվելով ամբոխի մեջ, կարող են խցանումներ առաջացնել:

Վախը, անորոշությունը, անելանելիության զգացողությունը կարող են երեխաներին խուճապի մատնել, դառնալ խեղվածքների և անգամ զոհերի պատճառ:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ մարդկային մեծ կուտակումներով օբյեկտներում գոհերի ընդհանուր թվի 50%-ը գոհվում է ոչ թե ստացած վնասվածքներից, այլ արտակարգ իրավիճակներում գործելու կանոնների չիմացության պատճառով չկողմնորոշվելու, խուճապի մատնվելու, իրարանցում և խցանումներ առաջացնելու հետևանքով, որոնք առաջացնում են նյարդային գրգռվածություն, մտքի և գործողությունների արգելակում (նկատվում է մարդկանց 10-15% մոտ): Ոմանց մոտ հետաքրքրասիրությունը մարում է ինքնապաշտպանության բնագործ, և նրանք դեպի կրակի այրող լույսը թռչող թիթեռների նման սլանում են պայթյունի ձայնի կամ հրդեհի բոցի ուղղությամբ:

Արտակարգ իրավիճակներում չպետք է խուճապի մատնվել, այլ պետք է գործել սթափ, արագ և հստակ: Չմոռանալ, որ ամենուր կան պահուստային և վթարային ելքեր, արտաքին հրդեհային սանդուղքներ: Աստիճաններով իջնելիս չվազել, քանի որ հնարավոր է աստիճանների փլուզում: Շենքի ստորին հարկերում գտնվելիս ծայրահեղ դեպքում դուրս ցատկել պատուհանի խոռոչից: Վերելակի առկայության դեպքում չօգտվել վերելակից, քանի որ այն կարող է հոսանքազրկվել և ծուղակ դառնալ տարահանվողների համար:

Դպրոցում տարահանման և ազդարարման պլանների, կապի և ազդարարման միջոցների առկայությունը, դպրոցի անձնակազմի պարտականությունների ճիշտ բաշխումը և իմացությունը, գործնական պարապմունքների և ուսումնական տարահանումների անցկացումը նպաստում են երեխաների մոտ ծայրահեղ իրավիճակներին արագ արձագանքելու ունակությունների զարգացման և մտքի ու գործողությունների ավտոմատիզմի ձևավորման:

Մեր ձեռքերում է մեր երեխաների՝ հասարակության ամենաթանկ և ամենախոցելի հատվածի կյանքը, և թե որքանով են նրանք պաշտպանված, կախված է մեզանից:

Մեզանից յուրաքանչյուրը պետք է գիտակցի, որ միայն գիտելիքներով, ունակություններով և հմտություններով կարող է դիմակայել աղետներին:

Ուսումնական հաստատություններին (դպրոցներին) ներկայացվող հրդեհային անվտանգության պահանջները

1. Բոլոր ուսումնական հաստատությունները (դպրոց, մանկապարտեզ և այլն) ուսումնական տարվա սկզբին պետք է ընդունվեն համապատասխան հանձնաժողովների կողմից, որոնց կազմում պետք է ընդգրկվեն Հայաստանի փրկարար ծառայության համապատասխան տարածքային ստորաբաժանման և պետական հրդեհային տեսչության ներկայացուցիչները:
2. Դպրոցում պետք է գործի երկկողմանի կապ ապահովող ռադիոհեռահաղորդակցման հանգույց (տնօրենի կաբինետում կամ ուսուցչանոցում), որով ստացված ազդանշանները պետք է կրկնօրինակվեն դպրոցի էլեկտրական զանգի միջոցով կամ ազդարարման այլ սովորական միջոցներով՝ ազդարարելով ստեղծված իրավիճակի մասին: Դպրոցի

ռադիոֆիկացիան նախատեսվում է տվյալ բնակավայրի հեռահաղորդակցման ցանցից: Պարբերաբար պետք է ստուգել հեռահաղորդակցման համակարգի տեխնիկական վիճակը:

3. Դպրոցի շենքի ճարտարապետական բովանդակությունը պետք է համապատասխանի դպրոցներին ներկայացվող քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական միջոցառումների չափորոշիչների պահանջներին:
4. Տարահանման ելքերի քանակը, չափերը, լուսավորության պայմանները (աստիճանավանդակները չմթնեցնել, չկառուցապատել) տարահանման ուղիների երկարությունը և չծխապատման ապահովումը պետք է համապատասխանեն շինարարական նախագծման հակահրդեհային նորմերին:
5. Դպրոցի շենքը պետք է ունենա չայրվող տանիքածածկ (ոչ օրգանական նյութերից):
6. Տարահանման ուղիները չպետք է հարդարված լինեն դյուրավառ նյութերով (պլաստիկատ): Արգելվում է տարահանման ուղիների պատերի, առաստաղների վերանորոգման, երեսպատման և ներկման համար օգտագործել դյուրավառ նյութեր:
7. Նկուղիները, միջանցքները, ձեղնահարկերը պետք է ազատել դյուրավառ նյութերից:
8. Աստիճանավանդակների, միջանցքների, նախաշեմերի ինքնափակվող դռները (եթե այդպիսիք կան) ֆիքսել բաց դիրքում կամ հանել:
9. Դպրոցի միջանցքները, նախասրահը, աստիճանավանդակները, տարահանման այլ ուղիները պետք է ազատ լինեն մեծածավալ առարկաներից:
10. Դասասենյակների կահույքը պետք է ներկառուցված լինի կամ ամրակներով ամրացված պատին կամ հատակին:
11. Դպրոցի ցածր հարկերի դասասենյակները պետք է տրամադրել ցածր դասարանցիներին, բարձր հարկերը՝ բարձր դասարանցիներին:
12. Դասասենյակներում և աշխատասենյակներում դպրոցական նստարանների (սեղանների) քանակը չպետք է գերազանցի նախագծման նորմերով սահմանված քանակը:

13. Դասասենյակների նստարանների շարքերի միջև հեռավորությունը պետք է լինի 60-սմ-ից ոչ պակաս, իսկ առաջին նստարանից կամ ուսուցչի սեղանից մինչև գրատախտակը՝ 65 սմ-ից ոչ պակաս:
14. Լաբորատորիաներում և այլ սենյակներում պահվող այրվող և դյուրավառ նյութերի քանակը չպետք է գերազանցի մեկ հերթափոխային պահանջմունքը: Դյուրավառ նյութերը պետք է աշխատանքային օրվա վերջում լցվեն հատուկ տարողության մեջ և լաբորատորիայից դուրս բերվեն: Չի թույլատրվում այրվող և դյուրավառ նյութերը թափել կոյուղի:
15. Դպրոցի, հատկապես միջանցքների հատակի ծածկույթը չպետք է լինի սայթաքուն: Գորգերը, ուղեգորգերը և այլ հատակային ծածկերը պետք է հուսալի ամրացվեն հատակին:
16. Ստորին հարկերի պատուհանների մետաղյա վանդակները պետք է հանել կամ դարձնել շարժական: Դպրոցի մուտքի փայտե դռները խորհուրդ չի տրվում փոխարինել երկաթյա դռներով, քանի որ հնարավոր ցնցումների կամ հրդեհի դեպքում նրանք կարող են դեֆորմացվել և չբացվել:
17. Տարահանման ելքերի դռները պետք է ազատ բացվեն դեպի դուրս: Շենքում մարդկանց գտնվելու ժամանակահատվածում արգելվում է դպրոցի մուտքի դռները փակել առանձնապես դժվար բացվող փականներով կամ կողպեքներով: Դռները կարող են փակվել ներսից հեշտ բացվող փականներով: Պարբերաբար պետք է ստուգել տարահանման ուղիների և դռների գործածելիության վիճակը:
18. Ուսումնասպորտային դահլիճները պետք գտնվեն 2-րդ հարկից ոչ բարձր: Դահլիճի նստատեղերի քանակը չպետք է գերազանցի դպրոցի կոնստիդենտի 20%-ը: Դահլիճի աթոռները պետք է ամրակներով ամրացնել հատակին:
19. Դպրոցի նախասրահում պետք է փակցնել դպրոցի տարահանման պլան-սխեման, որտեղ ցուցադրված է նշվում են տարահանման ուղիները, պահուստային և վթարային ելքերը: Տարահանման նշանները պետք է փակցնել տարահանման ուղղությամբ (կանաչ գույնի քառակուսիներ կամ ուղղանկյուններ): Առանձին հարկաբաժիններում և դասասենյակներում նույնպես պետք է փակցնել տարահանման պլան-սխեմաներ (տվյալ հարկի կամ դասասենյակի համար):
20. Պարբերաբար պետք է ստուգել դպրոցում հակահրդեհային պաշտպանության միջոցների առկայությունը:
21. Ներքին հրդեհային ծորակները ոչ պակաս, քան տարեկան 2 անգամ (գարուն-ամառ, աշուն-ձմեռ) պետք է ենթարկել տեխնիկական զննման և ստուգել դրանց գործածելիությունը ջրի բացթողման ճանապարհով:
22. Դպրոցի հարակից տարածքը պետք է պահել մաքուր վիճակում: Այրվող նյութերի

թափոնները, թափված տերևները, աղբը պետք է կանոնավոր հավաքել հատուկ արկղերում և դուրս բերել դպրոցի տարածքից:

23. Դպրոցի շենքի հրդեհաշիջման համար նախատեսված ջրամբարներին, անշարժ հրդեհային սանդուղքներին, հրդեհային գույքին մոտեցման ճանապարհները և անցումները պետք է ազատ լինեն: Վերակառուցման հետևանքով ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով պետք է տեղադրվեն շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ:

24. Կիսամյակում մեկ կամ ավելի անգամ անցկացնել դպրոցի տարահանման պլանի փորձարկում՝ ուսումնական տարահանման միջոցով: Փորձարկման արդյունքները գրանցել փորձարկման մատյանում:

<<Երեխաների պատպանության օրը>> նախադպրոցական հիմնարկում

Քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և կենսագործունեության անվտանգության բնագավառում ուսուցումը իրենից ներկայացնում է անընդհատ գործընթաց, որն ընդգրկում է ողջ բնակչությանը և սկսվում է նախադպրոցական տարիքից (ուսուցման գրոյական աստիճան):

Աղետներին հակազդման գործընթացում երեխաների ուսուցումը ունի երկու կարևոր նշանակություն.

- երեխաների ուսուցումը՝ արտակարգ իրավիճակներում սեփական անվտանգությունը ապահովելու նպատակով.
- երեխաների ուսուցումը՝ որպես մեր երկրի ապագա քաղաքացիների (նոր հասարական գիտակցությամբ, սոցիալական դիրքորոշմամբ):

Երեխաների ուսուցումը անց է կացվում փուլ առ փուլ՝ հաշվի առնելով երեխայի զարգացման շրջանները, տարիքային առանձնահատկությունները, հետաքրքրասիրությունները և այլն:

Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքում երեխաները ծանոթանում են շրջակա միջավայրին: Անվտանգության բնագավառում նրանց մոտ տեղի է ունենում հնարավոր վտանգների մասին պարզագույն (տարրական) գիտելիքների կուտակում՝ մեծերի պատմածի (ծնողների և դաստիարակի) կամ իրենց սեփական փորձի և դիտարկումների հիման վրա:

<<Երեխաների պաշտպանության օրվա >> նախապատրաստումն ու անցկացումը

<<Երեխաների պաշտպանության օրը նախադպրոցական հիմնարկում>> անվտանգության հիմունքների ուսուցման ձև է և, միաժամանակ, անձնակազմի արտակարգ իրավիճակներին պատրաստվածության մակարդակի ստուգում:

Նախադպրոցական հիմնարկի տնօրենի կողմից <<Երեխաների պաշտպանության օրվա>> նախապատրաստումը, կազմակերպիչների միջև պարտավորությունների բաշխումն ու փաստաթղթերի որակյալ մշակումն ապահովում են միջոցառման հաջող ընթացքը:

<<Երեխաների պաշտպանության օրվա>>պլանն ընդգրկում է հետևյալ միջոցառումները.

- գործողությունները <<Ուշադրություն բոլորին>> ազդանշանից հետո (նախադպրոցական հիմնարկի դաստիարակների լրացուցիչ պարտականություններից է՝ ազդարարումից հետո սաների գործողությունների կազմակերպումը),
- տարահանման կազմակերպումը պայմանական հրդեհի կամ այլ աղետի դեպքում (ՆՀ-ում, հարևան տանը, այգում, մոտակա ձեռնարկությունում),
- տարահանման կազմակերպումը քիմիական վտանգավոր նյութերի արտանետման դեպքում (եթե թունավոր նյութերի ամպը շարժվում է դեպի ՆՀ),
- փողոցային երթևեկության կանոնների իմացություն.
- գործողությունները՝ բենզինի, դիզելային վառելիքի, սնդիկի արտահոսքի դեպքում.
- առողջ ապրելակերպի հիմունքների իմացություն (ճիշտ լվացվել և ատամները խոզանակել, ճիշտ ընդունել սնունդը, ճիշտ հագնվել փողոց դուրս գալիս),
- անհատական պաշտպանության միջոցների բացակայության դեպքում՝ մաշկի և շնչառական օրգանների պաշտպանության պարզագույն միջոցների օգտագործումը՝ թաշկինակ, գլխաշոր (թաց վիճակում), բամբակ-թանգիֆային դիմակ.
- գանազան փրկարարական պարզագույն հնարքներ պարունակող սպորտային մրցույթներ՝ վազքի, ցատքի տարրերով (մանկապարտեզի դահլիճում՝ շվեդական պատ, պարան և այլ փրկարարական պարագաներ):

<<Երեխաների պաշտպանության օրվա>> հիմքում ընկած է ուսուցման խաղարկային մեթոդը, որը շարժում է երեխաների հետաքրքրասիրությունը, <<շահագործում>> նրանց միտքը և, վերջին հաշվով, թույլ է տալիս ավելի լավ յուրացնել և ընկալել տեսական նյութը, ձեռք բերել արտակարգ իրավիճակներում անհրաժեշտ գործնական հմտություններ:

Հիմնական միջոցառումները կարող են անցկացվել բոլոր խմբերում, իսկ ոմանք՝ առանձին տարիքային խմբերում:

<<Երեխաների պաշտպանության օրվա>> միջոցառմանը պետք է ներկա լինեն

ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության տարածքային կամ տեղական ստորաբաժանումների մասնագետներ, ծնողներ: Հայաստանի փրկարար ծառայության մասնագետները ցույց կտան մեթոդական և կազմակերպական օգնություն, կնշեն ընթացքում տեղ գտած բացթողումները և սխալները:

<<Երեխաների պաշտպանության օրվա>> անցկացման համար լավագույն ժամանակն է մայիսի վերջը կամ հունիսի կեսերը: Նախապատրաստվելու համար անհրաժեշտ է տրամադրել 1-2 ամիս:

<<Երեխաների պաշտպանության օրվա>>անցկացման մեթոդիկան

<<Երեխաների պաշտպանության օրվա>> նախօրեին ՆՀ-ի տնօրենը և մեթոդիստը ավարտում են ազդարարման համակարգի և նյութատեխնիկական բազայի նախապատրաստումը (շեֆ-հիմնարկների, համայնքային ԱԻ և ՔՊ բաժնի օգնությամբ):

ՆՀ-ի տնօրենը նախապես պետք է ուսումնասիրի ղեկավար փաստաթղթերը, պարտավորեցնի դաստիարակներին և ողջ անձնակազմին ուսումնասիրել տվյալ ՆՀ-ի տարածքին սպառնացող արտակարգ իրավիճակները, յուրացնել հնարավոր բնածին և տեխնածին աղետների ժամանակ իրականացվող միջոցառումները:

<<Երեխաների պաշտպանության օրվա>> անցկացման փաստաթղթերը մշակում է մեթոդիստը՝ տնօրենի ղեկավարությամբ և դաստիարակի մասնակցությամբ: Սյնուհետև փաստաթղթերը ստուգվում և համաձայնեցվում են համայնքի ԱԻ և ՔՊ բաժնի ղեկավարի հետ:

Մշակվում են հետևյալ փաստաթղթերը.

- նախադպրոցական հիմնարկի տնօրենի հրամանը՝ <<Երեխաների պաշտպանության օրվա>> անցկացման մասին.
- <<Երեխաների պաշտպանության օրվա>> նախապատրաստման և անցկացման պլանը:

Միջոցառման անցկացման օրը <<Ուշադրություն բոլորին>> ազդանշանով նախադպրոցականներն դաստիարակների ուղեկցությամբ լքում են խմբերը և շարվում բակում: Խմբերի փորձարկմանը պատրաստ լինելու մասին դաստիարակները զեկուցում են մեթոդիստին, իսկ մեթոդիստը՝ տնօրենին: Այդ պահին կարող է հնչել ՀՀ հիմնը:

Նախադպրոցական հիմնարկի մեթոդիստը հայտարարում է միջոցառման սկիզբը և անցկացման վայրը (դահլիճ, խմբասենյակ, բակ և այլն):

Քաղաքային նախադպրոցական հիմնարկները սահմանափակվում են մանկապարտեզի շենքով և կից տարածքով: Գյուղական համայնքներում ընտրությունն ավելի մեծ է (դաշտ, անտառ և այլն):

Կրտսեր խմբի սաները /3-4 տարեկան/ կարող են ցուցաբերել իրենց գիտելիքները հրդեհային անվտանգության ոլորտում: Ահա դաստիարակի կողմից տրվող հարցերից մեկը. <<Ի՞նչ է պետք անել հրդեհը կանխելու համար>>:

Երեխաները պատասխանում են. <<Լուցկու հետ չխաղալ>>:

Ավելի բարդ հարցեր են տրվում նախապատրաստական խմբի սաներին (5 տարեկան).

<<Ինչո՞ւ հրդեհի ժամանակ անհրաժեշտ է փակել պատուհանը և դռները>>, <<Ինչպե՞ս վարվել, եթե սենյակում ծուխ է կուտակվել>>, <<Ինչպե՞ս օգնության կանչել հրշեջներին կամ փրկարարներին>> և այլն:

Նախադպրոցական խմբում (6տարեկան) բացահայտվում է երեխաների՝ փողոցում վարքի և հրդեհային անվտանգության կանոնների իմացությունը:

Դաստիարակը երեխաներին հանելուկ է առաջարկում.

<<Լեզու ունի, բայց չի հաչում:

Ատամ չունի, բայց կծում է>>:

Կարող է անցկացնել պարապմունքներ հետևյալ թեմաներով:

<<Ճանապարհային երթևեկության նշանների երկիր>> (6 տարեկան):

Վիկտորինա-մրցույթ <<101, 102, 103, 112 ծառայությունները>> թեմայով (4-5 տարեկան):

<<Անձնական անվտանգություն>> (5-6 տարեկան):

Կրտսեր խմբերը (2-3 տարեկան) մասնակցում է միայն տարահանմանը:

Գիտնականներն ապացուցել են, որ երեխան թվերն ավելի շուտ է սկսում ճանաչել, քան տառերը: Հետևաբար, պետք է նրանց բացատրել, թե ո՞ր աղետի ժամանակ ի՞նչ հեռախոսահամարով պետք է զանգահարել (3 հիմնական հեռախոսահամարները): Իսկ որպեսզի ավելի հեշտ լինի դրանք հիշել, խորհուրդ է տրվում խմբերում ունենալ պաստառ, որտեղ խոշոր թվերով գրած լինեն այդ երեք թվերը, ընդ որում՝ 101-ի կողքին այրվող լուցկի նկարել, 102, 112-ի կողքին՝ լուսաֆոր, 103-ի կողքին՝ կարմիր խաչ:

Երեխաներին ոգևորելու նպատակով միաժամանակ կարող են մրցել երկու կամ մի քանի խմբեր: Փորձարկման մրցութային բնույթը այն կդարձնի ավելի պատկերավոր, տպավորիչ և ուսանելի: Մրցումների և փորձարկումների անցկացման ժամանակ անհրաժեշտ է ուշադիր հետևել անվտանգության կանոններին, որպեսզի երեխաներին զերծ պահել զանազան վնասվածքներից: <<Երեխաների պաշտպանության օրվա>> արդյունքների ամփոփումը կատարում է ժյուրին: Երեխաների պաշտպանության այսպիսի օրն երկար կմնա նրանց հիշողությունների մեջ:

Հ Ր Ա Մ Ա Ն

Երևան քաղաքի _____ համայնքի թիվ _____ մանկապարտեզի
տնօրենի “ _____ ” _____ 200 թ. _____ ք.Երևան

**<<Երեխաների պաշտպանության օրվա>> նախապատրաստման եւ անցկացման
մասին**

Համաձայն թ.... մանկապարտեզի քաղաքացիական (բնակչության)
պաշտպանության միջոցառումների պլանի՝ “ _____ ” _____ 201 թ.
Անցկացնել <<Երեխաների պաշտպանության օր>>:

Քաղաքացիական (բնակչության) պաշտպանության միջոցառումների
անցկացման բարձր կազմակերպվածության, կարգապահության և ուսանելիության
ապահովման նպատակով:

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ.

1.Միջոցառումների հիմնական նպատակները համարել.

- երեխաների մոտ վտանգավոր առարկաների հետ զգույշ վարվելու և
անձանոթ մարդկանց հետ շփվելու վարքի կանոնների իմացությունը,
- երեխաների էկոլոգիական կուլտուրայի հիմունքների զարգացումը,
բնության հանդեպ խնայողական վերաբերմունքի, ինչպես նաև մարդու
օրգանիզմի կառուցվածքի մասին գիտելիքների ձևավորումը,
- մարդու ֆիզիկական և հոգեբանական առողջության, առողջ ապրելակերպի
մասին գիտելիքների ձևավորումը,
- բակում, փողոցում, հասարակական տրանսպորտում անվտանգ
պահելաձևի մասին գիտելիքների ձևավորումը:

2.Միջոցառման գլխավոր խնդիրները համարել.

- երեխաների և մանկավարժական կոլեկտիվի մոտ արտակարգ
իրավիճակներում գործելու տեսական գիտելիքների և գործնական
հմտությունների կատարելագործում.
- ծայրահեղ իրավիճակներում գործելու պատրաստության գործնական
ստուգում (փորձարկում, տագնապ, իրավիճակային խաղ, մրցույթ և այլն):

3.Միջոցառմանը մասնակցում են.

- մանկապարտեզի ղեկավար և մանկավարժական կազմը,
- բոլոր խմբերի երեխաները:

4.Ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

- նախագահ՝ ՆՀ տնօրեն.
- նախագահի տեղակալ՝ ՆՀ մեթոդիստ:

Անդամներ՝

- բուժ.աշխատող.
- տնտեսվար.
- երաժիշտ:

ՆՀ մեթոդիստին՝ մինչև “___” _____ 201 թ. մշակել միջոցառման փաստաթղթերը և հանձնաժողովի բոլոր անդամներին ծանոթացնել փորձարկման կամ մրցույթի անցկացման կարգի հետ:

5.Անձնակազմի ուսուցումը իրականացնել ա.թ. “___” _____ - ից մինչև “___” _____ - ը:

Պատասխանատու _____:

6.Բուժ.աշխատողին՝ ա.թ. “___” _____ - ից մինչև “___” _____ - ը անցկացնել ձեռքի տակ եղած միջոցներից անհատական պաշտպանության միջոցների պատրաստման դասեր:

7.Մեթոդիստին՝ մինչև ա.թ. “___” _____-ը մշակել և ներկայացնել հաստատման <<Երեխաների պաշտպանության օրվա>> նախապատրաստման և անցկացման պլանը:

8.Տնտեսվարին՝ մինչև ա.թ. “___” _____ - ը իրականացնել միջոցառման նյութական ապահովումը:

9.Նախադպրոցական և նախապատրաստական խմբերի դաստիարակներին՝ մինչև ա.թ. “___” _____ - ը պարապմունքների միջոցով երեխաներին ծանոթացնել անվտանգության կանոններին:

10.Ընդհանուր նախապատրաստման ժամկետը սահմանել “___” _____ 200 թ.:

11.Սույն հրամանի կատարումը վերապահել մանկապարտեզի մեթոդիստին: Հրամանի բովանդակությանը ծանոթացնել մանկապարտեզի անձնակազմին:

Մանկապարտեզի տնօրեն
/ստորագրություն/

<<Համաձայնեցված է>> Երևանի ----- համայնքի ԱԻ և ՔՊ բաժնի պետ “___” _____ թ.	<<Հաստատում եմ>>՝ Երևանի _____ թիվ _____ մանկապարտեզի տնօրեն “___” _____ թ.
---	--

<<Երեխաների պաշտպանության օրվա>> նախապատրաստման և անցկացման պլան

Երևան քաղաքի _____ համայնքի թիվ _____ մանկապարտեզ

h/h	Անցկացվող միջոցառումները	Անցկացման ժամանակը և տեղը	Ո՞վ է անցկացնում	Նշումներ կատարման մասին
Նախապատրաստական շրջան				
Երեխաների պաշտպանության օրվա անցկացումը				

Մանկապարտեզի տնօրեն _____

/ստորագրություն/

“ _____ ” _____ 200 թ.

Ծանոթություն. Պլանում նշել, թե ո՞ր միջոցառումներն են համարվում համամանկապարտեզային և որոնք՝ խմբային:

Մանկական նախադպրոցական հիմնարկներին ներկայացվող հրդեհային անվտանգության կանոնները

1. Նախադպրոցական հիմնարկը (ՆԽ) պետք է ունենա երկուսից ոչ պակաս տարահանման ելք:
2. Տարահանման ելքերի չափերը, լուսավորության պայմանները, տարահանման ուղիների երկարությունը պետք է համապատասխանեն շինարարական նախագծման հակահրդեհային նորմերին:
3. Տարահանման ելքերի դռները պետք է ազատ բացվեն դեպի դուրս: Անհրաժեշտության դեպքում կարող են փակվել ներսի կողմից հեշտ բացվող փականներով:
4. Գորգերը, ուղեգորգերը և հատակի այլ ծածկերը պետք է հուսալի ամրացվեն հատակին:
5. Կարկասային և վահանային շենքերը պետք է սվաղված լինեն և ունենան չայրվող տանիքածածկ: Դրանց ջերմապահպանիչը պետք է լինի անօրգանական նյութերից:

6. Արգելվում է՝

- Երեխաներին տեղավորել շենքերի ձեռնահարկային սենյակներում, ինչպես նաև երկու տարահանման ելք չունեցող շենքերում, հարկերում:
- ՆՀ-ի ջեռուցման նպատակով օգտագործել նավթավառներ և էլեկտրաջեռուցիչ սարքեր:
- Ելքի նախամուտքերում, տարահանման ուղիներում հարմարեցնել կախիչներ, զգեստապահարաններ, պահել որևէ տեսակի գույք և նյութեր, խցանել տարահանման ուղիները և ելքերը:
- Տարահանման ուղիների պատերի, առաստաղների վերանորոգման, երեսպատման և ներկման համար օգտագործել դյուրավառ նյութեր:

7. ՆՀ-ը պետք է ապահովել հեռախոսային (բջջային) կապով և տազնապի ազդարարման սարքով:

Նախադպրոցական հիմնարկի անձնակազմի գործողությունները հրդեհի ժամանակ

1. Հայտնել Հայաստանի փրկարար ծառայություն (112, 101):
2. Կազմակերպել հրդեհաշիջում սեփական ուժերով:
3. Հոսանքազրկել մանկապարտեզի շենքը:
4. Հրդեհին հարող տարածքներից տարահանել երեխաներին:
5. Հրդեհի տարածումը կանխելու նպատակով փակել այն սենյակների (խմբերի) դռները ու պատուհանները, որտեղ հրդեհ է բռնկվել:
6. Հնարավորության դեպքում դուրս բերել փաստաթղթերը և գույքը:
7. Ստուգել ծխապատված և այրվող տարածքները:
8. Դիմավորել հրշեջներին և զեկուցել տեղի ունեցածի մասին:
9. Ստեղծված իրավիճակի մասին զեկուցել Հայաստանի փրկարար ծառայության տեղական ստորաբաժանման ղեկավարին:

II.5. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ

Արտակարգ իրավիճակը (պատահարը) այն իրավիճակն է, որի դեպքում որոշակի տարածքում՝ աղետի գոտում կամ դեպքի վայրում խաթարվում է կարգավորված կենսագործունեությունը, որի հետևանքով առաջանում է առաջին օգնության ցուցաբերման անհրաժեշտություն: Բնական աղետների, ավտովթարի, հրդեհի կամ ցանկացած այլ դժբախտ պատահարի հետևանքով կարող են լինել տուժածներ: Առաջին օգնությունը արտակարգ իրավիճակում ձեռնարկվող գործողությունների համակարգն է, որի նպատակն է օգնել տուժածին կամ տուժածներին մինչև մասնագիտական օգնության ժամանումը:

Տուժածների մեծամասնությունը փրկվում են պատահարի պահին դեպքի վայրում գտնվող անձանց առաջին օգնության հմուտ գործողությունների շնորհիվ:

Իրավիճակի գնահատում

Ցանկացած արտակարգ իրավիճակում, մինչև որևէ գործողության դիմելը, մի պահ կանգ առեք, գնահատեք իրավիճակը, ապա ծրագրավորեք ձեր հետագա գործողությունները՝ համաձայնեցնելով դրանք առկա պայմանների և հնարավորությունների հետ:

Դեպքի վայրի զննում եւ անվտանգության ապահովում

Դեպքի վայրի զննումը օգնում է ձեզ գնահատել իրավիճակը և հասկանալ, թե ինչ է պատահել: Փորձեք պարզել տվյալ դժբախտ պատահարի պատճառները: Ուշադրություն դարձրեք արտակարգ իրավիճակներին բնորոշ նշաններին՝ արտասովոր տեսարաններին, ձայներին, հոտերին և այլն:

Ուշադիր զննեք դեպքի վայրը և փորձեք գտնել հետևյալ հարցերի պատասխանները՝

- Ինչ է պատահել:
- Ինչ վտանգ կա:
- Քանի տուժած կա:
- Ինչ կարող եմ անել ես:
- Ովքեր կարող են օգտակար լինել:

Շտապ դուրս բերման ձևեր և առաջնային զննում

Նախքան տուժածին մոտենալը համոզվեք, որ միջավայրը անվտանգ է ձեր, տուժածի և շրջապատի մարդկանց համար: Եթե միջավայրը վտանգավոր է, առաջին հերթին ապահովեք ձեր անվտանգությունը, ապա տուժածին շտապ դուրս բերեք վտանգավոր տարածքից: Մոտենալով տուժածին՝ անհրաժեշտ է զննել նրան՝ նրա վիճակը գնահատելու, վնասվածքների տեսակները և ծանրությունը պարզելու համար: Տուժածի զննումը պայմանականորեն բաժանվում է առաջնային և երկրորդային զննման:

Առաջին օգնությունն ցուցաբերելիս սովորաբար ցանկալի չէ տուժածին տեղափոխել: Տուժածի տեղափոխությունը կարող է հանգեցնել լրացուցիչ վնասվածքների:

Արտակարգ իրավիճակներում տուժածին տեղափոխելու որոշումը պետք է ընդունել միայն ծայրահեղ դեպքերում, երբ առկա են հետևյալ պայմանները՝ դեպքի վայրը վտանգավոր է, և դուք չեք կարող հեռացնել վտանգը: Օրինակ՝ հրդեհի, մթնոլորտում թթվածնի պակասի, օդում թունավոր գազերի առկայության, ջրահեղձության, պայթյունի, տրասպորտի կողմից վթարի և այլ վտանգների դեպքում:

Եթե տուժածը անգիտակից վիճակում է կամ որևէ այլ պատճառով չի կարողանում քայլել, ապա տեղափոխեք նրան վտանգավոր գոտուց՝ օգտվելով ստորև նկարագրված տեղափոխման ձևերից որևէ մեկից:

Շտապ դուրս բերման երկու ձև կա (նոսքերի կոճերից բռնած դաստակներից բռնած) և երեք իրավիճակ (երբ տեղափոխման տարածքը հարթ է, երբ տեղափոխման տարածքը անհարթ է և երբ տուժածը նստած է):



Ոսքերի կոճերից բռնած դուրս բերում - տեղափոխման այս ձևը կիրառվում է միայն հարթ մակերեսի վրա, որպեսզի չվնասի տուժածի գլուխը և մեջքը: Տուժածը պետք է պառկած լինի մեջքի վրա: Տուժածի ստորին վերջույթների կոտրվածքների դեպքում տեղափոխության այս ձևը չի կարելի կիրառել, քանի որ կոտրված ոսկրի բեկորները կարող են միմյանց նկատմամբ զգալիորեն տեղաշարժվել: Ծալեք տուժածի ձեռքերը կրծքավանդակին: Մոտեցեք տուժածին ոսքերի կողմից և բռնեք նրա կոճերից: Մարմնով մի փոքր ետ ընկեք և զգուշորեն քաշեք տուժածին:



Դաստակներից բռնած դուրս բերում - այս ձևը կիրառեք այն դեպքում, երբ տեղափոխման տարածքը անհարթ է:

1. Պատկերներ տուժածին մեջքի վրա:
2. Ծնկի իջեք տուժածի գլխի մոտ այնպես, որ ձեր ոտքերը լինեն նրա գլխի երկու կողմերում: Զգույշ եղեք, որ չկանգնեք տուժածի մազերին:
3. Մտցրեք ձեր ձեռքերը տուժածի թիակների տակ այնպես, որ ձեր նախաբազուկները հայտնվեն տուժածի գլխի մոտ, իսկ մատները՝ մեջքի տակ:
4. Կտրուկ շարժումով բարձրացրեք և առաջ հրեք տուժածի մարմնի վերին մասը այնպես, որ նա առաջ թեքվի և գա նստած դիրքի: Տուժածին ինչքան հնարավոր է հրեք առաջ: Ձեր ոտքերը պետք է մնան սկզբնական դիրքում:
5. Մի քայլ առաջ եկեք և կանգնեք տուժածի ետևում՝ պահելով նրա մեջքը ձեր ազդրերով այնպես, որ տուժածը ետ չընկնի:
6. Տուժածի մի ձեռքը արմնկում ծալեք նրա կրծքին: Անցկացրեք ձեր ձեռքերը տուժածի թևատակերով և ամուր բռնեք տուժածի՝ արմնկում ծալված ձեռքի նախաբազուկը:
7. Կքանստեք այնպես, որ տուժածի թիկունքը հայտնվի ձեր ծնկների միջև: Իրանով մի փոքր ետ ընկնելով՝ բարձրացրեք տուժածին և, հենելով նրան ձեր ազդրերին, քայլեք դեպի հետ:
8. Տեղափոխեք տուժածին և զգուշորեն իջեցրեք՝ հատուկ ուշադրություն դարձնելով գլխին և պարանոցին:

Տեղափոխում նստած տեղից - սովորաբար տուժածի նստած տեղից

տեղափոխման ամենաբարդ իրավիճակը, դա ավտոմեքենայի միջից վարորդի դուրս բերումն է: Յուրաքանչյուր դեպքում, ավտոմեքենային մոտենալով, առաջին հերթին անջատեք շարժիչը և քաշեք ձեռքի արգելակը: Եթե անհրաժեշտ է տեղափոխել տուժածին ավտոմեքենայից՝ նախօրոք անշարժացրեք պարանոցը, իսկ տեղափոխման ընթացքում հատուկ ուշադրություն դարձրեք գլխին և ողնաշարին:

Տուժածին ավտոմեքենայից տեղափոխելիս՝

- Արձակեք ամրագոտին: Հանեք տուժածի ոտքերը ոտնակներից:
- Թիկունքի կողմից գրկեք տուժածի իրանի ստորին մասը և կոնքի շրջանում բռնեք հագուստից: Մյուս ձեռքը դրեք տուժածի ձեռք ավելի մոտ ոտքի ծնկին: Միաժամանակ հրելով ծնկները և քաշելով հագուստից՝ շրջեք տուժածին և թիկունքով հենեք ձեզ:



- Տուժածի մի ձեռքը արմնկում ծալեք նրա կրծքին: Անցկացրեք ձեր ձեռքը տուժածի չծալված ձեռքի թևատակով և ավելի ամուր բռնեք տուժածի կրծքին

ծաված նախաբազուկը՝ բութ մատը պահելով մյուս մատների հետ միասին, նախաբազկի առջևից: Մյուս ձեռքը տուժածի ծաված ձեռքի թևատակով անցկացնելով՝ բռնեք տուժածի ծնոտը:

- Ծալեք ձեր ծնկները: Մարմնով մի փոքր ետ ընկեք: Միևնույն ժամանակ քաշեք տուժածի իրանը՝ հենելով նրան ձեր ազդրերին:
- Իրանով թեթևակի ետ ընկեք և քաշելով տուժածին՝ քայլեք դեպի ետ: Ցանկալի է, որ որևէ մեկը օգնի ձեզ և բռնի տուժածի ոտքերը:
- Տեղափոխեք տուժածին և զգուշորեն իջեցրեք՝ հատուկ ուշադրություն դարձնելով գլխին և պարանոցին:

Տեղափոխման որոշում ընդունելուց հետո անհրաժեշտ է ճիշտ ընտրել տեղափոխման ձևը: Մինչև գործելը համոզվեք, որ կարող եք արագ և հուսալի տեղափոխել տուժածին, որի համար պետք է հաշվի առնել՝

- Տուժածի մարմնի չափերը, քաշը:
- Տուժածի վիճակը, վնասվածքների առկայությունը:
- Ձեր առողջական վիճակը և ֆիզիկական հնարավորությունները:
- շրջապատի մարդկանց օգնությունը:
- Համապատասխան օժանդակ միջոցների առկայությունը:
- Տեղափոխման համար հատկացված ժամանակը:
- Տեղափոխման հեռավորությունը:
- Անհարթությունների, խոչընդոտների առկայությունը:

Առաջնային գնում

Առաջնային գնումը այն գնումն է, որը կատարվում է տուժածի կյանքին անմիջական սպառնացող պայմանների հայտնաբերման նպատակով: Առաջնային գնման ժամանակ անհրաժեշտ է ստուգել կենսական կարևոր համակարգերի գործունեությունը, այսինքն՝

- գիտակցությունը,
- շնչուղիների անցանելիությունը և շնչառությունը,
- անոթազարկը և ուժեղ արյունահոսության առկայությունը:


Գիտակցության ստուգում

Անգիտակից տուժածն անընդունակ է ապահովել իր շնչուղիների անցանելիությունը և ենթակա է շնչահեղձվելու վտանգին: Անգիտակից տուժածի մոտ թուլանում են բոլոր մկանները, այդ թվում նաև լեզուն, որը կարող է ետ գնալ և փակել շնչուղիները: Տուժածի մոտ կարող է լինել ակամա փսխում: Քանի որ անգիտակից տուժածի մոտ բացակայում են կլման և հազի ռեֆլեքսները, փսխման զանգվածը կամ այլ հեղուկները (արյուն, թուք, լորձ և այլն) կարող են խցանել շնչուղիները: Տուժածի գիտակցության առկայությունը ստուգելու նպատակով կարող եք կատարել հետևյալ գործողությունները՝

- Զգուշորեն բռնեք տուժածի ձեռքը, ցնցեք նրա ուսը:
- Խոսեք տուժածի հետ, տվեք պարզ հարցեր, օրինակ՝ լսում եք ինձ:

- Տվեք պարզ հրահանգներ, օրինակ՝ խնդրեք տուժածին բացել աչքերը կամ սեղմել ձեռքերը:


Գիտակից տուժածը արձագանքում է ձեզ, հակառակ դեպքում՝ նա անգիտակից է: Անգիտակից տուժածի դեպքում անհրաժեշտ է ստուգել շնչուղիների անցանելիությունը և շնչառությունը:



Շնչուղիների անցանելիության և շնչառության ստուգում

Եթե տուժածը կարողանում է խոսել կամ հազալ, ուրեմն նրա շնչուղիները անցանելի են: Եթե տուժածը անգիտակից է, ապա պետք է ստուգել նրա շնչուղիների անցանելիությունը: Անգիտակից տուժածի շնչուղիների անցանելիության ստուգումը բավականին բարդ է: Առաջին հերթին անհրաժեշտ է կատարել շնչառական ուղիների բացում:



Եթե տուժածի մոտ չկան ողնաշարի վնասվածքներ, ապա շնչառական ուղիների բացումը կատարվում է հետևյալ կերպ՝



- Տուժածի գլուխը հետ տարեք և բարձրացրեք կզակը: Դրա համար մի ձեռքը դրեք տուժածի ճակատին, իսկ մյուս ձեռքով բռնելով կզակից՝ գլուխը զգուշությամբ հետ տարեք: Եթե տուժածը մանկահասակ երեխա է, ապա գլուխը մի թեթև ետ տարեք և բարձրացրեք կզակը, իսկ ծծկեր երեխաների մոտ զգուշորեն բարձրացրեք կզակը:

- Անհրաժեշտության դեպքում բութ մատով բռնեք լեզուն և մաքրեք տուժածի բերանում կուտակված լորձը, հեղուկները և այլն:

Եթե ենթադրում եք, որ տուժածը ունի ողնաշարի վնասվածքներ, ապա շնչառական ուղիները բացելու համար բարձրացրեք նրա կզակը՝ առանց գլուխը ետ տանելու:



Շնչուղիները բացելուց հետո, առանց նրա գլխի դիրքը փոխելու, ստուգեք տուժածի շնչառության առկայությունը: Դրա համար կռացեք և այտը մոտեցնելով նրա դեմքին, ձեր հայացքը ուղղեք տուժածի կրծքավանդակին և որովայնին: Փորձեք տեսնել, լսել և այտով զգալ նրա շնչառությունը:

Շնչառության ստուգումը կատարեք 5-10 վայրկյանի ընթացքում:

Տարիքը	Հանգիստ վիճակում շնչառական ակտերի քանակը 1 րոպեի ընթացքում
չափահասներ	12-20
անչափահասներ	20-35
մանկիկներ	35- և ավելի

Անոթագարկի եւ ուժեղ արյունահոսության ստուգում

Շնչառությանը ստուգելուց հետո անհրաժեշտ է ստուգել անոթագարկը: Անոթագարկը կարելի է շոշափել մակերեսորեն տեղակայված զարկերակների վրա, օրինակ՝ քնային, ճաճանչային զարկերակների վրա:




Վնասվածքների և հիվանդությունների հետևանքով տուժածի անոթագարկը կարող է լինել անկանոն կամ թույլ: Այդ պատճառով անոթագարկը նպատակահարմար է շոշափել քնային զարկերակի վրա:

Տարիքը	Հանգիստ վիճակում սրտամկանի կծկումների քանակը 1 րոպեի ընթացքում
Մեծեր	60-80
Անչափահասներ	80-100
մանկիկներ	100-130 և ավելի

Շոշափեք և փորձեք զգալ անոթազարկը մոտ 5-10 վայրկյանի ընթացքում:

Ծծկեր երեխայի անոթազարկը շոշոփում են բազկային զարկերակի վրա՝ ցուցամատը և միջնամատը երեխայի բազկի ներքին մակերեսի վրա տեղադրելով: Ուժեղ արյունահոսությունը կարճ ժամանակահատվածում մեծ ծավալով արյան կորուստն է: Ուժեղ արյունահոսությունը անհրաժեշտ է հայտնաբերել և դադարեցնել հնարավորին չափ շուտ, հակառակ դեպքում տուժածը կարող է մահանալ:



ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԶՆՆՈՒՄ

Երկրորդային զննումն այն զննումն է, որը կատարվում է տուժածի անմիջական չսպառնացող վնասվածքները և վիճակները հայտնաբերելու նպատակով:

Որոշ վնասվածքներ և հիվանդագին վիճակներ, որոնք կյանքին անմիջական չեն սպառնում, անուշադրության մատնվելով, կարող են որոշ ժամանակ անց դառնալ վտանգավոր: Օրինակ՝ կտրված ոսկրերը կարող են տեղաշարժվել, վնասել արյունատար անոթները և հանգեցնել ուժեղ արյունահոսության: Երկրորդային զննման ընթացքում անհրաժեշտ է ի մի բերել պատահարի և տուժածի առողջական վիճակի վերաբերյալ հնարավոր բոլոր տեղեկությունները: Երկրորդային զննումը կատարվում է երեք հիմնական եղանակներով՝

- տուժածի և ներկաների հարցուփորձ,
- տուժածի մանրակրկիտ զննում (ոտքից գլուխ),
- կենսական կարևոր նշանների վերահսկում:

Ուշադիր զննեք տուժածի մարմինը: Դուք կարող եք նկատել մաշկի գույնի փոփոխություն, կապտուկներ, արյան հետքեր, մարմնի մասերի անբնական դիրք կամ

ձևափոխություն, անսովոր դուրս ցցված կամ փոս ընկած հատվածներ: Հարցրեք տուժածին, թե մարմնի որ մասերում է ցավ զգում: Աշխատեք չդիպչել այդ մասերին: Եթե շարժումը ցավ կամ տհաճություն չի պատճառում, խնդրեք տուժածին շարժել մարմնի մասերը: Ուշադրություն դարձրեք դեմքի արտահայտությանը և ձայնին: Զննելիս համեմատեք մարմնի աջ և ձախ մասերը: Երկրորդային գնման ընթացքում պետք է գրանցել ստացված տեղեկությունները՝ հետագայում շտապ օգնության անձնակազմին փոխանցելու համար: Ցանկալի է նաև նշել ցուցաբերված առաջին օգնությունը և ստուգումների ժամանակը: Դա կարող էք անել ինքներդ կամ հանձնարարել որևէ մեկին:

ԱՆԳԻՏԱԿԻՑ ՏՈՒԺԱԾ

Անգիտակից տուժածն անընդունակ է ապահովել իր շնչուղիների անցանելիությունը և ենթակա է շնչահեղձ լինելու վտանգի: Երբ տուժածը անգիտակից վիճակում է, նրա մկանները, այդ թվում նաև լեզուն, թուլանում են: Լեզուն հետ է գնում դեպի ըմպան՝ փակելով շնչուղիները: Անգիտակից տուժածի կլման և հազի ռեֆլեքսները բացակայում են, ինչը կարող է բերել շնչուղիների անցանելիության խանգարման: Փսիման զանգվածը կամ այլ հեղուկներ կարող են խցանել շնչուղիները: Այդ իսկ պատճառով արգելվում է անգիտակից վիճակում գտնվող կամ մթագնած գիտակցություն ունեցող տուժածին խամցնել, կերակրել կամ նրա մոտ փսխում առաջացնել: Շնչուղիների խցանումը շնչառության դադարի պատճառ կարող է հանդիսանալ, որն իր հերթին կարող է բերել սրտի կանգի:

Գիտակցության բացակայության դեպքում, անհրաժեշտ է տուժածին բերել կողքի ապահովության դիրքի (ԿԱԴ): Այդ դիրքը հնարավորություն է տալիս ապահովել՝

- շնչուղիների անցանելիությունը և օդի մուտքը դեպի շնչուղիներ,
- բերանի խոռոչի պարունակության արտահոսքը:

Անգիտակից վիճակում գտնվող տուժածի մոտ առաջնահերթ շնչուղիների անցանելիության ապահովումն է, սակայն օգնություն ցուցաբերելիս միշտ պետք է լինել զգույշ՝ աշխատելով տուժածին չպատճառել լրացուցիչ վնասվածքներ, չոլորել նրա ողնաշարը: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել գլխին և պարանոցին: Եթե տուժածը ակնոցով է, ապա կողքի ապահովության դիրքի բերելիս նախօրոք հեռացրեք նրա ակնոցը:

ԿՈՂՔԻ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԴԻՐՔ

Անգիտակից տուժածին կողքի ապահովության դիրքի բերելու մի քանի ձև կա: Անկախ նրանից, թե որ տարբերակն էք ընտրում, պետք է՝

- հատուկ ուշադրություն դարձնել տուժածի գլխին,
- խուսափել ողնաշարի ոլորումներից,

- ապահովել շնչուղիների անցանելիությունը:

Տարբերություն չկա, թե որ կողքի վրա դուք կշրջեք տուժածին, սակայն եթե տուժածը հղի կին է, ապա նրան պետք է շրջել ձախ կողմի վրա, քանի որ աջ կողմի վրա շրջելու դեպքում պտղի գործադրած ճնշման հետևանքով խանգարվում է մոր արյան շրջանառությունը: Եթե տուժածը ունի վնասվածքներ, ապա մի շրջեք նրան վնասված կողմի վրա: Եթե տուժածի ականջից արյան կամ այլ հեղուկների արտահոսք կա, ապա այդպիսի իրավիճակներում տուժածին շրջում են հենց վնասված կողմի վրա:

Այն դեպքում, երբ տուժածը շատ ծանր է կամ առկա որոշ վնասվածքներ պահանջում են զգույշ վերաբերմունք, տուժածին կողքի ապահովության դիրքի բերելու համար, որ դուք օգնության կարիք ունենաք: Նման դեպքերում խնդրեք որևէ մեկին օգնել ձեզ՝ տուժածին շրջելու ժամանակ պահելով նրա գլուխը:

Ծնկի իջեք տուժածի կողքին՝ մոտավորապես նրա մարմնի միջնամասում:
Այնուհետև՝

- Տուժածի՝ ձեռք կողմի ձեռքը բացեք նրա մարմնի նկատմամբ մոտավորապես ուղիղ անկյան տակ: Տուժածի մյուս ձեռքը ծալեք նրա որովայնի վրա:
- Ձեր մի ձեռքով ամուր բռնեք տուժածի՝ ձեզանից հեռու գտնվող ուսը: Տուժածի որովայնին դրված ձեռքը բերեք նրա ուսը բռնած ձեր ձեռքի վրա: Ձեր մյուս ձեռքով ամուր բռնեք նրա կոնքային մասից այնպես, որ կարողանաք համաչափ շրջել նրա մարմինը:
- Դանդաղ և զգուշորեն շրջեք տուժածին դեպի ձեզ: Ողնաշարի վնասվածքները կանխելու նպատակով աշխատեք տուժածին շրջել համաչափ:
- Տուժածին շրջելուց հետո հենեք նրան ձեր ոտքերին:
- Այնուհետև, բաց չթողնելով տուժածի կոնքը, ձեր ձեռքին դրված նրա ձեռքը, արմունկով հենելով գետնին, դրեք տուժածի մյուս ձեռքին:
- Ձեր ազատված ձեռքով բռնեք տուժածի կոնքը: Ձեր մյուս ձեռքը սահուն հեռացրեք կոնքից և, վերևում հայտնված նրա ոտքը ծնկում ծալելով, դրեք մյուս ոտքին:
- Ծալված ոտքի թաթը դրեք տուժածի ծնկային հողի փոսում:
- Սահուն բաց թողեք տուժածին, որ գրավի կայուն դիրք:
- Տուժածին շնչուղիների անցանելիության ապահովման նպատակով բռնեք նրա ճակատից և կզակից, հետո գլուխը զգուշությամբ հետ տարեք՝ միաժամանակ դեմքը շրջելով դեպի ներքև, և բացեք նրա բերանը:



ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

1. Կատարեք առաջնային զննում: Եթե առաջնային զննման ժամանակ հայտնաբերում եք, որ տուժածն անգիտակից վիճակում է, ստուգեք շնչուղիների անցանելիությունը, շնչառությունը, անոթազարկը և ցուցաբերեք համապատասխան առաջին օգնություն:
2. Բերեք տուժածին կողքի ապահովության դիրքի: Եթե առաջնային զննման արդյունքում պարզվել է, որ տուժածն ունի շնչառություն և անոթազարկ, սակայն նա անգիտակից է կամ նրա գիտակցությունը մթազնած է, ապա անհրաժեշտ է տուժածին բերել կողքի ապահովության դիրքի:
3. Պահպանեք մարմնի նորմալ ջերմաստիճանը: Ցուրտ և խոնավ պայմաններում ծածկեք տուժածին, իսկ շոգ պայմաններում պաշտպանեք արևի ճառագայթներից և տապից: Պաշտպանեք տուժածին գերտաքացումից և գերսառեցումից:
4. Ահազանգեք շտապ օգնություն: Գիտակցության բացակայությունը շատ լուրջ իրավիճակ է, և յուրաքանչյուր դեպքում պետք է ահազանգել շտապ օգնություն: Հնարավորության դեպքում մի թողեք անգիտակից տուժածին մենակ, ուղարկեք որևէ մեկին ահազանգելու՝ հայտնելով նրան բոլոր անհրաժեշտ տվյալները:
5. Կատարեք երկրորդային զննում: Մինչև մասնագիտացված օգնության ժամանումը, այլ վնասվածքներ հայտնաբերելու նպատակով կատարեք երկրորդային զննում և ցուցաբերեք համապատասխան առաջին օգնություն:
6. Վերահսկեք տուժածի վիճակը: Գործեք ըստ իրավիճակի: Գրանցեք տվյալները և հանձնեք այդ տեղեկությունները շտապ օգնության ժամանող անձնակազմին:

Մի՛ փորձեք անգիտակից վիճակում գտնվող տուժածին կերակրել կամ խմեցնել, քանի որ դա կբերի նրա շնչուղիների խցանման:

Մի՛ թողեք անգիտակից տուժածին առանց հսկողության: Մնացեք տուժածի կողքին մինչև շտապ օգնության ժամանելը: Խոսեք տուժածի հետ: Եթե նույնիսկ նա չի արձագանքում, հնարավոր է, որ նա ձեզ լսում է: Բարձրաձայն ասեք, թե ինչ էք պատրաստվում անել: Դա նաև կօգնի խուճապի չմատնվել և ճիշտ գործել: Եթե մինչև շտապ օգնություն ահազանգելը տուժածի գիտակցությունը վերականգնվում է, միննույն է, նա դեռ բժշկական օգնության կարիք ունի:

ԱՐՅՈՒՆԱՀՈՍՈՒԹՅՈՒՆ

Արյունահոսությունը արյան արտահոսքն է արյունատար անոթներից: Արյունահոսությունը լինում է արտաքին և ներքին: Արտաքին արյունահոսությունը արյան արտահոսքն է մարմնից դուրս: Ներքին արյունահոսությունը արյան արտահոսքն է մարմնի ներքին միջավայր: Չդադարող արյունահոսությունը, արտաքին, թե ներքին, կյանքի համար վտանգավոր է և կարող է մահվան պատճառ դառնալ:

Ըստ վնասված անոթի տեսակի՝ արյունահոսությունները լինում են զարկերակային, երակային և մազանոթային:

Զարկերակային արյունահոսություն: Զարկերակային արյունը ալ կարմիր գույնի է և վնասված անոթից դուրս է հոսում բաբախող շիթով, ինչը խոչընդոտում է մակարդուկի ձևավորմանը: Զարկերակային արյունահոսությունը դժվար է դադարեցվում, հետևաբար վտանգավոր է կյանքի համար:

Երակային արյունահոսություն: Երակային արյունը մուգ կարմիր գույնի է: Երակային արյունը վերքից հոսում է միալար և համեմատաբար հեշտ է դադարեցվում: Սակայն խոշոր երակների վնասումը կարող է առաջացնել կյանքին սպառնացող արյունահոսություն:

Մազանոթային արյունահոսություն: Մազանոթային արյունը ավելի մուգ է քան զարկերակայինը, բայց ավելի բաց է, քան երակայինը: Մազանոթային արյունահոսության դեպքում արյունը ծորում է վերքից և հեշտ է դադարում:

Մարդու մարմնից, արյան ընդհանուր ծավալի 10% (չափահաս մարդու մոտ 350-500 մլ)-ից ավելի արյան կորուստը համարվում է վտանգավոր: Ցանկացած դեպքում ուժեղ արյունահոսությունը պետք է դադարեցվի հնարավորին չափ արագ և հուսալի: Արյան կորստի նշանների առկայությունը և նրանց արտահայտվածության աստիճանը կախված է կորցված արյան ծավալից և արյունահոսության արագությունից: Դրանք են՝


- տազնապ, անհանգստություն,
- գլխապտույտ, թուլություն,
- տեսողության մթազնում,
- հաճախացած, թույլ անոթազարկ,
- հաճախացած շնչառություն,
- սառը, գունատ կամ կապտավուն մաշկ,
- ծարավի ուժեղ զգացում,
- սրտխառնոց:

Առաջին օգնությունը արտաքին արյունահոսության դեպքում

1. Դադարեցրեք արյունահոսությունը:
2. Օգնեք տուժածին ընդունել հարմար և հանգիստ դիրք: Պառկեցրեք տուժածին, հանգստորացրեք և սահմանափակեք նրա շարժումները:
3. Անհրաժեշտության դեպքում ահազանգեք շտապ օգնություն:


Արյունահոսության դադարեցում, ուղղակի ճնշման միջոցով

ա) Ձեռքի ափով սեղմեք վերքը: Մանրէների ներթափանցումը սահմանափակելու նպատակով վերքի վրա դրեք ձեռքի տակ եղած հնարավորինս ստերիլ անձեռոցիկ (գործվածք):



Ուղղակի ճնշումը զգալիորեն խոչընդոտում է վերքից արյան արտահոսքը և նպաստում արյան մակարդմանը:

բ) Վիրակապեք վերքը այնպես, որ վիրակապման նյութի փաթույթներից յուրաքանչյուրը ծածկի նախորդ փաթույթի առնվազն կեսը և ծածկված լինի ստերիլ անձեռոցիկի եզրերը: Եթե վիրակապը ներծծվում և թրջվում է վերքից հոսող արյունով, ապա առանց նախորդ վիրակապը հանելու, նրա վրայից ավելի ամուր կապեք նոր վիրակապ և այն հանգուցեք վերքի վրա:




գ) Խորհուրդ տվեք տուժածին վնասված հատվածը պահել սրտի մակարդակից վերև:

Արյունահոսության դադարեցում, վերջույթի առավելագույն ծալման միջոցով


Վերջույթների արյունահոսությունը դադարեցնելու համար կարելի է կիրառել նաև հողերում վերջույթների առավելագույն ծալման եղանակը:

Ծալվող տեղում տեղադրեք փաթույթային վիրակապի գլանա կամ որևէ փափուկ առարկա (ծալված գործվածք և այլն): Փաթույթային վիրակապով կամ գոտիով կապեք վերջույթը առավելագույն ծալված դիրքում: Տուժածին շտապ պետք է տեղափոխել հիվանդանոց, քանի որ վերջույթը այս դիրքով երկար պահել չի կարելի:



Արյունահոսության դադարեցում սեղմման կետերում ճնշում գործադրելու միջոցով

Արյունահոսությունը դադարեցնելու նպատակով կարելի է վնասված մասին արյուն մատակարարող զարկերակին սեղմման կետում ճնշում գործադրել: Սեղմման կետերը մարմնի վրա որոշակի կետեր են, որտեղ կարելի է խոշոր զարկերակների վրա ճնշում գործադրելով խիստ նվազեցնել կամ դադարեցնել մարմնի համապատասխան մասում արյան շրջանառությունը: Մարդու մարմնի վրա կան բազմաթիվ սեղմման կետեր:




ԼԱՐԱՆԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Եթե արյունահոսությունը ուժեղ է, և վերոհիշյալ քայլերը ձեռնարկելուց հետո չի դադարում, կամ եթե պայմանները ստիպում են որոշ ժամանակով հեռանալ տուժածի մոտից, ապա նման դեպքերում արյունահոսող վերջույթի վրա տեղադրվում է լարան: Լարան տեղադրելով՝ դուք դադարեցնում եք վերջույթի

արյունամատակարարումը: Եթե արյունամատակարարումը դադարեցվում է երկար ժամանակով, ապա հյուսվածքները սկսում են մեռուկանալ, և տուժածը կարող է կորցնել վերջույթը: Որպես կանոն, վերջույթների վրա լարանը դրվում է այնտեղ, որտեղ հնարավոր է զարկերակը սեղմել միակ ոսկրին: Վերին վերջույթի զարկերակային արյունահոսության դեպքում լարանը պետք է տեղադրել արմունկից վեր, իսկ ստորին վերջույթի արյունահոսության դեպքում՝ ծնկից վեր: Լարանը պետք է տեղադրել վերքին հնարավորին չափ մոտ: Վերջույթին անդամահատման լարանը դրվում է անմիջապես վերքից վեր, նույնիսկ սրունքի կամ նախաբազկի վրա, քանի որ այդ դեպքում երկու ոսկրերը արդեն չեն խանգարում նրանց մինչև անցնող զարկերակների սեղմմանը:

1. Լարան տեղադրելու համար անհրաժեշտ է ձեռքի տակ եղած որևիցե գործվածք ծալել այնպես, որ ստացվի 7-10 սմ լայնությամբ ժապավեն: Կարող եք օգտագործել ձեռքի տակ եղած ցանկացած հարմար միջոց՝ փողկապ վզկապ, մեծ թաշկինակ: Սակայն պետք է հիշել, որ չի կարելի օգտագործել բարակ պարան կամ թել, որոնք կարող են վնասել մաշկը:
2. Լարանը երկու անգամ փաթաթեք վերջույթի շուրջը և կապեք սովորական հանգույցով:
3. Հանգույցին դրեք փայտիկ, ձող կամ այլ հարմար միջոց և կապեք հանգույցով:
4. Այնուհետև ոլորեքով ձգեք լարանը, մինչև որ արյունահոսությունը դադարի:
5. Լարանի ծայրերով կամ նոր վիրակապով ամրացրեք փայտիկը:
6. Գրանցեք լարանը տեղադրելու ժամանակը և տուժածի տվյալները որևէ թղթի վրա: Այդ թուղթը ամրացրեք լարանի տակ կամ տուժածի հագուստին:
7. Արագ տեղափոխեք տուժածին հիվանդանոց:
8. Եթե անհնար է տուժածին արագ տեղափոխել հիվանդանոց, ապա յուրաքանչյուր ժամը մեկ թուլացրեք լարանը՝ նախօրոք սեղմման կետում սեղմելով համապատասխան զարկերակը: Լարանը թուլացրեք աստիճանաբար, որպեսզի արյան ուժեղ հոսքը դուրս չմղի վերքի մեջ գոյացած մակարդուկը: Եթե արյունահոսությունը չի դադարել, 10-15 րոպե հետո ամրացրեք լարանը նախկին տեղից մի փոքր վերև: Եթե արյունահոսությունը դադարել է, ապա թողեք լարանը թուլացրած, բայց մի հանեք վերջույթի վրայից, դա հնարավորություն կտա արյունահոսության դեպքում արագ դադարեցնել այն:



ՆԵՐՔԻՆ ԱՐՅՈՒՆԱՀՈՍՈՒԹՅՈՒՆ

Ներքին արյունահոսությունը արյան արտահոսքն է մարմնի ներքին տարածություններ: Մաշկի տակ ներքին մազանոթային արյունահոսությունը դրսևորվում է կապտուկների ձևով և վտանգավոր չէ: Զարկերակային կամ երակային արյունահոսության դեպքում կարող է տեղի ունենալ արյան մեծ կորուստ, որը պահանջում է անհապաղ բժշկական միջամտություն: Ուժեղ ներքին արյունահոսություն առաջանում է կտրվածքների, ծանր վնասվածքների հետևանքով (ավտովթար, բարձրությունից ընկնել և այլն), որոշ հիվանդությունների պատճառով (ստամոքսի խոց, հեմոֆիլիա): Օրինակ՝ որովայնի խոռոչում գտնվող օրգանները (փայծախը կամ լիարդը) կարող են վնասվել և արյունահոսել իրանից հասցված հարվածից: Ներքին արյունահոսությունը հաճախ կարող է շոկի պատճառ հանդիսանալ:

Ներքին արյունահոսությունը ավելի վտանգավոր է, քան արտաքինը: Այս դեպքում ևս տեղի է ունենում արյան արտահոսք արյան շրջանառության համակարգից, և որպես հետևանք խանգարվում է հյուսվածքների արյունամատակարարումը, ինչը բերում է նրանց գործունեության խանգարմանը: Ներքին արյունահոսության հետևանքով մարմնի խոռոչներում կարող է արյուն կուտակվել և ճնշել կենսական կարևոր օրգանները: Օրինակ՝ գանգում կուտակված արյունը, ճնշումը, ուղեղը, կրծքավանդակում կուտակված արյունը՝ թոքերը, ինչի հետևանքով խաթարվում է այդ օրգանների գործունեությունը:

Նշանները

Ներքին արյունահոսության նշանները դժվար են հայտնաբերվում, քանի որ վնասվածքը կամ արյունը կարող են տեսանելի չլինել: Բացի այդ, նշանները կարող են ի հայտ գալ պատահարից որոշ ժամանակ անց: Ներքին արյունահոսության ժամանակ արյան կորստի ընդհանուր նշանների հետ մեկտեղ կարող են ի հայտ գալ հետևյալ նշանները՝

- ենթադրվող ներքին արյունահոսության տեղում ցավ, հյուսվածքների պնդացում, ուռածություն, փքվածություն, մաշկի գույնի փոփոխություն,
- արյան արտահոսք մարմնի բնական անցքերից:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Եթե ենթադրում եք, որ տուժածը ներքին արյունահոսություն ունի, ապա՝

- Անհապաղ ահազանգեք շտապ օգնություն:
- Գիտակցության առկայության դեպքում հանգստացրեք տուժածին, սահմանափակեք նրա շարժումները և պառկեցրեք հարմար դիրքով:
- Ներքին արյունահոսության ենթադրվող տեղում ցավը մեղմելու և արյունահոսությունը նվազեցնելու նպատակով դրեք սառը թրջոց կամ սառցապարկ:
- Մի տվեք նրան ոչինչ՝ ուտելու կամ խմելու:
- Պահպանեք տուժածի մարմնի նորմալ ջերմաստիճանը:

- Վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները և ցուցաբերեք համապատասխան օգնություն:

ՇՈԿ

Շոկը մարմնի ընդհանուր պատասխանն է վերսահմանային արտաքին ազդակին, որը հանգեցնում է կենսական կարևոր օրգանների անբավարար արյունամատակարարման, թթվածնային քաղցի և որպես հետևանք, նրանց գործունեության խանգարումների: Երբ արտաքին ազդակը այնքան ուժեղ է, որ գերազանցում է մարմնի համակշռող հնարավորությունները կամ այնքան կարճատև է, որ մարմինը պարզապես չի հասցնում իրականացնել կարգավորումը, զարգանում է շոկ: Շոկը զգալիորեն բարդացնում է վնասվածքի կամ հիվանդության ընթացքը:

Շոկի զարգացման պատճառները

Շոկի զարգացման հիմքում ընկած է հյուսվածքների արյունամատակարարման նվազեցումը, որը պայմանավորված է արյան ճնշման կտրուկ անկումով: Շոկի դեպքում արյան ճնշման անկման հիմնական պատճառներն են արյան ծավալի նվազումը, փոքր տրամագծի անոթների տարածուն լայնացումը կամ սրտի մղիչ հնարավորության կտրուկ անկումը:

Արյան ծավալի նվազեցման կարող են բերել՝

- Ներքին կամ արտաքին արյունահոսությունը (վնասվածքներ, հիվանդություններ):
- Ջրազրկումը (լուծ, փսխում, այրվածքներ, առատ քրտնարտադրություն):
- Փոքր տրամագծի անոթների տարածուն լայնացումը տեղի է ունենում ուժեղ ցավի (վնասվածքներ, այրվածքներ), նյարդային համակարգի վնասվածքների, սուր ալերգիկ ռեակցիաների, վարակիչ հիվանդությունների ժամանակ:
- Սրտի մղիչ գործունեության անկման ամենահաճախակի հանդիպող պատճառներից մեկը սրտամկանի ինֆարկտն է:

Նշանները

Շոկի զարգացման սկզբնական շրջանում տուժածի վարքագիծը կարող է լինել վիճակին անհամապատասխան: Նա չի գիտակցում իր վիճակի ծանրությունը, անհանգիստ է և գրգռված: Այս շրջանը ավելի բուռն է դրսևորվում և երկար տևում, երբ շոկի պատճառը ուժեղ ցավն է (այրվածքների, վնասվածքների դեպքում) կամ նրան նախորդում է զգացմունքային լարված վիճակ: Աստիճանաբար գրգռվածությունն ու անհանգստությունը փոխվում են արգելակման, և ի հայտ են գալիս հետևյալ նշանները՝

- արագացած և թույլ (թեւանման) անոթազարկ,
- գունատ, սառը, խոնավ մաշկ,
- հաճախացած շնչառություն,
- ծարավի ուժեղ զգացում,
- սրտխառնոց և փսխում,

- գիտակցության խանգարում:

Տուժածի վիճակի վատթարացման հետ միասին այս նշաններն ավելի ցայտուն են արտահայտվում: Գիտակցության խանգարումները անմիջապես չեն զարգանում, քանի որ առկա է արյան շրջանառության կենտրոնացում:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

- Դադարեցրեք կամ հնարավորին չափ նվազեցրեք շոկի պատճառ հանդիսացող գործոնի ազդեցությունը: Օրինակ՝ դադարեցրեք արյունահոսությունը, նվազեցրեք ցավը, ցուցաբերեք վնասվածքներին համապատասխան առաջին օգնություն:
- Պահպանեք տուժածի մարմնի նորմալ ջերմաստիճանը: Պաշտպանեք տուժածին գերտաքացումից և գերսառեցումից:
- Հանգստացրեք, քաջալերեք տուժածին: Վախը նպաստում է շոկի հետագա զարգացմանը:
- Ապահովեք տուժածի հանգիստը: Խնդրեք ներկաներին տուժածի մոտ բարձր չխոսել:
- Դեպի կենսական կարևոր օրգաններ արյան հոսքը մեծացնելու նպատակով պանկեցրեք տուժածին, ձեռքերը դրեք կրծքավանդակին և բարձրացրեք նրա ոտքերը: Դա կարելի է անել՝ տուժածի ոտքերի տակ որևէ առարկա կամ ծավված ծածկոց տեղադրելով:
- Տվեք տուժածին քաղցր հեղուկներ: Հեղուկ տալը արգելվում է, եթե տուժածը անգիտակից վիճակում է, ենթադրում էք, որ նա ունի որովայնի վնասվածքներ կամ շտապ վիրաբուժական միջամտության կարիք:
- Անհապաղ ահազանգեք շտապ օգնություն: Շոկի դեպքում չի կարելի սահմանափակվել միայն առաջին օգնության ցուցաբերմամբ: Տուժածի կյանքը փրկելու համար անհրաժեշտ է մասնագիտական բժշկական օգնություն:
- Վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները և ցուցաբերեք համապատասխան առաջին օգնություն:

ՇՆՂՈՒՂԻՆԵՐԻ ԽՑԱՆՈՒՄ ԵՎ ՇՆՂԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆԳ

Շնչուղիների խցանումը շնչառական ուղիների լրիվ կամ մասնակի փակումն է, որի հետևանքով խանգարվում է օդի անցումը թոքեր:

Շնչուղիների մասնակի խցանում՝ այս դեպքում որոշ քանակի օդ անցնում է թոքեր, ինչը հնարավորություն է տալիս մարդուն հազալով դուրս բերել խցանող առարկան:

Առաջին օգնությունը մասնակի խցանման դեպքում

- Մնացեք տուժածի հետ
- Քաջալերեք նրան, որ շարունակի հազալ
- Եթե վիճակը չի բարելավվում, ահազանգեք շտապ օգնություն

Շնչուղիների լրիվ խցանում՝ այս դեպքում տուժածը չի կարողանում շնչել, հազալ և խոսել:

Նշանները

- Խոսելու, հազալու անկարողություն:
- Կոկորդից բռնած դիրք:
- Կարմրած դեմք, փքված պարանոցային երակներ
- Մաշկի կապտություն:
- Գիտակցության կորուստ:

Առաջին օգնությունը շնչուղիների լրիվ խցանման դեպքում

Չափահաս մարդկանց և երկու տարեկանից բարձր երեխաներին, եթե նրանք գիտակից են, խրախուսեք, որ փորձեն հազալ, եթե փորձերը ապարդյուն են, ապա ասացեք նրան, որ դուք պատրաստվում եք նրան օգնել և կանգնեք տուժածի մեջքի ետևում: Մի ձեռքի բռունցքը բուխ մատի կողմով դրեք տուժածի որովայնին, պորտից անմիջապես վերև, մյուս ձեռքով բռնեք այդ բռունցքը և կատարեք հրումներ ուղղված դեպի ներս ու վերև:

Կատարեք այս գործողությունները այնքան ժամանակ, մինչև օտար մարմինը դուրս կգա կամ տուժածը կկորցնի գիակցությունը:



Անգիտակից տուժածին զգուշորեն մեջքի վրա պառկեցրեք հասակին: Նստեք տուժածի ազդրերի հատվածում, գտեք պորտը և դաստակի բլրակի հատվածով, արմունկները ուղիղ պահած կատարեք որովայնի հրումներ դեպի առաջ և ներքև:

4-5 անգամ հրումներ կատարելուց հետո, մոտեցեք տուժածի գլխին, բացեք բերանը: Ուշադրություն դարձրեք օտար մարմնի առկայությանը բերանի խոռոչում, եթե այն երևում է ապա երկու մատով հեռացրեք: Ստուգեք շնչառության առկայությունը և շնչուղիների անցանելիությունը: Եթե շնչուղիները փակ են, ապա շարունակեք այս գործողությունները մինչև որ`

- օտար մարմինը դուրս կգա,
- ի հայտ կգան մահվան նշանները:

Բացառություն` հղի կանանց, որովայնի հատվածում վնասվածքներ ունեցող մարդկանց հրումներ կատարեք փորից վերև կրծոսկրի ներքևի հատվածում:

Շնչառության կանգ

Շնչառության կանգը վիճակ է, երբ տուժածը դադարում է ինքնուրույն շնչել: Շնչառության կանգի դեպքում արյան մեջ թթվածնի կտրուկ նվազման հետևանքով խաթարվում է բոլոր համակարգերի գործունեությունը, ինչը կարող է բերել սրտի կանգի և մահվան: Ուստի անհրաժեշտ է կատարել արհեստական շնչառություն:

Արհեստական շնչառության կատարման ձևերն են՝ բերան-բերան, քիթ և բերան-բերան քիթ. այս վերջին ձևը գործածվում է մանկիկներին ներփչում կատարելու ժամանակ:

Արհեստական շնչառության կատարման տեխնիկա

Ներփչում կատարելու համար խորը շունչ առեք և ձեր բերանով ամբողջությամբ ընդգրկելով տուժածի բերանը, կատարեք ներփչում: Ձեր հայացքը ուղղեք տուժածի կրծքավանդակին: Ներփչեք այնքան, մինչև տեսնեք, որ տուժածի կրծքավանդակը բարձրացավ: Չափահաս մարդուն անհրաժեշտ է կատարել առնվազն 12 ներփչում 1 րոպեի ընթացքում, այսինքն՝ յուրաքանչյուր 5 վայրկյանը՝ մեկ ներփչում: Անչափահասներին առնվազն 20 ներփչում 1 րոպեի ընթացքում, այսինքն յուրաքանչյուր 3 վայրկյանը՝ մեկ ներփչում: Մանկիկների ներփչման տեխնիկան այլ է: Ներփչեք ձեր բերանի խոռոչում տեղավորվող օդի քանակությամբ, այնպես որ կրծքավանդակը մի փոքր բարձրանա: Ներփչումների քանակը պետք է լինի 35 և ավելի, յուրաքանչյուր 1.7 վայրկյանը՝ մեկ ներփչում: Յուրաքանչյուր 1 րոպեն մեկ ստուգեք տուժածի շնչառության և անոթազարկի առկայությունը և գործեք իրավիճակին համապատասխան:

Տարիքը	Հանգստի վիճակում շնչառական ակտերի քանակը մեկ րոպեի ընթացքում	Ներփչումների քանակը մեկ րոպեի ընթացքում
Մեծեր	12-20	12
Անչափահասներ	20-35	20
Մանկիկներ	35 և ավելի	35

Ներփչումները կատարե՛ք այնքան ժամանակ մինչև որ՝

- վերականգնվի տուժածի շնչառությունը,
- այլևս չոչափվի անոթազարկը,
- ժամանի մասնագիտացված օգնությունը,
- շրջապատը դառնա վտանգավոր,
- դուք այլևս ի վիճակի չլինեք շարունակել:

ՄՐՏԻ ԿԱՆԳ

Սրտի կանգը իրավիճակ է, երբ սրտամկանը դադարում է կծկվել և արյուն մղել դեպի անոթներ: Զարգանում է կլինիկական մահ: Սրտի կանգի ակնհայտ նշանը,

քնային զարկերակի վրա անոթազարկի բացակայությունն է: Բնականաբար, բացակայություն է նաև շնչառությունը և գիտակցությունը:



Սրտի աշխատանքի եւ շնչառության վերականգնում


Սրտի աշխատանքի և շնչառության վերականգնման գործողությունները պետք է սկսել անմիջապես անոթազարկի բացակայությունը հայտնաբերելու դեպքում, եթե ուժեղ արյունահոսություն չկա: Այլապես անհրաժեշտ է դադարեցնել ուժեղ արյունահոսությունը, հետո կատարել սրտի աշխատանքի և շնչառության վերականգնման գործողությունները: Տուժածը պետք է լինի հարթ և կոշտ մակերեսի վրա (ցանկալի է հատակին): Ազատեք կրծքավանդակը հագուստից՝ սեղմման տեղը որոշելու համար: Կրծքավանդակի վրա սեղմման տեղը որոշելու համար կրծոսկրը ձեր ձեռքի մատներով բաժանեք երկու հավասար մասերի և ոտքերի կողմի ձեռքը ափի բլրակով դրեք մյուս ձեռքի բութ մատի հարևանությամբ:

Սեղմումները կատարեք առանց արմունկները ծալելու, վերնից ներքև այնպես, որ ձեր ուսերը գտնվեն տուժածի կրծքավանդակի նկատմամբ ուղղահայաց դիրքով: Սեղմումները կատարեք 15 անգամ այնուհետև 4 անգամ կատարեք ներփչումներ: Այս գործողությունները սրտի աշխատանքի և շնչառության վերականգնման մեկ ցիկլն է: Օրինակ՝ (15 սեղմում 2 ներփչում) x 4: Այնուհետև ստուգեք անոթազարկը: Շարունակեք գործողությունները համապատասխան իրավիճակին:



Անչափահասների սրտի աշխատանքի և շնչառության վերականգնման ժամանակ կրծքավանդակի սեղմումները կատարեք մեկ ձեռքով և 1 րոպեի ընթացքում վեց ցիկլ: Օրինակ՝ (15 սեղմում 2 ներփչում) x 6:

Մանկիկների սրտի աշխատանքի և շնչառության վերականգնում կատարելիս սեղմման տեղը որոշելու համար պատկերացրեք նրա պտուկները միացնող երևակայական գիծը: Տեղադրեք ձեր ձեռքի ցուցամատը այդ գծին կրծոսկրի վրա: Անմիջապես հարևանությամբ կրծոսկրի ստորին հատվածում տեղադրեք ձեր մյուս երկու մատները և բարձրացրեք ցուցամատը: Դա սեղմման ճիշտ տեղն է: Մանկիկներին կատարեք կրծքավանդակի 5 սեղմում և 1 ներփչում 3 վայրկյանի ընթացքում, դա մեկ ցիկլն է: Մեկ րոպեի ընթացքում անհրաժեշտ է կատարել 20 ցիկլ: Այնուհետև ստուգեք անոթազարկը: Շարունակեք գործողությունները համապատասխան իրավիճակին: Ստորև բերված է աղյուսակ ըստ տարիքային խմբերի սրտի աշխատանքի և շնչառության վերականգնման ցիկլերի քանակի և սեղմման խորության չափերի վերաբերյալ:



Տարիքը	Հանգիստ վիճակում սրտամկանի կծկումների քանակը	Քանակը մեկ րոպեի ընթացքում	Սեղմումների խորությունը
Մեծեր	60-80	(15-2) x 4	4-5 սմ
Անչափահասներ	80-100	(15-2) x 6	2,5-3,5 սմ
Մանկիկներ	100-130 և ավելի	(5-1) x 20	1,5-2 սմ

ՓԱՓՈՒԿ ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ

Փափուկ հյուսվածքները կազմված են մաշկից, ենթամաշկային բջիջներից, մկաններից ու ջլերից: Փափուկ հյուսվածքների վնասվածքները լինում են փակ և բաց: Վերջիններս սովորաբար անվանում են վերքեր:

Փափուկ հյուսվածքների փակ վնասվածքներ

Փակ վնասվածքը փափուկ հյուսվածքների վնասումն է՝ առանց մաշկի ամբողջականության խախտման: Անմիջապես հարվածից հետո վնասվածքի տեղը կարմրում է և այտուցվում: Որոշ ժամանակ անց մաշկն այդ տեղում դառնում է մուգ կարմիր կամ մանուշակագույն, այտուցը մեծանում է: Մի քանի օր անց մաշկի գույնը դառնում է կապտականաչավուն, ապա՝ դեղին: Այտուցը գնալով նվազում է: Շատ ուժեղ հարվածի դեպքում կարող են վնասվել հյուսվածքները, խոշոր անոթները՝ հյուսվածքների միջև առաջացնելով արյան կուտակում: Դա ներքին արյունահոսության ձևերից մեկն է:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

1. Դադարեցրեք արյունահոսությունը և նվազեցրեք այտուցումն ու ցավը: Դրա համար՝
 - բարձրացրեք վնասված մասը
 - սահմանափակեք վնասված մասի շարժումները
 - սառեցրեք վնասված մասը
2. Վնասվածքը ստանալու պահից սկսած 24 ժամվա ընթացքում սառեցրեք վնասված մասը՝ դնելով սառը թրջոցներ կամ սառցապարկեր: Մաշկի և սառցապարկի միջև միշտ դրեք որևէ սրբիչ կամ գործվածքի կտոր:
3. Ահագանգեք շտապ օգնություն կամ անհապաղ դիմեք բժշկական օգնության, եթե տուժածը ուժեղ ցավ է զգում, չի կարողանում շարժել վնասված մասը կամ երբ ենթադրում եք, որ վնասվածք առաջացնող պատճառը բավականին լուրջ է:

ՎԵՐՔԵՐ

Վերքը փափուկ հյուսվածքների վնասվածք է, որն ուղեկցվում է մաշկի կամ լորձաթաղանթների ամբողջականության խախտումով: Վերքերը վտանգավոր են վարակի ներթափանցման, արյունահոսության և ցավի պատճառով: Անկախ վնասվածքի ծանրությունից, մաշկի ցանկացած բաց վնասվածք մուտքի դուռ է հանդիսանում ախտածին մանրէների ներթափանցման համար, քանի որ թե՛ մաշկի, թե՛ շրջակա բոլոր առարկաների վրա և օդում միշտ առկա են բազմաթիվ մանրէներ: Վերքերը լինում են՝ քերծված, ծակած, կտրած, պատռած, պոկած, ջնջիված, կծած, հրազենային վերքեր և այլն:

Վերքերի մշակման սկզբունքները

1. Վերքերի մշակման ժամանակ հիմնական նպատակը արյունահոսության դադարեցումն է ու վարակի ներթափանցման նվազեցումը:
2. Տուժածին օգնություն ցուցաբերելիս առաջ պարզեք վերքի վտանգավորության աստիճանը: Քիչ վտանգավոր են համարվում մակերեսային, 2,5 սմ-ից ոչ մեծ չափեր ունեցող և հեշտ դադարեցվող կամ աննշան արյունահոսությամբ ուղեկցվող վերքերը: Մնացած բոլոր վերքերը համարվում են վտանգավոր և պահանջում են բժշկական միջամտություն:

Քիչ վտանգավոր վերքեր

Քիչ վտանգավոր վերքերի մշակման ժամանակ առաջնորդվեք հետևյալ սկզբունքներով.

1. Լվացեք վերքը օձառով և մաքուր ջրով, քանի որ օձառը, հատկապես նրա որոշ տեսակները, ախտածին մանրէների վերացման բավական արդյունավետ միջոց է:
2. Կիրառեք վերքերի մշակման համար նախատեսված հատուկ նյութեր և քսուրներ: Խուսափեք սպիրտային հիմքով նյութերը (յոդ, օդի, օձանելիք և այլն)

անմիջապես վերքի վրա քսելուց, այլ մշակեք դրանցով միայն վերքի շրջակա մաշկը:

3. Ծածկեք վերքը կաշուն սպեղանիով կամ ստերիլ վիրակապով:

Վտանգավոր վերքեր

Վտանգավոր վերքերի մշակման ժամանակ առաջնորդվեք ստորև թվարկվող ընդհանուր սկզբունքներով.

- Վերքի վրա տեղադրեք ստերիլ անձեռոցիկ:
- Վիրակապեք և դադարեցրեք արյունահոսությունը:
- Ահագանգեք շտապ օգնություն կամ տուժածին տեղափոխեք բուժօգնության:
- Ձեռք մի տվեք արդեն տեղադրված վիրակապին, քանի որ վիրակապի տեղաշարժումից արյունահոսությունը կարող է վերսկսել կամ ուժեղանալ:
- Մի փորձեք ինքնուրույն մաքրել վերքը:
- Ձեռնարկեք շոկի զարգացումը կանխարգելող քայլերը:

Յուրաքանչյուր դեպքում, կախված վերքի տեսակից ու տեղակայումից, թվարկված ընդհանուր սկզբունքներից բացի կարող է պահանջվել յուրահատուկ մոտեցում:

ՕՏԱՐ ՄԱՐՄԻՆ ՎԵՐՔԻ ՄԵՋ


Լինում են դեպքեր, երբ վերքը առաջացնող առարկան, թափանցելով հյուսվածքներ, մնում է վերքի մեջ: Վերքի մեջ գտնվող առարկան անվանում են օտար մարմին: Այս վնասվածքի դեպքում արտաքին արյունահոսությունը կարող է լինել աննշան, սակայն, ինչպես ցանկացած այլ ծակած վերքի դեպքում, մեծ է ներքին արյունահոսության և վարակման վտանգը: Օտար մարմինը չի կարելի հանել վերքից կամ տեղաշարժել, քանի որ այն որոշ չափով խոչընդոտում է վնասված անոթներից արյան արտահոսքը: Բացի դրանից, այն վնասում է հյուսվածքները ինչպես մտնելիս, այնպես էլ դուրս գալիս: Այս դրույթին չեն ենթարկվում այն դեպքերը, երբ վերքի մեջ ներթափանցում են մանր ավազահատիկներ, ապակու փոքր կտորներ կամ մանր օտար մարմիններ: Այս դեպքերում հեռացրեք օտար մարմինները վերքի միջից, ապա նոր վիրակապեք:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

- Դադարեցրեք արտաքին արյունահոսությունը:
- Վերքի եզրերը չորս կողմից սեղմեք օտար մարմնին՝ նրա վրա անմիջական ճնշում չգործադրելով:
- Վերքի մեջ անշարժացրեք օտար մարմինը, որպեսզի կանխեք փափուկ հյուսվածքների հետագա վնասումը: Եթե օտար մարմնի ծայրը բարձր չի, զգուշորեն ծածկեք այն ստերիլ անձեռոցիկով և շուրջը դրեք օղակաձև վիրակապ: Եթե օտար մարմնի ծայրը բարձր է, վիրակապելիս նրա ծայրը

չպետք է ծածկվի: Տեղադրեք վերքի շուրջը ստերիլ անձեռոցիկներ, նրանց վրայից՝ օղակաձև վիրակապ կամ փաթույթային վիրակապի գլանակներ:

- Վիրակապեք փաթույթային վիրակապով այնպես, որ տեղում ամրացնեք անշարժացնող օղակաձև կամ փաթույթային վիրակապերը՝ չշարժելով օտար մարմինը:
- Ահագանգեք շտապ օգնություն:
- Վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները և ցուցաբերեք համապատասխան առաջին օգնություն:



ԱՆԴԱՄԱՀԱՏՎԱԾ ՎԵՐՔԵՐ


Վնասվածք առաջացնող գործոնը, օրինակ՝ հարվածը, կարող է բավականին ուժեղ լինել և պոկել մարմնի որևէ մասը, օրինակ՝ մատը: Նման վերքերն անվանում են անդամահատված վերքեր: Անդամահատումը մարմնի որևէ մասի (մատ, ձեռք, ոտք) անջատումն է: Թվում է, թե այս վերքերի դեպքում արյունահոսությունը պետք է շատ ուժեղ լինի: Սակայն հաճախ վնասված հատվածում արյունատար անոթները արագ կծկվում են՝ նվազեցնելով արյան արտահոսքը:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Օգնություն ցուցաբերելիս, առաջին հերթին հոգացեք տուժածի մասին:

- Վիրակապեք և դադարեցրեք արյունահոսությունը:
- Ձեռնարկեք շոկի զարգացումը կանխարգելող քայլեր:
- Արյունահոսության դադարեցումից հետո անմիջապես անդրադարձեք անդամ-մա-հատված մասին, քանի որ, ճիշտ խնամքի դեպքում, հնարավոր է, որ հիվանդանոցում վերականգնեն վնասված մասի ամբողջականությունը:
- Գտեք անդամահատված մասը, փաթաթեք ստերիլ անձեռոցիկով և դրեք պլաստիկ տոպրակի մեջ: Տոպրակի մեջ օդ ներփչեք և փակեք այն: Տեղադրեք այդ տոպրակը սառույցի կտորներով ու ջրով լցված մեկ այլ պարկի կամ որևէ ամանի մեջ, քանի որ ցածր ջերմաստիճանում դանդաղում է հյուսվածքների մահացումը: Բացառեք անդամահատված մասի շփումը սառույցի և ջրի հետ: Թղթի վրա նշեք տուժածի անունը, դեպքը կատարվելու ժամը և ամրացրեք այն տոպրակին:

- Ահագանգեք շտապ օգնություն և հավաստիացեք, որ մարմնի անդամահատված մասը տուժածի հետ տարվում է հիվանդանոց:
- Վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները և ցուցաբերեք համապատասխան առաջին օգնություն:



ՀՅՈՒՄՎԱԾՔՆԵՐԻ ԵՐԿԱՐԱՏԵՎ ՃԶՄՄԱՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇ

Փափուկ հյուսվածքների վնասվածքների շարքում հատուկ տեղ է զբաղեցնում հյուսվածքների երկարատև ճզմման համախտանիշ (վնասվածքային տոքսիկոզ, կրաշ սինդրոմ): Այսպիսի վնասվածքներ սովորաբար հանդիպում են երկրաշարժերի, փլուզումների ժամանակ, երբ տուժածի մարմնի որևէ մասը (սովորաբար վերջույթը) մեկ ժամից ավել մնում է ծանր առարկայի տակ: Երկարատև ճզմման և տվյալ հատվածի արյունամատակարարման դադարեցման պատճառով վնասվում են մկանների բջիջները և նրանցից արտազատվում են քայքայման արգասիքներ (բջիջներում պարունակվող միոգլոբին սպիտակուցը): Վնասված մասի վրայից առարկան հեռացնելուց հետո քայքայման արգասիքները անցնում են արյան մեջ և տարածվում մարմնով մեկ՝ առաջացնելով երիկամների գործունեության լուրջ խանգարում, որը բերում է մարմնի ընդհանուր թունավորման: Բացի այդ, վնասված հատվածի տարածուն այտուցի և մարմնում հեղուկների վերաբաշխման հետևանքով նվազում է շրջանառող արյան ծավալը, զարգանում է շոկ: Երկարատև ճզմման համախտանիշի ակնհայտ նշանները ի հայտ են գալիս ճնշող առարկան հանելուց 30-40 րոպե հետո:

Նշանները

- Մաշկի գունատություն, կապտուկներ և ճզմման հետքեր:
- Վերջույթի այտուց:
- Մաշկի վրա հեղուկով լցված բշտեր:
- Փափուկ հյուսվածքների փայտանման պնդացում:
- Վնասվածքից ցած ընկած հատվածի հյուսվածքների զգայունության կորուստ:
- Վնասված վերջույթի վրա անոթազարկի բացակայություն:
- Մեզի գույնի մգացում և քանակի զգալի նվազեցում:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Ամեն դեպքում սկսեք ցուցաբերել առաջին օգնություն մինչև տուժածին ճնշող առարկայի տակից ազատելը:

- Ապահովեք տուժածի շնչուղիների անցանելիությունը, քանի որ փլատակներում հողն ու փոշին կարող են լցվել տուժածի բերանը:
- Տուժածին առարկայի տակից ազատելուց առաջ, վնասված հատվածից վերև տեղադրեք լարան կամ ճնշող վիրակապ: Այս դեպքում, որպես բացառություն, լարանը տեղադրելուց հետո չի կարելի թուլացնել:
- Եթե կա բաց վնասվածք, ապա վերքի վրա տեղադրեք ստերիլ անձեռոցիկ և վիրակապեք այն:
- Անշարժացրեք վնասված վերջույթը:
- Տեղադրեք սառը թրջոցներ կամ սառցապարկեր վերջույթի շուրջը:
- Տվեք տուժածին մեծ քանակով հիմնային հանքային ջրեր (Ջերմուկ, Արզնի):
- Անհապաղ ահազանգեք շտապ օգնություն կամ տեղափոխեք տուժածին հիվանդանոց: Ցանկալի է տեղափոխել տուժածին խոշոր բժշկական կենտրոն, որը կունենա «արհեստական» երիկամե կոշվող սարքը:
- Վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները և ցուցաբերեք համապատասխան առաջին օգնություն:

ԱՅՐՎԱԾՔՆԵՐ

Այրվածքը բարձր ջերմաստիճանի, որոշ քիմիական նյութերի, էլեկտրականության կամ ճառագայթման հետևանքով մաշկի և մարմնի այլ հյուսվածքների վնասումն է: Հետևաբար այրվածքները կարելի է դասակարգել ըստ այրվածքը առաջացնող գործոնի՝ ջերմային, քիմիական, էլեկտրական, ճառագայթային:

Ջերմային այրվածքները առաջանում են բարձր ջերմաստիճանի՝ հյուսվածքների վրա տեղային ազդեցությունից (տաք հեղուկներ կամ առարկաներ, տարբեր նյութերի գոլորշիներ կամ բոց):

Քիմիական այրվածքները սովորաբար առաջանում են ուժեղ թթուներից կամ հիմքերից: Այս նյութերը կարող են արագ քայքայել մաշկը: Քիմիական այրվածքները կարող են առաջանալ քիմիական նյութի հետ շփումից անմիջապես հետո կամ որոշ ժամանակ անց:

Էլեկտրական այրվածքները առաջանում են, երբ էլեկտրական հոսանքը անցնում է տուժածի մարմնով՝ վնասելով մաշկը, փափուկ հյուսվածքները և ներքին օրգանները:

Ճառագայթային այրվածքները ավելի հաճախ առաջանում են արևի ճառագայթներից և նման են ջերմային այրվածքներին: Սովորաբար նրանք մակերեսային են, տարածուն և ցավոտ:


Մակերեսային այրվածքը մաշկի վերին շերտը ընդգրկող այրվածքն է: Վնասված մասի մաշկը կարմրած է և չոր: Որպես կանոն, այրվածքի շրջանը լինում է

ցավոտ և այտուցված: Այս այրվածքների ապաքինումից հետո սպիեր չեն առաջանում:

Մասամբ թափանցող այրվածքը մաշկի երկու շերտերը ընդգրկող այրվածքն է: Այս վնասվածքի դեպքում մաշկը կարմրում է, նրա վրա առաջանում են հեղուկով լցված բշտեր: Բշտերը կարող են բացվել: Այս դեպքում տեղի է ունենում հեղուկի արտահոսք, որի հետևանքով մաշկը դառնում է խոնավ: Վնասված մասը խիստ ցավոտ է և այտուցված:

Խորը թափանցող այրվածքը մաշկի և խորանիստ հյուսվածքները վնասող այրվածքն է: Նման այրվածքի մակերեսը շագանակագույն է կամ գորշ, իսկ ստորև գտնվող հյուսվածքները՝ երբեմն սպիտակավուն: Այս այրվածքները լինում են սաստիկ ցավոտ, իսկ եթե այրվածքը վնասել է մաշկի նյարդային վերջավորությունները, ապա կարող է լինել անցավ:

Մակերեսը: Շատ կարևոր է ճիշտ գնահատել այրվածքի մակերեսը, քանի որ ինչքան մեծ է այն, այնքան ավելի մեծ է շոկի զարգացման վտանգը: Այրվածքի մակերեսը կարելի է որոշել, գիտակցելով, որ ձեռքի ավեր կազմում է մարմնի ընդհանուր մակերեսի 1%-ը: Կարելի է կիրառել նաև «ինների կանոնը, համաձայն որի, չափահաս մարդու և 14 տարեկանից մեծ երեխաների գլխի և պարանոցի մակերեսը կազմում է մարմնի ընդհանուր մակերեսի 9%, յուրաքանչյուր ձեռքը՝ 9%, յուրաքանչյուր ոտքը՝ 18%, իրանի առջևի կամ հետևի մասը՝ 18% և շեքի շրջանը՝ 1%: 14 տարեկանից փոքր երեխաների մետ «ինների կանոնը» չի կիրառվում, քանի որ նրանց մարմնի համաչափություններն այլ են: Տարիքի հետ երեխայի մարմնի մասերի մակերեսների այս հարաբերությունները փոխվում են: Եթե այրվածքը վնասել է մարմնի մակերեսը 1%-ից ավելին, ապա տուժածը պետք է դիմի բժշկի: Եթե այրվածքի հետևանքով վնասվում է չափահաս մարդու մարմնի մակերեսի 10%-ից ավելին, իսկ փոքր երեխաների և տարեց մարդկանց մոտ՝ 5-7%-ից ավելին, ապա այդ այրվածքը վտանգավոր է կյանքի համար:



Այրվածքներ ստացած տուժածին օգնություն ցուցաբերելիս կարևոր է ապահովել անվտանգությունը, քանի որ այրվածք առաջացնող գործոնը կարող է վնասել ձեզ և շրջապատի մարդկանց:

1. Դադարեցրեք այրվածք առաջացնող գործոնի ազդեցությունը:

Ջերմային այրվածք - տաք հեղուկով ներծծված կամ բոցավառվող հագուստը երկարատև է ներգործում այրված մասի վրա: Որոշ սինթետիկ գործվածքներ ջերմությունից հալվում են և կպչում մաշկին՝ դանդաղեցնելով սառեցումը: Նման այրվածքները, սկզբում լինելով թեթև, որոշ ժամանակ անց կարող են ծանրանալ:

Այդ պատճառով, առաջին հերթին դադարեցրեք ջերմության ազդեցությունը: Արձակեք և այրվածքի մակերեսից արագ հեռացրեք հագուստը: Մի պոկեք մաշկին կպած հագուստը, որպեսզի մաշկը լրացուցիչ չվնասեք, այլ մկրատով զգուշությամբ կտրեք և հեռացրեք հագուստի ազատ մասերը: Հնարավորին չափ արագ հեռացրեք հագուստի ազատ մասերը: Հնարավորին չափ արագ հեռացրեք մատանիները, ժամացույցը և բոլոր ճնշող իրերը:

Եթե բռնկվում է հագուստը, հետևեք պարզ կանոնին՝ «Կանգնել, ընկնել և գլորվել»: Կանգնեք, դադարեցրեք ցանկացած գործողություն, ընկեք գետնին և գլորվեք, մինչև որ հագուստը դադարի վառվել: Եթե տուժածը խուճապի է մատնվել, ապա դուք ինքներդ կարող եք հանգցնել կրակը՝ զցելով նրան գետնին և ծածկելով խիտ գործվածքով (ծածկոց, վերարկու և այլն):

Քիմիական այրվածք - քիմիական նյութի ազդեցությունը տևում է այնքան ժամանակ, քանի դեռ այն գտնվում է մաշկի վրա: Ուստի պետք է շտապ հեռացնել այն մաշկի վրայից՝ լվանալով հոսող ջրի տակ: Որոշ նյութեր ջրի հետ փոխազդելով՝ ջերմություն են արտադրում, այդ պատճառով, մինչև ջրով լվանալը, աշխատեք հնարավորին չափ արագ հեռացնել քիմիական նյութը չոր գործվածքով կամ փափուկ խոզանակով: Զգույշ եղեք, քանի որ քիմիական նյութը կարող է դիպչել ձեր մաշկին:

Եթե քիմիական նյութը վնասել է աչքը, ապա առնվազն 15 րոպե լվացեք այն հոսող ջրի տակ: Վնասված աչքը պահեք առողջ աչքի մակարդակից ցածր՝ աղտոտումից պաշտպանելով առողջ աչքը: Աշխատեք, որ ջուրը մուտք գործի կոպերի տակ: Մի տրորեք աչքը:

Էլեկտրական այրվածք - անջատեք էլեկտրական հոսանքի աղբյուրը: Մի դիպեք էլեկտրահարված տուժածին, մինչև էլեկտրականությունը չանջատվի: Առաջացած վերքը ծածկեք ստերիլ վիրակապով և սառեցրեք այն առանց թրջելու:

Ճառագայթային այրվածք - հնարավորին չափ արագ դադարեցրեք ճառագայթումը: Արևային այրվածքների դեպքում տեղափոխեք տուժածին սովորաբար տեղ կամ ծածկեք մարմինը գործվածքով (հագուստ, սրբիչ և այլն):

2. Մառեցրեք այրված մակերեսը

Նույնիսկ այրվածք առաջացնող գործոնի հեռացման դեպքում փափուկ հյուսվածքները շարունակում են ենթարկվել ջերմային վնասման՝ առաջացնելով լրացուցիչ վնասվածքներ: Հետևաբար անհրաժեշտ է սառեցնել այրված մասերը: Դրա համար կարելի է օգտագործել ձեռքի տակ եղած ցանկացած հարմար միջոց՝ դույլ, ցնցուղ: Պետք չէ օգտագործել սառույց կամ սառցաջուր: Դեմքին կամ մարմնի այն մասերին, որոնք հնարավոր չէ սառեցնել հոսող ջրով, տեղադրեք սառը, թաց սրբիչ կամ սավան: Եթե թրջոցը տաքանում է մարմնի ջերմաստիճանից, ապա ժամանակ առ ժամանակ թրջեք կամ փոխեք թրջոցները:

Այրվածքի մակերեսը պետք է սառեցնել առնվազն 15-20 րոպե: Եթե այրված մասը ջրից հանելիս տուժածը շարունակում է ցավ զգալ, կամ այրված մակերեսը դեռ տաք է, ապա շարունակեք սառեցումը: Եթե այրվածքը տարածուն է, պետք չէ երկար ժամանակ պահել այն ջրի տակ՝ մարմնի գերսառեցումից խուսափելու համար:

Չի՛ կարելի սառեցնել խորը թափանցող և էլեկտրական այրվածքները:

3. Նվազեցրեք վարակի ներթափանցումը:

Վարակի ներթափանցումը նվազեցնելու նպատակով ծածկեք այրված մակերեսը ստերիլ անձեռոցիկով կամ մաքուր գործվածքով և թույլ վիրակապեք: Եթե այրվածքը ընդգրկում է մեծ մակերես (մարմնի 10%-ից ավելին), ապա ծածկեք այն մաքուր չոր սավանով կամ մազախավ չունեցող այլ գործվածքով:

Մի՛ բացեք և մի՛ վնասեք բշտերը, հակառակ դեպքում կտրուկ կմեծանա վարակի ներթափանցման վտանգը: Այրվածքը մշակելու ժամանակ մի՞ դիպչեք նրան:

Թեթև, մակերեսային և ոչ տարածուն այրվածքները, որոնք չեն պահանջում բժշկական միջամտություն, մշակվում են վերքերի նման: Լվացեք այրված մակերեսը հոսող ջրի տակ և այն պահեք մաքուր: Այս դեպքում կարելի է օգտագործել հատուկ հակաայրվածքային քսուքներ:

4. Ձեռնարկեք շոկի զարգացումը կանխարգելող քայլեր:

Ցավը և ջրազրկումը, խորը թափանցող կամ նույնիսկ տարածուն մակերեսային այրվածքների դեպքում, կարող են հանգեցնել շոկի զարգացման:

Երբ տուժածը գիտակից է, տվեք նրան հեղուկներ՝ քաղցր թեյ կամ հիմնային հանքային ջրեր (Ջերմուկ, Արզնի): Պառկեցրեք տուժածին՝ հնարավորության դեպքում բարձրացնելով այրված մասը սրտի մակարդակից վեր: Եթե տուժածի շնչառությունը դժվարացած է, ապա օգնեք նրան ընդունել կիսանստած դիրք: Օգնեք պահպանել մարմնի ջերմությունը՝ ծածկելով նրան սավանով կամ որևէ թեթև ծածկոցով:

Եթե տուժածին հնարավոր չէ արագ տեղափոխել հիվանդանոց, ապա պատրաստեք հետևյալ լուծույթը՝ 3-4 թեյի գդալ շաքարը և կես թեյի գդալ աղը լուծեք մեկ լիտր (4-5 բաժակ) ջրում: Ժամը մեկ տվեք տուժածին առնվազն երկու բաժակ այդ լուծույթից: Չի թույլատրվում տալ տուժածին կես լիտրից ավել սովորական ջուր:

5. Անհրաժեշտության դեպքում ահազանգեք շտապ օգնություն:

ԻՆՉ ՉԻ ԿԱՐԵԼԻ ԱՆԵԼ

- Մի՛ պոկեք մարմնին կպած հագուստը, որպեսզի մաշկը լրացուցիչ չվնասվի, այլ մկրատով զգուշությամբ կտրեք և հեռացրեք հագուստի ազատ մասերը:
- Մի՛ օգտագործեք կարագ, յուղ կամ այլ նման միջոցներ:
- Մի՛ բացեք կամ վնասեք բշտերը:
- Մի՛ դիպեք այրված մակերեսին:
- Մի՛ շնչեք այրվածքի վրա:
- Մի՛ սառեցրեք ջրով խորը թափանցող կամ էլեկտրական այրվածքները:
- Մի՛ դիպեք էլեկտրահարված տուժածին հոսանքը անջատելուց առաջ:

ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Թունավորումները հիվանդագին վիճակներ են, որոնք զարգանում են մարդու մարմին թույների ներթափանցման հետևանքով: Որպես թույն կարող են հանդես գալ որոշ քիմիական միացություններ, որոնք օգտագործվում են արդյունաբերության մեջ և կենցաղում, կենսաբանական ծագում ունեցող որոշ նյութեր (որոշ մանրէների, օձերի, կարիճների և միջատների թույներ), ինչպես նաև դեղանյութեր և այլն: Թույները կարող են լինել պինդ նյութեր, հեղուկներ կամ գազեր: Որոշ դեպքերում թունավորումները զարգանում են շատ արագ և պահանջում են անհապաղ առաջին օգնություն:

Թույները մարդու մարմին ներթափանցում են 4 ուղիներով՝ կլման, ներշնչման, ներծծման ու ներարկման միջոցներով:

Թունավորման ծանրությունը կախված է մի շարք գործոններից՝

- թույնի տեսակից, թույնի քանակից,
- թույնի՝ մարմին ներթափանցման ուղուց,
- թույնի՝ մարմին ներթափանցման պահից անցած ժամանակից
- տուժածի տարիքից, մարմնի զանգվածից, առողջական վիճակից:

Շատ կարևոր է ժամանակին ճանաչել թունավորումները: Դեպքի վայրի գնումը, պատահարի վերաբերյալ տուժածի կամ ներկաների տված տեղեկությունները և տուժածի գնումը կօգնեն ձեզ ճանաչել թունավորումները: Ուշադիր զննեք շրջապատը: Տարօրինակ հոտերը, վառվող կրակը, տուժածի կողքին ընկած բաց և դատարկ դեղատուփերը, ներարկիչները, ասեղները և այլն կարող են շատ բան հուշել: Թունավորման նվազագույն կասկածի դեպքում անմիջապես ահազանգեք շտապ օգնություն:

Նշանները

Թունավորումների դեպքում կարող են ի հայտ գալ հետևյալ ընդհանուր նշանները՝

- հիվանդագին տեսք,
- սառը քրտինք,

- մաշկի գույնի փոփոխություն,
- սրտխառնոց, փսխում,
- լուծ,
- որովայնի և կրծքավանդակի ցավեր,
- շնչառության դժվարացում,
- անոթազարկի փոփոխություն,
- գլխացավ, գլխապտույտ,
- գիտակցության խանգարումներ,
- ցնցումներ:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Եթե ենթադրում եք, որ տուժածը թունավորված է, փորձեք գտնել հետևյալ հարցերի պատասխանները՝

- Ի՞նչ թույն է ներթափանցել մարմին:
- Թույնի ի՞նչ քանակություն է ներթափանցել:
- Ինչպե՞ս է թույնը ներթափանցել մարմին:
- Ե՞րբ է տեղի ունեցել թունավորումը:
- Ինչպե՞ս էր տուժածի առողջական վիճակը մինչև թունավորումը (հիվանդություններ, հղիություն և այլն):

Այս հարցերի պատասխանները կօգնեն ձեզ կողմնորոշվել և ճիշտ առաջին օգնություն ցուցաբերել տուժածին:

Թունավորման դեպքում պետք է հետևել առաջին օգնության ցուցաբերման հետևյալ հիմնական քայլերին.

- Ջննեք շրջապատը և համոզվեք, որ դեպքի վայրը անվտանգ է: Աշխատեք հասկանալ, թե ինչ է պատահել: Հավաքեք բաց դեղատուփերը, արկղերը, սրվակները և այլն:
- Անհրաժեշտության դեպքում տուժածին տեղափոխեք թունավոր միջավայրից:
- Հնարավորին չափ նվազեցրեք թույնի ազդեցությունը:
- Կատարեք տուժածի գննում և ցուցաբերեք համապատասխան առաջին օգնություն:
- Ահագանգեք շտապ օգնություն: Շտապ օգնության հերթապահին հայտնեք դեղատուփերի կամ սրվակների վրա գրված անվանումները և բոլոր այն տեղեկությունները, որոնք գիտեք պատահարի մասին:
- Մինչև շտապ օգնության ժամանումը վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները և ցուցաբերեք համապատասխան առաջին օգնություն:
- Եթե տուժածը փսխում է, ապա պահեք փսխուկի մի մասը և հանձնեք այն շտապ օգնության անձնակազմին՝ հետագայում հիվանդանոցում հետազոտման և թույնի տեսակի որոշման համար:

Տարբեր ենթախմբերի պատկանող թույներով թունավորումների ժամանակ առաջին օգնության ցուցաբերման այս հիմնական քայլերին ավելանում են մի շարք այլ գործողություններ:

ԿԼՎՈՂ ԹՈՒՅՆԵՐ

Կլվող թույները լինում են քայքայիչ և ոչ քայքայիչ: Ոչ քայքայիչ նյութերով թունավորումների խմբում առանձնացնում են նաև սննդային թունավորումները:

Քայքայիչ թույներ են ուժեղ թթուներն ու հիմքերը, որոնք վնասում և քայքայում են հյուսվածքները: Նման դեպքերում տուժածի շրթունքների շրջանում և բերանի խոռոչում կարող էք նկատել այրվածքներ: Քայքայիչ թույնով թունավորման դեպքում կարելի է նոսրացնել քայքայիչ նյութը՝ տուժածին ջուր խմեցնելով: Քայքայիչ թույնի նոսրացումը նվազեցնում է հյուսվածքների քայքայման հնարավորությունը: Փսխումը տվյալ դեպքում ցանկալի չէ, որովհետև քայքայիչ թույնը փսխման ժամանակ կրկին վնասում է կերակրափողի, ըմպանի և բերանի խոռոչի հյուսվածքները: Այդ պատճառով արգելվում է արհեստական փսխում առաջացնել: Հիշե՛ք, քայքայիչ թույները վնասում են հյուսվածքները ինչպես կլման, այնպես էլ փսխման ժամանակ:

Ոչ քայքայիչ նյութեր այս տեսակի թունավորումներից ավելի հաճախ հանդիպում են սննդամթերքով, ակոհոլով և դեղամիջոցներով թունավորումներ: Ոչ քայքայիչ թույնի կլման դեպքում առաջին օգնության արդյունավետ քայլը տուժածի մոտ արհեստական փսխում առաջանալն է:

Արհեստական փսխում առաջացնելու համար տուժածին հարմար նստեցրեք, կողքին ունեցեք որևէ թաս, որի մեջ տուժածը կարող է փսխել: Տուժածին խմեցրեք 2-3 լիտր գոլ ջուր (38-400 C): Եթե հնարավոր է ջրի յուրաքանչյուր մեկ լիտրի մեջ ավելացրեք 1 գդալ կերակրի սոդա: Ջուրը խմելուց հետո տուժածի մոտ առաջացրեք փսխում՝ մատով, փայտիկով կամ գդալի պոչով սեղմելով (գրգռելով) լեզվարմատը կամ ըմպանի հետին պատը: Տուժածը կարող է փսխել նաև ինքնաբերաբար՝ մեծ քանակով գոլ ջուր ընդունելուց: Փսխումից հետո տուժածը պետք է ողողի բերանը: Կրկնեք արհեստական փսխումը 4-5 անգամ: Փսխելիս տուժածը պետք է լինի հարմար նստած մի փոքր առաջ թեքված կամ կողքի վրա պառկած՝ գլուխը մի փոքր առաջ թեքած: Ցանկալի է, որ փսխման ընթացքում դուք պահեք տուժածի գլուխը, ձեռքով բռնելով նրա ճակատը:

Արհեստական փսխում չի կարելի առաջացնել, երբ՝

- Տուժածը անգիտակից վիճակում է,
- Թույնը նավթային հիմք ունի (կերոսին, բենզին),
- Թույնը քայքայիչ նյութ է (թթու կամ հիմք),
- Տուժածը հղի կին է,
- Տուժածը սրտային հիվանդ է,
- Տուժածի մոտ լինում են ցնցումներ:

Ցանկալի է փսխուքը հավաքել և հանձնել ժամանող շտապ օգնության անձնակազմին՝ թույնի տեսակը որոշելու համար: Փսխուկը հավաքելիս զգուշացեք դրան ձեռքերով անմիջական դիպչելուց, հնարավորության դեպքում աշխատեք ձեռնոցներով: Տուժածին հիվանդանոց տեղափոխելիս փսխուկը և թունավորման

պատճառ դարձած նյութը օրինակ՝ պահածոն, փակած մաքուր ամանով ուղարկեք հիվանդանոց:

ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Ալկոհոլը լայն տարածում գտած չարաշահվող նյութ է մեծ քանակությամբ ընդունած ալկոհոլը թունավոր է: Այն շատ վտանգավոր է և կարող է նույնիսկ մահացու լինել նույնիսկ երեխաների համար:

Նշանները

- Բնորոշ հոտ:
- Տեսողական խանգարումներ:
- Քնկոտություն:
- Շփոթված, անկապ խոսք:
- Գիտակցության տարբեր աստիճանի խանգարումներ:
- Դանդաղ, անկանոն շնչառություն և անոթազարկ:
- Անկասառավարելի շարժումներ:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

- Եթե տուժածը գիտակից վիճակում է, հնարավորության դեպքում տուժածի մոտ արհեստական փսխում առաջացրեք:
- Տվեք տուժածին խմելու մեծ քանակությամբ հեղուկներ (ջուր, թեյ, սուրճ, հյութեր և այլն):
- Եթե համոզված եք, որ տուժածը խմել է մեթիլ սպիրտ, ապա անմիջապես խմեցրեք նրան 100 գրամ օղի և, մինչև շտապ օգնության ժամանումը, ամեն 2 ժամը մեկ խմեցրեք 50 գրամ օղի:
- Ահազանգեք շտապ օգնություն:
- Վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները և ցուցաբերեք համապատասխան օգնություն:

ՄՆՆԴԱՅԻՆ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Որոշ թույներ մարդու մարմին ներթափանցում են սննդի հետ: Սննդային թունավորումներն իրենց հերթին բաժանվում են երկու տեսակի՝ մանրէային և քիմիական թունավորումներ:

ՄԱՆԴԱՅԻՆ, ՄԱՆԸՔԱՅԻՆ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Որոշ մանրէներ (ստաֆիլակոկ, սալմոնելա և այլն) իրենց կենսագործության ընթացքում արտադրում են թույներ (տոքսիններ) որոնք կարող են սննդամթերքի հետ անցնել մարտողական համակարգ և առաջացնել սննդային թունավորումներ: Մննդային թունավորումները հաճախ ուղեկցվում են ջրազրկման երևույթներով: Դրանք հատկապես վտանգավոր են երեխաների և տարեց մարդկանց համար:

Նշանները

- Սրտխառնոց, փսխում:
- Լուծ:
- Ընդհանուր թուլություն:
- Գլխացավ, գլխապտույտ:
- Որովայնային ցավեր:
- Մարմնի ջերմաստիճանի բարձրացում:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

- Տուժածի մոտ արհեստական փսխում առաջացրեք:
- Ձեռնարկեք ջրազրկումը կանխարգելող քայլեր:
- Ահագանգեք շտապ օգնություն:
- Վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները և ցուցաբերեք համապատասխան օգնություն:

ԲՈՏՈՒԼԻՉՄ

Բոտուլիզմը սննդային թունավորում է, որի դեպքում մահացությունը շատ բարձր է: Բոտուլիզմի դեպքեր հաճախ են պատահում այն վայրերում, որտեղ օգտագործում են տնային պայմաններում պատրաստված պահածոներ: Երբեմն բոտուլիզմով թունավորման դեպքեր լինում են նաև ապխտած մսից և ձկնեղենից:

Նշանները

Բոտուլիզմի նշանները սովորաբար ի հայտ են գալիս բոտուլոտոքսին պարունակող սնունդ ուտելուց 15 րոպեից մինչև 2 ժամվա ընթացքում, սակայն կարող են և արտահայտվել ավելի ուշ: Բոտուլոտոքսինը կլվելով՝ մարտողական համակարգից անցնում է արյան մեջ, խաթարվում է նյարդային համակարգի գործունեությունը և առաջացնում մկանների թուլացում (կրծքավանդակի մկաններ, ստոծանում, կոկորդի, ըմպանի, աղիների, հարթ մկաններ և այլն): Որոշ դեպքերում տուժածը կարող է ունենալ սրտխառնոց, եզակի փսխում, որովայնի շրջանում ցավեր կամ ծանրության զգացում: Հիմնական նշաններն ի հայտ են գալիս ստորև բերված հերթականությամբ.

- Թուլություն, ուժեղ գլխացավ, գլխապտույտ, բերանի չորացում:

- Տեսողության մշուշում և երկատում, կոպերի իջեցում, շլություն:
- Խոսքի խանգարում, ձայնի խռպոտություն:
- Կլման դժվարացում:
- Շնչառության դժվարացում (ներշնչումը կատարվում է մեծ դժվարությամբ):
- Որովայնի փքվածությունը:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Նշանների ի հայտ գալուն պես անմիջապես ահազանգեք և, մինչև շտապ օգնության ժամանելը, առաջացրեք արհեստական փսխում: Հնարավորության դեպքում շտապ տեղափոխեք տուժածին հիվանդանոց՝ սուր թունավորումների կամ վերակենդանացման բաժանմունք: Տուժածի հետ հիվանդանոց տեղափոխվեք փսխուքը, կասկածելի կերակրի նմուշները: Դա անհրաժեշտ է ախտորոշման և ճիշտ բուժման համար, քանի որ գոյություն ունեն բոտուլիզմի հարուցչի տարբեր ենթատեսակներ, համապատասխանաբար՝ նաև տարբեր հակաթույններ:

Հիշեք բոտուլիզմի դեպքում մահացությունը շատ բարձր է և տուժածին անպայման անհրաժեշտ է տեղափոխել հիվանդանոց: Երբեք մի փորձեք ինքնուրույն բուժել նման թունավորումը: Բոտուլիզմով թունավորման նույնիսկ չնչին կասկածի դեպքում ահազանգեք:

Նշանները

- Հանկարծակի ուժեղ ցավեր որովայնի շրջանում:
- Ճսխում:
- Երկարատև լուծ:
- Ոտքերի մկանների ջղաձգություններ:
- Ընդհանուր թուլություն:
- Ջերմաստիճանի անկում:
- Արյունազեղումներ:
- Գրգռվածություն:
- Զառանցանք:
- Անգիտակից վիճակ:

Որոշ սնկերով թունավորումների ժամանակ այս նշաններին գումարվում են նաև առատ թքարտադրությունն ու արցունքահոսությունը, գլխապտույտը, շարժողական գրգռվածությունը, խառնաշփոթությունը, պատրանքները:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

- Ահազանգեք շտապ օգնություն:
- Առաջացրեք արհեստական փսխում:
- Ձեռնարկեք լուծի և փսխման հետևանքով առաջացած ջրազրկումը կանխարգելող քայլեր:

ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Մենդային թունավորումները կանխելու համար՝

- Պահպանեք խոհանոցի կարգուկանոնը, մաքրությունը և հիգիենան:
- Մի՛ օգտագործեք փքված կապարիչով պահածոներ և ցանկացած կասկածելի տեսք, հոտ կամ համ ունեցող սննդամթերք:
- Պահպանեք կերակրի պատրաստման և պահպանման կանոնները:
- Օգտագործեք գործարանային արտադրության պահածոներ:
- Գնեք միայն որակյալ սննդամթերք, օգտվեք արտոնագրված խանութներից և սննդի կետերից:
- Խուսափեք անձանոթ սնկեր օգտագործելուց:

ՆԵՐՇՆՉՎՈՂ ԹՈՒՅՆԵՐ

Ներշնչվող թույները մարդու մարմնի ներթափանցում են շնչառական համակարգի միջոցով: Շնչառական թունավորումների հանգեցնող թունավոր գազեր կարող են լինել ինչպես հոտով, այնպես էլ անհոտ: Ներշնչվող թույներ են մեթանը (օգտագործվում է լողավազանների ջուրը ախտահանելու նպատակով), որոշ թմրադեղերի գոլորշիները (օրինակ՝ կոկաին) և այլն:

Նշանները

- Գունատ, կարմրավուն կամ կապտավուն մաշկ, թուլություն:
- Գլխացավ, գլխապտույտ:
- Դժվարացած շնչառություն, շնչահեղձություն:
- Մրտխառնոց, փսխում:
- Գիտակցության խանգարումներ:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Թունավոր գազերի առկայության դեպքում մեծ վտանգ է, որ առաջին օգնողը, մտնելով թունավոր միջավայր, ինքը ևս կարող է տուժած դառնալ:

Եթե կարող եք արագ մտնել, բացել դուռն ու պատուհանները, ապա կատարեք մի քանի խորը ներշնչում, շունչը պահած մտեք դեպքի վայր, օդափոխեք տարածքը և շտապ տեղափոխեք տուժածին վտանգավոր գոտուց: Եթե դեպքի վայրում ծուխ կա, ապա աշխատեք գտնվել հատակին մոտ: Խստիվ արգելվում է թունավոր գազերի առկայության դեպքում ծխել կամ կրակ վառել:

Ձեր տուժածի և շրջապատի անվտանգությունը ապահովելուց հետո կատարեք տուժածի գնում և ցուցաբերեք համապատասխան օգնություն: Ահազանգեք շտապ օգնություն և մինչև մասնագետների ժամանումը մնացեք տուժածի մոտ, վերահսկեք տուժածի վիճակը:

Եթե միջավայրը վտանգավոր է, ապա անհապաղ ահազանգեք մասնագիտական ծառայություններ և անպայման նշեք բոլոր անհրաժեշտ տեղեկությունները պատահարի մասին:

ՆԵՐԾԾՎՈՂ ԹՈՒՅՆԵՐ

Ներծծվող թույները մարդու մարմին ներթափանցում են մաշկի միջոցով: Այդ թունավոր նյութերը կարող են լինել ն՛ պինդ, ն՛ հեղուկ վիճակում: Ներծծվող թույներն են, օրինակ՝ որոշ բույսերում պարունակվող թույները, ինչպես նաև գյուղատնտեսության մեջ օգտագործվող պարարտանյութերը և թունավոր քիմիական նյութերը: Առավել վտանգավոր է, եթե վնասվածքը տեղակայված է դեմքի, պարանոցի կամ սեռական օրգանների շրջանում:

Նշանները

Թույնի հետ շփման հետևանքով կարող է նկատվել մաշկի գույնի փոփոխություն, ցանավորում, այտուց: Տուժածը կարող է զգալ ցավ, քոր և այրոց այդ հատվածում: Որոշ ժամանակ անց կարող են ի հայտ գալ թունավորման ընդհանուր նշանները:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Օգնություն ցուցաբերելիս օգտագործեք ռետինե ձեռնոցներ կամ այլ պաշտպանիչ միջոցներ, օրինակ՝ պլաստիկ տոպրակներ: Խուսափեք թունավոր նյութի հետ անմիջական շփումից:

- Վնասված հատվածից զգուշորեն հեռացրեք հագուստը՝ առանց դիպչելու աղտոտված հագուստին և տարածելու նյութը: Հնարավորության դեպքում կտրեք այն մկրատով: Այդ հագուստը դրեք սպահով տեղ և աշխատեք չդիպչել դրան մինչև լվանալը:
- Եթե թույնը փոշու կամ բյուրեղների տեսքով է, ապա հեռացրեք այն մաշկի վրայից խոզանակի կամ չոր գործվածքի օգնությամբ:
- Անմիջապես լվացեք թունավոր նյութի հետ շփված մաշկի հատվածը հոսող ջրի տակ, առնվազն 20 րոպեի ընթացքում (թունավոր նյութը մաշկից հեռացնելու, ցավը և այրոցը նվազեցնելու նպատակով): Վնասված հատվածը լվանալիս ջրի շիթը չպետք է լինի շատ ուժեղ, որպեսզի թունավոր նյութը չցայտի կամ չտարածվի մաշկի վրա: Շարունակեք պահել վնասված հատվածը ջրի տակ՝ մինչև բժշկական օգնության ժամանումը:
- Ահազանգեք շտապ օգնություն:
- Վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները և ցուցաբերեք համապատասխան օգնություն:
- Մի՛ մշակեք վնասված մասը քսուքներով և այլ դեղամիջոցներով: Մի՞ վիրակապեք վնասված հատվածը:

ՆԵՐԱՐԿՎՈՂ ԹՈՒՅՆԵՐ

Ներարկվող թույները այն թույներն են, որոնք մարդու մարմին ներթափանցում են արյան կամ հյուսվածքների մեջ անմիջական ներարկման միջոցով: Դա կարող է տեղի ունենալ օձերի կծելու, կարիճների կամ միջատների խայթելու (մեղու, իշամեղու և այլն) կամ դեղամիջոցների սխալ ներարկման հետևանքով:

Ավելի հաճախ հանդիպում են օձերի կծածների և կարիճների, միջատների խայթոցների դեպքեր:

ՕՁԻ ԿԾԱԾ

Հայաստանում հանդիպում են 21 տեսակի օձեր, որոնցից թունավոր են իժերի ընտանիքին պատկանող 4 տեսակները: Դրանք են՝

- Տափաստանային իժը:
- Դարևակու իժը:
- Փոքրասիական իժը:
- Անդրկովկասյան գյուրզան:

Այդ օձերի թույնը ազդում է հյուսվածքների վրա, քայքայում է նրանց բջիջները, խախտում արյան մակարդեղիությունը և քայքայում արյան կարմիր բջիջները:

Նշանները

Օձի կծելուց հետո մաշկի վրա մնում է վերին ծնոտի ատամներից հետք, որով կարելի է որոշել՝ օձը թունավոր է, թե՛ ոչ: Թունավոր օձի կծած տեղում մարմնի վրա նկատվում են թունավոր ատամներից առաջացած երկու խոր վերքեր և ոչ թունավոր ատամներից մնացած երկու շարք ավելի մանր հետքեր: Ոչ թունավոր օձերի կծած տեղում մարմնի վրա երևում են չորս շարք երկայնական դասավորված կետիկներ: Կծելու ժամանակ թունավոր օձի թույնը ներարկվում է մարդու մարմին: Կծած մասում թունավոր ատամների տեղում առաջանում են երկու փոքրիկ բշտիկներ:

Աստիճանաբար ի հայտ են գալիս հետևյալ նշանները.

- Կծած տեղում ցավ և այրոց:
- Կծած տեղի մաշկի գույնի փոփոխություն, կարմրություն:
- Կծած տեղում այտուց, որը հետզհետե տարածվում է ամբողջ մարմնով:
- Մաստիկ թուլություն:
- Գլխապտույտ:
- Մրտխառնոց:
- Արյունահոսություն բերանից, քթից և հետանցքից, տեսողության խանգարումներ:
- Վերջույթների մկանների թուլություն կամ զգայունության կորուստ:
- Շնչառության խանգարումներ:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Ոչ թունավոր օձերի կծածների դեպքում վերքը մշակեք, ինչպես ցանկացած վերք: Թունավոր օձի կծածի դեպքում շատ կարևոր է ժամանակին ճիշտ առաջին օգնություն ցուցաբերել: Հնարավորության դեպքում հիշեք կծող օձի տեսքը:

- Օձի կծելուց հետո առաջին 5 րոպեի ընթացքում սեղմեք կծած տեղի շուրջը, որպեսզի արյունը դուրս հոսի վերքից (չի կարելի սեղմել վերքի վրա): Այս գործողությունը թույլ է տալիս որոշ չափով հեռացնել թույնը: Սեղմելը դադարեցրեք, երբ վերքից այլևս արյուն դուրս չի գալիս:
- Հանգստացրեք տուժածին, քանի որ նյարդային, գրգռված վիճակը խթանում է սրտանոթային համակարգի աշխատանքը, արագացնում արյան շրջանառությունը՝ նպաստելով թույնի տարածմանը մարմնում՝ զգալիորեն բարդացնելով վիճակը:
- Հանեք բոլոր զարդերը և ճնշող իրերը (մատանի, ժամացույց և այլն):
- Եթե օձը կծել է վերջույթը, ապա անշարժացրեք այն և պահեք սրտի մակարդակից ցածր:
- Մահմանափակեք տուժածի շարժումները (պառկեցրեք կամ նստեցրեք նրան):
- Ահազանգեք կամ կազմակերպեք տուժածի պասիվ (պատզարակով կամ աթոռի վրա նստած) արագ տեղափոխումը մոտակա հիվանդանոց:
- Տուժածին խմեցրեք մեծ քանակությամբ հեղուկ (հյութ, թան, թեյ և այլն): Խստիվ արգելվում է ոգելից խմիչք տալ տուժածին:
- Վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները և ցուցաբերեք համապատասխան առաջին օգնություն:

ԻՆՉ ՉԻ ԿԱՐԵԼԻ ԱՆԵԼ

- Մի՛ օգտագործեք սառը թրջոցներ և սառցապարկ:
- Մի՛ արեք կծածի շրջանում կտրվածքներ:
- Մի՛ արտածծեք թույնը բերանով:
- Մի՛ այրեք կծած տեղը:
- Մի՛ տեղադրեք լարան:
- Մի՛ տվեք տուժածին ոգելիչ խմիչքներ:

ԿԱՐԻՃՆԵՐԻ ԽԱՅԹՈՑՆԵՐ

Հայաստանում հանդիպում ենք երեք տեսակի կարիճներ՝ դեղին, սև և խայտաբղետ: Այս տեսակների կարիճների խայթոցները մահացու չեն մարդու համար: Մահացության դեպքերը հիմնականում կապված են սուր ալերգիկ ռեակցիաների հետ:

Նշանները

Խայթած տեղում մուգ կարմիր կետ, որը մեծանում է, և 2 ժամ հետո նրա տրամագիծը կազմում է 30 մմ:

- Ուժեղ ցավ խայթոցի շրջանում:
- Այտուց խայթոցի շրջանում:
- Գլխացավ, գլխապտույտ:
- Սրտխառնոց, փսխում:
- Ցավ որովայնի շրջանում:
- Մարմնի ջերմաստիճանի բարձրացում:
- Կլման դժվարացում:
- Թքարտադրություն:
- Քրտնարտադրություն:
- Անկանոն անոթագարկ:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

- Լվացեք վերքը և պահեք մարմնի այդ հատվածը սառը ջրի տակ: Այտուցը նվազեցնելու նպատակով դրեք սառցապարկ կամ սառը թրջոց: Մաշկի վնասումը կանխելու նպատակով սառցապարկի և մաշկի միջև տեղադրեք որևէ գործվածք:
- Ահազանգեք շտապ օգնություն: Հնարավոր է, որ տուժածը հատուկ հակաթույնի ներարկման կարիք ունենա:
- Վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները և ցուցաբերեք համապատասխան օգնություն:

ՄԻՋԱՏՆԵՐԻ ԽԱՅԹՈՑՆԵՐ

Մեղունների, իշամեղունների և այլ միջատների խայթոցները բավականին ցավոտ են: Բացի այդ, նրանք կարող են լուրջ վտանգ ներկայացնել ալերգիա ունեցող որոշ անձանց կյանքի համար: Ավելի վտանգավոր են խայթոցները, որոնք տեղակայված են մարդու բերանի խոռոչում կամ նրա շուրջը, որովհետև այդ դեպքում զարգանում է վերին շնչուղիների այտուց և շնչառության խիստ դժվարացում:

Նշանները

- Խայթած տեղի առկայություն, խայթը կամ մաշկի տակ երևացող թունավոր պարկիկը:
- Ցավ խայթոցի շրջանում:
- Այտուց և կարմրություն խայթոցի շրջանում:
- Ալերգիկ ռեակցիաներ, որոնք արտահայտվում են քորով, ցանով, աչքերի կոպերի այտուցով, շնչառության դժվարացումով և գիտակցության տարբեր խանգարումներով:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

- Հեռացրեք միջատին մաշկի մակերեսից:
- Եթե մաշկի տակ երևում է խայթը, զգուշորեն հեռացրեք այն: Բռնեք խայթի ստորին հատվածից, այնպես որ ճնշում չգործադրի խայթի պարկիկին: Խայթի պարկիկի վրա ճնշումը կարող է բերել թունավոր պարկիկի ճզմվելուն և նպաստել թունավորման շարունակմանը:
- Լվացեք խայթոցի շրջանը ջրով և օճառով: Ծածկեք այն մաքուր գործվածքով:
- Եթե տուժածը գերզգայուն է միջատի խայթոցի նկատմամբ, ապա ճնշումով վիրակապեք և հնարավորության դեպքում անշարժացրեք վնասված մասը: Ահազանգեք կամ ինքներդ տեղափոխեք տուժածին բուժհիմնարկ:
- Խայթոցի շրջանում դրեք սառը թրջոց կամ սառցապարկ:
- Վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները և ցուցաբերեք համապատասխան օգնություն:
- Եթե խայթոցը տեղակայված է պարանոցի կամ բերանի շրջանում, ապա տուժածին կում-կում խմեցրեք մեծ քանակությամբ սառը ջուր՝ վերին շնչուղիների այտուցը կանխելու նպատակով: Կազմակերպեք նրա արագ տեղափոխումը մոտակա բուժհիմնարկ:

ՈՍԿՐԱՍԿԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ

Ոսկրամկանային համակարգի վնասվածքներ են՝

- կոտրվածքը,
- կապանների ձգումը և պատռվածքը,
- հոդախախտը,
- մկանների ու ջլերի ձգումը և պատռվածքը:

Հնարավոր է, որ տուժածը միաժամանակ ունենա ոսկրամկանային համակարգի տարբեր տեսակի վնասվածքներ, օրինակ՝ կապանների ձգում և հոդախախտ:

Ոսկրամկանային վնասվածքները կարելի է դասակարգել՝ ելնելով նաև վնասվածքի տեղակայումից (վերջույթների վնասվածքներ, գլխի ողնաշարի վնասվածքներ և այլն):

Նշանները

Բոլոր ոսկրամկանային վնասվածքներն ունեն մի շարք ընդհանուր նշաններ.

- ցավ և այտուց
- վնասված մասի մաշկի գույնի փոփոխություն
- վնասված մասի ձևի և չափերի փոփոխություն
- վնասված մասի գործունեության խանգարում
- վերքից դուրս գցված ոսկրեր,

- վնասված վերջույթում արյան շրջանառության խանգարում և զգայունության կորուստ

Ցանկացած դեպքում, երբ դժվար է որոշել ոսկրամկանային վնասվածքի տեսակը, պետք է այն լուրջ համարել և ցուցաբերել համապատասխան առաջին օգնություն:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Ոսկրամկանային բոլոր վնասվածքների դեպքում ցուցաբերվող առաջին օգնությունը հիմնականում նույնն է:

- Դադարեցրեք արտաքին արյունահոսությունը: Ոսկրամկանային վնասվածքների դեպքում, արյունահոսությունը դադարեցնելիս, վերքի վրա անմիջական ճնշում մի՛Բ գործադրեք: Արյունահոսությունը դադարեցնելու նպատակով ճնշում գործադրեք համապատասխան սեղմման կետին: Վնասվածքը անշարժացնելիս կարող եք ժամանակավոր լարան դնել: Վերքի մեջ մանրէների ներթափանցումը նվազեցնելու համար վերքը զգուշությամբ ծածկեք ստերիլ անձեռոցիկով:
- Օգնեք տուժածին հարմար դիրք ընդունել: Տուժածը վնասված վերջույթը հաճախ պահում է իր համար ամենահարմար դիրքում: Խուսափեք ցանկացած շարժումից, որը նրան ցավ կամ անհարմարություն է պատճառում:
- Անշարժացրեք վնասված մասը: Վնասված մասի անշարժացումը նվազեցնում է ցավը, կանխում հյուսվածքների (հարակից արյունատար անոթներ, նյարդեր, մաշկ և այլն) հետագա վնասումը: Մկանների, ջլերի, կապանների ձգման և պատռվածքների դեպքում, եթե համոզված եք, որ չկան կոտրվածքներ (տուժածը կարողանում է շարժել վնասված մասը), վնասված մասը անշարժացրեք՝ կապելով առաձգական վիրակապով: Վիրակապը դնելուց հետո վնասված մասից ներքև, պարբերաբար ստուգեք արյան շրջանառությունը:
- Մառեցրեք վնասված մասը: Վնասված մասի սառեցումը նպաստում է արյունահոսության, այտուցի և ցավի նվազեցմանը: Սառը թրջոցներ կամ սառցապարկ անհրաժեշտ է տեղադրել ոսկրամկանային բոլոր վնասվածքների ժամանակ, բացառությամբ բաց կոտրվածքի: Տեղադրելով սառը թրջոցները՝ անհրաժեշտ է պարբերաբար փոխել կամ զգուշորեն սառը ջուր լցնել տեղադրված թրջոցի վրա: Եթե օգտագործում եք սառույց կամ սառցապարկ, մաշկի վնասվածքներից խուսափելու համար այն փաթաթեք որևէ խոնավ գործվածքով: Կոտրվածքի դեպքում սառույցը տեղադրեք վնասվածքի շուրջը, տուժածին լրացուցիչ ցավ և վնասվածքներ չպատճառելու համար: Սառույցը դրեք յուրաքանչյուր ժամը մեկ՝ 15 րոպեով՝ 24 ժամվա ընթացքում: Պարբերաբար ստուգեք մաշկի զգայունությունը, ջերմաստիճանը և գույնը:
- Բարձրացրեք վնասված մասը: Վնասված մասի բարձրացումը նպաստում է արյունահոսության և այտուցի նվազեցմանը: Եթե հնարավոր է, բարձրացրեք

վերջույթը սրտի մակարդակից վեր: Կոտրվածքների և հոդախախտների դեպքում վնասված մասը կարելի է բարձրացնել միայն անշարժացումից հետո:

- Ձեռնարկեք շոկի զարգացումը կանխարգելող քայլեր:
- Վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները և ցուցաբերեք համապատասխան առաջին օգնություն:
- Անհրաժեշտության դեպքում ահազանգեք շտապ օգնություն:

ԱՆՇԱՐԺԱՑՈՒՄ

Եթե կասկածում եք, որ տուժածը ոսկրամկանային համակարգի լուրջ վնասվածք ունի, անշարժացրեք վնասված մասը նախքան այլ օգնություն ցուցաբերելը, այսինքն՝ սառեցնելն ու վերջույթին բարձր դիրք տալը: Վնասված մասի անշարժացումը նվազեցնում է ցավը և կանխում վնասվածքի հնարավոր բարդացումը:

Անշարժացումը բեկակալների կամ այլ միջոցների օգնությամբ վնասված մասի շարժումների սահմանափակումն է: Անշարժացման ժամանակ հաշվի առեք հետևյալ հիմնական սկզբունքները՝

- Անշարժացրեք առանց տուժածին լրացուցիչ ցավ և անհարմարություն պատճառելու:
- Անշարժացրեք վնասված մասից վերև և ներքև ընկած հոդերը:
- Անշարժացրեք առանց վնասված մասը շարժելու կամ դիրքը փոխելու:
- Անշարժացումից առաջ և հետո վնասվածքից ներքև ստուգեք արյան շրջանառությունը:

ՎԵՐԻՆ ՎԵՐՉՈՒՅԹԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ

Վերին վերջույթի վնասվածքները հաճախ առաջանում են վայր ընկնելու հետևանքով: Ընկնող մարդն ակամա մեկնում է ձեռքը և, մարմնի ամբողջ ծանրությամբ կտրուկ հենվելով նրա վրա, կարող է վնասել ոսկրերը, կապաբերը, ջլերն ու մկանները:



ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍԱԳՈՏՈՒ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Հիշե՛ք, որ երբեք չի կարելի փորձել ոսկրերն ինքնուրույն տեղը զցել, այդ գործողությունը կրերի միայն վնասվածքի բարդացման, քանի որ պահանջում է հատուկ հմտություն:

Ուսագոտու լուրջ վնասվածքների ժամանակ անշարժացրեք ամբողջ վերջույթը: Անրակի կոտրվածքների դեպքում անշարժացրեք վերջույթը բարձր դիրքով:


- Խնդրեք տուժածին, որ արմունկում ծալված ձեռքը պահի իրանին մոտ՝ նախաբազուկը հորիզոնական դիրքով:
- Եռանկյունաձև վիրակապը անցկացրեք վնասված ձեռքի տակով այնպես, որ նրա մի ծայրը հայտնվի առողջ ուսի վրա, իսկ գագաթը՝ արմունկի մոտ:
- Վիրակապը ծալեք վնասված ձեռքի վրա և մյուս ծայրը անցկացրեք վնասված կողմի ուսի վրայով: Վիրակապի ծայրերը հանգուցեք առողջ կողմի անրակի շրջանում:
- Վիրակապի գագաթը ծալեք և ամրացրեք անգլիական քորոցի օգնությամբ կամ պարզապես հանգույց անելով:
- Ժապավենաձև ծալված մեկ ուրիշ եռանկյունաձև վիրակապով փաթաթեք վնասված ձեռքը (բազկի ստորին մասում) կրծքավանդակի հետ և հանգուցեք ծայրերը:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱԶԿՈՍԿՐԻ ՎՆԱՍՎԱԾՔԻ ԴԵՊՔՈՒՄ

Բազկոսկրի վերին վերջույթի ամենախոշոր ոսկորն է: Բազկոսկրի կոտրվածքի դեպքում մեծ է արյունատար անոթների և նյարդերի վնասման հավանականությունը: Ինչպես ուսահողի վնասվածքների ժամանակ, այս դեպքում ևս անշարժացրեք ամբողջ վերջույթը: Անշարժացման համար կարող եք օգտագործել կոշտ բեկակալ: Բեկակալով բազկոսկրը անշարժացնելուց հետո, եռանկյունաձև կամ փաթույթային վիրակապով անշարժացրեք նաև ամբողջ վերին վերջույթը:




ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՄՆԿԱՅԻՆ ՀՈՂԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ



Արմնկային հոդի վնասվածքները կարող են հանգեցնել վերին վերջույթի գործունեության երկարատև խանգարման: Արմնկային հոդում հնարավոր է կապանների ձգում, հոդախախտ, կոտրվածք կամ այդ բոլորը միասին:


Արմնկի վնասվածքի դեպքում, եթե արմունկը ծալած է, և ուղղելը ցավ է պատճառում տուժածին, անշարժացրեք այն դիրքով, որով հայտնաբերել եք: Բեկակալը տեղադրեք անկյունագծով վերջույթի տակ՝ ամրացնելով այն դաստակի մոտ և բազուկի վրա: Եթե արմունկն ուղիղ է, ապա անշարժացրեք այդ դիրքով:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԲԱԶԿԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ



Նախաբազկի ոսկրերի կոտրվածքները ավելի հաճախ հանդիպում են երեխաների մոտ: Հնարավոր է, որ միաժամանակ երկու ոսկրերն էլ կոտրվեն, բայց պարտադիր չէ, որ կոտրվածքները լինեն նույն շրջանում: Հնարավոր է նաև մեկ ոսկրի մեկուսացված կոտրվածք: Նախաբազկի կոտրվածքների դեպքում լինում են վերջույթի ակնհայտ ձևափոխություններ, այն ստանում է S-ձև տեսք: Քանի որ նախաբազկի վրա զարկերակներն ու նյարդերը անցնում են ոսկրերի միջև, վերջիններիս կոտրվածքները կարող են ուժեղ արյունահոսության կամ շարժունակության անվերադարձ կորստի պատճառ դառնալ:

Նախաբազկի և դաստակի վնասվածքների դեպքում բեկակալը տեղադրելիս, նախաբազկի և ձեռքի մկանները թուլացնելու նպատակով, ինչպես նաև մատները հարմար դիրքում պահելու համար տուժածի ափի մեջ դրեք փաթույթային վիրակապի փաթեթ կամ գործվածքի կտոր: Ամրացրեք բեկակալը և անշարժացրեք ամբողջ վերջույթը եռանկյունաձև վիրակապերով:



Նախադաստակն ու դասակը առօրյա ակտիվ գործունեության պատճառով հաճախ են վնասվում: Սովորաբար դժվար է որոշել վնասվածքի ճիշտ տեղը, ուստի ցուցաբերվող առաջին օգնությունը այդ դեպքում այնպիսին է, ինչպես նախաբազկի վնասվածքների դեպքում:

Նախադաստակի կամ մատների բազմաթիվ փոքր ոսկրերը կարող են կոտրվել: Մատների վնասվածքներից ավելի հաճախ հանդիպում են կապանների, մկանների և ջլերի ձգումը, ինչպես նաև հոդախախտերը:

Նախադաստակի անշարժացնելու համար վիրակապելուց առաջ ավիի մեջ դրեք փաթոյթային վիրակապի փաթեթ կամ գործվածքի կտոր՝ մատները հարմար դիրքում պահելու համար: Մատների ոսկրերի կոտրվածքի կամ հոդախախտի դեպքում կարող եք տեղադրել փոքր բեկակալներ, օրինակ՝ պաղպաղակի փայտիկ, և ամրացնել այն կաշուն ժապավենով: Հոդախախտերի դեպքում մի՛ փորձեք ոսկրերը տեղը զգել: Միշտ տեղադրեք սառը թրջոցներ և բարձրացրեք վերջույթը:

ՄՏՈՐԻՆ ՎԵՐՋՈՒՅԹԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ

Ստորին վերջույթի ոսկրերը խոշոր են: Դրանք կրում են մարմնի ողջ ծանրությունը: Ստորին վերջույթի ոսկրերի կոտրվածքը կարող է առաջանալ մեծ ուժի ազդեցության տակ:

Ստորին վերջույթին արյուն է մատակարարում ազդրային զարկերակը:


ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՋՐՈՍԿՐԵՐԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Ազդրոսկրը մարմնի ամենախոշոր ոսկորն է: Այն կրում է մարմնի ծանրության մեծ մասը և կարևոր դեր ունի քայլելու և վազելու համար: Ազդրի կոտրվածքների հետևանքով ընդհանուր նշանների հետ միասին առաջանում են յուրահատուկ ձևափոխումներ: Կոտրվածքի դեպքում ազդրի մկանները ուժեղ կծկվում են՝ փորձելով անշարժացնել կոտրված ոսկրի ծայրերը: Դրա հետևանքով վնասված վերջույթը նկատելի կարճանում է և պտտվելով՝ շրջվում դեպի դուրս կամ ներս: Ազդրոսկրի կոտրվածքները (թե՛ բաց, թե՛ փակ) կարող են կյանքին սպառնացող արյունահոսության պատճառ հանդիսանալ:


Ազդրոսկրի լուրջ վնասվածքների դեպքում անշարժացրեք վնասված վերջույթը և օգնեք տուժածին հարմար դիրք ընդունել: Ազդրոսկրի կոտրվածքների դեպքում, եթե տուժածի ոտքը գետնի վրա է, ապա մի՛ տեղաշարժեք այն, քանի որ հատակն

ինքնաստինքյան հենարանի դեր է կատարում:

Դուք կարող եք անշարժացնել վնասված վերջույթը առողջի օգնությամբ: Հնարավորության դեպքում ծածկոց կամ որևէ այլ փափուկ ներդիր տեղադրեք տուժածի ոտքերի արանքում: Առողջ ոտքը զգուշությամբ մոտեցրեք վնասված ոտքին, ծնկների և կոճերի տակով անցկացրեք եռանկյունաձև վիրակապեր: Զգուշությամբ սահեցրեք եռանկյունաձև վիրակապերը վնասվածքից վերև և ներքև: Տեղադրեք փափուկ ներդիրներ միջազդրային և միջսրունքային շրջանում՝ կապելիս ոսկրերի տեղաշարժից խոսափելու համար: Առաջին հանգույցը դրեք ծնկի շրջանում, հետո հանգուցեք վիրակապերը վնասվածքից վերև և ներքև:



Ազդրի անշարժացման համար կարող եք օգտագործել նաև կոշտ բեկակալներ, բոլոր դեպքերում ընդգրկելով երեք հոդերը (սրունքաթաթային, ծնկային և կոնքազդրային): Ազդրի կոտրվածքի դեպքում կարող է վնասվել ազդրային զարկերակը: Դա կարող է ուժեղ արյունահոսության և շոկի զարգացման պատճառ դառնալ: Ձեռնարկեք միջոցառումներ շոկի կանխարգելման համար: Հանգստացրեք տուժածին և օգնեք նրան հանգիստ պահել: Տուժածին շոկի դիրքի բերելիս, բարձրացրեք միայն չվնասված ոտքը:



ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԾՆԿԱՀՈՂԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Ծնկահոդը մարմնի ամենաբարդ հոդն է: Այն կազմված է ազդրոսկրի ստորին հատվածից, մեծ ոլոքի վերին հատվածից և ծնկոսկրից: Ծնկոսկրը ազատ տեղաշարժվող ոսկր է, որը գտնվում է հոդի առաջնային մակերեսին:


Ծնկոսկրը հաճախ և հեշտությամբ է վնասվում: Այն կարող է վնասվել ծնկի առջևի մակերեսին մեծ ուժով հասցված հարվածից, օրինակ՝ վթարի ժամանակ ծնկով մեքենայի վահանակին հարվածելիս կամ էլ ծնկի վրա ընկնելիս:

Ծնկահոդի վնասվածքների դեպքում ճնշումով վիրակապեք հոդը՝ դնելով ուրաձև վիրակապ: Ծնկահոդի լուրջ վնասվածքների դեպքում, անհրաժեշտ է հոդն անշարժացնել առանց վերջույթի դիրքը փոխելու: Եթե վնասված ոտքը ծավված է

ծնկահոդում, ապա անշարժացրեք այն ծալած դիրքում: Իսկ եթե ոտքը ուղիղ դիրքում է, ապա անշարժացրեք այնպես, ինչպես ազդրի կոտրվածքի ժամանակ:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՐՈՒՆՔԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Սրունքի վնասվածքների դեպքում կարող է առաջանալ մեկ կամ միաժամանակ երկու ոսկրերի կոտրվածք: Ավելի հաճախ հանդիպում է երկու ոսկրերի կոտրվածք: Քանի որ մեծ ուղքը գտնվում է անմիջապես մաշկի տակ, սրունքի կոտրվածքը հաճախ լինում է բաց: Սրունքի վնասվածքների դեպքում կարող է նկատվել վերջույթի ձևի զգալի փոփոխություն, ցավ և վերջույթը շարժելու անկարողություն:



Սրունքի կոտրվածքների դեպքում անշարժացրեք վերջույթը առողջ վերջույթի օգնությամբ, ինչպես ազդրի կոտրվածքի դեպքում:

Անշարժացման համար կարող եք օգտագործել կոշտ կամ փափուկ բեկակալներ:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՐՈՒՆՔԱԹԱԹԱՅԻՆ ՀՈՂԻ ԵՎ ՈՏՆԱԹԱԹԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ



Սրունքաթաթային հողի և ոտնաթաթի վնասվածքները մեծ մասամբ տեղի են ունենում ոտնաթաթի ոլորման հետևանքով: Դրանք կարող են լինել և՛ թեթև ձգումներ, որոնք ուղեկցվում են թեթևակի այտուցով ու թույլ ցավով, և անցնում են վնասվածքից մի քանի օր հետո, և՛ հողախախտ ու ծանր կոտրվածքներ:

Սրունքաթաթային հողի և ոտնաթաթի կապանների ձգման և պատռվածքների դեպքում դրեք ճնշող ութաձև վիրակապ: Լրացուցիչ ճնշում գործադրելու նպատակով

կարող էք օգտագործել Ս-ձև ներդիր, որը կարելի է պատրաստել ծալված եռանկյունաձև վիրակապից: Տեղադրեք Ս-ձև ներդիրը կոճի շրջանում և շարունակեք վիրակապել:

Կոտրվածքների դեպքում անհրաժեշտ է տեղադրել փափուկ բեկակալներ (օրինակ՝ բարձ կամ ծալած ծածկոց) և ամրացնել դրանք եռանկյունաձև վիրակապերի օգնությամբ:

ԿՐԾՔԱՎԱՆՂԱԿԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ

Կրծքավանդակի վնասվածքները լինում են բաց և փակ: Բաց վնասվածքները (երբ խախտված է մաշկի ամբողջությունը) առաջանում են, երբ որևէ առարկա (դանակ, հրազեն և այլն) ծակում է կրծքավանդակի պատը կամ, կողերը կոտրվելով, ներսից պատռում են մաշկը: Փակ վնասվածքները (երբ մաշկի ամբողջությունը խախտված չէ) առաջանում են, երբ կրծքավանդակին հարվածող առարկան բուխ է:

Նշանները

- դժվարացած շնչառություն
- թույլ, հաճախացած անոթազարկ,
- ցավ վնասվածքի տեղում,
- գունատ, կապտավուն, խոնավ մաշկ,
- կրծքավանդակի ակներև ձևափոխություն, օրինակ՝ կոտրվածքների դեպքում,
- արյունախիտում (հազալիս արնախառը խորիս կամ արյուն է դուրս գալիս):
Հնարավոր է բերանից և քթից փրփրանման ալ կարմիր արյան արտահոսք:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՂԵՐԻ ԿՈՏՐՎԱԾՔՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Կողերի կոտրվածքը առաջանում է կրծքավանդակի վրա ուժեղ ուղղակի ներգործումից: Կողերի կոտրվածքները, բավականին ցավոտ լինելով հանդերձ, հազվադեպ են կյանքի համար վտանգավոր լինում: Այդ վնասվածքները վտանգավոր են, երբ դրանց պատճառով զգալիորեն խանգարված է սուլժածի շնչառությունը, օրինակ՝ երկկողմանի բազմակի կոտրվածքների կամ կոտրվածքներ ունեցող սուլժածը շնչում է մակերեսային, քանի որ նորմալ, խորը շնչառությունը սուր ցավ է պատճառում: Տուլժածը սովորաբար փորձում է թեթևացնել ցավը՝ ձեռքով պահելով կրծքավանդակի վնասված մասը:

- Օգնեք տուլժածին հարմար դիրք ընդունել. Դա վնասված կողմին հենված կիսանստած դիրքն է:
- Եթե տուլժածը անգիտակից վիճակում է, բերեք նրան կողքի ապահովության դիրքի վնասված կողմի վրա:
- Տուլժածի ձեռքը ամրացրեք կրծքավանդակի վնասված կողմին: Դրանով կսահմանափակվի վնասված կողմի շարժունությունը, և ցավը կմեղմանա: Կարող էք օգտագործել նաև բարձ կամ փաթաթած վերմակ:
- Ահագանգեք շտապ օգնություն:

- Վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները և ցուցաբերեք համապատասխան առաջին օգնություն:

ԿՈՆՔԻ ԿՈՏՐՎԱԾՔՆԵՐ

Կոնքի կոտրվածքները դասվում են ոսկրամկանային համակարգի ծանր վնասվածքների շարքին: Դրանք հաճախ ուղեկցվում են շոկով:


Նշանները

- Տուժածի կոնքագոտին ակներև ձևափոխված է:
- Տուժածը կոնքի շրջանում խիստ ցավեր է զգում:
- Կոնքագոտու վնասվածքի շրջանում լինում են տարածուն ենթամաշկային արյունազեղումներ:
- Տուժածի ոտքերը լինում են զատած («գորտի դիրք»), կամ հակառակը՝ ծնկները իրար սեղմած: Վերջին դիրքում տուժածի ոտքերը միմյանցից հեռացնելու ջնշին իսկ փորձը խիստ ցավ է պատճառում:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՆՔԻ ԿՈՏՐՎԱԾՔՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

- Անշարժացրեք կոնքագոտին և սահմանափակեք տուժածի շարժումները:
- Տուժածի ծնկների տակով եռանկյունաձև վիրակապեր կամ որևէ այլ լայն ամուր գործվածքի կտոր անցկացնելով է զգուշությամբ սահեցրեք նրա կոնքի տակ:
- Կոնքը ամրացրեք գոտևորող կապով, դրա համար օգտագործելով եռանկյունաձև վիրակապ կամ որևէ այլ լայն ամուր գործվածքի կտոր:
- Եթե տուժածի ոտքերը զատված են և ծալված կոնքազդրային և ծնկային հոդերում (գորտի դիրք), այդ դիրքը կայուն պահելու համար զգուշորեն, աշխատելով չշարժել տուժածի ոտքերը, ծնկների տակ և դրանց միջև ծալված ծածկոցներ դրեք: Եթե, հակառակը, տուժածի ծնկները սեղմված են իրար, առանց ոտքերի դիրքը փոխելու անշարժացրեք կոնքազդրային և ծնկային հոդերը՝ զգուշորեն ծնկերի տակ ծալված ծածկոց դնելով:
- Կապեք ոտքերը իրար:
- Ոտնաթաթերը հենեք որևէ առարկայի այնպես, որ դրանք սրունքների հետ կազմեն ուղիղ անկյուն:
- Սհազանգեք շտապ օգնություն:
- Ձեռնարկեք շոկի զարգացումը կանխարգելող քայլեր:
- Վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները և ցուցաբերեք համապատասխան առաջին օգնություն:

ԿՐԾՔԱՎԱՆՂԱԿԻ ԲԱՅ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ





Նշանները

Կրծքավանդակի թափանցող վնասվածքների նշաններն են՝

- Շնչելիս ներծծվող օդի բնորոշ ձայն,
- Ցավ կրծքավանդակում,
- Դժվարացած, մակերեսային շնչառու-թյուն,
- Թույլ հաճախացած կամ անկանոն անոթազարկ,
- Գունատ, կապտավուն, խոնավ մաշկ,
- Արյունախիտում:
- Առանց համապատասխան օգնություն ցուցաբերելու տուժածի շնչառությունը գնալով դժվարանում է, և նրա վիճակը ծանրանում է:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԾՔԱՎԱՆՂԱԿԻ ԲԱՅ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ



Տեղադրեք «փականային» վիրակապ, որի շնորհիվ ներշնչման ժամանակ կրծքավանդակի վերքից օդը չի անցնում թոքամզի խոռոչ, իսկ արտաշնչման ժամանակ այն դուրս է գալիս վերքից: Այդպիսի վիրակապ պատրաստելու համար՝

- Վերցրեք օդի համար անթափանց որևէ թաղանթի, օրինակ՝ պոլիէթիլենի թաղանթի, ուղղանկյուն կտոր և դրանով ամբողջովին ծածկեք վերքը այնպես, որ այն գտնվի ուղղանկյան փոքր կողմերից մեկի մոտ:
- Ուղղանկյուն թաղանթի վերքին մոտ գտնվող փոքր կողմը և երկու մեծ կողմերը կաշուն ժապավենով կպցրեք մարմնին:

- Ուղղանկյուն թաղանթի չորրորդ (վերքից հեռու գտնվող) կողմը թողեք ազատ, եզրին որևէ յուղային նյութ, օրինակ՝ վազելինի յուղ քսելով:
- Եթե ձեռքի տակ հարմար միջոցներ չկան, ապա ծածկեք վերքը մի քանի տակ ծալած որևէ գործվածքով կամ ուղղակի ձեռքով:
- Օգնեք տուժածին հարմար դիրք ընդունել: Հիմնականում դա կիսանստած դիրքն է:
- Անշարժացրեք կրծքավանդակի վնասված կողմը:
- Մահմանափակեք տուժածի շարժումները:
- Պահպանեք տուժածի մարմնի նորմալ ջերմաստիճանը:
- Ահագանգեք շտապ օգնություն:
- Վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները և ցուցաբերեք համապատասխան առաջին օգնություն:

ՈՐՈՎԱՅՆԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ


Որովայնի ներքին օրգանները միայն հետևից են պաշտպանված ոսկորներով, հետևաբար խոցելի են: Որովայնի վնասվածքները լինում են բաց կամ փակ:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՎԱՅՆԻ ՓԱԿ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Որովայնի փակ վնասվածքները վտանգավոր են, քանի որ դրանք կարող են ուղեկցվել ներքին արյունահոսությամբ և շոկով:

Նշանները

- սուր ցավ,
- արյունազեղումներ որովայնի պատի վրա,
- ներքին արյունահոսության նշաններ,
- սրտխառնոց,
- փսխում (երբեմն՝ արյունային),
- թուլություն,
- ծարավի զգացում,
- փքված կամ տախտակի ամրության որովայն:



ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

- Օգնեք տուժածին հարմար դիրք ընդունել: Դրա համար պատկեցրեք նրան մեջքի վրա կամ նստեցրեք՝ մեջքը հենելով, ոտքերը ծալեք կոնքազդրային և ծնկային հոդերում: Տուժածի ծնկերի տակ դրեք փաթաթած ծածկոց կամ բարձ: Այս դիրքում թուլանում են որովայնի առաջնային պատի մկանները, իջնում է ներորովայնային ճնշումը, և թեթևանում է ցավը:
- Վնասվածքի վրա սառը թրջոց դրեք:
- Մի՛ տվեք տուժածին ոչինչ՝ ուտելու կամ խմելու: Կարող եք միայն թրջել նրա շրթունքները:
- Մահմանափակեք տուժածի շարժումները:
- Պահպանեք տուժածի մարմնի նորմալ ջերմաստիճանը:
- Ահազանգեք շտապ օգնություն:
- Վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները և ցուցաբերեք համապատասխան առաջին օգնություն:


ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՎԱՅԻՆ ԲԱՅ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Որովայնի բաց վնասվածքները ևս դասվում են կյանքի համար վտանգավոր վնասվածքների շարքին, միշտ ուղեկցվում են արյունահոսությամբ, շոկով և սուր որովայնի պատկերով:

- Հեռացրեք վերքի շրջանի հագուստը: Անհրաժեշտության դեպքում կտրեք այն:
- Որովայնի վերքը ծածկեք ստերիլ չոր վիրակապով: Եթե վիրակապը թրջվում է, վրան դրեք նորը:
- Առանց ճնշում գործադրելու վիրակապը ամրացրեք կաշուն ժապավենով:
- Երբ տուժածը հագում կամ փսխում է, ձեռքով պահեք վերքը:
- Մի՛ տվեք տուժածին ոչինչ՝ ուտելու կամ խմելու: Կարող եք միայն թրջել նրա շրթունքները:
- Պահպանեք տուժածի մարմնի նորմալ ջերմաստիճանը:
- Ահազանգեք շտապ օգնություն:
- Վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները և ցուցաբերեք համապատասխան առաջին օգնություն:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ԱՐՏՆԿՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Որովայնի բաց վնասվածքների դեպքում ներքին օրգանները կարող են դուրս գալ վերքից: Երբեք մի՛ փորձեք հետ դնել արտընկած օրգանները: Այդ փորձերը հաջողությամբ չեն ավարտվի, հակառակը՝ կբերեն ներորովայնային ճնշման կտրուկ բարձրացման և նոր օրգանների արտընկման:



Արտընկած օրգաններով որովայնի բաց վնասվածքների դեպքում օգնություն ցուցաբերելիս կատարեք հետևյալ գործողությունները.

- Զգուշությամբ պառկեցրեք տուժածին մեջքի վրա, ինչպես որովայնի փակ վնասվածքների դեպքում:
- Վերքի վրա ուղղակի ճնշում մի՛ գործադրեք:
- Վերքը զգուշությամբ ծածկեք թաց, հնարավորին չափ մաքուր գործվածքով՝ ամբողջությամբ ընդգրկելով արտընկած ներքին օրգանները:
- Առանց ճնշում գործադրելու վիրակապը ամրացրեք կաշուն ժապավենով:
- Ծածկեք թաց վիրակապը պոլիէթիլենի թաղանթով, որպեսզի այն չչորանա:
- Ծածկեք պոլիէթիլենի թաղանթը մի քանի տակ ծավված փափուկ գործվածքով, ջերմությունը պահպանելու համար:
- Մի՛ տվեք տուժածին ոչինչ՝ ուտելու կամ խմելու: Կարող եք միայն թրջել նրա շրթունքները:
- Պահպանեք տուժածի մարմնի նորմալ ջերմաստիճանը:
- Ահագանգեք շտապ օգնություն:
- Վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները և ցուցաբերեք համապատասխան առաջին օգնություն:

ԳԼԽԻ ԵՎ ՈՂՆԱՇԱՐԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ

Գլխի, պարանոցի և ողնաշարի վնասվածքները կարող են կյանքի համար վտանգավոր լինել: Դրանք կարող են ուղեկցվել և՛ փափուկ հյուսվածքների, և՛ ոսկրերի վնասումով:

Գլխի և ողնաշարի վնասվածքների լրջությունը որոշելիս պետք է զննել դեպքի վայրը և հաշվի առնել վնասվածքը հարուցող պատճառը: Օրինակ՝ ավտովթարի ժամանակ վարորդը, գլխով կոտրելով ավտոմեքենայի հողմապակին, կարող է գլխի և ողնաշարի բավականին ծանր վնասվածքներ ստանալ:

Գլխի և ողնաշարի ծանր վնասվածքների պատճառով կարող է լինել՝

- Բարձրությունից ընկնելը, անհաջող սուզվելը:
- Գլխին կամ իրանին հասցված ուժեղ հարվածը:
- Գլխի կամ իրանի յուրաքանչյուր թափանցող վնասվածքը:
- Ավտովթարը:

Յուրաքանչյուր պատահար, երբ կոտրված կամ ճեղքված է տուժածի սաղավարտը (հեծանիվի, մոտոցիկլետի, մարզական կամ արդյունաբերական սաղավարտներ):

Նշանները

Գլխի և ողնաշարի լուրջ վնասվածքների նշանները կարող են ի հայտ գալ անմիջապես կամ զարգանալ աստիճանաբար: Դրանք են՝

- գիտակցության խանգարում,
- շնչառության խանգարում,
- ցավ կամ ճնշման զգացում գլխում, պարանոցում կամ մեջքում,
- վերջույթներում ծակծկոցներ կամ զգացողության կորուստ,
- մարմնի որևէ մասի շարժունակության լրիվ կամ մասնակի կորուստ,
- գլխի կամ մեջքի վրա արտասովոր այտուցվածություն, դուրս գցված կամ փոս ընկած մաս,
- հիշողության կորուստ կամ խանգարում,
- ականջներից կամ քթից արյան, արյունախառը կամ թափանցիկ հեղուկների արտահոսք,
- արյունահոսություն գլխի, պարանոցի կամ մեջքի շրջանում,
- արյունազեղումներ գլխի վրա, օրինակ՝ աչքերի շուրջը և ականջների հետևում,
- ցնցումային նոպա՝ ցնցումներով ընթացող հիվանդություններով չտառապող անձի մոտ,
- տեսողության խանգարում,
- սրտխառնոց, փսխում,
- անդադար գլխացավ, գլխապտույտ, հավասարակշռության և կողմնորոշման կորուստ:

Համադրելով այս նշանները՝ վնասվածքը հարուցող պատճառի հետ կարելի է որոշակի պատկերացում կազմել վնասվածքի մասին:


ԱՌՍՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԳԼԽԻ ԵՎ ՈՂՆԱՇԱՐԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Գլխի և ողնաշարի վնասվածքների դեպքում ցուցաբերվող առաջին օգնությունը նման է փափուկ հյուսվածքների և ոսկրամկանային համակարգի վնասվածքների դեպքում ցուցաբերվող առաջին օգնությանը:

- Նվազեցրեք մարմնի ցանկացած մասի շարժումները: Աշխատեք հատկապես նվազեցնել տուժածի գլխի և ողնաշարի շարժումները:
- Դադարեցրեք արտաքին արյունահոսությունը:
- Ապահովեք շնչուղիների անցանելիությունը:
- Պահպանեք մարմնի նորմալ ջերմաստիճանը:
- Ահազանգեք շտապ օգնություն:

- Վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները և ցուցաբերեք համապատասխան օգնություն:

Շարժումների սահմանափակում



Գլխի և ողնաշարի յուրաքանչյուր շարժում կարող է վնասել ողնուղեղը և զգալիորեն վատթարացնել տուժածի վիճակը: Մինչև մասնագիտական օգնության ժամանումը հնարավորին չափ անշարժ պահեք տուժածին:

Վնասվածքների դեպքում գլխի ողնաշարի շարժումները սահմանափակելու նպատակով կիրառվում է մեկ առանցքով անշարժացման տեխնիկան: Երկու ձեռքով բռնեք տուժածի գլուխը կողքերից, զգուշորեն բերեք այն մարմնի հետ նույն առանցքի վրա և այս դիրքում պահելով՝ սպասեք շտապ օգնությանը: Այս պարզ գործողությունները շատ կարևոր են ողնաշարի հետագա վնասվածքներից խուսափելու համար:

Ողնաշարի պարանոցային հատվածի վնասվածքների դեպքում անհրաժեշտ է անշարժացնել պարանոցը: Տուժածի գլուխը շարժել չի կարելի, եթե՝

- տուժածի գլուխն անբնական թեքված է մի կողմ,
- տուժածի գլուխը շարժելու փորձ կատարելիս նա գանգատվում է ուժեղ, սուր ցավից, ճնշման զգացումից, մկանների ջղակծկումից,
- տուժածի գլուխը շարժելիս դիմադրություն էք զգում:

Բոլոր այս իրավիճակներում տուժածի գլուխն անշարժացրեք սկզբնական դիրքում:

ԳԼՆԻ ԵՎ ԳԼՆՈՒՂԵՂԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ

Գլուխը ավելի հեշտ է վնասվում, քանի որ այստեղ մկանային և ճարպային շերտը ավելի քիչ է, քան մարմնի այլ մասերում: Անմիջապես մաշկի տակ շոշափվում են գանգի ոսկրերը, կզակը, այտոսկրերը:

Գլխուղեղը կարող է վնասել գլխին կամ մարմնի այլ մասերին հասցված հարվածներից: Հաճախ դժվար է որոշել գլխի վնասվածքը ծանրության աստիճանը:

Բոլոր դեպքերում առաջին օգնություն ցուցաբերողը պետք է ուշադիր լինի

գիտակցության մակարդակի յուրաքանչյուր փոփոխության նկատմամբ, քանի որ

այն վիճակի ծանրության առաջին ցուցանիշն է: Գլխուղեղի վնասվածքները ոչ միշտ են ուղեկցվում գանգամաշկի վնասումով և կարող են արտաքինից չերևալ: Գլխի վրա յուրաքանչյուր, նույնիսկ փոքրիկ կապտուկ կարող է հուշել նաև գլխուղեղի վնասվածքի մասին:

ԳԼԽՈՒՂԵՂԻ ՑՆՑՈՒՄ

Գլխուղեղի ցնցումը գլխուղեղի գործունեության ժամանակավոր խանգարումն է, որը ճիշտ բուժում ստանալու դեպքում անցնում է առանց նշանակալից մնացորդային երևույթների: Գլխուղեղը կարող է շատ սահմանափակ տեղաշարժվել գանգի խոռոչում: Գլխին հասցված ցանկացած ուժեղ հարված կարող է ուղեղի ցնցման պատճառ հանդիսանալ:

Նշանները

- կարճատև (մի քանի վայրկյանից մինչև մի քանի բուրբ տևող) գիտակցության կորուստ
- տեսողության խանգարումներ՝ տեսողության երկատում
- հիշողության խանգարումներ՝ տուժածը կարող է չհիշել պատահարի պահը, նրան անմիջապես նախորդող կամ հաջորդող իրադարձությունները
- գլխացավ, գլխապտույտ
- սրտխառնոց, փսխում
- ոտքերի և ձեռքերի ընդարմացում, դող կամ թուլություն
- տարածության մեջ կողմնորոշման խանգարում

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԳԼԽՈՒՂԵՂԻ ՑՆՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

- Գնահատեք տուժածի գիտակցության վիճակը:
- Գիտակցության առկայության դեպքում շարունակեք տուժածի զննումը և ուշադիր եղեք տուժածի վիճակի ցանկացած փոփոխության նկատմամբ: Պատկեցրեք տուժածին: Գլխուղեղի ցնցում ստացած տուժածը, նույնիսկ լավ ինքնազգացողության դեպքում, պետք է հանգիստ պահված լինի:
- Ահագանգեք շտապ օգնություն: Տուժածը, անկախ իր ինքնազգացողությունից, պետք է գտնվի բժշկական հսկողության տակ: Ժամանակին համապատասխան բուժում չստանալու դեպքում հետագայում կարող են ի հայտ գալ ոչ ցանկալի հետևանքներ (գլխացավեր, ընդհանուր թուլություն և այլն):
- Վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները և ցուցաբերեք համապատասխան առաջին օգնություն:

II.6. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Մարդն ապրում է բնական և հասարակական միջավայրում: Ապրելու և հաջողությամբ գործելու համար նա պետք է իմանա շրջապատող աշխարհը և այլ մարդկանց: Քանզի նա ապրում է բնական, տեխնածին, բնապահպանական, քաղաքական և այլ տեսակի սուր արտահայտված վտանգների պայմաններում: Հասարակական գործունեության ցանկացած տեսակ ենթադրում է հնարավոր վտանգ:

Տարբեր տեսակի Արտակարգ Իրավիճակների (ԱԻ-ների) պատճառների վերլուծությունը ցույց է տալիս մարդկային գործոնի փաստը՝ այն, որ չգիտի կամ ուղղակի չի կարողանում ժամանակին օգտագործել անվտանգության շրջաններում համապատասխան գիտելիքները:

Անվտանգություն հասկացությունը մշտապես ենթադրում է որոշակի վտանգի առկայություն: Ներկայումս կա մի համընդհանուր կարծիք, որ հնարավոր չէ ձեռք բերել բացարձակ անվտանգություն:

Ընդհանուր առմամբ անվտանգությունը դա ներքին և արտաքին սպառնալիքներից պետության, հասարակության և անհատի կենսականորեն կարևոր հետաքրքրությունների կայուն պաշտպանության վիճակն է, և այդ հետաքրքրությունների իրականացման անհրաժեշտությունը: Անվտանգության գլխավոր օբյեկտ է հանդիսանում անհատն իր իրավունքներով և ազատություններով, սեփականությամբ և առողջությամբ:

Անվտանգությունը յուրաքանչյուր մարդու համար համարվում է անհրաժեշտություն, ինչպես առօրյա կյանքում, այնպես էլ արտակարգ պայմաններում: Իսկ անվտանգության կուլտուրան կուլտուրայի բաղկացուցիչ մասն է:

Կուլտուրան իր մեջ ընդգրկում է մարդու առօրյա կյանքը, գործունեությունը, հմտությունները և գիտելիքները, ինտելեկտուալ մակարդակը, էսթետիկական և բարոյական զարգացումները, աշխարհըմբռնումը, շփման ձևերը և մեթոդները:

Նյութական աշխարհը ստեղծում է մարդը՝ անվտանգության օրենքներից ելնելով: Միաժամանակ մարդը՝ հենց ինքն էլ համարվում է վտանգի ստեղծման աղբյուր, որն էլ տարածվում է մարդու գործունեության ողջ ոլորտում: Օրինակ՝ կենցաղում՝ դեղերից, սպիրտից, էլեկտրական սարքավորումներից, ծխախոտից, գազից, ծանր մետաղներից, նիտրատներից (սննդից), թունաքիմիկատներից և այլն:

Ինչպես արդեն նշվեց, մարդը հենց ինքը կարող է դառնալ վտանգի աղբյուր կամ ուղղակի դառնալ վտանգի կամ աղետի զոհ: Բայց և այնպես մարդիկ հնուց ի վեր ձգտել են ապահովել իրենց անվտանգությունն աշխատանքի, հանգստի ժամանակ, կենցաղում և այլուր:

Վերը նշվածներից ելնելով էլ «Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկայի ուսուցումը, որն ընդհանուր

կրթության բաղկացուցիչ մասերից մեկն է, անհրաժեշտ է սկսել կրտսեր դպրոցից, երբ ձևավորվում է անհատը, ամրապնդվում նրա հոգեբանական կայունությունը: Միննույն ժամանակ շատ կարևոր է նախադպրոցական և կրտսեր դպրոցականների դասավանդման մեթոդի ճիշտ ընտրությունը, որը հնարավորություն կընձեռի երեխաների մոտ ձևավորել գործնական կարողություններ և հմտություններ, որոնք և կապահովեն թե՛ տվյալ անհատի անվտանգությունը, և թե՛ շրջապատի անվտանգությունը տարբեր տեսակի ԱԻ-ներում:

Փորձը ցույց է տալիս, որ բնակչության՝ ԱԻ-ում գործելու ուսուցումն անհրաժեշտ է իրականացնել տարբեր փուլերով, ընդ որում, այն սկսելով վաղ հասակից: Վերջին պնդումը հիմնավորվում է մի շարք դատողություններով: Այսպես, երեխաները վաղ հասակից, արդեն 3-5 տարեկանից սկսած, ի վիճակի են դիմակայելու առօրեական, կենցաղային որոշակի արտակարգ իրավիճակներին: Ճիշտ է, սկզբում առավել պասիվ, իսկ հետագա հասունացմանը զուգընթաց՝ ավելի ու ավելի ակտիվ:

Կյանքի առաջին 7 տարիների ընթացքում երեխան անցնում է ֆիզիկական և հոգեբանական զարգացման հսկայական ուղի: Ծնվելով որպես անօգնական էակ, նախադպրոցական տարիքի վերջում դառնում է գիտելիքների և կարողությունների մեծ պաշարի տեր՝ ազատ խոսում է, փոխհարաբերությունների մեջ է մտնում շրջապատող մարդկանց հետ, զգում է և մասնակիորեն ընկալում, հասկանում բնության երևույթները, տիրապետում է բարդ ներաշխարհի: Ահա այս փուլի ճիշտ ուսուցմամբ ստեղծվում է հուսալի հիմք հետագա գիտելիքների հարստացման, հմտությունների կատարելագործման համար, քանի որ երեխայի բնավորությունը հիմնականում ձևավորվում է մինչև 12 տարեկան դառնալը:

Դասավանդման ժամանակ հատուկ նշանակություն պետք է տալ ուսուցման օրիգինալ մեթոդներին, առավելագույնս օգտագործելով բնական պայմանները: Առարկայի դասավանդման հիմնական գործընթացը պետք է հիմնված լինի սովորողների գործնական կողմնորոշիչ գործունեության վրա: Դասի ժամանակ սովորողը պետք է ավելի քիչ լսողի դերում լինի, հիմնականում նա պետք է զբաղված լինի մտագործունեությամբ, իրավիճակային խնդիրների լուծմամբ:

1. Ուսուցման մեթոդ

«Ուսուցման մեթոդը» բարդ և բազմակողմանի հասկացություն է: Առաջին հերթին դա պայմանավորված է հենց ուսուցման գործընթացի բարդությամբ: Վերջինս իր մեջ ներառում է երեք կարևոր խնդիր՝ ի՞նչ սովորեցնել (կրթության բովանդակություն), ինչո՞ւ, ինչի՞ համար սովորեցնել (կրթության նպատակները) և ինչպե՞ս սովորեցնել (ուսուցման մեթոդիկա): Կրթության բովանդակությունը (ի՞նչ սովորեցնել) մատուցելու և կրթության նպատակներն (ի՞նչու սովորեցնել) իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, ձևեր, եղանակներ: Հանդիսանալով ուսուցման գործընթացի միջուկ՝ մեթոդն իրար է կապում ուսուցման՝ նախապես պլանավորած նպատակը և վերջնական արդյունքը:

Իսկ ի՞նչ է մեթոդը:

Մեթոդը հունարեն բառ է (metodos), որը բառացի թարգմանված նշանակում է ինչ-որ տեղ տանող ուղի, ճանապարհ: Գիտական գրականության մեջ մեթոդն ունի բազմաթիվ սահմանումներ: Օրինակ, դրանցից մեկն այսպիսին է. «Ուսուցման մեթոդը ուսուցման այնպիսի ձև է, որը կիրառվում է պարբերաբար և մեծ ազդեցություն թողնում մանկավարժական աշխատանքի ամբողջական ուղղվածության վրա»:

Սահմանումների բազմազանության և առատության մեջ, այնուամենայնիվ, կան որոշակի ընդհանրություններ:

Ուսումնական գործընթացի հաջող իրականացման համար դասավանդողին անհրաժեշտ է տարբեր մեթոդների իմացություն: Սակայն սուկ իմացությունը բավարար չէ արդյունավետ ուսուցում իրականացնելու համար: Շատ կարևորվում է ուսուցման նպատակներից ու կանխատեսված արդյունքներից բխող մեթոդների ճիշտ ընտրության և կիրառության կարողությունը:

Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքների ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը: Ուսուցման ընթացքում ակտիվ միջավայր ապահովող մեթոդներն ընդունված է անվանել ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդներ: Դրանց առանձնահատկություններն են՝

- ուսուցանվողը նյութը սովորում է ինչ-որ բան կատարելով, մասնակցելով որոշակի գործընթացի,
- ուսուցանվողը ապավինում է ոչ այնքան իր հիշողությանը, որքան ինքնուրույն, ստեղծագործական, քննադատական մտածողությանը,
- ուսուցանվողի համար հնարավորություն է ստեղծվում ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքի համար:

2. Կրթության բովանդակությունը

Կրթության բովանդակության բաղկացուցիչ մասն են կազմում գիտելիքները, հմտությունները և կարողությունները:

Գիտելիքը՝ առարկայի, երևույթի, բնության, հասարակության, իրադարձության ճշմարտացի արտահայտությունն է: Այլ կերպ ասած, գիտելիքները գործնականում ստուգված իրականության ճանաչողության արդյունքն են՝ դրանց ճիշտ արտացոլումը մարդու մտածողության մեջ:

Կարողությունը՝ յուրացրած գիտելիքների հիման վրա ուսումնական առաջադրանքը ճիշտ և հաջողությամբ կատարելու ունակությունը կամ հնարավորությունն է:

Հմտությունը՝ նույն կամ համանման պայմաններում գործողության առանձին բաղադրիչների ավտոմատացումն է:

Հմտությունները ձևավորելիս տեղի է ունենում մարդու գործողության առանձին բաղադրիչների ավտոմատացում:

Ուրեմն կարելի է ասել՝ հմտությունները գործողությունների բազմակի կրկնություններն են, դրանց առանձին բաղադրիչների ավտոմատացումը, որոնք էլ ձևավորում են հմտությունները:

Կրթության բովանդակությունը մեզ հիմք է տալիս ասելու, որ առանց համապատասխան գիտելիքի պաշարի, կարողությունների, հմտությունների հնարավոր չէ գրագետ գործել ԱԻ-ների պայմաններում:

Ե՛վ իմացական գործընթացների, և՛ անձի զարգացման իմաստով մանկությունն իր նշանակալի դերն ունի: Մարդկային գրեթե բոլոր հիմնական հատկություններն ու անձնային որակները ձևավորվում են կյանքի այդ տարիներին, բացառությամբ այն հատկանիշների, որոնք ձեռք են բերվում կենսափորձի կուտակմանը զուգահեռ և չեն կարող դրսևորվել, քանի դեռ մարդը չի հասել որոշակի տարիքի:

Ուստի «Քաղաքաշտպանության (ՔՊ) և Արտակարգ Իրավիճակների (ԱԻ) հիմնահարցեր» առարկայի ուսուցումն անհրաժեշտ է սկսել վաղ՝ նախադպրոցական տարիքից և կրթության բովանդակության (ի՞նչ սովորեցնել) մատուցելու և կրթության նպատակներն (ինչն՞ է սովորեցնել) իրականացնելու համար իրոք անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ, ձևեր, եղանակներ:

3. Միջառարկայական կապերի օգտագործումը «ՔՊ և ԱԻ հիմնահարցեր» առարկայի դասավանդման ժամանակ

Պարզվել է, որ միջառարկայական կապերը նման են գիտական գիտելիքների միջև եղած կապերին: Այս փաստը հաստատվում է հետևյալ իրողություններով.

- առաջին՝ տարբեր գիտություններ ուսումնասիրում են միևնույն օբյեկտը (օրինակ՝ ֆիզիկան, մաթեմատիկան, քիմիան, աշխարհագրությունը, տիեզերագիտությունը, աստղագիտությունը ուսումնասիրում են տիեզերքը):
- երկրորդ՝ հաճախ գիտություններն օգտագործում են միևնույն տեսությունը տարբեր օբյեկտներ ուսումնասիրելիս:
- երրորդ՝ առանձին մեթոդներ գործադրվում են գիտությունների ներհատուկ օբյեկտներն ուսումնասիրելիս: Դրանք կարելի է անվանել միջգիտական կապեր:

Միջառարկայական կապերը հնարավորություն են ընձեռում ուսումնական նյութերը միավորել գիտության առաջատար, հանգուցային գաղափարների, գիտական հասկացությունների շուրջ:

Հասարակության արդի պահանջները խնդիր են դնում ունենալ ուսումնադաստիարակչական միասնական պլան, ուր ընդգրկված լինեն ուսուցանվողների գործունեության բոլոր ձևերը՝ այսպես, օրինակ, նրա ուսումնաձանաչողական, աշխատանքային գործունեությունը, հասարակական աշխատանքը, ինքնագործունեությունը և այլն:

Միջառարկայական կապերի օգտագործումն իր որոշակի տեղը պետք է ունենա ուսումնական աշխատանքի ընդհանուր համակարգում և նույնիսկ

յուրաքանչյուր առանձին նյութի ուսումնասիրության ընթացքում: Նյութի ուսումնասիրության ընթացքում միջառարկայական կապերը կարող են օգտագործվել երեք տարբեր պահերի՝ նայած անհրաժեշտությանը և նյութի բնույթին.

- Ուսուցանողը նյութի շուրջն անցկացվող նախապատրաստական գրույցի ընթացքում ուսուցանողը կարող է օգտագործել ուսումնական այլ առարկաների տվյալներ, նյութի վերաբերյալ ավելի պարզ պատկերացում տալու համար, որպեսզի դրանով իսկ հող ստեղծվի բուն նյութի յուրացման ժամանակ:
- Նյութի մշակման ժամանակ:
- Վերլուծման ու քննարկման ժամանակ լայնորեն կարելի է դիմել միջառարկայական կապերի օգտագործմանը:

Ստորև ներկայացնենք մի քանի առարկաների հետ կապված օրինակներ.

Մաթեմատիկա

«Մաթեմատիկան աշխարհաճանաչման յուրատեսակ և համընդհանուր միջոց է»: Իսկ տարրական դպրոցի աշակերտն աշխարհը ճանաչելու համար նախ պիտի ճանաչի իրեն շրջապատող միջավայրը: Շրջապատի ճանաչողությունը սկսում է իր տնից, բակից, դպրոցից:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե սա այլ բնագավառների խնդիր է: Այնինչ, մաթեմատիկայի դասաժամերը ևս կարող են նպաստել ապագա քաղաքացու կերտման գործընթացին, այդ թվում նաև անվտանգության կուլտուրայի ձևավորմանը:

Ուսուցանողը չպիտի բավարարվի դասագրքում տրված նյութով: Նա ինքը կարող է խնդիրներ կազմել: Օրինակ՝ «Առեղծվածային պարկը»:

Ուսուցանողն ընտրում է 5-7 այնպիսի բացիկներ, որոնց վրա պատկերված լինի կենցաղում հանդիպող իրեր: Ընտրված բացիկները լցնում է պարկի մեջ: Երեխաներին հանձնարարվում է պարկից հանել բացիկները և առանձին խմբերով առանձնացնել վտանգավոր իրեր պատկերված նկարներն այն նկարներից, որոնք իրենցից վտանգ չեն ներկայացնում: Այնուհետև հաշվել յուրաքանչյուր խմբում եղած բացիկների քանակը:

Մայրենի լեզու

Ինչպես տարրական, այնպես էլ բարձր դասարաններում ուսումնական առարկաների համակարգում բոլոր առումներով գերիշխող է մայրենի լեզուն, որը միջառարկայական կապերի մեջ է բոլոր առարկաների հետ: Բայց երեխաների ընդհանուր զարգացումն ապահովելու համար ոչ միայն նրանց մեջ լավ կարդալու, գրելու և խոսելու կարողություններ պետք է ձևավորել, այլև պետք է տալ բազմապիսի աշխարհաճանաչողական տեղեկություններ: Այս դեպքում ևս կարելի է օգտագործել տարբեր հնարներ, կամ փոքրիկ խաղարկային իրավիճակներ: Օրինակ՝ ուսուցանողն ընտրում է 5-7 այնպիսի բացիկներ, որոնց վրա պատկերված լինի կենցաղում հանդիպող իրեր կամ բնական երևույթներ: Ընտրված բացիկները դրվում են պարկի

մեջ: Երեխաներին հանձնարարվում է պարկից հանել բացիկները և նրանց վրա պատկերված նկարներին նայելով հորինել փոքրիկ պատմվածքներ կամ ոտանավորներ:


Նկարչություն

Ընդհանրապես մեթոդական գրականության մեջ մեծ ուշադրություն է դարձվում նկարների օգտագործմանը: Այն նպաստում է գեղագիտական ճաշակի ձևավորմանը, ինչպես նաև խոսքի զարգացմանը:

Առաջին դասարանից սկսած կարելի է որոշակի տեղ տալ նկարելու աշխատանքին:

Օրինակ. *Թեմա «Տանը և դրսում»:*

Հանձնարարել նկարել տարվա եղանակը կամ իր շրջապատում հանդիպող իրերը և առարկաները (այդ թվում կտրող, ծակող, այրվող և այլն): Այս բոլոր դեպքերում երեխան ստիպված պետք է լինի բառային պատկերացումները մտովի վերածել իրական-առարկայական պատկերացումների, և ապա սրանց հիման վրա ստեղծել դրանց գունագծային պատկերները: Այն նպաստում է երեխայի երևակայության ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը:



4. Խաղը որպես «ՔՊ և ԱԻ հիմնահարցեր» առարկայի դասավանդման մեթոդ

Մանկավարժական գործընթացում խաղը համարվում է կրթադաստիարակչական միջոց: Այն հնարավորություն է ընձեռում՝ երեխաներին հաղորդել որոշակի գիտելիքներ, մշակել հմտություններ ու կարողություններ, զարգացնել ուշադրությունը, հիշողությունը և երևակայությունը: Խաղը երեխաների կյանքի և գործունեության կազմակերպման, դաստիարակչական լայն խնդիրների լուծման, ստեղծագործական ունակությունների զարգացման և ինքնուրույնության դաստիարակության միջոց է: Այն երեխային նախապատրաստում և ընտելացնում է հոգեբանական և ֆիզիկական այն պայմաններին, որոնք անհրաժեշտ են նրան հետագա կյանքում:

Նախադպրոցական տարիքի երեխաների բարոյագիտական պատկերացումների ձևավորումը չափազանց բարդ գործընթաց է: Մարդկային արժեքներին երեխայի հաղորդակցման հիմք են հանդիսանում բարոյագիտական առանձնահատուկ գիտելիքները և ուսուցման ողջ համակարգի դաստիարակչական-բարոյագիտական ուղղվածությունը: Երեխային այդպիսի հնարավորություն է ընձեռում խաղը, որի միջոցով ի հայտ է գալիս համագործակցության ու փոխօգնության իրական արժեքը: Խաղի ընթացքում տեղի է ունենում ակնկալիքների ճշտում, որոշ արարքների իմաստի գիտակցում, տրվում է ընդունված որոշումների արդարացի գնահատականը, և լուծվում են վեճերն ու կոնֆլիկտները: Խաղերի կարևոր կառուցվածքային բաղադրիչներն են առարկաների հետ գործողության բնույթն ու կերպը, համագործակցության միջոցներն ու ձևերը, մարդկանց հետ շփումն ու նրանց նկատմամբ վերաբերմունքը: Խաղերի նպատակը ոչ միայն գիտելիքների սովորական փոխանցումն է, այլև երեխաների ակտիվ, գիտակցական գործունեությունը, հոգեկան որոշակի գործընթացների զարգացումը, սոցիալական կարևոր փորձի փոխանակումը:

Խաղերը պետք է նպաստեն երեխաների մոտ ձևավորելու ստորև ներկայացված հատկությունները:

Պատրաստակամություն՝ ուրիշների հետ միասին ուրախության և տխրության պահերը վերապրելու կարողություն հետևյալ միջոցներով.

- արձագանքել խնդրանքին, դիմումին և այլն,
- դժվարությունների հաղթահարման նպատակով օգնության ցուցաբերում,
- անհանգստության թոթափում:

Ուշադրություն՝ տագնապը նկատելու և հասկանալու կարողություն հետևյալ միջոցներով.

- «հեռացնել» զգայական անհանգստությունը դեմքից և ամբողջ կեցվածքից,
- ոչ ցայտուն արտահայտված անհանգստության նկատում և ընկալում,
- վատ տրամադրության, ցրվածության, գործունեության մեջ անհաջողության հաղթահարմանը միտված քայլեր:

Հոգատարություն՝ օգնության ցուցաբերում հետևյալ միջոցներով.

- կռահել օգնության կարիքը և համապատասխան գործողություններ ձեռնարկել,
- վառ արտահայտված ցանկությամբ՝ ցուցաբերել հոգատարություն (օգնել),
- արթնացնել որևէ առաջադրանքի կատարման ցանկություն:

Արդարություն՝ հասակակիցների հետ հավասարության իրավունքների ճանաչում հետևյալ միջոցներով.

- համագործակցությունից բխող բերկրանքի ճաշակման զգացողություն,
- առաջատար դերի կատարման ուրախության պատճառում,
- սեփական կարծիքը պաշտպանելու ձգտում,
- որևէ գործընթացում բախումային իրավիճակի արդարացի լուծում:

Խաղերն ընդգրկում են տարբեր աստիճանի բարդության առաջադրանքներ, որոնք և հնարավորություն են ընձեռում դրանք ընդունելի դարձնել ինչպես խմբի, այնպես էլ յուրաքանչյուր երեխայի համար՝ հաշվի առնելով նրա անհատական որակները:

Ուսուցման գործընթացում կիրառվող խաղերին ներկայացվում են որոշակի մանկավարժական պահանջներ: Դրանցից էլնելով՝ անհրաժեշտ է խաղն այնպես ընտրել, որ համապատասխանի ուսումնասիրվող թեմային, ուսուցանվողների տրամադրություններին ու տարիքային առանձնահատկություններին:

Առհասարակ, խաղն ուսուցման գործընթացում օգնում է բազում նպատակների իրականացմանը: Լուծվում են ինչպես կրթական, այնպես էլ դաստիարակչական բազմապիսի խնդիրներ:

Ներկայացնենք մի քանի խաղեր, որոնք նպաստում են երեխաների անվտանգության կուլտուրայի մասին պատկերացումների ձևավորմանը:

«Գուշակի՛ր».

Նպատակն է՝

- օգնել երեխային՝ հասկանալու, որ բարին մարդուն դարձնում է գեղեցիկ,
- ամրապնդել, սպառնացող վտանգի դեպքում, երեխայի զգալու կարողությունը,
- երեխաների մեջ դաստիարակել բարություն անելու ցանկություն:

Ընթացքը

Երեխաները հայտնվել են կախարդական աշխարհում, որտեղ ոչինչ հնարավոր չէ լսել, միայն կարելի է տեսնել:

Անհրաժեշտ է՝

- նկարների միջոցով որոշել սպասվող վտանգը,
- «կախարդական բարձրախոսի» միջոցով կռահել վտանգների տեսակները,
- նկարագրել վտանգը:

«Լավ և վատ»

Նպատակն է՝

- երեխաների մեջ ամրապնդել վտանգի դրսևորման վերաբերյալ պատկերացումները:
- դաստիարակել իրավիճակները ճիշտ գնահատելու կարողություն՝ տարբերակելով դրանց դրական և բացասական կողմերը,
- կարողանալ հիմնավորել և տալ համոզիչ բացատրություն՝ տրված գնահատականի վերաբերյալ (ինչո՞ւ է վատ, կամ՝ լավ):

Անհրաժեշտ է իմանալ.

- Ի՞նչ բան է վտանգը:
- Ե՞րբ էք դուք ձեզ վտանգի մեջ զգում:
- Ի՞նչ էք կարծում, ինչո՞ւ է դա վտանգ:
- Ինչպե՞ս պետք է պահեք ձեզ այդ վտանգի ժամանակ:

«Խմբավորման վարժությունը»


Մա մի խաղի տեսակ է, որի ժամանակ նկարագրվում են հետևյալ քայլերը.

- գրել թեմայի հետ առնչվող որևէ բառ գրատախտակի կամ թղթի կենտրոնում,
- գրել այդ բառին առնչվող բառեր ու արտահայտություններ,
- գրված բառերն ու արտահայտությունները միացնել կենտրոնում գրված բառին:

Օրինակ.

Կիրառվում է խմբավորման վարժության հետևյալ քայլերը:

- «Վտանգ» բառը գրվում է գրատախտակի կենտրոնում: Դրա շուրջ գրառում են այդ հասկացությանն առնչվող բառեր ու արտահայտություններ.




«Մտագրոհ»

Մտագրոհը խմբի անդամների միջև մտքերի փոխանակման ընթացքում գաղափարների ստեղծման և հարստացման եղանակներից մեկն է: Այս մեթոդի առանձնահատկությունն այն է, որ յուրաքանչյուր մասնակից ազատ ու անկաշկանդ արտահայտում է իր իմացածը, չի անհանգստանում սխալվելուց, անհավանական և հակասական գաղափարներ արտահայտելու մտավախություն չի ունենում: Այդպիսի անկաշկանդ մթնոլորտի ստեղծումը նպաստում է ստեղծագործական մտածողության զարգացմանը:


Օրինակ 1.

Երեխաներին առաջարկել թվարկել, թե ինչ գիտեն իրենց տան մասին: Գրատախտակի կենտրոնում գծել շրջանակ՝ ճառագայթներով, և հանձնարարել մտագրոհի միջոցով յուրաքանչյուր ճառագայթի վրա գրել տանը եղած վտանգավոր իրերի մասին:




Օրինակ 2.

Երեխաներին առաջարկել թվարկել, թե ի՞նչ գիտեն իրենք հրդեհի մասին: Գրատախտակի կենտրոնում գծել շրջանակ՝ ճառագայթներով, և հանձնարարել, մտագրոհի միջոցով, յուրաքանչյուր ճառագայթի վրա գրել հրդեհին առաջացնող որևէ պատճառ:



Օրինակ 3.

Երեխաներին առաջարկել թվարկել, թե ինչ գիտեն իրենց բակի մասին: Գրատախտակի կենտրոնում գծել շրջանակ՝ ճառագայթներով, և հանձնարարել, մտազրոհի միջոցով, յուրաքանչյուր ճառագայթի վրա գրել բակում հնարավոր վտանգների մասին:



5. Արտադասարանային միջոցառումների դերը «ՔՊ և ԱԻ հիմնահարցեր» առարկայի դասավանդման ժամանակ

Արտադասարանային միջոցառումները մեծ դեր ունեն ուսումնական գործընթացի ամբողջականության և կրթադաստիարակության աշխատանքների տարբեր բնագավառների արդյունավետ զարգացման գործում:

Ուսումնական գործընթացում արտադասարանային աշխատանքները կազմակերպվում են տարաբնույթ մրցույթների և ցերեկույթների, հանդիպումների, լավագույն ստեղծագործությունների և շարադրությունների բացահայտման ինքնագործունեության ձևով: Դրանք կարելի է անցկացնել ինչպես դասարանում, այնպես էլ դպրոցի դահլիճում, գրադարաններում, բնության մեջ, ծնողների աշխատավայրում, հատուկ կարիքներով երեխաների դպրոցներում, մանկապարտեզներում, ծերանոցներում, մշակույթի տներում և այլն: Կազմակերպիչներ կարող են լինել ինչպես դասվարը, այնպես էլ տարբեր առարկաների ուսուցիչներ, ծնողներ, տարբեր հաստատություններից հրավիրված մասնագետներ (բժիշկներ, գրողներ, դերասաններ և այլն հաստատությունների աշխատակիցներ):

Արտադասարանային միջոցառումները, սովորաբար, անցկացվում են ամբողջ տարվա ընթացքում՝ աշակերտների ձեռք բերած գիտելիքների, ունակությունների և կարողությունների ամփոփման և հարստացման, հասարակական տոները նշելու և այլ նպատակներով: Դրանք բարենպաստ պայմաններ են ստեղծում երեխաների զգացմունքային ներաշխարհի ձևավորման ու զարգացման համար: Միաժամանակ ի հայտ է գալիս գեղեցիկը զգալու, գնահատելու, սեփական պրիզմայով անցկացնելու, անհատական որակների դրսևորման, ձեռք բերած տարաբնույթ ունակությունները կյանքում կիրառելու անհրաժեշտության գիտակցումը: Կան որոշակի ունակություններ, կարողություններ և անհատական որակներ, որոնք հնարավոր չէ ձևավորել նույնիսկ ամենակատարյալ դասի ընթացքում: Կրթադաստիարակչական մի շարք խնդիրներ կարող են լուծվել միայն մեթոդապես ճիշտ կազմակերպված արտադասարանային միջոցառումների շնորհիվ: Դրանցից մասնավորում ենք հանդեսները, որոնք պետք է կազմակերպել՝ առաջնորդվելով որոշակի սկզբունքներով: Էականն այն է, որ ցանկացած միջոցառում մասնակից աշակերտների համար է, և դրանից բավականություն ու բավարարվածություն պետք է ստանան նախ և առաջ նրանք:

Հայտնի է, որ յուրաքանչյուր երեխայի անձի ինքնատիպությունը բխում է նրա ստեղծագործական կարողությունների բազմազանությունից, անսպառ երևակայությունից և տրամաբանությունից: Ուստի պետք է նրա ստեղծագործական-երևակայական դրսևորումները դարձնել հենց այն միջոցները, որոնց օգնությամբ երեխան կարողանա ինքնարտահայտվել և իրացնել անհատականության իր կերպարը: Այսպիսով, եթե հանդեսների նախապատրաստումը ճիշտ է կազմակերպվում, դրանք անցնում են ջերմ ու անկաշկանդ մթնոլորտում, հաճույք պատճառում երեխաներին և միևնույն ժամանակ հարստացնում նրանց գիտելիքներն ու կարողությունները:

II.7. ԱՂԵՏՆԵՐԻՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԽԱՂԱՐԿԱՅԻՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Աղետներից բնակչության անվտանգության բարձրացման գործընթացում կարևոր տեղ է գրավում բնակչության կրթությունը: Վերջինս անհատի դաստիարակչության, ուսուցման և զարգացման եռաթև միասնական համակարգ է: Այն հարստացնում է ճանաչողական գործունեության սեփական փորձը, խորացնում ստեղծագործական ունակությունները, զարգացնում ճանաչողական, տրամաբանական կարողությունները:

Կրթման գործընթացը ուղղված է աշխարհայացքի, վարքի կանոնների, անհատական արժեքների ձևավորմանը, զարգացմանը:

Աղետներից բնակչության պաշտպանության հարցերով ծրագրային և մեթոդապես ճիշտ կազմակերպված ուսուցումը անհատին տալիս է գիտելիքներ աղետների և դրանցից պաշտպանության մասին, հնարավորություն է ընձեռում գործնականում կիրառել ստացած գիտելիքները, հարստացնել ճանաչողական գործունեության սեփական փորձը, զարգացնել տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները: Շատ կարևոր է, որ ուսուցման արդյունքում մարդը ճանաչի տարբեր իրավիճակները, կողմնորոշվի այդ իրավիճակներում, գնահատի սեփական քայլերը և դրանց հետևանքները:

Ուսուցման բաղադրիչ տարրը գործնական, խաղարկային պարապմունքներն են: Դրանք տարաբնույթ են՝ շարժական, դիդակտիկ, իրավիճակային, համակարգչային, գեղարվեստական, գրական և այլն: Դրանցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, մեթոդները, խնդիրները: Խաղարկային պարապմունքներին բնորոշ է ուսուցման մեթոդի ինքնատիպությունը, անմիջականությունը, ողջ լսարանի ակտիվ մասնակցությունը, ուսուցման փոխադարձ ակտիվ կապը և այլն:

Յուրաքանչյուր խաղարկային պարապմունք, համաձայն վերը նշվածի, ունի իր ինքնատիպությունը, անցկացման մեթոդը, առաջադրված խնդիրները և այլն:

1. Վտանգների բացահայտում տրված բառերի միջոցով «Վտանգների բացահայտում տրված բառերի միջոցով» խաղի անցկացման խնդիրները

Ներկայացված խաղարկային պարապմունքի նպատակն է ուսուցանվողների մոտ զարգացնել տարբեր դեպքերի, պատահարների, իրադարձությունների վերլուծական ճանաչողականությունը:

Յուրաքանչյուր վտանգի ծագումը պահանջում է որոշակի գործոնների առկայություն: Ռիսկի նվազեցման գործընթացը, բնականաբար, պահանջում է առաջին հերթին վտանգ առաջացնող գործոնների բացահայտում, վերացում: Վերջինիս իրականացումը, անկասկած, ուղղված է տարածքում աղետների կանխարգելման գործընթացին:

«Վտանգների բացահայտումը տրված բառերի միջոցով» խաղի խնդրադրումը

Ուսուցանվողներին ներկայացվում է որոշակի տարածք իրեն բնորոշ բնակլիմայական պայմաններով, տնտեսական և այլ բնութագրերով: Այնուհետև առաջադրվում է այդ տարածքին բնորոշ վտանգները բնութագրող 5-6 բառ կամ բառակապակցություն:

Պահանջվում է տրված բառերով կամ բառակապակցություններով կանխատեսումներ անել, թե ինչ վտանգի մասին է խոսքը:

ԱՌԱՋԱՂՐԱՆՔ

1. Տրված բառերով կամ բառակապակցություններով կանխատեսումներ անել, թե ինչ վտանգի մասին է խոսքը:

- խոտի դեզ, ամառ, արտ, լուցկի
- ձնհալ, գետ, կամուրջ, պատվար
- մագնետուտ, բալ, ճաքեր, ավերածություններ, զոհեր
- էռոզիա, ճաքեր, փլուզում, սահք
- քամի, քանդված տանիք, արմատախիլ ծառ, փոշեամպ

2. Ըստ նշված վտանգների՝ ներկայացնել դրանց ծագման պատճառները և այդ պատճառները վերացնող ուղիները:

3. Տրված բառերով կամ բառակապակցություններով կանխատեսումներ անել, թե ինչ վտանգի մասին է խոսքը, և որ բառերն են ավելորդ:

- թթվածին, կայծ, այրվող նյութ, ջուր, մոխիր, ավազ
- ճոճվող ջահ, պատերին ճաքեր, զոհեր, ցեխակույտ,
- մութ ամպ, ցեխակույտ, անձրև, գետ, ծառ, թթվածին, արև
- քարակույտ, ձոր, անձրև, ցեխակույտ, կայծ, արտ
- ջրամբար, պատվար, ձնհալ, ավազ, մոխիր
- կավ, լեռան լանջ, ջուր, հող ,ճաքեր, կայծակ, այրվող նյութ
- ավերածություններ, ճաքած գետին, էպիկենտրոն, բալ, զոհեր,

«Վտանգների բացահայտումը տրված բառերի միջոցով» խաղի անցկացումը

Ուսումնական խմբին պարապմունքի էությունը, հարցադրումները ներկայացնում է համապատասխան դասախոսը (այնուհետև՝ վարող):

Ուսումնական խումբը բաժանվում է առանձին ենթախմբերի՝ կազմված 3-5 ունկնդիրներից:

Ենթախմբերը տեղավորվում են իրարից քիչ հեռու՝ համապատասխան սեղանների շուրջ:

Յուրաքանչյուր ենթախումբ ընտրում է պատասխանատու: Վերջինս կազմակերպում է իր ենթախմբում առաջադրանքի քննարկումը:

Հասկացված ժամանակահատվածից հետո վարողը հայտարարում է առաջին փուլի քննարկման ավարտը: Այնուհետև յուրաքանչյուր խմբի պատասխանատու ներկայացնում է իրենց խմբի քննարկման արդյունքները:

Երկրորդ փուլում մասնակից խմբերին առաջարկվում է քննարկել իրենց ներկայացրած վտանգների ծագման պատճառները և այդ պատճառները վերացնող ուղիները: Քննարկումների համար տրամադրվում է որոշակի ժամանակահատված: Որից հետո յուրաքանչյուր խմբի պատասխանատու ներկայացնում է իրենց խմբի քննարկման արդյունքները:

Երրորդ փուլում մասնակից խմբերին առաջարկվում է որևէ վտանգի ծագման պարտադիր պայման, ինչպես նաև այդ վտանգի հետ կապ չունեցող մի քանի այլ բառեր: Առաջարկել խմբով վերլուծել և կանխատեսումներ անել, թե ինչ վտանգի մասին է խոսքը, և որ բառերն են ավելորդ:

Քննարկումների համար տրամադրել որոշակի ժամանակահատված: Որից հետո լսել յուրաքանչյուր խմբի պատասխանատուին:

2. «Վտանգները կենցաղում»

2.1. «Վտանգները կենցաղում» խաղի անցկացման խնդիրները

Ներկայացված խաղարկային պարապմունքի նպատակն է ուսուցանվողների մոտ զարգացնել տարբեր դեպքերի, պատահարների, իրադարձությունների վերլուծական ճանաչողականությունը:

Ժամանակակից կենցաղը անհնար է պատկերացնել առանց կենսապահովման մի շարք միջոցների՝ ջրամատակարարում, ջեռուցում, էլեկտրամատակարարում, կոյուղի, գազամատակարարում, կենցաղային քիմիա, էլեկտրական սարքեր և այլն: Եվ երևի թե օր չկա, որ տեղեկատվության այս կամ այն աղբյուրով չհաղորդվի կենցաղում՝ կենսապահովման միջոցների ոչ ճիշտ կիրառման կամ անզգույշ օգտագործման հետևանքով տեղի ունեցած տարաբնույթ կենցաղային վտանգների և պատահարների մասին:

Թե ինչ վտանգներ է հնարավոր կենցաղում, կորոշեն ուսուցանվողները: Իսկ դրան կնպաստեն խմբակային քննարկումները, առաջարկությունները, համեմատությունները, վերլուծությունները, բանավեճերը: Վերջինս կօգնի դատել, թե ինչպես են ուսուցանվողները պատկերացնում տարաբնույթ կենցաղային վտանգները և անվտանգությունը:

Խաղի անցկացման համար անհրաժեշտ է ունենալ մեթոդական հանձնարարականներ:

2.2 «Վտանգները կենցաղում» խաղի խնդրադրումը

Ուսուցանվողներին առաջարկել գրել իրենց ամենօրյա գործերից մի քանիսը, այն վտանգները, որոնք կարող են առաջանալ այդ գործերը կատարելիս:

ԱՌԱՋԱԴՐՄԱՔ

- Առաջարկել տետրի էջը բաժանել երկու մասի: Ձախ կողմում գրել իրենց ամենօրյա գործերի հիմնական շարքը, իսկ աջում այն վտանգները, որոնք կարող են առաջանալ այդ գործերը կատարելիս:
- Առաջարկել քննարկել և վերլուծել, թե ամենօրյա ուր գործերի ժամանակ է, որ կարող է առաջանալ վտանգավոր իրադրություն՝ ինչո՞ւ:

2.3 «Վտանգները կենցաղում» խաղի անցկացումը

Ուսումնական խմբին պարապմունքի էությունը, հարցադրումները ներկայացնում է համապատասխան դասախոսը (այնուհետև՝ վարող):

Ուսումնական խումբը բաժանվում է առանձին ենթախմբերի՝ կազմված 3-5 ունկնդիրներից:

Ենթախմբերը տեղավորվում են իրարից քիչ հեռու՝ համապատասխան սեղանների շուրջ:

Յուրաքանչյուր ենթախումբ ընտրում է պատասխանատու: Վերջինս կազմակերպում է իր ենթախմբում առաջադրանքի քննարկումը:

Հատկացված ժամանակահատվածից հետո վարողը հայտարարում է առաջին փուլի քննարկման ավարտը: Այնուհետև յուրաքանչյուր խմբի պատասխանատու ներկայացնում է իրենց խմբի քննարկման արդյունքները:

Երկրորդ փուլում մասնակից խմբերին առաջարկվում է քննարկել և վերլուծել, թե ամենօրյա ո՞ր գործերի ժամանակ է, որ կարող է առաջանալ վտանգավոր իրադրություն, ինչպես նաև ներկայացնել վտանգների ծագման պատճառները և այդ պատճառները վերացնող ուղիները: Քննարկումների համար տրամադրվում է որոշակի ժամանակահատված: Որից հետո յուրաքանչյուր խմբի պատասխանատու ներկայացնում է իրենց խմբի քննարկման արդյունքները:

3. Գրական ստեղծագործությունների օգտագործման մեթոդով խաղարկային պարապմունք՝ «Վտանգները՝ ժողովրդական ասացվածքներում»

3.1 «Վտանգները՝ ժողովրդական ասացվածքներում» խաղի անցկացման խնդիրները

Գաղտնիք չէ, որ կյանքն՝ այսինքն ապրելը երկրագնդի վրա, հարուստ է անակնկալներով, որը պահանջում է մեծ ջանքեր, ու նրանում միայն խնդություններ չեն, կան նաև ցավեր: Բայց թե՛ խնդությունները և թե՛ ցավերը մարդու մոտ առաջացնում են մտքի սրություն, այն արտահայտելու փայլ ու անսովորություն, խոսքի պատկերավորություն: Դրա վառ ասացույցն ասույթներն ու ժողովրդական ասացվածքներն են, որոնք շատ կարճ, բայց խոր իմաստ ունեցող արտահայտություններ են:

Ասացվածքների առաձևահատկությունն այն է, որ դիպուկ են, և հեշտ են տպավորվում մարդկանց հիշողության մեջ:

Կան ասացվածքներ տարբեր երևույթների, վտանգների, պատահարների վերաբերյալ:

«Վտանգները՝ ժողովրդական ասացվածքներով» խաղի անցկացման ժամանակ քննարկվելու են որոշ ասացվածքներ, որոնք հիմնականում բնորոշում են տարբեր տեսակի վտանգներ, պատահարներ: Փաստորեն բոլոր ժամանակներում էլ մարդն իր ապրած ողջ կյանքի ընթացքում հաճախակի է առնչվել այս կամ այն վտանգի հետ, որոնք բնութագրելու համար օգտագործել է խոսքի արտահայտման առավել կարճ, բայց և ամբողջական արտահայտման տարբերակը: Երբեմն այդ վտանգները համեմատության մեջ է դրել այլ իրերի կամ երևույթների հետ:

3.2 «Վտանգները՝ ժողովրդական ասացվածքներում» խաղի անցկացման խնդրադրումը

Խաղի անցկացման համար ուսուցանվողներին առանձին քարտերով տալ ոչ ճիշտ դասակարգված 5-6 ասացվածքների բառեր: Առաջարկել յուրաքանչյուր խմբին որոշակի ժամանակահատվածում ճիշտ դասավորել բառերը և ստանալ համապատասխան ասացվածքը:

ԱՌԱՋԱԴՐՄԱՔ

1. Տրված բառերը ճիշտ դասավորել և ստանալ համապատասխան ասացվածքը:
2. Բացատրել ստացված ասացվածքներից յուրաքանչյուրի իմաստը:

3.3 «Վտանգները՝ ժողովրդական ասացվածքներով» խաղի անցկացումը

Ուսումնական խմբին պարապմունքի էությունը, հարցադրումները ներկայացնում է համապատասխան դասախոսը (այնուհետև՝ վարող):

Ուսումնական խումբը բաժանվում է առանձին ենթախմբերի՝ կազմված 3-5 ունկնդիրներից:

Ենթախմբերը տեղավորվում են իրարից քիչ հեռու՝ համապատասխան սեղանների շուրջ:

Յուրաքանչյուր ենթախումբը ընտրում է պատասխանատու: Վերջինս կազմակերպում է իր ենթախմբում առաջադրանքի քննարկումը:

Խմբերին առանձին քարտերով տրվում է ոչ ճիշտ դասակարգված 5-6 ասացվածքների բառեր: Առաջարկվում է յուրաքանչյուր խմբին, որոշակի ժամանակահատվածում ճիշտ դասավորել բառերը և ստանալ համապատասխան ասացվածքը:

Հատկացված ժամանակահատվածից հետո վարողը հայտարարում է առաջին փուլի քննարկման ավարտը: Այնուհետև յուրաքանչյուր խմբի պատասխանատու ներկայացնում է իրենց խմբի քննարկման արդյունքները:

Երկրորդ փուլում մասնակից խմբերին առաջարկվում է քննարկել և բացատրել ստացված ասացվածքներից յուրաքանչյուրի իմաստը: Քննարկումների համար տրամադրվում է որոշակի ժամանակահատված: Որից հետո յուրաքանչյուր խմբի պատասխանատուն ներկայացնում է իրենց խմբի քննարկման արդյունքները:

3.4 Բառերը և այդ բառերով կազմված ասացվածքները

- (տունը, սպառնում, քո, աղետը, եթե, է, հարևանի, քեզ, այրվում, էլ)
Եթե քո հարևանի տունը այրվում է, աղետը քեզ էլ է սպառնում:
- (հսկա, կծնի, փոքրիկ, բոցը, կայծը)
Փոքրիկ կայծը հսկա բոց կծնի:
- (տեր, բայց, լավ, վատ, ծառա, է, կրակը)
Կրակը լավ ծառա է, բայց վատ տեր:
- (էլ, մոխիր, մարի, հենց, քանի, այդ, կրակը, է)
Քանի մոխիր է, հենց այդ ժամանակ էլ մարի:
- (ամենաերկարն, կրակի, է, լեզուն)
Կրակի լեզուն ամենաերկարն է:
- (էլ, աճում, ծառից, է, ծուխը, բարձր)
Ծուխը ծառից է բարձր է աճում:
- (չես, ծուխը, բռնի, ձեռքով)
Ծուխը ձեռքով չես բռնի:
- (կարելի, մի, միևնույն, մատ, դանակով, և, հաց, կտրել, կտոր)
Միևնույն դանակով կարելի է կտրել և մի կտոր հաց, և մատ:
- (հաճելի, փորձությունների, վտանգից, հիշել, խուսափելով, է, անցած)
Խուսափելով վտանգից՝ հաճելի է հիշել անցած փորձությունների մասին:
- (քամու, անձրևը, կանչով, է, գալիս)
Անձրևը գալիս է քամու կանչով:
- (են, իսկ, ժամում, քաղաքները, մի, են ոչնչացվել ստեղծվել, քանի, դարերով)
Քաղաքները ստեղծվել են դարերով: Իսկ ոչնչացվել են մի քանի ժամում:
- (մենք, սառույցի, արագությունն, մեր, երբ, բարակ, սահում, փրկությունն, ենք, վրայով, է)
Երբ մենք սահում ենք բարակ սառույցի վրայով, մեր փրկությունն արագությունն է:
- (են, հոսում, մեծ, նույն, փոքր, ինչ, գառիվայրով, որ, առվակները, գետերը)
Փոքր առվակները հոսում են նույն գառիվայրով, ինչ որ մեծ գետերը:
- (սարքել, վրա, ավազի, տուն)
Ավազի վրա տուն սարքել:
- (տրամադրությունը, ամենաարագը, է, ընկնում)
Ամենաարագն է տրամադրությունը:
- (ավելի, այն, ավերելը, հեշտ, տունը, քան, կառուցելը, է)
Տունն ավերելը ավելի հեշտ է, քան այն կառուցելը:
- (արագ, հիմքի, է, շենքն, առանց, քանդվում, ամուր)
Առանց ամուր հիմքի, շենքն արագ քանդվում է:
- (ջարդելը, քան, անոթը, է, նորոգելը, հեշտ)
Անոթը ջարդելը հեշտ է քան՝ նորոգելը:
- (կգտնի, իր, ջուրն, ճամփան)
Ջուրն իր ճամփան կգտնի:
- (ծերությունն, բոցի, է, ծուխը) *Ծուխը բոցի ծերությունն է:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- 1) Ռ. Ալավերդյան, Ս.Հովհաննիսյան, Թ. Դիլբարյան և ուրիշներ: Խաղա՝ կատակ, բայց լուրջ է: Աղետների ռիսկերի նվազեցման ձեռնարկ միջին դպրոցի աշակերտների համար: Երևան, UNICEF, <<Արինթինֆո>> 2011թ., 60 էջ
- 2) Ա. Թանանյան, Հ. Մաթևոսյան: Ճգնաժամային կառավարման տարրեր: Ուսումնական ձեռնարկ: Երևան, ՃԿՊԱ 2008թ., 49 էջ
- 3) Հայկական ՄՍՀ գեոմորֆոլոգիան, ՀՄՍՀ ԳԱ Հրատարակչություն, Եևան, 1986 թ., 239 էջ
- 4) Հ. Մաթևոսյան, Ռ. Ալավերդյան և ուրիշներ: <<Աղետներից համայնքների պաշտպանվածության բարձրացման հարցեր>>: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան, UNDP, 2009թ., 198 էջ
- 5) Կ. Սարաֆյան: Կայծակ: Մեթոդական ցուցումներ: Ճգնաժամային կառավարման ինստիտուտ: Երևան, 1999թ., 15 էջ
- 6) Կ. Սարաֆյան: Տարերաբանություն: Ուսումնական ձեռնարկ: Երևան, 2008թ., 232 էջ
- 7) Հայաստանի Հանրապետության երկրորդ ազգային հաղորդագրություն
- 8) <<ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԸ>> Ուղեցույց - բացատրագիր (2007թ.)
- 9) <<ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՀԱՍԿԱՆՈՒՄ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ>>. Ուղեցույց սկսնակների համար. ՄԱԿ-ի ԿՓՇԿ-ի և ԿԱ (2007թ.)
- 10) ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ. Ուսումնական ձեռնարկ Հայաստանի Հանրապետության ԲՈՒՀ-երի ուսանողների համար (2007թ.)
- 11) Մ. Պողոսյան, Ա. Պողոսյան. Ն. Շարխաթունյան, Ռ. Շարխաթունյան և այլն, ՀԿԽԸ << Առաջին օգնության հիմունքներ >> 1999թ.:

Աշխատանքներն իրականացվել են ՄԱԶԾ «Աղետներին պատրաստվածության և ռիսկի նվազեցման ազգային կարողությունների հզորացում» ծրագրի «Տեղական մակարդակում ռիսկերի կառավարում» բաղադրիչի շրջանակներում՝ ծրագրում ընդգրկված ՄԱԶԾ աշխատակիցների, Արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի և «<Լոռե>> փրկարար ջոկատի մասնագետների մասնակցությամբ:



Empowered lives.
Resilient nations.



Տպագրվել է «ԵԴՊՐ ՓԱՐԹՆԵՐՍ» ՍՊԸ տպագրատանը
Չասցե՝ ք. Երևան, Ռուբինյանց 28, 3եռ.՝ (+374 10) 20 44 11, (+374 91) 20 37 87
E-mail: edgar.print@gmail.com

